

ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՎ
Ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և
քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության
մոնիտորինգի միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ

ԵՐԵՎԱՆ 2026

**ԱՊՅ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՅԱԺՈՂՈՎ**
Ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և
քաղաքացիների ընտրական իրավունքների
պաշտպանության մոնիտորինգի միջազգային ինստիտուտի
երևանյան մասնաճյուղ

**ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ԺՈՂՈՎՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ
ՍՈՒԲՅԵԿՏ**

**ԵՐԵՎԱՆ
ՀԱՅՐԱՊԵՏ
2026**

ՀՏԴ 329(479.25)

ԳՄԴ 66.69(5Հ)

Թ 153

Աշխատանքը երաշխավորվել է տպագրության ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության մոնիտորինգի միջազգային ինստիտուտի կողմից

Թաթոյան Ա.Յ., Սիմոնյան Տ.Վ.

Թ153 Ժողովրդավարական հասարակությունում կուսակցությունը որպես ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման և արտահայտման սուբյեկտ / Ա. Թաթոյան, Տ. Սիմոնյան. – Եր.: «Հայրապետ» հրատ., 2026: – 224 էջ:

Աշխատանքում ուսումնասիրվում է Հայաստանի քաղաքական համակարգի Էվոյուցիան համեմատական դիտանկյունից՝ այն համադրելով արևմտյան ժողովրդավարությունների փորձի և հետխորհրդային տարածքի պետություններին բնորոշ փոխակերպման գործընթացների հետ:

Հետազոտության նպատակն է բացահայտել քաղաքական կուսակցությունների դերն ու նշանակությունը ժողովրդավարական հասարակությունում որպես ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման և արտահայտման հիմնական ինստիտուտ: Հեղինակները վերլուծում են այն մեխանիզմները, որոնց միջոցով կուսակցությունները ապահովում են բազմամակարդակ փոխգործակցությունը քաղաքացիական հասարակության և պետական իշխանության մարմինների միջև, ինչպես նաև դրանց ներդրումը ժողովրդավարական ինստիտուտների կայուն և արդյունավետ գործառնման մեջ:

Հետազոտության նյութերը կարող են հետաքրքիր լինել իրավաբանների, քաղաքագետների, ուսանողների և ասպիրանտների, ինչպես նաև քաղաքական և պետական գործիչների ու բոլոր նրանց համար, ովքեր զբաղվում են այս հարցերի ուսումնասիրմամբ և գործնական իմաստավորմամբ:

ՀՏԴ 329(479.25)

ԳՄԴ 66.69(5Հ)

ISBN 978-9939-887-62-3

© ԱՊՀ ՄԽՎ խորհրդի քարտուղարություն, 2026

Աշխատանքային խմբի ղեկավար՝

ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական
վեհաժողովի ժողովրդավարության զարգացման,
պառլամենտարիզմի և քաղաքացիների ընտրական իրավունքների
պաշտպանության մոնիտորինգի միջազգային ինստիտուտի
երևանյան մասնաճյուղի տնօրեն՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Ավետիսյան

Հեղինակներ՝

Արման Հակոբի Թաթոյան

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան
(2016-2022թթ.)

Գլուխ 1, Գլուխ 3

Տարոն Վարդանի Սիմոնյան

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր
(7-րդ գումարում)

Գլուխ 2, Գլուխ 4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	5
ԳԼՈՒԽ 1. ԶԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԶԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՍՔԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ.....	10
1.1 Զաղաքական կուսակցության ծագումը, հասկացությունը եվ գործառույթները	10
1.2 Զաղաքական կամքի ձևավորման գործընթացը	24
1.3 Կուսակցական կազմակերպության ձևերը.....	38
ԳԼՈՒԽ 2. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..	69
2.1 Կուսակցական համակարգերի տիպաբանությունը.....	70
2.2 Կուսակցություններն ընտրական գործընթացներում.....	834
ԳԼՈՒԽ 3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	100
3.1 Կուսակցական կառավարումը և խորհրդարանական գործունեությունը	100
3.2 Կուսակցությունները և քաղաքացիական հասարակությունը.....	142
3.3 Մեդիա և հանրային կարծիքի ձևավորումը.....	152
ԳԼՈՒԽ 4. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՊԱԳԱՆ	168
4.1 Գլխավոր զացիայի և տեխնոլոգիական փոփոխությունների ազդեցությունը.....	168
4.2 Պոպուլիզմը և ավանդական կուսակցությունների ճգնաժամը	190
4.3 Կուսակցական համակարգի ապագան և նորարարական ձևաչափերը	202
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	211

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետությունում անկախ քաղաքական համակարգի ձևավորումը սկսվել է անկախության հռչակումից անմիջապես հետո: Այդ գործընթացը սկիզբ է առել պատերազմով և շրջափակումով պայմանավորված ճգնաժամային պայմաններում: Ավելին, այն իր վրա զգալիորեն կրում էր խորհրդային համակարգի ազդեցությունը՝ միակուսակցական համակարգով, որտեղ ժողովրդավարական հակակշիռների կառուցակարգ, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների իրական երաշխքներ չեն եղել:

Ստեղծված պայմաններն այնպիսին էին, որ ի սկզբանե սխալ պատկերացումներ ձևավորեցին կուսակցությունների ու նրանց գործառույթների ու, առհասարակ, պետության կառավարման հարցում նրանց դերի վերաբերյալ:

Անկախությունից անմիջապես հետո սկսվեցին արագ ձևավորվել կուսակցություններ, որոնց անդամներն իրենք հաճախ պատկերացումներ չունեին այդ կուսակցությունների գաղափարախոսության և իրենց առաքելության մասին: Հաճախ կուսակցությանն անդամագրվելը դիտվում էր ընդամենը պետական որևէ մարմնում պաշտոնի նշանակվելու, ինչպես նաև ապահով պայմաններում գործարարությամբ զբաղվելու, քաղաքական հովանավորություն ունենալու միջոց: Տարիների ընթացքում ձևավորվեց ևս մեկ արատավոր երևույթ: Կուսակցություններ սկսեցին ձևավորել կոնկրետ ժամանակահատվածի իշխանությունների քողարկված նախաձեռնությամբ կամ հանուն նեղ անձնական շահերի՝ նրանց հետ գաղտնի համագործակցության համար:

Այս ամենը թույլ չտվեց, որ կուսակցությունների վերաբերյալ ճիշտ պատկերացումներ ձևավորվեն նաև մարդկանց մոտ: Դա էր պատճառը, որ մարդիկ սկսեցին կուսակցությունները դիտարկել՝ որպես արատավոր երևույթներ, որոնք ծառայում են նեղ անձնական կամ քաղաքական շահերի իրականացման, խարդավանքների կամ քաղաքացիներից գաղտնի պայմանավորվածությունների վայր:

Քաղաքական համակարգի և, մասնավորապես, կուսակցությունների վերաբերյալ նման սխալ պատկերացումները տարիների ընթացքում հեղինակագրվեցին կուսակցությունները: Սա է պատճառը,

որ կուսակցություններն այն հանրային միավորներից են, որոնց նկատմամբ քաղաքացիները հիմնականում վստահություն չունեն։ Սրա պատճառով է, որ, հեղինակների կարծիքով, երկրում այդպես էլ չկայացավ քաղաքական համակարգը։ Այս ամենի պատճառով կուսակցություններն այդպես էլ չկարողացան կատարել իրենց հիմնական գործառնությունները, այդ թվում՝ իրավունքի գերակայության հաստատման, իրավական պետության կայացման, ժողովրդավարության ամրապնդման, քաղաքացիների լայն շերտերի կամքի իրական արտահայտության և այլ հարցերում։

Ախտորոշված այս և մյուս խնդիրների լուծման համար էլ իրականացվել է այս հետազոտությունը։ Այն նպատակ ունի վերլուծել քաղաքական կուսակցությունների դերը և կարևորությունը ժողովրդավարական հասարակությունում՝ որպես ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման և արտահայտման առանցքային սուբյեկտ։ Հեղինակները ձգտել են ցույց տալ, թե ինչպես են կուսակցությունները ապահովում քաղաքացիական հասարակության և պետական իշխանության միջև բարդ փոխառնչությունները և ինչ դեր են խաղում ժողովրդավարական ինստիտուտների արդյունավետ գործունեության մեջ։

Հետազոտությունը հատկապես արդիական է դառնում 21-րդ դարի երկրորդ քառորդում, երբ ժողովրդավարական համակարգերը ամբողջ աշխարհում բախվում են անցյալի չափանիշներով չափելի մարտահրավերներին։ Քաղաքական բևեռացումը, պոպուլիզմի աճը, սոցիալական ցանցերում «կեղծ լուրերի» տարածումը, քաղաքացիական հասարակության ինստիտուտների նկատմամբ վստահության անկումը և ներկայացուցչական ժողովրդավարության ճգնաժամը դարձել են գլոբալ խնդիրներ։ Հայաստանում այս մարտահրավերները կրկնապատկվում են հետխորհրդային տարածքում քաղաքական մշակույթի ձևավորման առանձնահատկություններով և տարածաշրջանային անկայուն աշխարհաքաղական իրավիճակով։

Հետազոտության խնդիրները

Հետազոտությունը վերլուծում է Հայաստանի քաղաքական համակարգի զարգացումը՝ համեմատելով այն արևմտյան ժողովրդավարությունների կայացած փորձի և հետխորհրդային տարածքի երկրներ-

րի վերափոխման գործընթացների հետ: Այս համեմատական մոտեցումը թույլ է տալիս բացահայտել ինչպես համընդհանուր օրինաչափությունները, այնպես էլ Հայաստանի քաղաքական համակարգի յուրահատկությունները, որոնք պայմանավորված են պատմական, մշակութային և սոցիալ-տնտեսական հատուկ գործոններով:

Այն լուծում է մի շարք փոխկապակցված գիտական և գործնական խնդիրներ: Նախ, պարզաբանվում է կուսակցությունների տեսական եռությունը, նրանց հասկացական սահմանումները և գործառույթները ժողովրդավարական կառույցում: Ուսումնասիրվում են կուսակցությունների դերը իրավունքի գերակայության երաշխավորման, քաղաքական պլուրալիզմի ապահովման և հակակշռող մեխանիզմների ձևավորման գործում: Այնուհետև քննարկվում են կուսակցական համակարգերի տարբեր տիպերի առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը ընտրական գործընթացների վրա: Վերջապես, վերլուծվում են ժամանակակից մարտահրավերները, որոնց դիմաց կանգնած են կուսակցական համակարգերը:

Մեթոդական մոտեցումը

Հետազոտությունը իրականացված է համապարփակ մեթոդական մոտեցումով՝ համակցելով պատմական ուսումնասիրությունը և տեսահամեմատական վերլուծությունը: Հեղինակները ընտրել են պատմական-համեմատական և վերլուծական մեթոդների կիրառումը՝ ուսումնասիրելով կուսակցությունների ծագումն ու էվոլյուցիան, դրանց կազմակերպական մոդելների զարգացումը կադրային, զանգվածային և ժամանակակից ձևերի առանձնահատկությունների բացահայտման միջոցով:

Առանձին ուշադրություն է դարձված համակարգային մոտեցմանը՝ վերլուծելով կուսակցական համակարգերը՝ որպես ամբողջական կառույց, որը ներառում է կուսակցությունների փոխառնչությունները միմյանց հետ, ընտրական համակարգերի հետ, քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ և մեդիայի հետ: Հեղինակները կիրառել են նաև միջառարկայական մոտեցում՝ ներգրավելով քաղաքական գիտության, իրավունքի, սոցիոլոգիայի և հոգեբանության տեսական ապարատը:

Հիմնական եզրահանգումները

Հետազոտությունը հանգում է մի շարք կարևոր եզրահանգումների: Կուսակցությունները ներկայացվում են որպես ժողովրդավարական հասարակության անփոխարինելի ինստիտուտներ, որոնք ապահովում են քաղաքական համակարգի կայունությունը և օրինական գործունեությունը: Նրանք հանդիսանում են միջնորդ մեխանիզմ քաղաքացիների և պետական իշխանության միջև, հնարավորություն են տալիս տարբեր սոցիալական խմբերի շահերի արտահայտման և քաղաքական առաջընթացի ապահովման համար:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ կուսակցական համակարգի արդյունավետությունը կախված է բազմաթիվ գործոններից, ներառյալ ընտրական համակարգը, քաղաքական մշակույթը, քաղաքացիական հասարակության զարգացվածությունը և մեդիայի բազմազանությունը: Հեղինակները եզրակացնում են, որ ժամանակակից պայմաններում կուսակցությունները բախվում են նոր մարտահրավերների՝ գլոբալիզացիա, տեխնոլոգական փոփոխություններ, պոպուլիզմի աճ և ներկայացուցչական ժողովրդավարության ճգնաժամ:

Վերջապես, հետազոտությունը կանխատեսում է կուսակցական համակարգերի ապագայի զարգացման ուղիները, հիբրիդային մոդելների ձևավորումը, մասնակցային ժողովրդավարության նոր ձևերի ներդրումը և ժողովրդավարական ինքնության պահպանումը փոփոխվող աշխարհում: Այս եզրահանգումները կարևոր են ինչպես տեսական, այնպես էլ գործնական տեսակետից՝ ցույց տալով կուսակցական համակարգերի անհրաժեշտությունը և հնարավոր բարեփոխումների ուղիները ժողովրդավարական զարգացման համար:

Գործնական նշանակությունը

Հետազոտությունն ունի ոչ միայն տեսական, այլև առարկայական գործնական նշանակություն: Այն կարող է ծառայել որպես ուղեցույց.

- քաղաքական կուսակցությունների համար՝ իրենց կազմակերպական կառուցվածքի բարեփոխման ուղղությամբ,
- քաղաքականության մշակողների համար՝ ընտրական օրենսդրության և կուսակցությունների գործունեության իրավական կարգավորման բարելավման համար,

- քաղաքացիական հասարակության ինստիտուտների համար՝ քաղաքական մասնակցության և քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների ուժեղացման համար,
- ակադեմիական հանրության համար՝ հետազա հետազոտությունների հիմք հանդիսանալու համար:

Թիրախային լսարան

Այս հետազոտությունը նախատեսված է լայն ընթերցողի համար՝ սկսած իրավագիտության և քաղաքագիտության ուսանողներից և ասպիրանտներից, մինչև գործող քաղաքական ու պետական գործիչներ, մամուլի ներկայացուցիչներ և ակտիվ քաղաքացիներ, ովքեր հետաքրքրված են Հայաստանի քաղաքական համակարգի բարեփոխմամբ և ժողովրդավարության զարգացմամբ:

ԳԼՈՒԽ 1. ԶԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԶԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՍՔԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

1.1 Զաղաքական կուսակցության ծագումը, հասկացությունը և գործառույթները

Ժամանակակից իմաստով քաղաքական կուսակցությունները հասարակական կյանքում համեմատաբար նոր ինստիտուտներ են: Այնուամենայնիվ, շատ վաղուց, դեռևս մինչև ժամանակակից քաղաքական շարժումների և կուսակցությունների ձևավորումը՝ այս տերմինն օգտագործվում էր այն խմբերի համար, որոնք մրցակցում են միմյանց հետ իշխանության համար կամ իշխանության վրա ազդեցություն ունենալու համար:

«Կուսակցություն» տերմինը՝ որպես մարդկանց միություն, որը հանդես է գալիս բնակչության որոշակի շերտի շահերի պաշտպանությամբ, օգտագործվել է հնագույն աշխարհում: Արիստոտելը նշում էր Աթենքում գոյություն ունեցող «լեռան», «դաշտավայրերի» և «ափամերձ» շրջանների բնակիչների կուսակցությունների մասին:

Արիստոտելն իր «Պոլիտիկա» աշխատության մեջ մարդուն համարում է «քաղաքական կենդանի», որը բնագծով ձգտում է դեպի իր նմանները և իր բնությամբ, հասարակական էակ է և չի կարող գոյատևել քաղաքականությունից, պետությունից, հասարակությունից դուրս: Նա հիշատակում է Աթենքի ժողովրդական ժողովում (Աթենական պետության բարձրագույն իշխանության մարմինը) օրենքների ընդունման, պատերազմի և խաղաղության հարցերի քննարկման և պետական գանձարանի միջոցների օգտագործման համար կուսակցությունների կատարի պայքարի մասին: Արիստոտելը հիշատակում է, որ մ.թ.ա. 6-րդ դարում պայքարը, հատկապես ընթանում էր լեռնային հատվածի, հարթավայրի և ծովափնյա շրջանի բնակիչների շահերը պաշտպանող կուսակցությունների միջև: Ծովափնյա մարզին՝ Պարալիային ներկայացնում էր պարալիների կուսակցությունը, որպես առևտրա-արհեստավորական «չափավոր կուսակցություն»: Դիակրիա լեռնային շրջանը ներկայացնում էր դիակրիների «գյուղացիական կուսակցությունը», իսկ Աթենքը և Էլեվսինը, որոնք գտնվում

Միջկուսակցական Պայքարը Աթենքի ժողովրդական ժողովում բացահայտ երևում էր ստրատեգների, դատավորների և այլ բարձրաստիճան պաշտոնյաների ընտրությունների ժամանակ:

Կուսակցական խմբավորումների առաջնորդների դերում հանդես էին գալիս հռետորները, որոնց բոցաշունչ ճառերը աթենական քաղաքացիների առջև նպատակ ուներ՝ կողմնորոշել կամ դեպի արիստոկրատների, կամ էլ դեմոսի կուսակցությունների կողմից բարձրագույն պաշտոնների համար առաջադրված թեկնածուները:

Անտիկ հասարակության քաղաքական կյանքի կուսակցականացվածության մասին է վկայում նաև այսպես կոչված կլիենտելաների գոյությունը: Կլիենտելաների մեջ մտնում էին որևիցե քաղաքական գործչի շուրջ խմբված և նրանից կախում ունեցող մարդիկ: Ապահովվելով ուժերի համախմբումը և համակարգելով քաղաքական գործունեությունը կլիենտելաները կարողանում էին արագորեն հասնել դրված նպատակների իրականացմանը, տվյալ քաղաքական գործչի և նրա մերձավորների շահերին համապատասխան: Հին Հունաստանի պատմությունը, մեզ բազմաթիվ և բազմազան հարուստ փաստեր է տալիս նմանատիպ կուսակցությունների գոյության և նրանց միջև ընթացող անհաշտ պայքարի մասին: Օրինակ՝ մ.թ.ա. VI դարի սկզբներին հստակ ընդգծված քաղաքական պայքար էր գնում ռեֆորմների հարցի շուրջ: Հաղթեց ռեֆորմների կողմնակից Սալոնի կուսակցությունը և մ.թ.ա. 594թ. Աթենքի կառավարիչ ընտրվեց Սոլոնը, որի ռեֆորմները դուրս բերեցին պետությունը ճգնաժամից: Հատկանշական են նաև մ.թ.ա. V դարի քաղաքական իրադարձությունները: Այդ ժամանակ Աթենքում հայտնի էր ականավոր գործիչ Պերիկլեսը, որին հաջողվեց իր կուսակցության միջոցով մ.թ.ա. 443թ. ընտրվել առաջին ստրատեգ և շուրջ 15 տարի ղեկավարել Աթենքը և Աթենական ծովային միությունը:

Կուսակցությունները բնորոշ էին նաև Հռոմեական պետության քաղաքական կյանքին, հատկապես հանրապետության շրջանում (մ.թ.ա. 510/509-30 կամ 27թթ.): Դրան նպաստում էր Հռոմեական հասարակության երկատված վիճակը (բաղկացած էր իրավա-քաղաքական տարբեր կարգավիճակ ունեցող երկու հատվածներից՝ պատրիկներից և պլեբեյներից, իսկ ավելի ուշ պատրիկների ու պլեբեյների վերնախավի ձուլումից առաջացած նոբիլիտետից և Հռոմեական

հանրապետության քաղաքացիություն ունեցող ազատ բնակչություն-
նից) և հանրապետական կառավարման ձևը (բարձրագույն իշխա-
նությունը պատկանում էր ժողովրդական ժողովին, գոյություն ուներ
պետական խորհուրդ՝ սենատ, գործադիր իշխանությունն իրակա-
նացնում էին կոնսուլները):

Պլեբեյների պայքարը պատրիկների դեմ քաղաքական իրա-
վունքներ ձեռք բերելու համար ավարտվեց նրանով, որ պլեբեյները
իրավունք ստացան ընտրել իրանց իրավունքները պաշտպանող ժո-
ղովրդական տրիբուններ, ապա՝ ընտրվել կոնսուլներ: Զաղաքական
համակարգի յուրաքանչյուր բևեռ Հռոմեական հանրապետության
մեջ որպես հենարան ձևավորում էր իր կուսակցությունը՝ «pars»,
«partis»-ը: Յուրաքանչյուր սենատոր կամ սենատորների խմբավորում,
կոնսուլ կամ ժողովրդական տրիբուն ուներ իր համախոհների
խումբը, թե պատրիկների և թե պլեբեյների շրջանում:

Այն քաղաքական գործիչները, որոնք որ խոշոր հողատեր-
ստրկատերեր էին ունեին նաև իրենց կլիենտելաները: Համախոհ-
կողմնակիցներից և կախյալ մարդկանցից բաղկացած կուսակցությու-
նները բավականին կազմակերպված և ակտիվ ներգրավված էին
պետության ներքաղաքական պայքարում, որն առավել սրվում էր սե-
նատորների, կոնսուլների և տրիբունների ընտրությունների ժամա-
նակ:

Հետագայում կուսակցությունները Հռոմում հանդիսանում էին
կայսրին կամ կայսերական գահի հավակնորդ զորավարներին ա-
ջակցող քաղաքական խմբավորումներ, որոնց մեջ մտնում էին բարձ-
րաստիճան զինվորականներ, հոգևորականներ, պրովինցիալների
կառավարիչներ, սենատորներ, տարբեր կարգի պալատականներ և
այլն: Այս տիպի կուսակցությունները, որոնք կրում էին վերնախավա-
յին բնույթ, բնորոշ էին հին աշխարհի բոլոր այն պետություններին,
որոնք որ ունեին միապետական կառավարման ձև:

Այս տիպի կուսակցությունները պահպանում են նաև միջին դա-
րերում, որովհետև հասարակության քաղաքական կազմակերպման
հիմնական ձևը ֆեոդալական միապետությունն էր, այնինչ հանրա-
պետությունները միջնադարյան պատմության մեջ հազվադեպ են
հանդիպում: Իհարկե, քաղաքական կուսակցությունների ձևավոր-
ման և նրանց գործունեության համար հանրահայտ պատճառներով
առավել բարենպաստ պայմաններ են առաջանում հանրապետական

կառավարման ձևի պայմաններում, բայց միջնադարյան քաղաքական պատմության վերլուծությունը ցույց է տալիս, որ միապետական կառավարման պայմաններում էլ արտաքին և ներքին գործոնների ազդեցության տակ որոշակի քաղաքական շահերի հիմքի վրա տեղի է ունենում քաղաքական ուժերի կենտրոնացում և հանդես են գալիս այլ արտահայտչաձևեր ունեցող քաղաքական կուսակցություններ, որոնցից են.

- պետական իշխանության մարմինների կամ հենց միապետի վրա ազդեցության համար պայքարող պալատական խմբավորումներ.

- կենտրոնաձիգ և կենտրոնախույս ֆեոդալ-ազնվականության խմբավորումներ.

- մրցակցող դինաստիաների կողմնակիցների խմբավորումներ արտաքին քաղաքական կողմնորոշման հողի վրա առաջացած ազնվականական կուսակցություններ.

- եկեղեցական կամ կրոնական կողմնորոշման համար պայքարող քաղաքական խմբավորումներ.

- բնակչության հոծ զանգվածների աջակցությամբ դասակարգային պայքարի կամ ներդասակարգային սոցիալական հակասությունների հողի վրա առաջացած քաղաքական հոսանքներ իրենց կազմակերպություններով:

Պետք է նշել, որ ժամանակակից իմաստով քաղաքական կուսակցությունների պատմությունը սկսվում է XVIII դարի վերջից և հատկապես XIX դարից և մեծապես կախված է երկու կարևոր հանգամանքների հետ:

Առաջինը համընդհանուր ընտրական իրավունքի տարածումն էր, որը զգալիորեն ընդլայնեց քաղաքականությանը մասնակցելու ոլորտը, իսկ երկրորդը՝ բանվոր դասակարգի քաղաքական կազմակերպվածության զարգացումն էր, որն ունեցավ երկակի նշանակություն. բանվորները ստեղծում են իրենց շահերը՝ պառլամենտում պաշտպանող կուսակցություններ, իսկ քաղաքական պայքարի նոր կանոնները և մրցունակ լինելու անհրաժեշտությունը նախկին քաղաքական խմբավորումներին ստիպում է արագ կերպով ձևափոխման ենթարկել սեփական կուսակցությունների կազմակերպական կառուցվածքը:

Կուսակցությունների պատմության մեջ Մաքս Վեբերը առանձնացրել է երեք փուլ՝

- կուսակցությունները՝ որպես արիստոկրատական խմբավորումներ.

- կուսակցությունները՝ որպես քաղաքական ակումբներ և
- ժամանակակից զանգվածային կուսակցությունները:

«Քաղաքական կուսակցություն» հարակցության սահմանման ուղղությամբ առկա է հարուստ գրականություն, սակայն պետք է ընդունել, որ առկա չէ մեկ միասնական սպառիչ սահմանում: Ընդ որում՝ գտնում ենք, որ նման իրավիճակը բնական է, քանի որ կուսակցության հասկացությունը քարացած չէ, այն կարող է փոփոխվել և չհամընկնել՝ հաշվի առնելով յուրաքանչյուր ժամանակահատվածում և յուրաքանչյուր երկրում կուսակցությունների ձևավորման, զարգացման և դրսևորման բազմաձևությունը ու առանձնահատկությունները:

«Կուսակցություն» հասկացությունը սահմանելու երեք հիմնական մոտեցում կա: Առաջինի համաձայն՝ կուսակցությունը սահմանվում է որպես իշխանության համար պայքարի և դրա իրականացման ընթացքում ի հայտ եկող ցանկացած խմբավորում: Սա ենթադրում է, որ կուսակցություններն ունեն երկար պատմություն, միշտ գոյություն են ունեցել և կշարունակեն գոյություն ունենալ այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն ունի իշխանությունը:

Երկրորդ դիրքորոշման համաձայն՝ կուսակցությունները հասկացվում են միայն որպես օրինական ճանապարհով իշխանության եկած խմբեր, այսինքն՝ ընտրությունների միջոցով: Այս սահմանման համաձայն՝ կուսակցությունների պատմությունը սկսվել է Անգլիայում 1679 թվականին, երբ Շաֆտսբերիի կոմսի գլխավորած ընդդիմադիր Չեմստվո կուսակցությունը (արհամարհանքով անվանված «Վիգեր») հաղթեց Չարլզ II թագավորի կողմից անցկացված ընտրություններում և ստացավ խորհրդարանում տեղերի մեծամասնությունը, բայց կազմակերպչական առումով մնաց տիպիկ խմբակցություն:

Վերջապես, երրորդ դիրքորոշման համաձայն՝ կուսակցությունները սահմանվում են որպես շատ կոնկրետ քաղաքական կազմակերպություններ, որոնք զարգացած երկրներում ի հայտ են եկել XIX դարի վերջին երրորդում և ունեցել են.

1) խորհրդարանական խմբակցություններ:

2) կենտրոնական մարմիններ և կուսակցական ապարատ:

3) ժողովրդական կազմակերպություններ:

Այս եռաստիճան կառուցվածքը բնորոշ է նաև ժամանակակից քաղաքական կուսակցություններին:

Տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչները կուսակցությունների սահմանմանը տարբեր կերպ են մոտենում: Լիբերալ մեկնաբանության համաձայն՝ կուսակցությունը որոշակի սոցիալական խմբի կողմից կիսվող սոցիալական իդեալի կրողն է: Այն, առաջին հերթին, համախոհ անհատների խումբ է:

Սոցիալիստական (սոցիալ-դեմոկրատական) տեսանկյունից կուսակցությունը ոչ միայն իդեալների կրողն է, այլև որոշակի դասի շահերի արտահայտիչը: Այստեղ կուսակցության կարևոր բնութագիրը նրա զանգվածային անդամակցությունն է:

Կոմունիստական մեկնաբանությունը կուսակցությունը ներկայացնում է ոչ միայն որպես որոշակի դասի շահերի կրող և նրա կամքի արտահայտություն, այլև որպես ավանգարդ, առաջապահ, որը այս դասին տանում է դասակարգային պայքարի:

Կարծում ենք, որ պետք է վեր հանել «քաղաքական կուսակցություն» եական և տարբերակիչ հատկանիշները, որոնք էլ թույլ կտան ձևակերպել կուսակցություններին լիարժեք բնութագրող սահմանում:

Այս առումով քաղաքական գիտությունների դոկտոր Գարիկ Զեռյանն իր «Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը» աշխատությունում առաջարկում է «քաղաքական կուսակցություն»-ների առավել լիարժեք սահմանման ձևակերպման համար լուծել հետևյալ երեք խնդիրները.

1. Նշել այն հիմնական և ամենաառաջնային բնորոշիչ չափանիշը, որի վրա պետք է կառուցել քաղաքական կուսակցություն հասկացության սահմանումը:

2. Որոշել, կուսակցություններին քաղաքական համակարգի մյուս տարրերից առանձնացնող հատկանիշները:

3. Առաջադրել և հիմնավորել քաղաքական կուսակցություն հասկացության սահմանման այլ տարբերակ, որը չի կորցնի իր լիարժեքությունը ժամանակի և տարածության մեջ տեղաշարժի ընթացքում:

Առաջին խնդրի լուծման ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները մեզ համոզիչ կերպով բերում են այն հետևության, որ կուսակցությունը քաղաքականությանը մասնակցելու և քաղաքական գործունեության համար միավորված մարդկանց խումբ է: Զաղաքականությամբ զբաղվելը և քաղաքական գործունեություն ծավալելը, մեր կարծիքով, կուսակցությունների էության բացահայտման առաջնային գործոններն են և իհարկե՝ հիմնական ու բնորոշիչ չափանիշը: Ցանկանալով մասնակցել քաղաքականությանը մարդիկ միավորվում են կուսակցությունների մեջ: Սա է կուսակցությունների առաջացման գլխավոր պատճառը, մնացյալը երկրորդական են և ածանցվում են դրանից: Կուսակցությունը կարող է արտահայտել որոշակի սոցիալական խավի շահերը, կամ ընդհակառակը, կարող է հանդես գալ ապադասակարգային, «համազգային», «համաժողովրդական» քողով, կարող է ունենալ կուսակցական գաղափարախոսություն, կարող է և հրաժարվել իրեն քաղաքական որևէ դոկտրինայի հետ շաղկապելուց, կարող է ընդունել բազմազան կազմակերպչական ձևեր, կարող է մասնակցել կամ չմասնակցել ընտրություններին և այլն:

Անկախ դրանցից, կուսակցությունը կուսակցություն է դառնում, երբ ընդգրկվում է քաղաքականության մեջ: Զաղաքականությունից դուրս գտնվող ոչ մի կազմակերպություն չի կարող համարվել կուսակցություն, որի ապացույցն է այն, որ բոլոր ուսումնասիրողներն էլ «քաղաքական»-ը միացնում են «կուսակցություն»-ին, հասկացությունը բնորոշելով միայն «քաղաքական կուսակցություն» տերմինով: Զաղաքական գործունեությամբ զբաղվելու ներքին մղումը անհատներին հավաքում է կազմակերպության մեջ, այնուհետև որոշվում, ձևակերպվում ու հստակեցվում է միավորվածների քաղաքական շահը, հետո նոր ընտրվում է գոյություն ունեցող գաղափարախոսություններից և քաղաքական դոկտրինաներից որևիցե մեկը, որն ամենահարմարն ու հրապուրիչը կարող է լինել հասարակության առավել բազմամարդ սոցիալական խավերի ու դասակարգերի համար:

Կարող ենք ֆիքսել, որ հասկացության սահմանման համար, որպես առաջնային չափանիշ պետք է ընտրել քաղաքական գործունեություն ծավալելու, քաղաքական գործընթացին մասնակցելու և անմիջականորեն քաղաքական ոլորտի մեջ ընդգրկված լինելու հան-

գամանքը, որն առավելագույնս ճիշտ կբնութագրի քաղաքական կուսակցությունը:

Սակայն կուսակցություններից բացի քաղաքական գործընթացին մասնակցում են նաև քաղաքական համակարգի այլ սուբյեկտներ (հասարակական-քաղաքական շարժումներ, ճնշման խմբեր, լոբբիստական կազմակերպություններ և այլն): Նրանցից մի քանիսն իրենց հատկանիշներով շատ նման են քաղաքական կուսակցություններին: Այստեղ անհրաժեշտ է լուծել երկրորդ խնդիրը՝ որոշել քաղաքական կուսակցությունների մյուս հատկանիշները, որով էլ հնարավոր կդառնա տարանջատել նրանց նմանատիպ այլ քաղաքական սուբյեկտներից:

Պետք է առանձնացնել քաղաքական կուսակցությունների հետևյալ տարբերիչ հատկանիշները.

1. Քաղաքական կուսակցությունն ձևավորվում է ընդհանուր քաղաքական շահերի հիման վրա, որոնք արտահայտում են կուսակցության ձգտումը պետական իշխանության, որպես գործիքի, հիմնադիրների քաղաքական ծրագրերի իրականացման համար: Պետական իշխանության նվաճումից հետո նրա գործունեությունն ուղղորդվում է՝ հարմարեցվում է երկու նպատակների իրականացմանը, որոնք են.

ա) պահպանել նվաճված պետական իշխանությունը,

բ) գործադրել պետական իշխանությունը կուսակցական էլիտայի շահերին համապատասխան:

Կուսակցության, որպես քաղաքական ինստիտուտի, առանձնահատկությունը, դա չքողարկված բացահայտ պայքարն է քաղաքական, պետական իշխանության համար: Ինչպիսի ծրագրային դրույթներով էլ, որ նա հանդես գա (սոցիալիզմի կառուցում, ազգային այս կամ այն խնդրի լուծում, բնապահպանություն և այլն), հիմնականը միշտ մնում է իշխանության տիրապետման հարցը: Սրանով էլ քաղաքական կուսակցությունն առաջին հերթին տարբերվում է հասարակական կազմակերպությունների մյուս տարատեսակներից, որոնք նույնպես մասնակցում են քաղաքական կյանքին, բայց չեն ձգտում հասնել պետական իշխանության վրա անմիջական վերահսկողության:

2. Քաղաքական կուսակցության գործունեության ծրագրավորում ցանկացած պատմական ժամանակահատվածում

Եւ ցանկացած քաղաքական իրադրության պայմաններում:

Կուսակցության ծրագրային դրույթներն արտահայտում են.

ա) այն հասարակարգի մոդելը, որն ըստ կուսակցության պաշտոնական տեսակետի իդեալական է,

բ) աշխարհայացքային պատկերացումները,

գ) կուսակցության գաղափարախոսությանն ու կուսակցականների գաղափարական միասնության հենքը,

դ) գործելակերպը,

ե) այն արժեքները, որը նա կրելու է գործունեության ընթացքում,

զ) դավանվող քաղաքական դոկտրինան:

3. Սոցիալական կողմնորոշվածություն, որը ցույց է տալիս, թե տվյալ կուսակցության ընտրազանգվածի մեջ, ո՞ր սոցիալական խավերն են մեծամասնություն կազմում, որոնց շահերի արտահայտչի պարտավորվածությամբ ձգտում է հանդես գալ կուսակցական ղեկավարությունը:

4. Ձևավորված կազմակերպական կառուցվածք, տեղական և համազգային (համապետական) մարմինների մշտական կապով, որն արտացոլվում է կանոնադրության մեջ:

5. Գործունեության երկարաժամկետություն եւ անընդհատություն, այսինքն՝ երկարատև գործող կազմակերպություն, որի հետ իրենց քաղաքական նպատակների իրականացման հույսը կապում են կուսակցության ղեկավարներն ու շարքային անդամները: Այս հատկանիշը հնարավորություն է տալիս քաղաքական կուսակցություններին տարբերել կլիկներից, դավադրական խմբերից, քաղաքական կլաններից, որոնք ստեղծվում են որևէ անհատ գործչի շուրջ և անմիջապես վերանում են քաղաքական ասպարեզից նրա հեռանալուց հետո:

6. Մասնակցություն պետական իշխանության համապետական և տեղական օրենսդիր ու գործադիր մարմինների ընտրությունների նախապատրաստմանն ու անցկացմանը: Այս հատկանիշը քաղաքական կուսակցություններին օժտում է պետական իշխանության սուբյեկտի կարգավիճակով և իրավական պետության մեջ հանգեցնում է կուսակցությունների ինստիտուցիոնալիզացմանը (որպես քաղաքական ինստիտուտ՝ կուսակցությունների իրավական ճանաչում):

7. Հասարակության լայն աջակցության ապահովմանը

Նպատակաուղղված գործունեություն: Հասարակական օժանդակության ապահովումը և ընդլայնումը կուսակցության կենսունակության չափանիշն է, որի բացակայությունը տանում է կուսակցության մահացման, որպես այդպիսին, կամ էլ հանգեցնում է նրա ձևափոխությանը:

8. Հասարակության մեջ գոյություն ունեցող սոցիալ-քաղաքական հակասությունների արտահայտում: Ոչ մի կուսակցություն չի կարող շրջանցել սոցիալ-քաղաքական հակասությունները, էթնիկական, կրոնական և այլ բնույթի հակամարտություններն ու մնալ չեզոք: Կուսակցությունները հաճախ ծնվում են հենց այդ հակամարտությունների ծագման արդյունքում՝ արտահայտելով հակամարտող կողմերի շահերը: Որպես կանոն ներքաղաքական հակասություններն ուղեկցվում են նաև երկու փոխկապակցված երևույթներով, որոնք են հակամարտող կողմերի կուսակցականացումն ու կուսակցությունների բևեռացումը:

9. Պետության մեջ հատուկ կարգավիճակ (ի տարբերություն քաղաքական համակարգի մյուս տարրերի), որը ներառում է

- ա) կապ պետական կառավարման մեխանիզմի հետ,
- բ) հատուկ իրավական ռեժիմ
- գ) առանձնահատուկ սահմանադրաիրավական դրություն
- դ) գործունեության հատուկ իրավական կարգավորում:

10. Կուսակցության մեջ անհատ քաղաքացիների միավորման կամավորություն:

Ամփոփելով քաղաքական կուսակցությունների հիմնական՝ ամենաառաջնային բնորոշիչ հատկանիշը և վերը թվարկված տարբերակիչ տասը այլ հատկանիշներ՝ Զեռյանն առաջարկում է կուսակցություն հասկացության հետևյալ սահմանումը. «Քաղաքական կուսակցությունը քաղաքական գործունեությամբ զբաղվող, քաղաքական կյանքին եւ քաղաքական գործընթացին մասնակցող մարդկանց կազմակերպությունն է (խումբը), որը ձեւավորվում է քաղաքական շահի ու նպատակների ընդհանրության հիմքի վրա: Այն հանդիսանում է քաղաքական ինստիտուտ, քաղաքական-իրավական համակարգի բաղկացուցիչ մաս»:

Կուսակցության բազմաթիվ սահմանումներից կարելի է առանձնացնել նաև Ջոզեֆ Լապալումբարայի և Մայրոն Վայների սահմանու-

մը, որոնք կուսակցությունը սահմանել են որպես չորս բնութագիր ունեցող կազմակերպություն՝

- գաղափարախոսություն,
- որոշակի կազմակերպության առկայություն,
- նպատակը քաղաքական իշխանություն ձեռք բերելն ու իրականացնելն է,
- ընտրողների առավելագույն թվի աջակցությունն ապահովելու ցանկությունը:¹

Այս առումով պետք է նշել, որ Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» վերտառությամբ 1-ին գլխի 8-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ կուսակցությունները կազմավորվում և գործում են ազատորեն:

Սահմանադրությունը չի պարունակում կուսակցության հասկացությունը, որն իր ամրագրում է ստացել «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում (սույն գլխի շրջանակներում այսուհետ նաև՝ Օրենք):

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է կուսակցության հասկացությունը, մասնավորապես՝ կուսակցությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամավոր միավորում է, որի նպատակը հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելն է:

Նույն հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ կուսակցությունը պետական գրանցման պահից ձեռք է բերում ոչ առևտրային իրավաբանական անձի կարգավիճակ:

Վերոնշյալ իրավանորմը մեկնաբանելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ կարող ենք նշել, որ օրենսդիրը կարևոր է կուսակցության՝ որպես միավորման հետևյալ հատկանիշները.

¹ Stå Lapalombara J., Werner M. Political Parties and Political Development. Princeton, New Jersey, 1966. Էջ 6.

1. ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ - կուսակցությունը կամավոր միավորում է,

2. ՄԻԱՎՈՐՄԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ - կուսակցության անդամ կարող են լինել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

3. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ - այն պետական գրանցման պահից ձեռք է բերում ոչ առևտրային իրավաբանական անձի կարգավիճակ,

4. ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ - այն է՝ քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելը,

5. ԱՅԴ ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ - այդ նպատակն իրագործվում է հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով:

• **Կուսակցության Հիմնական գործառույթները ժողովրդավարական համակարգում.**

Ժամանակակից պետությունների կուսակցություններին վերաբերող իրավական ակտերի մեջ հատկապես կարևոր են այն հոդվածները, որոնք նպատակ ունեն որոշել քաղաքական կուսակցությունների ֆունկցիաները:

Կուսակցության ֆունկցիան նրա գործունեության վերջնական նպատակներով ու խնդիրներով պայմանավորված գործողությունների էությունն է և ուղղությունները:

Արդի իրավագիտական և քաղաքագիտական մի շարք ուսումնասիրությունների մեջ առանձնացվում են քաղաքական կուսակցությունների հետևյալ գործառույթները.

• քաղաքական կարծիքի ձևավորման գործառույթ-կուսակցությունները ձևակերպում և արտահայտում են սոցիալական խմբերի հանրային ակնկալիքները և պահանջները՝ փոխանցելով դրանք քաղաքական համակարգին:

• ընտրության գործառույթ-կուսակցությունները հավաքագրում են քաղաքական կադրեր և ձևավորում ապագա սերունդների քաղաքական գործիչներ: Կուսակցությունները ընտրում են անհատների և ներկայացնում որպես թեկնածուներ ընտրություններին:

- ինտեգրման գործառույթ- կուսակցությունները մշակում են հասարակության առջև ծառացած հիմնախնդիրների լուծմանը նպատակաուղղված քաղաքական կուրս և ծրագիր: Կուսակցությունները տարբեր շահերը միավորում են ընդհանուր քաղաքական նախագծի մեջ և այն վերածում քաղաքական ծրագրի, որի շուրջ քարոզչություն են իրականացնում՝ մեծամասնության համաձայնությունն ու աջակցությունը ստանալու նպատակով:

- սոցիալիզացիայի և մասնակցության գործառույթ-կուսակցությունները խթանում են քաղաքացիների քաղաքական սոցիալիզացիան և մասնակցությունը: Դրանք կապ են հաստատում քաղաքացիների և քաղաքական համակարգի միջև՝ հնարավորություն ընձեռելով անհատներին և խմբերին՝ մասնակցելու քաղաքական կյանքին և հասնելու հաջողության:

- քաղաքական իշխանության իրագործման գործառույթ-կուսակցությունները մասնակցում են ընտրություններին՝ քաղաքական պաշտոններ զբաղեցնելու նպատակով: Սովորաբար կուսակցական ժողովրդավարությունների պայմաններում, պետական իշխանության զգալի մասը ձևավորվում է քաղաքական կուսակցություններից:

- լեգիտիմացման գործառույթ-քաղաքացիների, հասարակական խմբերի և քաղաքական համակարգի միջև կապ հաստատելով՝ կուսակցությունները նպաստում են քաղաքական կարգի խորարմատացմանը քաղաքացիների գիտակցության և հասարակական ուժերի մեջ:

Հետաքրքրական է նաև Կլաուս ֆոն Բոյմեի կողմից մատնանշված կուսակցական գործառույթները: Դրանք են

- կուսակցական պայքարի և հասարակության զարգացման նպատակների սահմանում,

- սոցիալական շահերի կուտակում և արտահայտում,

- քաղաքացիների մոբիլիզացիա և սոցիալականացում, հիմնականում ընտրարշավներում.

- իշխող վերնախավի հավաքագրում և պետական կառույցների ձևավորում:

Անկայուն, զարգացող ժողովրդավարություններում քաղաքական կուսակցությունները կարող են նաև ծառայել.

- հասարակության մեջ լարվածության թուլացմանը՝ քաղաքական պայքարը փողոցներից խորհրդարան տեղափոխելով,
- հարթեցնել սուր քաղաքական հակասությունները՝ խորհրդարաններում տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչների համատեղ աշխատանքի միջոցով,
- հանրային գիտակցության մեջ արմատավորել ժողովրդավարական արժեքներ և նորմեր,
- զարգացնել քաղաքական պայքարի քաղաքակիրթ ավանդույթներ,
- ընտրարշավին հաղորդել ներդաշնակություն և կառուցվածք,
- ճշգրտել կառավարության քաղաքականությունը՝ ընդդիմադիր կուսակցությունների միջոցով կառավարության վրա ճնշում գործադրելով:

Կարևոր է նկատել, որ կուսակցությունների գործառույթի՝ Հայաստանի Հանրապետության իրավակարգում ունեցած ընդգծված կարևորությունն արձանագրված է ամենաբարձր՝ Սահմանադրության մակարդակում: Այսպես. «Սահմանադրական կարգի հիմունքները» վերտառությամբ գլխի «Գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը» վերնագրով 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կուսակցությունները նպաստում են ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը:

Կուսակցություններին ներհատուկ « ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման ու արտահայտման» գործառույթը ժամանակակից հասարակություններում ունի որոշակի առանձնահատկություններ և բազմաձև գործընթաց է: Քաղաքական կարծիքների և որոշումների ձևավորված վրա ահռելի ազդեցություն են ունենում զանգվածային լրատվամիջոցները, սոցիալական կազմակերպությունները, միավորումները, քաղաքացիական նախաձեռնությունները, կրոնական համայնքները, ինչպես նաև էլեկտրոնային հաղորդակցության ժամանակակից ձևերը՝ ինտերնետ, SMS, Facebook, Twitter և այլ վիրտուալ համայնքներ:

Այնուամենայնիվ, քաղաքական կուսակցությունները մնում են այն հիմնական դերակատարները, որոնք համախմբում են հանրային կարծիքը և ներկայացնում այն՝ քաղաքական որոշումների կայացման գործընթացում:

1.2 Զաղաքական կամքի ձևավորման գործընթացը

«Կամք» հասկացությունն արդեն իսկ առկա է իշխանության այն սահմանման մեջ, որը ելնում է նրանից, որ մեկ սուբյեկտի իշխանությունն ուրիշ անհատների կամ խմբերի նկատմամբ իրենից ներկայացնում է հարկադրանքի հնարավորություն՝ ստիպելու նրանց կատարել այն, ինչ առանց այդ հարկադրանքի նրանք չէին անի: Այսինքն՝ խոսքը իշխանության օբյեկտի՝ սուբյեկտի կամքին ենթարկվելու մասին է: Այս տեսակետը կարելի է հանդիպել Մաքս Վեբերի աշխատություններում:

Սակայն «քաղաքական կամք» արտահայտությունը շատ հաճախ օգտագործվում է առանց հստակեցնելու, թե որն է նրա բովանդակությունը, ինչ ենք հասկանում «քաղաքական կամք» ասելով: Օրինակ՝ ասում են. «Տվյալ խնդիրը լուծելու համար կառավարությունը պետք է դրսևորի քաղաքական կամք»: Սակայն ի՞նչ է «քաղաքական կամքը»՝ չի հստակեցվում:

«Քաղաքական կամք» արտահայտության բովանդակությունը բացահայտելու համար նախ անհրաժեշտ է պարզել «կամք» հասկացությունը, որի վերաբերյալ առկա է հոգեբանական հարուստ գրականություն:

Կամքը գիտակցության կարգավորիչ կողմն է, որն արտահայտվում է մարդու կողմից նպատակասլաց ու դժվարությունների հաղթահարում պահանջող գործողություններ և արարքներ կատարելու ընդունակության մեջ:

Վաղ ժամանակներից կամքի վերաբերյալ ստեղծվել է երկու հակադիր տեսակետ՝ մատերիալիստական և իդեալիստական:

Իդեալիստները կամքը համարում են այնպիսի հոգևոր ուժ, որը կապված չէ ո՛չ ուղեղի գործունեության, ո՛չ էլ շրջապատող միջավայրի հետ: Նրանք պնդում են, որ կամքը մեր գիտակցության բարձրագույն ներկայացուցիչն է, որը կոչված է կատարելու կառավարող ֆունկցիաներ: Կամքը ոչ ոքի և ոչինչի չի ենթարկվում. այն ազատ է:

Մատերիալիստները գտնում էին, որ կամքն ունի նյութական հիմք՝ նյարդային, ուղեղային պրոցեսների ձևով: Անհնար է կամքն անջատել մատերիայից, ուղեղից: Հենց որ թույլատրվում է այդպիսի անջատում, կամքը անմիջապես դադարում է գոյություն ունենալուց

և վերածվում է դատարկ, ոչ մի նշանակություն չունեցող հասկացության: Մատերիալիստները պնդում են, որ մարդը սերտորեն կապված է շրջապատող միջավայրի հետ: Առանց որոշակի արտաքին պայմանների նա չի կարող ո՛չ պահպանել և ո՛չ էլ շարունակել կյանքը: Կամքը մարդու գիտակցության մեջ արտաքին պայմանների արտացոլման յուրատեսակ ձև է:


Շարադրելով մատերիալիստական տեսակետ կամքի էության վերաբերյալ և այն հակադրելով իդեալիստականին, Ֆ. Էնգելսը գրում է. «Ազատությունը ոչ թե երևակայական անկախություն է բնության օրենքներից, այլ այդ օրենքների իմացությունը և այդ իմացության հիման վրա օրենքները՝ պլանաչափորեն որոշող նպատակների ծառայեցնելու հնարավորությունը»: «Յետևաբար, կամքի ազատությունը ոչ այլ ինչ է, բայց եթե բանիմացաբար որոշում կայացնելու ընդունակություն»²:

Մարդու կամքը դրսևորվում է գործողություններում, արարքներում, որոնք կատարվում են նախօրոք որոշված նպատակով: Սակայն այնպիսի գործողություններ, ինչպիսիք են քայլերը, բազմապատկման աղյուսակի սահմաններում՝ բանավոր հաշվումը, մերձավորների, հարազատների հետ խոսակցությունը և այլն, առանձնապես կամային չեն: Այդ գործողությունները նպատակասլաց են, սակայն նրանցում կամային կողմը աննշան է:

Կամային գործունեությունը ենթադրում է նպատակի, ինչպես նաև արգելքների, դժվարությունների, յուրօրինակ լարվածության առկայություն:

Ընդունված է տարբերել պարզ և բարդ կամային գործողություններ:


Որպես կանոն, պարզ գործողություններն ունեն երկու օղակ՝



² Տե՛ս Ֆ. Էնգելս «Անտի-Դյուրինգ», Երևան, 1957, էջ 152:

Տվյալ դեպքում մի օղակն անմիջապես հետևում է մյուսին, առանց միջանկյալ օղակների:

Բարդ կամային գործողության մեջ պարզորոշ նշվում են երեք օղակ՝ նպատակի գիտակցումը, պլանավորումն ու իրագործումը:



ՆՊԱՏԱԿԻ ԳԻՏԱԿՑՈՒՄ - Պահանջը արտացոլվում է մարդու գիտակցության մեջ աղոտ, ոչ պարզ հակման ձևով: Այն աղոտ է, որովհետև պահանջը չնչին է, նրա ազդակները պարզորոշ չեն արտացոլվում գիտակցության մեջ: Պահանջի աճման հետ միասին հակումը վերածվում է ցանկության: Որևէ բան ցանկանալ նշանակում է գտնվել այնպիսի վիճակում, երբ կարող ես արտահայտել, թե կոնկրետ ինչ է քեզ անհանգստացնում, ինչպիսի կարիք ունես և ինչով այն կարելի է բավարարել: Ցանկությունը պահանջմունքի իդեալականորեն առկա բովանդակությունն է: Ցանկանալ դեռևս չի նշանակում գործել ցանկությունը բավարարելու ուղղությամբ: Չնայած ցանկության մեջ արտացոլված է պահանջմունքի բովանդակությունը, նրանում գործունեություն, ակտիվ տարր չկա: Վարքի անմիջական դրդապատճառ, նպատակ դառնալուց առաջ ցանկությունը քննարկվում է, պատճառաբանվում: Քննարկման ընթացքում մենք բերում ենք «կողմ» և «դեմ» փաստարկներ: Այլ կերպ ասած, մտավոր լարված աշխատանք է կատարվում ցանկության ընտրության, մասնատման և հիմնավորման համար: Հաճախ բախվում են անհամատեղելի ցանկությունները, ինչպես և փաստարկներն ու շարժառիթները: Հակադիր, չհամընկնող մղումների բախումը, երբ նրանցից պետք է ընտրություն կատարել, ընդունված է անվանել դրդապատճառների պայքար: Ծավալվում է ցանկությունների ու դրդապատճառների պայքար: Սա բերում է լարվածություն: Լարվածությունը առանձնապես

սրվում է այն դեպքերում, երբ ստիպված է լինում ընտրություն կատարել բանականության և զգացմունքների փաստարկների միջև, անձնական բնույթի և հասարակական պահանջմունքների ու հետաքրքրությունների հետ կապված դրդապատճառների միջև, պարտքի, պարտականությունների և անձնական հետաքրքրությունների, ցանկությունների, զգացմունքների միջև:

Դրդապատճառների պայքարը ցույց է տալիս, թե մարդը, որքան է ընդունակ լարվելու, ջանքեր գործադրելու, պատասխանատվություն կրելու այն հետևանքների համար, որ կախված է առաջ քաշված նպատակին հասնելու կամ չհասնելու, այսինքն՝ կամք դրսևորելու հետ:

Դրդապատճառների պայքարում մեծ չափով դրսևորվում է մարդու կամքի ուժը, սակայն դա կամքի բացարձակ ցուցանիշը չէ: Դրդապատճառների պայքարի ընթացքում ձևավորվում է գործունեության նպատակը, որ վերջնականորեն արտահայտվում է վճռի ընդունման մեջ: Վճիռ ընդունել նշանակում է մի ցանկություն սահմանազատել մյուսներից և դրանով իսկ ստեղծել նպատակի իդեալական պատկերը:

ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ - Կամային բարդ գործողության մեջ նպատակին հասնելու ուղիների պլանավորումը հաջորդում է վճռի ընդունմանը: Ճիշտ է, երբեմն նպատակին հասնելու եղանակները ընդհանուր գծերով նշվում են նպատակի ձևավորման հետ միաժամանակ և ասես ծնվում են հենց նպատակից: Սակայն այդ հանգամանքներում ևս նրանց մանրամասն մշակումն իրագործվում է պրակտիկ գործունեությունից անմիջապես առաջ: Նպատակին հասնելու միջոցների, ինչպես և նպատակների ընտրության ժամանակ կարող են լինել դժվարություններ, որոնք վերապրվում են որպես լարվածություն: Մի կողմից, դժվարությունները առաջանում են այն պատճառով, որ նպատակին հասնելու որոշ ուղիներ ու միջոցներ թվում են հասարակ, բայց չեն համապատասխանում բարոյական սկզբունքներին ու նորմաներին, վնաս են հասցնում այլ մարդկանց: Մյուս կողմից, ուրիշ ուղիներ կարող են ավելի դժվար լինել, կարող են պահանջել վիթխարի չափով էներգիայի վատնում, բայց չհակասեն բարոյական ու էթիկական նորմաներին, չշոշափեն մյուս մարդկանց պատիվն ու խիղճը: Այլ խոսքով, ներքին լարվածություն է ստեղծվում այն պատճառով, որ կոնֆլիկտային իրադրություն է ստեղծվում նպատակին հասնելու հեշտ ուղու պատկերացման և նրա ընտրության անհնարինության

միջև: Երբ այդ կոնֆլիկտային իրադրությունը լուծվում է, լարվածությունը իջնում է:

ԻՐԱԳՈՐԾՈՒՄ - հենց որ նշվում են ուղիներն ու միջոցները, մարդը սկսում է ընդունած վճռի գործնական իրագործումը: Նա իր վարքն այնպես է կառուցում, որ գիտակցության մեջ եղած մտահղացումը մարմնավորվի իրերի, առարկաների, շարժման, աշխատանքային, մտավոր հմտությունների մեջ և այլն: Նպատակի գործնական իրականացման ընթացքում մարդու վարքը ենթարկվում է առաջ քաշված խնդրին և նախօրոք պլանավորված գործողության եղանակներին: Սակայն մարդ ոչ միայն գործում է, այլև վերահսկում է և ուղղումներ մտցնում իր գործողությունների մեջ: Յուրաքանչյուր պահ նա ստացված արդյունքը համեմատում է նպատակի իդեալական կերպարի (կամ նրա մի մասի) հետ, որ ստեղծված էր վաղօրոք: Այս ձևով ձեռք բերած մասնակի արդյունքը դասվում է արդեն ձեռք բերածի շարքը և իդեալական կերպարի վրա դրվում³:

Նպատակի գործնական իրագործումը ուղեկցվում է խոչընդոտների հաղթահարումով: Խոչընդոտներ կարող են հարուցել առարկաները, իրերը, նյութական պրոցեսները, մարդիկ, ժամանակը, տարածությունը: Դրա հետ միասին կարող են ծագել անձնական կարգի արգելքներ, օրինակ՝ հոգնածությունը, հիվանդությունը, գիտելիքների, հմտությունների պակասը: Արտաքին ու ներքին խոչընդոտները, արտացոլվելով գիտակցության մեջ, ծնում են լարվածությունը:

Կոնֆլիկտային իրադրությունը լուծվում է կամ դեպի նպատակը հաջորդական անցումով, հետևապես՝ կամային ջանքերի պահպանման միջոցով, կամ պրակտիկ գործունեությունից, կամային ջանքեր գործադրելուց հրաժարվելու միջոցով, որ վերջին հաշվով հանգեցնում է նպատակից հրաժարվել:

Կարևոր է նշել, որ պրակտիկ գործունեությունից հրաժարվելն ինքնին դեռևս անձի կամագրկության ցուցանիշ չէ: Եթե մարդ դադարում է նպատակին ձգտելուց, ցանկություն չունենալու հետևանքով, ստեղծված լարվածությունը հաղթահարելու ընդունակություն

³ Տե՛ս «Հոգեբանություն» ուսումնական ձեռնարկ մանկավարժական ինստիտուտների համար. Ս.Գ. Կովալյովի, Ա.Ս. Ստեպանովի, Ս.Ն.Շաբալինի խմբագրությամբ, Երևանի Համալսարանի հրատարակչություն, Երևան, 1970, էջ 401-408, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/kovalski.pdf>:

չունենալու պատճառով կամ դադարեցնում է պրակտիկ գործունեությունը առանց որևէ ծանրակշիռ պատճառի, այն կամքի թուլության ցուցանիշ է: Իսկ եթե անձն ունի լուրջ պատճառներ նպատակին հասնելու ձգտումը դադարեցնելու և այն կատարվում է որպես գիտակցված ընտրություն, վերջինս չի կարող բնութագրվել որպես կամազուրկ:

Կամքի հասկացությունը և դրա գործունեության փուլերի բացահայտման պայմաններում և այդ համատեքստում կարող ենք քննարկել «քաղաքական կամք» հասկացությունը և այն, թե ի՞նչ է պետք հասկանալ «քաղաքական կամք» արտահայտության տակ:

Քաղաքական առաջնորդների, հատկապես՝ իշխանական հիերարխիայում վերին օղակներում գտնվող անձանց քաղաքական կամքի ամենատարածված ընկալումը հետևյալն է. դա առաջին ղեկավարի ունակությունն է հետևողականորեն իրականացնել իր առջև դրված նպատակները քաղաքական իշխանության ոլորտում:

Ավելին, որոշ հեղինակներ փորձում են տարբերակել քաղաքական կամքի ձևավորման և իրականացման հետևյալ փուլերը.

- ա) ընդհանուր (խմբային) կամքի կոուտակման փուլ,
- բ) քաղաքական կարիքների ձևակերպման և նպատակների վերածման փուլ,

գ) այդ նպատակների գործնական իրականացումը պետական մարմինների գործունեության միջոցով:

Ինչպես իշխանության ղեկավարի, այնպես էլ այն հաստատությունների գործունեության ընթացքում, որոնք պատասխանատու են այդ նպատակների իրագործման համար, կատարվում է նպատակների ճշգրտում՝ պայմանավորված որոշ դեպքերում արտաքին պայմանների փոփոխություններով, որոշ դեպքերում իշխանության ղեկավարի կամքով: Օրինակ՝ երբ պետության ղեկավարը, նախարարը կամ որևէ գերատեսչության ղեկավար հայտարարում է, որ որոշել է անգիջում պայքար սկսել որևէ երևույթի, օրինակ՝ կոռուպցիայի կամ հովանավորչության դեմ (այսինքն՝ դա իր նպատակն է), ապա նրա քաղաքական կամքը կարտահայտվի այդ երևույթների դեմ պայքարի հարցում իր իրական վճռականության, հետևողականության, խիզախության և սկզբունքայնության մեջ: Ուժեղ քաղաքական կամք ունեցող ղեկավարը պետք է նույնիսկ իր ամենամոտ հարազատին հեռացնի, պատասխանատվության ենթարկի, եթե պարզվի, որ վերջիններս

մեղադրվում են համանման գործողությունների կատարման մեջ: Իշխանության ղեկավարի վերաբերմունքն իր ընտանիքի անդամների, ազգականների, ընկերների վարքագծի նկատմամբ իրական փորձություն է նրա կամքի և անձի, հատկապես՝ նրա քաղաքական կամքի համար: Եթե նա վճռական ու հետևողական պայքար մղի կոռուպցիայի դեմ՝ անկախ նրանից, թե ով է ենթադրյալ կոռումպացված անձը («անկախ դեմքերից»), ապա նա կստանա ավելի բարձր հեղինակություն, ինչն անկասկած կուժեղացնի նրա իշխանությունը՝ հնարավորություն տալով լուծել ավելի լուրջ խնդիրներ: Ղեկավարի մոտ խսկապես ուժեղ քաղաքական կամքի առկայության մասին կարելի է դատել հիմնականում նրա գործունեության արդյունքներից, նրա հետևողականությունից ու վճռականությունից, այլ ոչ թե խոստումներից, որոնք կամ չեն իրականացվում, կամ կատարվում են միայն մասամբ:

Քաղաքական կամքը քաղաքական որոշումներ ընդունելու, որոշակի քաղաքական խնդիրներ և նպատակներ առաջադրելու և դրանք լուծելու և այդ կապակցությամբ իշխանությունն օգտագործելու ունակությունն է: Երբ իշխանության սուբյեկտը որոշում է կայացնում՝ կիրառել իշխանությունը մարդկանց կամ մարդկանց խմբերի (այսինքն՝ իշխանության օբյեկտների) նկատմամբ և այդ որոշումից հետո ձգտում է իրականում լուծել համապատասխան քաղաքական խնդիրները, ապա կարելի է ասել, որ նա սկսել է արտահայտել իր քաղաքական կամքը: Քաղաքական կամքի այսպիսի ընկալումը լիովին համընկնում է ժամանակակից անհատական հոգեբանության մեջ մարդու կամքի վերաբերյալ ընդունված ընկալումների հետ, որը ներկայացվել էր սույն հոդվածի առաջին մասում, որտեղ կամքը սահմանվել էր որպես՝ գիտակցության կարգավորիչ կողմը, արտահայտվում է նպատակասլաց ու դժվարությունների հաղթահարում պահանջող գործողություններ և արարքներ կատարելու ընդունակության մեջ:

Քաղաքական կամքը դրսևորվում է տարբեր իրավիճակներում, որոնց վերաբերյալ մարդկության պատմության մեջ բազմաթիվ օրինակներ կան: Սակայն դրանցից որոշներն առանձնապես տպավորիչ են, քանի որ ունեցել են կարևոր հետևանքներ ժողովուրդների կյանքում:

1. Պատերազմ սկսելու և հաղթանակի հասնելու որոշումը (օրինակ՝ Յուլիոս Կեսարի, Ալեքսանդր Մակեդոնացու կայացրած

որոշումները, Նապոլեոն Բոնապարտի կամ Զիտլերի որոշումները՝ հարձակվել Ռուսաստանի և Խորհրդային Միության վրա, Վ.Ի.Լենինի որոշումը՝ հեղափոխություն սկսել ժամանակավոր կառավարության և ցարական կարգի դեմ՝ Զոկտեմբերյան հեղափոխությունը և այլն) -այս որոշումները դրանք կայացրած գործիչների քաղաքական կամքի դրսևորումներ էին՝ անկախ այն բանից, թե ինչ գաղափարախոսական շարժառիթներից էին նրանք ելնում և ինչ արդյունքներ տվեցին այդ որոշումները երկարատև կամային և մտավոր ջանքերի արդյունքում:

2. Զաղաքական կամք է պահանջվում այն մարդուց, ով առաջադրում է իր թեկնածությունը բարձր ընտրովի պաշտոնի համար՝ լինի դա կազմակերպությունում, թե պետությունում: Առավելագույն կամք ու վճռականություն է պահանջում, իհարկե, համապետական ընտրություններին մասնակցությունը՝ որպես թեկնածու և պայքարի շարունակումը մինչև վերջ՝ հաղթանակի հասնելու նպատակով: Նման պայքարում պարտությունը չի նշանակում քաղաքական կամքի բացակայություն: Այն կարող է փաստել, որ հակառակորդը պարզապես ուներ ավելի ուժեղ կամք, ավելի լայն ռեսուրսներ և հմուտ աջակիցների թիվ:

3. Զաղաքական կամք անհրաժեշտ է բոլոր այն անձանց, ովքեր մասնակցում են քաղաքական գործընթացներին՝ կուսակցության անդամներ, առաջնորդների հետևորդներ և նույնիսկ սովորական ընտրողներ, որոնք որոշում են կայացնում՝ քվեարկել մեկ թեկնածուի օգտին և մյուսի դեմ: Սա նույնպես քաղաքական որոշում է: Զի կարող լինել քաղաքական որոշում՝ առանց այնպիսի հատկության մասնակցության, ինչպիսին է քաղաքական կամքը:

4. Զաղաքական կամք է անհրաժեշտ մարդուն նաև այն ժամանակ, երբ նա որոշում է սկսել քաղաքական ապստամբություն կամ հեղափոխական շարժում՝ գոյություն ունեցող քաղաքական կարգերի և պետության գործող դեկլարության դեմ:

Նույնիսկ քաղաքական «դավաճանին» անհրաժեշտ է ուժեղ քաղաքական կամք, քանի որ նա իր որոշմամբ և հետագա գործողություններով իրեն ենթարկում է «քաղաքական մահվան» վտանգի: Որոշումներ, որոնք կայացվում են կյանքի համար վտանգավոր պայմաններում և պահանջում են ռիսկի դիմել, պահանջում են կամք, իսկ

երթ խոսքը քաղաքական ռիսկային որոշումների մասին է, ապա՝ ուժեղ քաղաքական կամք:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ քաղաքական կամքը քաղաքականության սուբյեկտի հնարավորությունն է՝ հետևողականորեն իրականացնելու իր առջև դրված նպատակները քաղաքական իշխանության ոլորտում: Քաղաքական կամքի ձևավորման և իրականացման փուլերն են. համընդհանուր (միջխմբային) կամքի ակումուլյացիան (համախմբումը), քաղաքական պահանջ-մոլեքների մշակումն ու ձևակերպումը, որպես հետագա գործողությունների նպատակներ, այդ նպատակների մարմնավորումը պետական մարմինների պրակտիկ գործունեության մեջ, այդ նպատակների ճշգրտումն ու հարմարեցումը փոփոխվող հանգամանքներին և իշխանության օբյեկտի կամքին:

- Քաղաքական սոցիալիզացիա և կարծիքների ձևավորում

Քաղաքագետներ Գաբրիել Ալմոնդը և Ջեյմս Զոլեմանը գրում էին, որ «մենք չենք ժառանգում մեր քաղաքական վարքագիծը, վերաբերմունքները, արժեքներն ու գիտելիքները գենետիկորեն»⁴: Փոխարենը՝ մենք սկսում ենք ըմբռնել մեր դերը և «հարմարվում ենք» քաղաքական մշակույթին քաղաքական ուսուցման գործընթացի միջոցով⁵: Քաղաքական ուսուցումը լայն հասկացություն է, որը ներառում է թե՛ ակտիվ և պասիվ, և թե՛ պաշտոնական ու ոչ պաշտոնական ուղիները, որոնց միջոցով մարդիկ քաղաքականապես հասունանում են⁶:

Անհատները ձևավորում են «քաղաքական ես»՝ իրենց քաղաքական ինքնության զգացողությունը: Քաղաքական ինքնության ձևավորումը սկսվում է այն պահից, երբ երեխաները սկսում են զգալ, որ իրենք մաս են կազմում քաղաքական համայնքի: Նրանք ձեռք են բերում այնպիսի գիտելիքներ, համոզմունքներ և արժեքներ, որոնք օգնում են իրենց կողմնորոշվել կառավարության և քաղաքականության մեջ:

⁴ Տե՛ս Gabriel A. Almond and James S. Coleman, eds., *The Politics of the Developing Areas* (Princeton, NJ: Princeton University Press, 1960), 27:

⁵ Տե՛ս Pamela Johnston Conover, "Political Socialization: Where's the Politics?" in *Political Science: Looking to the Future*, Volume III, *Political Behavior*, ed. William Crotty (Evanston, IL: Northwestern University Press, 1991), 125–152:

⁶ Տե՛ս Carole L. Hahn, *Becoming Political* (Albany: State University of New York Press, 1998):

Քաղաքական սոցիալականացումը քաղաքական կյանքին մասնակցության առավել ընդհանրական, համալիր բնույթ կազմող այն գործոններից է, որը բովանդակում է մարդկանց քաղաքական հասունացման, նրանց սոցիալ-քաղաքական և հոգեկան կարողությունների բացահայտման, քաղաքական մասնակցության նախապատրաստման հետ կապված հիմնական գործընթացները:

Այլ կերպ ասած՝ անձի մոտքը քաղաքականություն, նրա նախապատրաստումը և ներգրավումը քաղաքական հարաբերություններում իրագործվում են նրա քաղաքական սոցիալականացման, քաղաքական նորմերի և արժեքների ընկալման ու յուրացման միջոցով: Իր հերթին, քաղաքական սոցիալականացումը, ընդգրկելով նոր սերունդների քաղաքական կյանքը, ապահովում է քաղաքական մշակույթի վերարտադրությունը և, որպես կանոն, թույլ է տալիս հասնել այն նվազագույն համաձայնությանը քաղաքացու և պետության միջև, որն ամենից առաջ երաշխավորում է կառավարման ռեժիմի հարաբերական կայունությունը:

Քաղաքական համակարգի պահպանմանը նպաստող բազմաթիվ գործոնների շարքում անձի քաղաքական սոցիալականացումը գրավում է կարևորագույն տեղ այնքանով, որքանով ոչ մի համակարգ չի կարող ունենալ միավորման և կայունության բավարար մակարդակ, եթե իր անդամների մեջ չստեղծի քաղաքական գիտելիքների, արժեքների և կողմնորոշումների որոշակի պաշար: Վերջին հաշվով, ցանկացած հասարակության զարգացման մակարդակը նշանակալիորեն կախված է այն բանից, թե կենսագործունեության ինչպիսի սոցիալ-քաղաքական արժեքներ են կրում իր անդամները:

Այսպիսով, քաղաքական սոցիալականացումը որոշակի քաղաքական գիտելիքների, արժեքների և նորմերի յուրացման, քաղաքական փորձի ձեռքբերման և փոխանցման գործընթաց է, որը թույլ է տալիս անձին՝ դառնալ քաղաքական կյանքի լիիրավ մասնակից:

Քաղաքական սոցիալականացումը՝ որպես ամբողջ կյանքում շարունակվող և հասարակայնորեն պայմանավորված գործընթաց, իր մեջ ներառում է այն բոլոր գործոնները, որոնք մարդուն դարձնում են քաղաքական անձ (քաղաքական գիտելիքներ, հայացքներ, համոզմունքներ, գործելու պատրաստակամություն, հոգևոր և առարկայական արժեքներ, գիտելիքներ և ընդունակություններ) և ունեն

քաղաքական բովանդակություն, ուղղորդված են դեպի քաղաքականությունը:

Քաղաքագիտական գրականության մեջ ընդունված է այն տեսակետը, որ քաղաքական սոցիալականացումն ունի երկու կողմ՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ կողմը փաստում է, որ անհատը շփման մեջ է օբյեկտիվ գործոնների հետ, ինչպես օրինակ սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր հարաբերությունները, ավանդույթները, նորմերը: Իսկ սուբյեկտիվ կողմը կապված է հասարակության գիտակցական և նպատակամղված գործունեության հետ, որն էլ կոչված է իր անդամների մեջ ձևավորել քաղաքական որակներ:

Հաջորդիվ պետք է քննարկել, թե որոնք ենք քաղաքական սոցիալականացման խնդիրները: Այն կոչված է լուծել հետևյալ հիմնական խնդիրները՝

- քաղաքական մշակույթի և քաղաքական գիտակցության հիմնական տարրերի ձևավորում,
- քաղաքական մշակույթի և քաղաքական գիտակցության հիմնական տարրերի փոխանցում նոր սերունդներին,
- հասարակության անդամների կողմից անհրաժեշտ քաղաքական փորձի կուտակման համար համապատասխան պայմանների ստեղծում,
- քաղաքական մշակույթի էական տարրերի ձևափոխություն՝ որպես փոփոխության անհրաժեշտ պայման և այլն:

Քաղաքական սոցիալականացման բնույթը, բովանդակությունը կախված է շատ գործոններից, դրանց թվում՝ մակրոմիջավայրի ազդեցություն, այսինքն՝ ժամանակաշրջանի բնույթը, պետության, ազգի, դասակարգի, այլ սոցիալական խմբերի, հասարակության քաղաքական մշակույթի, միկրոմիջավայրի ազդեցություն՝ ինստիտուտները և պաշտոնական հանրույթները, դպրոցները, ընտրությունները, առանձին անհատները և ներքին գեներտիկական գործոններ, որոնցից է ինքնադաստիարակությունը:

Քաղաքական սոցիալականացման վրա ազդող քաղաքական գործոնների թվին կարող ենք դասել պետական կարգի բնույթը և տիպը, քաղաքական ինստիտուտները, կուսակցություններ և շարժումներ, իսկ ոչ քաղաքական գործոններից են ընտանիքը, հասակակից-

ների խմբերը, կրթական ուսումնական հաստատությունները, աշխատանքը, մշակույթը, գիտությունը, արվեստը, ազգային ավանդույթները, ՉԼՄ-ը:

Անհատի քաղաքական սոցիալականացումը գործառնում է տարբեր մակարդակներում: Առաջին մակարդակը հասարակականն է, որում անհատն ընդգրկվում է այս ոլորտում ծագած լուրջ խնդիրների, մարտահրավերների ճնշմամբ: Օրինակ, երբ հասարակությունը կանգնած է բեկումնային փոփոխությունների եզրին, դա կարող է լինել հեղափոխություն, հանրաքվե և այլն, այս դեպքում անհատն իրադարձություններն իր համար ցանկալի հունով տանելու պատրվակով ընդգրկվում է այս կամ այն շարժման մեջ, քանի որ չի կարող անտարբեր մնալ շրջապատում տեղի ունեցող զարգացումների նկատմամբ:

Երկրորդ մակարդակը սոցիալ-հոգեբանականն է, քանի որ մարդը՝ քաղաքականապես սոցիալականացվում է ոչ միայն սոցիալական մեծ խմբում՝ դասակարգ, կուսակցություն, այլև փոքր խմբերում, ինչպես օրինակ, ընտանիք, ընկերական շրջապատ, հետևապես՝ նրա քաղաքական սոցիալականացումը նպաստում է միջանձնային հարաբերությունների խորացմանը: Միջանձնային շփումներն օգնում են անհատին ավելի ճիշտ կողմնորոշվել քաղաքական իրադարձություններում:

Երրորդ մակարդակը ներանձնային է, երբ քաղաքական սոցիալականացումը տեղի է ունենում մարդկանց շահերի, պահանջմունքների, արժեքային կողմնորոշումների ազդեցության տակ:

Սոցիալականացման գործընթացի հանդեպ հետաքրքրությունն արդի ժամանակաշրջանում գլխավորապես պայմանավորված է երկու նոր երևույթներով: Առաջինն այն է, որ սոցիալականացման գործընթացն առավել նշանակալից դարձավ ամբողջ աշխարհում դպրոցական կրթական համակարգի ընդլայնման հաշվին: Տեխնոլոգիական հեղափոխությունը հնարավորություններ ստեղծեց ժամանակակից կրթական համակարգի ստեղծման համար՝ միաժամանակ անհրաժեշտ դարձնելով սոցիալական փորձի վերհանումը, որին ենթարկվում են բնակչության տարբեր շերտերին պատկանող երեխաներ: Այսպես, քաղաքական լիդերները հնարավորություն ունեցան փոխանցելու քաղաքական արժեքները երիտասարդության լայն զանգվածներին այնպիսի միջոցներով, որոնցով կարելի է մանիպուլյացիա անել:

Երկրորդ գլխավոր պատճառն այն է, որ սոցիալականացումն օգնում է «մասնակցային ոգու» տարածմանը: Անկախ փաստացի իշխանության ռեալ բաշխումից, լիդերները հարկադրված են տեսականորեն հիմնավորել իրենց ղեկավարելու իրավունքն այն մարդկանց աջակցությամբ, ովքեր կախվածության մեջ են իրենց կողմից ընդունվող որոշումներից⁷:

Քաղաքական սոցիալիզացիան քաղաքական ուսուցման յուրահատուկ տեսակ է, որի միջոցով մարդիկ ձևավորում են այնպիսի հարաբերություններ, արժեքներ, համոզմունքներ, կարծիքներ և վարքագծեր, որոնք նպաստում են իրենց՝ որպես լավ քաղաքացիներ ձևավորմանը տվյալ երկրում: Սոցիալիզացիան հիմնականում միակողմանի գործընթաց է, որի ընթացքում երիտասարդ սերունդը ձեռք է բերում քաղաքական աշխարհի ընկալում՝ մեծահասակների և մեղիայի հետ փոխազդեցության միջոցով: Ըստ ամերիկացի քաղաքագետ Ֆրեդ Գրինշտեյնի այն տեղի է ունենում հետևյալ մոդելով⁸:



⁷ Տե՛ս Հասմիկ Շափաղայան, «Քաղաքական սոցիալականացում», դասախոսությունների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 31-44:

⁸ Տե՛ս Fred I. Greenstein, Children and Politics, New Haven, CT: Yale University Press, 1969:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ քաղաքական սոցիալականացումը քաղաքական և ոչ քաղաքական գործոնների ազդեցությամբ անձի քաղաքական գիտակցության և քաղաքական կամքի ձևավորման գործընթացների ամբողջությունն է, որն ի վերջո իր արտահայտությունն է գտնում նրա քաղաքական վարքի մեջ:

Արդյունքում, վերը թվարկված բազմաբնույթ և բազմաշերտ գործոնների ազդեցությամբ ձևավորված ժողովրդի քաղաքական կամքն իր արտացոլումն է գտնում ընտրություններում՝ կուսակցությունների (դաշինքների) ներկայացրած ծրագրային-գաղափարախոսական հայացքների հիման վրա պետական իշխանության մարմինների ձևավորմամբ, որոնք էլ արդեն պետք է անշեղորեն իրացնեն ժողովրդի արտահայտած քաղաքական կամքը:

Ժողովրդի արտահայտած քաղաքական կամքը, հատկապես խորհրդարանական կառավարման համակարգ ունեցող երկրներում, գլխավորապես իրացվում է ընտրությունների արդյունքներում խորհրդարանի մեծամասնությունը ձևավորած քաղաքական ուժի (դաշինքի) կողմից՝ մեծամասնության կառավարմամբ:

Մեծամասնության կառավարմամբ իրացվող ժողովրդի քաղաքական կամքը, սակայն, ժողովրդավարության ձևական կողմն է, որը ժողովրդավարության համար տեսանկյունից անհրաժեշտ, սակայն բավարար չէ: Անհրաժեշտ է, որպեսզի ընտրությունների արդյունքում ձևավորված մեծամասնության կառավարումն իրականացվի՝ հաշվի առնելով ժողովրդի անփոփոխ շահերը, չնսեմացնելով և չոտնահարելով փոքրամասնության շահերը, որպես ելակետ և նպատակ ունենալով մարդու իրավունքների պաշտպանությունը և երկում իրավունքի գերակայության ապահովումը:

Հակառակ մոտեցման պարագայում մեծամասնության կառավարման և ժողովրդի արտահայտած քաղաքական կամքի միջև կառաջանան սողանցքներ, ժամանակի ընթացքում նման կառավարումն ընդհանրապես կվերանա ժողովրդի կամքից կամ այն կհարմարեցվի փոքրաթիվ անձանց նեղ խմբային շահերին՝ աստիճանաբար վերածվելով մեծամասնության բռնակալության:

1.3 Կուսակցական կազմակերպության ձևերը

• Կադրային, զանգվածային և ժամանակակից կազմակերպական մոդելները

Քաղաքական կուսակցությունների կազմավորման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընդհանրապես կարելի է խոսել կուսակցությունների ձևավորման երեք ուղիների մասին.

1. «ներքևից»,
2. «վերևից» և
3. «համակցված»:

«Ներքևից» եկող ուղիով անցնում են այն կուսակցությունները, որոնք առաջանում են հասարակական շարժումներից կամ էլ որոշակի գաղափարախոսության կամ առաջնորդի կողմնակիցների միավորումներից:

«Վերևից» սկսվող ուղին ենթադրում է կուսակցությունների կազմավորումը պաշտամենտական խմբակցությունների, քաղաքական էլիտաների, ճնշման խմբերի և բյուրոկրատիայի հիման վրա:

«Համակցված» (կոմբինացված) ձևով կուսակցությունները առաջանում են, երբ միավորվում են էլիտար շրջանակների և շարքային քաղաքացիների հանդիպակաց ձգտումները:

Ժամանակակից քաղաքական կուսակցություններն ունեն տարբեր տիպի կազմակերպական կառուցվածքներ, բայց չնայած այդ բազմաձևությանը, դրանք բաժանվում են երկու խմբի:

Առաջին խմբի մեջ կարելի է դասել կազմակերպական հստակ կառույցներ ունեցող, պարտադիր անդամությամբ, ամուր կարգապահությամբ, պրոֆեսիոնալ կենտրոնացված կուսակցական ապարատ ունեցող կուսակցությունները: Այս կուսակցությունների կենտրոնական ղեկավար մարմինները լիզերի գլխավորությամբ ունեն վճռական խոսքի իրավունք բոլոր կուսակցական գործերում: Պահպանվում է մշտական կապը կուսակցության անդամների և նրա տեղական ու կենտրոնական ղեկավար մարմինների միջև: Կուսակցության անդամներն ունենում են կուսակցական տոմսեր և պարտավոր են վճարել անդամավճար:

Այս տիպը Մ.Դյուվերթեն նշում է որպես ուժեղ կառուցվածքով

կուսակցություններ և որպես այդպիսին բերում է Բելգիայի քրիստոնեասոցիալական կուսակցության օրինակը: Այստեղ կազմակերպական կառույցների գործունեությունը և դասավորվածությունը խստագույնս կանոնակարգված է: Կուսակցության անդամները գտնվում են մշտական հաշվառման մեջ: Նրանք են ընտրում բարձրագույն մարմին՝ Ազգային համագումարի պատգամավորներին (1 պատգամավոր - 250 կուսակցականից): Համագումարը ընտրում է ազգային կոմիտեի անդամների մեծ մասին: Ազգային կոմիտեն իրականացնում է կուսակցության մշտական ղեկավարությունը: Անհրաժեշտության դեպքում այն կարող է վերածվել գերագույն խորհրդի, իր կազմում ընդգրկելով օկրուգային կոմիտեների նախագահներին: Վերջիններս ընտրվում են տեղական բաժանմունքներից ընտրված պատգամավորներից (1 պատգամավոր-100 կուսակցականից), տեղի պառլամենտականների և պրովինցիաների խորհուրդների անդամների օկրուգային ընդհանուր ժողովում և ղեկավարում են մինչև 12 հոգուց բաղկացած օկրուգային խորհուրդը⁹:

Ուժեղ կառուցվածքով կուսակցությունների մեջ նույնպես կարելի է տարբերակել երկու ենթատիպ.

- խիստ կենտրոնացված (միաձույլ) և
- ապակենտրոնացված:

Առաջինի դեպքում կուսակցության գլխավոր ղեկավար մարմնին ենթակա են կուսակցական կազմակերպությունները՝ անկախ ամեն ինչից: Խիստ կենտրոնացված կազմակերպական կառուցվածքներին բնորոշ են բոլոր մարմինների վարից վեր ընտրովիությունը, վերադաս մարմինների առջև հաշվետվությունը, վերադաս մարմինների որոշումների պարտադիր լինելը ստորադաս մարմնի կամ կազմակերպության համար, խիստ կարգապահությունը, փոքրամասնության ենթարկումը մեծամասնությանը: Այսպիսի կազմակերպական կառուցվածքներ հիմնականում ունենում են արմատական հեղափոխական կուսակցություններն ու հատկապես նրանք, որոնք քաղաքական պայքարի ընթացքում նախընտրում են ավելի կոշտ միջոցները, բայց միևնույն ժամանակ չեն կարող անտեսել և շրջանցել կուսակցական գործերի վարման դեմոկրատական որոշակի

⁹Տե՛ս Дюверже М. Политические партии. Էջ 87, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.agitclub.ru/center/syst/duv/duverger.htm>:

սկզբունքները, ինչպիսին է կուսակցական մարմինների ընտրովիությունը: Խիստ կենտրոնացված, միաձուլյ կազմակերպական կառուցվածքի ստեղծմանն էր նպատակաուղղված այսպես կոչված դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը, որ զարգացվեց և որպես պաշտոնական ղեկավար սկզբունք ընդունվեց բոլշևիկների կուսակցության կողմից (ՌԿ(Բ)Կ 8-րդ համառուսաստանյան կոնֆերանսում, որը տեղի ունեցավ 1919թ., չնայած այդ սկզբունքը ձևակերպվել էր դեռևս 1903թ. ՌՍԴԲԿ երկրորդ համագումարում ընդունված կանոնադրության մեջ): Ներկայումս էլ այս սկզբունքը ընդունում և նրանով են առաջնորդվում բազմաթիվ կուսակցություններ: Խիստ կենտրոնացվածությամբ և կազմակերպվածությամբ՝ հատկապես աչքի են ընկնում կիսալեգալ կամ անլեգալ գործող ծայրահեղական կուսակցությունները, որոնք ունեն կիսազինվորական կարգապահություն և միանձնյա իշխանությամբ կուսակցական առաջնորդներ: Շատ հաճախ այս կուսակցությունների կազմակերպական կառույցների մեջ առանձնահատուկ դիրք են զբաղեցնում ռազմականացված կազմակերպությունները, որոնք օժտված են լինում արտակարգ լիազորություններով:

Ապակենտրոնացված կառուցվածք ունեն այն կուսակցությունները, որոնց վարչական կամ աշխարհագրական բաժանման մեջ գործող տեղական կազմակերպությունների ղեկավար մարմինները անկախ են իրենց ընթացիկ գործունեության մեջ: Որևէ կոնկրետ խնդրի կապակցությամբ նրանք կարող են ընդունել ինքնուրույն որոշումներ, առանց դա համաձայնեցնելու կենտրոնական ղեկավարության հետ, որն այս դեպքում իրականացնում է միայն գաղափարա-քաղաքական ընդհանուր ղեկավարությունը՝ ընթացիկ գործերի ղեկավարությունը թողնելով տեղական կազմակերպություններին: Ապակենտրոնացվածությունը կարող է արտահայտվել ոչ միայն տարածքային, այլև ազգային կուսակցական կազմակերպությունների և ֆրակցիաների հարաբերական ինքնուրույնությամբ:

Երկրորդ խմբի մեջ մտնում են թույլ կառուցվածքով կուսակցությունները: Ի՞նչն է բնորոշ թույլ կառուցվածքով կուսակցություններին և ինչ հատկանիշներով են նրանք տարբերվում ուժեղ կառուցվածքով կուսակցություններից:

Այս կուսակցությունները չունեն պարտադիր անդամություն,

մշտապես գործող պրոֆեսիոնալ-կուսակցական ապարատ և տեղական կազմակերպություններ: Կուսակցության անդամներ համարվում են այն մարդիկ, ովքեր ընտրությունների ժամանակ քվեարկում են այդ կուսակցության օգտին: Նրանք չեն վճարում անդամավճար, չունեն կուսակցականությունը հաստատող փաստաթղթեր և ոչ մի պատասխանատվություն կուսակցության հանդեպ: Բնականաբար այսպիսի կուսակցությունները չունեն նաև կուսակցական կարգապահություն: Կուսակցական ապարատը, որը կազմում են սակավաթիվ պրոֆեսիոնալները և մեծաթիվ համակիրները, եռանդուն գործում են միայն ընտրությունների ժամանակ: Գոյություն ունեն բավականին հին և կայուն ավանդույթներ ունեցող ընտրական կուսակցություններ, որոնցից կարելի է հատկապես նշել ԱՄՆ-ի Զանրապետական և Դեմոկրատական կուսակցություններին: Կան նաև այնպիսի կուսակցություններ, որոնք ձևավորվում են նախընտրական մրցապայքարի ընթացքում: Նրանց կյանքի տևողությունը մեծապես կախված է ընտրությունների արդյունքներից և փաստացիորեն ավելի շատ նմանվում են ընտրական շարժումների, քան կուսակցությունների:

Թույլ կառուցվածքով ընտրական կուսակցությունների կանոնադրական նորմերի ուսումնասիրությունն ու կազմակերպական ընդհանրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ սրանք ավելի շատ իրենցից ներկայացնում են կոմիտեների, նրանց մարզային միավորումների, թերթերի և այլ կուսակցական մարմինների կազմավորումներ: Կանոնակարգված չէ կուսակցությունների մեջ անմիջականորեն մտնող կոմիտեների և նրանց մարզային միավորումների ներքին կառուցվածքը, որոնցից յուրաքանչյուրը կարող է կազմվել սեփական ընտրությամբ: Անորոշ է բազային միավորների ինտեգրացման մեխանիզմը, որի հետևանքով նրանց միջև բավականին թույլ են հորիզոնական և ուղղահայաց կապերը: Այսպիսի կառուցվածքը բարենպաստ պայմաններ է ստեղծում բարձրագույն կուսակցական համաժողովներում անդրկուլիսյան գործարքների, առանձին գործիչների, խմբերի և կլանների մրցակցության և գերիշխանության համար: Աշխարհի չափավոր և պահպանողական կուսակցությունների մեծ մասն ունեն նմանատիպ կառուցվածքներ:

Կուսակցությունների տիպավորման Դյուվերժեի մոդելի մեջ ուժեղ կառուցվածքով կուսակցությունները որակվում են որպես

«զանգվածային» («մասսայական»), իսկ թույլ կառուցվածքով ընտրական կուսակցությունները՝ «կադրային»: Նման բաժանման համար որպես հիմք վերցվում է այն փաստը, որ ուժեղ կառուցվածքով կուսակցություններն ունեն հատուկ կարգավիճակ ունեցող անդամներ և ձգտում են իրենց շարքերում ընդգրկել ավելի շատ մարդկանց, այսինքն՝ ձգտում են դառնալ, որքան հնարավոր է ավելի մասսայական և մեծաքանակ: Իսկ «կադրային» կուսակցությունները սակավաթիվ են, չունեն կուսակցական անդամների համար սահմանված կարգավիճակ, հենվում են հայտնի մարդկանց խմբավորումների վրա: Հայտնի մարդիկ՝ «նոտաբլները», այսինքն՝ առանձնահատուկ «կադրերը», իրենց հեղինակությամբ, կապերով, դրամական միջոցներով կարողանում են աջակցություն ցույց տալ կուսակցության կողմից առաջադրված թեկնածուներին և գիտեն թե ինչպես վարվեն ընտրողների հետ, ծայները հավաքագրելու համար: Իրենց անունով և արժանապատվությամբ նրանք բարձրացնում են պատգամավորության թեկնածուի հեղինակությունը, որը հանդիսանում է կուսակցական աշխատանքի մեջ ընդգրկվելու կարևորագույն չափանիշ: Ահա թե ինչու Դյուվերժեն այս կուսակցություններին անվանում է կադրային կուսակցություններ: Նա գրում է, որ «կադրային» ու «մասսայական» կուսակցությունների տարբերությունները կապված են նրանց կուսակցական ենթակառուցվածքների տիպերի հետ: «Կադրային կուսակցությունները կոմիտեական կուսակցություններ են, ապակենտրոնացված և թույլ ինտեգրացված. մասսայականները - դրանք ավելի հաճախ կոչո կառուցվածքով, առավել կենտրոնացված և սեկցիաների վրա հենվող կուսակցություններ են»¹⁰:

Պետք է նկատել, որ ըստ կազմակերպական կառուցվածքի կուսակցությունների տիպավորման կուսակցությունների դասակարգման կազմակերպական չափանիշները մեծամասամբ կապվում են կուսակցության անդամության հետ: Կուսակցության անդամությունը ցույց է տալիս անհատի պատկանելիությունը որևիցե կուսակցությանը, կամ այլ կերպ ասած քաղաքացու կուսակցականությունը:

Ժամանակակից կուսակցությունները կիրառում են կուսակցության մեջ մտնելու երկու ձև՝ ազատ և կանոնակարգված: Ազատ

¹⁰Стѣу Дюверже М. Политические партии, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.agitclub.ru/center/syst/duv/duverger.htm>:

մուտքի դեպքում կուսակցության անդամ կարող է դառնալ ամեն ոք, ով որ գրավոր դիմում է ներկայացնում և կանոնավոր մոլծում է անդամավճարները: Ընդունելությունը կուսակցության մեջ այս դեպքում ազատ է և անսահմանափակ:

Կանոնակարգված ընդունելության դեպքում իրականացվում է երկու գործողություն. շահագրգռված անձի դիմումի, համապատասխան փաստաթղթերի ու անկետաների ընդունում և տվյալ անձին կուսակցության մեջ ընդունելու մասին կուսակցական կազմակերպության որոշման կայացում: Երկու դեպքում էլ նոր ընդունվածը ստանում է կուսակցական տոմս, որը կարծես նյութականացնում է կուսակցության անդամությունն ու դառնում է դրա օրինականությունն ու հավաստիությունը ցույց տվող փաստաթուղթը:

Դառնալով կուսակցության անդամ քաղաքացին ձեռք է բերում կուսակցության գործերին մասնակցելու, ընտրելու և ընտրվելու իրավունք: Միևնույն ժամանակ նա ստանձնում է կանոնադրությամբ սահմանված պարտավորություններ, կապված անդամավճարների մոլծման և կուսակցական որոշումների կատարման հետ:

Ուժեղ կառուցվածքով կուսակցությունները հենվում են պարտադիր անդամության վրա և կիրառում են մեծամասամբ ընդունելության կանոնակարգված տարբերակը:

Թույլ կառուցվածքով ընտրական կուսակցությունները մեծամասամբ չունեն պարտադիր անդամություն, կամ էլ կիրառում են ազատ ընդունելության ձևը: Այս դեպքում պատկերը առավել բարդ է, որովհետև կուսակցության հետևորդներին կարելի է բաժանել մի քանի շերտերի.

Առաջին՝ ստորին շերտը կազմում են այն ընտրողները, որոնք մշտապես կամ էլ մի որևիցե ժամանակահատվածում քվեարկում են կուսակցության օգտին, որը իրենք համարում են այդ կուսակցությանը պատկանելու ապացույց և հիմք:

Երկրորդ շերտը կազմում են համակիրները, որոնք ոչ միայն քվեարկում են կուսակցության օգտին, այլև բացահայտորեն հայտարարում են այդ մասին և չեն թաքցնում իրենց քաղաքական համոզմունքներն ու համակրանքը կուսակցության նկատմամբ: Ընտրողը քվեարկում է գաղտնի և քվեախցիկից հեռանալուց հետո չի հրապարակում իր քայլը, իսկ համակիրը վարվելով հակառակ կերպ կարծես

դառնում է կուսակցության քարոզիչը և կապվելով իր նման այլ համակիրների հետ ստեղծում է կուսակցական ընդհանրությունը: Սակայն համակիրը դեռևս կուսակցության անդամ չէ:

Անդամները կազմում են ամենավերին ու ամենափոքրաթիվ երրորդ շերտը: Դրանք արդեն ակտիվիստներ են, որոնք մշտապես աշխատում են կուսակցության օգտին և իրենց համարում են կուսակցության անդամ՝ անկախ պարտադիր անդամության լինել չլինելու հանգամանքից: Այս շերտի մեջ մտնում են կուսակցական ապարատի կենտրոնական և տեղական մարմինների աշխատողները, ղեկավարները, կուսակցության կողմից առաջադրված և օրենսդիր ու գործադիր իշխանության օղակներում ընտրված գործիչները, նրանց հետ կապված և նրանց օգտին գործող մարդիկ: Այս հատվածի վրա է ընկնում կուսակցական աշխատանքի հիմնական ծանրությունը, հատկապես համաժողովների կազմակերպման, թեկնածուների առաջադրման և նախընտրական մրցապայքարի վարման գործ: Այս շերտի մեջ առանձնահատուկ տեղ ունի կուսակցական վերնախավի ներքին փակ շրջանակը, որի մեջ գլխավոր դերակատարները կուսակցությանը փող տվողներն են (ըստ Դյուկերթեի՝ «նոտաբլ-ֆինանսիստները»):

Այստեղ չպետք է շփոթել պարտադիր անդամություն ունեցող կուսակցությունների ակտիվիստներին այս ակտիվիստների հետ:

Առաջինի դեպքում դրանք առավել նվիրված, ակտիվ գործող և կուսակցական մարմիններում ընտրվածներն են, որոնք ի տարբերություն ընտրական կուսակցությունների ակտիվիստների իրենց դիրքը ձեռք են բերել ոչ թե հեղինակության, փողի և կապերի շնորհիվ, այլ կուսակցության գործերին ակտիվ մասնակցությամբ:

Կուսակցական կառուցվածքների և դրանց հիերարխիայի վրա մեծապես ազդում է անդամության ձևը: Կուսակցական անդամությունը կարող է լինել երկու ձևի՝ անհատական և կոլեկտիվ:

Կոլեկտիվ անդամության դեպքում մեկ կուսակցության մեջ կարող են մտնել քաղաքական կազմակերպություններ, փոքր կուսակցություններ և արհմիություններ: Այս դեպքում նրանք արդեն առանձնահատուկ տեղ են զբաղեցնում կուսակցական կառույցների մեջ:

Անհատական և կոլեկտիվ անդամությունը կարող են կիրառվել համատեղ, որովհետև դրանք չեն հակասում միմյանց: Միաժամա-

նակյա կոլեկտիվ և անհատական անդամություն կիրառող կուսակցության դասական օրինակ է Մեծ Բրիտանիայի Լեյբորիստական կուսակցությունը, որի մեջ կոլեկտիվ անդամի իրավունքով մտնում են 46 բրիտանական արհմիություններ (տրեդյունիոններ) և 9 տարբեր ընկերություններ: 80-ական թթ. վերջերին և 90-ական թթ. սկզբներին Լեյբորիստական կուսակցությունն ուներ մոտ 6.2 մլն անդամ, որոնցից 323 հազ. անհատական անդամներ, իսկ 5.9 մլն արհմիությունների և կուսակցության մեջ մտնող այլ կազմակերպությունների անդամներ: Արդի քաղաքագիտական գրականության մեջ կոլեկտիվ անդամներ ունեցող կուսակցությունների կազմակերպական կառուցվածքները բնութագրելու համար կիրառում են «լեյբորիստական» տերմինը: «Լեյբորիստական» կառուցվածքներ ունեն բազմաթիվ այլ կուսակցություններ:

Անհատական և կոլեկտիվ անդամությունը՝ հիմք ընդունելով կուսակցությունները կարող ենք բաժանել երկու տիպի. ուղղակի անդամությամբ կուսակցություններ և անուղղակի անդամությամբ կուսակցություններ:

Առաջին տիպի մեջ մարդիկ մտնում են ուղղակիորեն, անհատապես:

Երկրորդի դեպքում անհատը կուսակցության անդամ է համարվում, եթե նա մտնում է կուսակցության անդամակցող որևիցե կազմակերպության մեջ:

Որոշ հեղինակներ պաշտոնական կամ պարտադիր անդամություն ունեցող կուսակցություններին որակում են որպես կազմակերպչորեն ձևավորված կուսակցություններ: Այս տիպին հատկանշական են համարվում կանոնակարգված ընդունելությունը, կուսակցական տոմսի առկայությունը և անդամավճարների մուծումը:

Պաշտոնական անդամություն չունեցող կուսակցությունները, որոնք բաց են և կուսակցականությունը որոշվում է միայն հրապարակային հայտարարությամբ անվանում են կազմակերպչորեն չձևավորված կուսակցություններ: Այսպիսին են հատկապես ամերիկյան կուսակցությունները:

• Ներկուսակցական ժողովրդավարություն

Կուսակցությունների մի շարք գործառույթներ, մասնավորապես՝ քաղաքական մասնակցության միջոցով ընտրողներին կրթելը,

քաղաքականության ձևավորմանը մարդկանց մասնակցության ապահովումն առավել արդյունավետորեն կարող են իրագործվել այսպես կոչված զանգվածային կուսակցական մոդելի առկայության պայմաններում: Այս մոդելին բնորոշ է մեծաթիվ և ակտիվ անդամակցություն, որը գործում է ընտրված կուսակցական պաշտոնյաների և որոշումներ կայացնող համաժողովների միջոցով: Չանգվածային կուսակցության ակտիվ անդամությունը կարող է զարգացնել քաղաքական հմտություններ՝ հրապարակային խոսքում, քարոզարշավում և կազմակերպչական գործում, ինչպես նաև պահպանել ընտրություններում հաղթելու և կուսակցության համաձայնեցված ծրագիրն իրականացնելու համար խիստ անհրաժեշտ կուսակցական հավատարմությունն ու կարգապահությունը:

Չանգվածային կուսակցությունները կարող են լինել «դեմոկրատիա՝ դեմոկրատիայի ներսում», քանի որ կուսակցության ներքին դեմոկրատիան կարող է կենդանություն, բովանդակություն և կայունություն հաղորդել ներկայացուցչական կառավարությանը:

Պետք է նկատի ունենալ, որ որպես կանոն սահմանադրություններում կուսակցությունների ներկուսակցական ժողովրդավարության վերաբերյալ դրույթներ ամրագրված չեն, իսկ այն քիչ և հազվադեպ դեպքերում, երբ առկա են հիշատակներ, ապա դրանք կրում են ընդգծված վերացական բնույթ: Եվ սա այն պարագայում, երբ խոշոր կուսակցությունների ներքին ժողովրդավարական ինստիտուտները կարող են հիմք հանդիսանալ ժողովրդավարության առողջության և որակի համար:

Վերադառնալով ներկուսակցական ժողովրդավարության հասկացությանը՝ պետք է նշել, որ գոյություն չունի միասնական և ընդունված սահմանում, թե ինչ է նշանակում ներկուսակցական ժողովրդավարություն, որոնք են դրա չափորոշիչները, երբ և որ դեպքում է կուսակցությունը համարվում ներսից ժողովրդավարական:

Ներքին կուսակցական ժողովրդավարության հարցերը քննարկելիս, հիմնականում առանձնացվում են ընդգրկունության (inclusiveness) և կենտրոնացման (centralisation) սկզբունքները: Ընդգրկունությունը վերաբերում է այն հարցին, թե ով է պատասխանատու կուսակցության ներսում կարևոր որոշումներ կայացնելու համար: Կենտրոնացումը նկարագրում է, թե որքանով են որոշումները

ընդունվում մեկ խմբի կամ որոշում կայացնող մարմնի կողմից: Զաղաքական կուսակցությունների ինստիտուցիոնալացումը՝ այսինքն այն գործընթացը, որով կոնկրետ կուսակցությունները ձեռք են բերում կազմակերպչական կայունություն և արժեք, նույնպես հաճախ քննարկվում է, հատկապես այն կուսակցությունների համատեքստում, որոնք ունեն բարձր մակարդակի ներքին ժողովրդավարություն:

Վենետիկի հանձնաժողովի՝ Զաղաքական կուսակցությունների ոլորտում լավ գործելակերպի ուղեցույցն առանձնացնում է մի շարք չափորոշիչներ, որոնք առանցքային նշանակություն ունեն ներկուսակցական ժողովրդավարության տեսանկյունից.

1. Անդամակցության չափանիշները պետք է հստակ և թափանցիկ կերպով ներկայացված լինեն կուսակցության կանոնադրության մեջ և չպետք է լինեն խտրական կամ պարտադիր:

2. Կուսակցության անդամակցությունը կարող է մերժվել այն անձանց, ովքեր չեն ընդունում կուսակցության արժեքները:

3. Կուսակցության կառուցվածքն ու ընթացակարգերը պետք է հստակորեն սահմանվեն կուսակցության կանոնադրության մեջ:

4. Կառուցվածքներն ու ընթացակարգերը պետք է արտացոլեն կուսակցության անդամների կարծիքը, լինեն թափանցիկ և խթանեն պատասխանատու ու հաշվետու վարքագիծ:

5. Ղեկավարների և ընտրությունների թեկնածուների նշանակման ընթացակարգերը պետք է լինեն թափանցիկ և արտահայտեն կուսակցության անդամների կարծիքը:

6. Պետք է ստեղծվեն հաղորդակցության ուղիներ կուսակցության անդամների և ղեկավարության միջև:

7. Կուսակցության կանոնադրությունը պետք է սահմանի պատժամիջոցների կարգը, ինչպես նաև կուսակցության ազգային, տարածաշրջանային կամ տեղական կազմակերպման ձևը: Նշված պետք է լինեն նաև կանոնադրական փոփոխությունների ընթացակարգերը:

8. Կուսակցության ծրագիրը պետք է մշակվի ժողովրդավարական եղանակով և հրապարակվի:

9. Կուսակցության ֆինանսավորումը պետք է կազմակերպվի հաշվետու և թափանցիկ եղանակով: Պետք է ներառվեն վերահսկողության և աուդիտի մեխանիզմներ:

Որպես կուսակցական ներքին ժողովրդավարության (IPD) լավ օրինակ հաճախ բերվում է Գերմանիայի օրինակն ու փորձը:

«Քաղաքական կուսակցությունների մասին» օրենքը (1996 թ.) պահանջում է, որ բոլոր քաղաքական կուսակցությունները ունենան գրավոր կանոնադրություն և ծրագիր: Այս կանոնադրությունն ու ծրագիրը պետք է հաստատվեն կուսակցության համագումարում: Տարածաշրջանային և տեղական մասնաճյուղերը պետք է ունենան իրենց սեփական կանոնադրությունը (եթե կենտրոնականը չի նախատեսում այլ բան):

Գերմանական կուսակցությունների կանոնադրությունները պարտադիր պետք է ներառեն հետևյալ դրույթները.

- կուսակցություն մուտք գործելու և դուրս գալու կանոնները,
- անդամների իրավունքներն ու պարտականությունները,
- անդամների, ինչպես նաև տեղական և տարածքային մասնաճյուղերի նկատմամբ կիրառվող հնարավոր կարգապահական միջոցներն ու կուսակցությունից արտաքսման հիմքերը,
- Գործադիր կոմիտեի և այլ մարմինների կազմավորումը և լիազորությունները:

Անդամների իրավունքները նույնպես սահմանված են օրենքով, այդ թվում՝

- անդամակցման կանոններ (կուսակցությունը կարող է ազատ որոշում կայացնել նոր անդամների ընդունման վերաբերյալ),
- քվեարկության կանոններ (կուսակցության անդամներն ու պատվիրակները ունեն հավասար ձայնի իրավունք),
- կուսակցությունից հեռացման որոշումների ընդունման կարգ:

Որոշումների կայացման և քաղաքականության ձևավորման առումով կուսակցության մարմինները որոշումները պետք է ընդունեն պարզ մեծամասնությամբ (եթե կանոնադրությունը չի պահանջում մեծամասնության այլ չափանիշ): Գործադիր մարմինների, պատվիրակների և տարածքային ստորաբաժանումների ընտրությունները պետք է անցկացվեն գաղտնի քվեարկությամբ: Մնացած ընտրությունները կարող են լինել բաց:

Թեկնածուների առաջադրման մասով օրենքը միայն պահանջում է, որ այն իրականացվի գաղտնի քվեարկությամբ և հետագայում կարգավորվի ընտրական օրենսդրությամբ ու կուսակցության

կանոնադրությամբ:

Ներկուսակցական ժողովրդավարության (IPD) մոդելը, որը դարձել է կուսակցությունների ներսում ժողովրդավարության աստիճանը չափելու հիմնական գործիքը, մշակվել է Բենյամին Ֆոն դեն Բերգեի, Թոմաս Պոգունտկեի, Պետեր Օբերտի և Դիանա Տիպեյի կողմից: Այս հետազոտողները հաշվի են առել կուսակցությունների կառուցվածքի և գործընթացների ամենահիմնարար տարրերը:

1. Անդամների իրավունքներ, ներառյալ՝

- անդամակցությանը վերաբերող կանոնները,
- փոքրամասնությունների իրավունքները, ինչպես օրինակ՝ կանանց,

• Էթնիկ փոքրամասնությունների ներկայացվածությունը և այլն:

2. Կազմակերպչական կառուցվածքներ, այսինքն՝ կուսակցության կազմակերպչական մակարդակները:

3. Զաղաքական որոշումների կայացման գործընթացներ, ներառյալ՝

ա) Կադրային որոշումներ

• կուսակցության պաշտոնների համար ընտրություններ, օրինակ՝ կուսակցության ղեկավարի ընտրություն, կուսակցության կենտրոնական մարմինների՝ օրինակ՝ գործադիր կոմիտեի անդամների ընտրություն,

• հանրային պաշտոնների համար թեկնածուների ընտրություն/առաջադրում,

• համապատասխան ընթացակարգեր՝ քվեարկության կանոններ և մեթոդներ կուսակցական պաշտոնների կամ ընդհանուր ընտրությունների թեկնածուների ընտրության համար:

բ) Ծրագրային հարցեր, այդ թվում՝

- քաղաքական մանիֆեստների վրա ազդելու կարողություն,
- կոալիցիաների ձևավորման որոշումների կայացումը:

Որպեսզի կուսակցությունը համարվի ներքին կառուցվածքով և որոշումների կայացման գործընթացի առումով ժողովրդավարական, այն պետք է բավարարի մի շարք պայմանների, այդ թվում՝ ընդգրկունություն (ներկայացվածություն) և ապակենտրոնացումը (իշխա-

նության բաշխում), և իր գործելակերպում հաշվի առնի թե՛ ներկայացուցչական ժողովրդավարության, և թե՛ ուղիղ ժողովրդավարության մեթոդները:

«Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ կուսակցությունը, նրա կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումները գործում են կուսակցության կանոնադրության հիման վրա, որի դրույթները չպետք է հակասեն Սահմանադրությանը, միջազգային պայմանագրերին, օրենքներին և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին:

Օրենսդիրը սահմանել է այն կուսակցության կանոնադրությանը ներկայացվող նվազագույն պահանջները, ըստ որի՝ կանոնադրությունում սահմանվում են կուսակցության՝

- անվանումը, ներառյալ՝ անվանման հապավումը, ինչպես նաև խորհրդանշանի, այլ խորհրդանիշերի նկարագրությունը (եթե դրանք առկա են).

- կուսակցությանն անդամակցելու և անդամությունը դադարեցնելու պայմաններն ու կարգը.

- անդամների իրավունքները և պարտականությունները.

- կառուցվածքը, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ձևավորման և կազմալուծման կարգը, իրավունքները և պարտականությունները, գործունեության ժամկետները և որոշումներ ընդունելու կարգը.

- կուսակցության անդամների, ներառյալ՝ պատվիրակների միջոցով, համագումարին մասնակցության կարգը

- կանոնադրությունում և ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու կարգը.

- կուսակցության անդամների նկատմամբ կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոցները, դրանց կիրառման հիմքերն ու կարգը, դրանք կիրառող իրավասու մարմինները:

Կուսակցության կանոնադրությամբ սահմանվում է նաև Ազգային ժողովի ընտրություններին և համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքների ավագանիների ընտրություններին մասնակ-

ցող կուսակցությունների ընտրական ցուցակների ձևավորման կարգը:

Տարածքային ստորաբաժանումների առկայության դեպքում կուսակցության կանոնադրությունը պետք է սահմանի նաև դրանց ստեղծման և գործունեության դադարեցման կարգը, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ձևավորման և կազմալուծման կարգը, իրավունքներն ու պարտականությունները և դրանց գործունեության ժամկետները:

«Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի հոդված 17-րդ հոդվածը սահմանում է քաղաքական կուսակցության կառավարման մարմիններ, դրանց իրավասությունները: Դրանք են

- համագումարը (համագումար, ժողով, համաժողով, վեհաժողով և այլն), որը կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինն է և իրավիրում է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը կուսակցության կանոնադրությամբ նախատեսված ժամկետում, բայց ոչ ուշ, քան երեք տարին մեկ անգամ:

- կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմին:

Կարևոր է նկատել, որ կուսակցության՝ օրենքով սահմանված ղեկավար մարմիններն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ՝ սույն օրենքով և կուսակցության կանոնադրությամբ սահմանված կարգով:

Ֆինանսավորման համակարգերը

Որպես կանոն, կուսակցությունների ֆինանսավորումը կարգավորվում է 2 ուղղությամբ

- ընթացիկ ֆինանսավորում, որը գործում է մշտապես բոլոր գրանցված կուսակցությունների համար,

- նախընտրական քարոզչության ֆինանսավորում, որը գործում է նախընտրական քարոզչության ժամանակահատվածում այն կուսակցությունների համար, որոնք առանձին կամ այլ քաղաքական միավորների հետ համատեղ՝ դաշինքով մասնակցում են ընտրություններին:

Կուսակցությունների ընթացիկ ֆինանսավորման շրջանակում կարելի է դիտարկել 5 կարևորագույն բաղադրիչներ, որոնց վերլուծությունը հնարավորություն է տալիս գնահատել կուսակցությունների ընթացիկ ֆինանսավորման համակարգը, որպես արդյունավետ

կամ ոչ արդյունավետ:

Դրանք են՝

1. կուսակցությունների եկամուտների աղբյուրները
2. կուսակցություններին տրվող պետական աջակցությունը
3. թափանցիկությունը և հաշվետվողականությունը
4. խախտումների համար պատժամիջոցները
5. կարգավորող մարմնի աշխատանքը:

Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՄԻԶԳ-ի «Կուսակցությունների կարգավորման ուղեցույցում» որպես կուսակցության եկամուտների աղբյուրներ նշվում են՝

1. անդամավճարները,
2. վարկերը, փոխառությունները և դրանց վճարումները,
3. մասնավոր նվիրատվությունները,
4. կուսակցության վերաբերյալ նյութերի և ապրանքների վաճառքը¹¹:

«Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի հոդված 23-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ կանոնադրությամբ և ծրագրով սահմանված նպատակների իրականացման համար կուսակցությունը սեփականության կամ այլ գույքային իրավունքով կարող է ունենալ ցանկացած գույք: Կուսակցությունը սեփականության իրավունքով չի կարող ունենալ այնպիսի գույք, որը հանված է շրջանառությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերում թվարկված են կուսակցության գույքը գոյացման աղբյուրները: Դրանք են՝

1) կուսակցությանն անդամագրվելու համար միանվագ կատարվող վճարներից (մուտքի վճարներից), սահմանված չափով պարբերաբար կատարվող վճարներից (անդամավճարներից), եթե դրանք սահմանված են կուսակցության կանոնադրությամբ.

2) սույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված նվիրատվություններից.

3) սույն օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված կարգով բյուջետային ֆինանսավորումից.

¹¹Stu Venice Commission and OSCE/ODIHR, Guidelines on Political Party Regulation (Warsaw/Strasbourg, 2011), էջ 66-68
<https://www.osce.org/odihr/77812?download=true>:

4) սույն օրենքով սահմանված գործունեությունից ստացված եկամուտներից:

Ստացվում է ՀՀ-ում կուսակցության գույքը գոյանում է հետևյալ աղբյուրներից՝

1. կուսակցությանն անդամագրվելիս մուտքի վճարներից,
2. անդամավճարներից,
3. նվիրատվություններից,
4. բյուջետային ֆինանսավորումից,

5. նույն օրենքով սահմանված գործունեությունից ստացված եկամուտներից:

Անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին առանձին-առանձին:

Վեներտիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը նշում են 3 հիմնական պայման, որոնց պետք է բավարարեն անդամավճարների առնչությամբ իրավակարգավորումները՝

1. անդամավճարը չպետք է լինի այնքան բարձր, որ անհիմն սահմանափակի անդամակցությունը,

2. անդամավճարները չպետք է օգտագործվեն որպես միջոց նվիրատվությունների սահմանաչափերը շրջանցելու համար,

3. անդամավճարի չափը պետք է լինի ողջամտության սահմաններում և որոշ անդամների դեպքում կարող են կիրառվել զեղչեր՝ պահպանելու նրանց անդամակցությունը¹²:

Անդամավճարների կապակցությամբ «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է անդամավճարի առավելագույն չափը, մասնավորապես՝ օրենսդիրը սահմանել է, որ մեկ ֆիզիկական անձի կողմից անդամավճարի առավելագույն չափը տարեկան չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, այսինքն՝ 1.000.000 ՀՀ դրամը:

Կուսակցություններին տրվող նվիրատվության իրավահարաբե-

¹² Տե՛ս Venice Commission and OSCE/ODIHR, Guidelines on Political Party Regulation (Warsaw/Strasbourg, 2011), էջ 66-68, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.osce.org/odihr/77812?download=true>

րությունների կարգավորմանն ուղղված է «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածը, որի 1-ին մասի համաձայն՝ կուսակցություններն իրավունք ունեն գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, ներառյալ՝ փոխառությունների, երրորդ անձի կողմից կուսակցության պարտքը մարելու, պարտատիրոջ կողմից կուսակցության պարտքը ներելու, ինչպես նաև կուսակցության օգտին կատարվող այլ գործունեության տեսքով նվիրատվություններ ստանալու ֆիզիկական անձանցից, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

Մինչև «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-1-Ն օրենքի ընդունումը օրենքի 24-րդ հոդվածը, որի 1-ին մասն ուներ հետևյալ խմբագրությունը՝ կուսակցություններն իրավունք ունեն գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, ներառյալ՝ վարկերի, փոխառությունների, երրորդ անձանց կողմից կուսակցության պարտքի մարման տեսքով նվիրատվություններ ստանալու ֆիզիկական և իրավաբանական անձանցից, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

Իրավանորմերի համեմատական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ կատարված փոփոխություններով ընդլայնվել են նվիրատվության օբյեկտներ, մասնավորապես՝ սահմանվել է, որ նվիրատվության օբյեկտը կարող է հանդիսանալ շրջանառությունից չհանված ցանկացած գույք, այդ թվում, սակայն չսահմանափակվելով դրամական միջոցները, փոխառությունները, կուսակցության պարտքի մարումները՝ երրորդ անձանց կողմից, պարտատիրոջ կողմից կուսակցության պարտքը ներելու, ինչպես նաև կուսակցության օգտին կատարվող այլ գործունեության տեսքով նվիրատվություններ: Վերը թվարկված նվիրատվությունները նախկին խմբագրությամբ իրավակարգավորման ուժով կարող էին կատարել թե ֆիզիկական թե իրավաբանական անձինք, իսկ գործող խմբագրությամբ միայն ֆիզիկական անձինք:

Վերը նշված հոդվածը լրացվել է 1.1. կետով, որով սահմանվել է, որ նվիրատվություն են համարվում նաև կուսակցության օգտին

- անհատույց աշխատանքների կատարումը,

- ծառայությունների մատուցումը,
- կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցումը, օգտագործման հանձնումը
- նույն կամ համանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գործող շուկայական արժեքից էականորեն ցածր գնով կուսակցության օգտին աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման կամ կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցման կամ վարձակալության հանձնելու հետևանքով կուսակցության մոտ ձևավորված խնայողությունը (բնեղենով նվիրատվությունը):

Գործող շուկայական արժեքից տարբերվող գինը համարվում է էականորեն ցածր, եթե այն գործող շուկայական արժեքից տարբերվում է նվազագույնը քսան տոկոսը գերազանցող չափով:

Բնեղենով նվիրատվությունները ենթակա են հաշվարկման իրենց շուկայական արժեքով և պետք է արտացոլվեն կուսակցության տարեկան հաշվետվության մեջ, իսկ դրանց արժեքը (գումարը՝ դրամական արտահայտությամբ՝ պայմանագրով նախատեսված արժեքի և շուկայական արժեքի տարբերության մասով) ներառվում է նվիրատվությունների՝ սույն օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափում:

Եվրոպայի խորհրդի հանձնարարական (2003) 4-ը՝ «Կուսակցությունների և նախընտրական քարոզչության ընթացքում կոռուպցիայի դեմ պայքարի ընդհանուր կանոնները» տալիս է նվիրատվության հետևյալ՝ բավականին լիարժեք սահմանումը. «Նվիրատվությունը նշանակում է ցանկացած մտադրված գործողություն՝ կուսակցությանը տնտեսական կամ այլ տեսակի առավելություն տալու համար»¹³:

Դրանով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ հայ օրենսդիրը նվիրատվությունների հարցում նախատեսել է մի շարք

¹³ Стѣ Council of Europe, Recommendation (2003) 4, Common Rules against Corruption in the Field of Political Parties and Electoral Campaigns (Strasbourg, 2003), article 2

կոշտ սահմանափակումներ և արգելքներ, մասնավորապես՝ ամրագրվել են նվիրատվությունների սահմանաչափերը, ընդունելի աղբյուրները, արգելված նվիրատվությունները:

Այսպես՝ Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ կուսակցությանը տրվող նվիրատվության, ինչպես նաև անդամավճարի և մուտքի վճարի ընդհանուր չափը՝ դրամական արտահայտությամբ, մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի միլիոնապատիկը (այսինքն՝ 1.000.000.000 ՀՀ դրամը), այդ թվում՝ մեկ ֆիզիկական անձի կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասնազարապատիկ (այսինքն՝ 10.000.000 ՀՀ դրամը):

Քաղաքական դաշտը կասկածելի հովանավորչությունից և ազդեցություններից զերծ պահելու նպատակով՝ տարբեր երկրների օրենսդրությունները նվիրատվությունների համար կիրառում են որոշակի արգելքներ: Առավել տարածված արգելքը պետական կառույցներից նվիրատվության արգելքն է, ինչը միտված է պետական միջոցների չարաշահման կանխարգելմանը¹⁴: Բազմաթիվ երկրներ արգելում են օտարերկրյա և անանուն նվիրատվությունները¹⁵:

«Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանում է սուբյեկտների վեց խումբ, որոնցից կուսակցություններին արգելված է նվիրատվություններ ստանալը: Դրանք են՝

1) օտարերկրյա պետությունները.

2) ցանկացած տեսակի իրավաբանական անձինք, այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձինք և միջազգային կազմակերպությունները.

3) պետական և համայնքային բյուջեները և (կամ) արտաբյուջե-

¹⁴ St' u International IDEA, International IDEA, Funding of Political Parties and Election Campaigns. A handbook on Political Finance (Stromsborg, 2014), Էջ 20, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.eods.eu/library/IDEA.Funding%20of%20Political%20Parties%20and%20Election%20Campaigns.pdf> :

¹⁵ St' u նույն տեղում:

տային միջոցները, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն կատարվող ֆինանսավորման.

4) պետական և համայնքային կազմակերպությունները, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպությունները.

5) անանուն անձինք.

6) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք¹⁶:

Եւ 1516 (2001) և 2003 (4) հանձնարարականների համադրությամբ ուրվագծվում են 4 տեսակի արգելված հիմնական աղբյուրներ՝

1. պետական կազմակերպություններն և կազմակերպություններ, որոնք տրամադրում են ծառայություններ հանրային հատվածին,

2. օֆշորային գոտիներում գրանցված կազմակերպություններ,

3. կրոնական կազմակերպություններ,

4. օտարերկրյա նվիրատվություններ:

Փաստորեն օրենսդիրն ամրագրել է որևէ տեսակի իրավաբանական անձանցից, այդ թվում օտարերկրյա իրավաբանական անձանցից և միջազգային կազմակերպություններից նվիրատվությունների ստացման բացարձակ արգելք:

¹⁶ Մինչև «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՕ-1-Ն օրենքի ընդունումը նախատեսված էին սուբյեկտների յոթ խումբ, որոնցից կուսակցություններին արգելված է նվիրատվություններ ստանալը: Կուսակցություններին արգելված էր նվիրատվություն ստանալ 1) բարեգործական կամ կրոնական կազմակերպությունները, ինչպես նաև ինչպես նաև դրանց մասնակցությամբ կազմակերպություններից. 2) պետական և համայնքային բյուջեներից և (կամ) արտաբյուջետային միջոցներից, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն կատարվող ֆինանսավորման. 3) պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններից և պետական ու համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպություններից. 4) օտարերկրյա պետություններից, օտարերկրյա քաղաքացիներից ու իրավաբանական անձանցից, ինչպես նաև օտարերկրյա մասնակցությամբ իրավաբանական անձանցից, եթե օտարերկրյա մասնակցի բաժնետոմսերը, փայլը, բաժնեմասը տվյալ իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալում 30 տոկոսից ավելի է. 5) միջազգային կազմակերպություններից. 6) քաղաքացիություն չունեցող անձանցից. 7) անանուն անձանցից:

Հայկական սփյուռքի առկայության պայմաններում հետաքրքրական է սփյուռքի ներկայացուցիչների կողմից հատկացվող նվիրատվությունների հարցը, քանի որ այդ արգելքից առկա չեն բացառություններ և վերապահումներ: Ընդ որում՝ սփյուռքահայերի կողմից նվիրատվությունների հարցի շուրջ առկա է միասնական մոտեցում: Մասնակիցների մի խումբը կարծում է, որ նրանք պետք է իրավունք ունենան նվիրատվություն կատարելու և դրանով իրենց մասնակցությունը բերելու Հայաստանի քաղաքական գործընթացներին, մյուս մասն ունի մտավախություններ առ այն, որ դրանով ստեղծվում են ռիսկեր այլ պետության կողմից Հայաստանի ներքին կառավարմանը միջամտելու համար:

Օրենսդիրը նաև սահմանել է, որ եթե կուսակցությունը ստանում է տվյալ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցող նվիրատվություններ, ապա պարտավոր է ստանալուց հետո՝ ինստիտուցիոնալ ժամկետում, բայց ոչ ուշ, քան կուսակցության տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելը կուսակցության համար սահմանված նվիրատվության, անդամավճարի կամ մուտքի վճարի սահմանված չափը գերազանցող մասը կամ նվիրատվությունն ամբողջությամբ վերադարձնել նվիրատուին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցել պետական բյուջե:

Ինչ վերաբերում է չթույլատրված նվիրատվություններին, ապա դրանց ստացման դեպքում օրենսդիրը սահմանել է, որ այդ դեպքում կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դրանք փոխանցել պետական բյուջե:

Վարկեր և փոխառությունների կապակցությամբ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ իր կարծիքում Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը ևս առաջարկել են կարգավորել վարկերի, ապառիկների և պարտքերի միջոցով իրավաբանական անձանց կողմից նվիրատվությունների արգելքը շրջանցելու հնարավորությունը¹⁷:

¹⁷ Տե՛ս CDL-AD(2020)004, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի համատեղ կարծիք, կետ 24, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.osce.org/files/f/documents/e/e/437282.pdf>:

Այս կապակցությամբ ողջունվել է Իսպանիայի՝ «Կուսակցությունների ֆինանսավորման մասին» օրենքի նախագծում վարկային պայմանագիրը կամ դրա տոկոսները ամբողջությամբ կամ մասնակիորեն չեղարկելու կամ նախատեսված տոկոսադրույքը շուկայական տոկոսադրույքից ավելի ցածրով փոխարինելու արգելքի նախատեսումը:

Միաժամանակ, Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ կարծիքում մտահոգություն էր բարձրացվել առ այն, որ կարող է չեղարկվել ոչ թե վարկի, այլ դրա հիմքում ընկած գրավի պայմանագիրը: Ավելին, վարկային պայմանագիրը լուծելու արգելքը կարող է շրջանցվել վարկի անորոշ ձևով տարաժամկետման միջոցով կամ այնպիսի եղանակով, որը գործնականում կնշանակի, որ վարկը երբևէ չի մարվելու: Ուստի խորհուրդ է տրվել վարկի փաստացի չեղարկման դեպքերը ևս ընդգրկել նվիրատվություններին վերաբերող սահմանափակումների մեջ:

«Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 11-14-րդ մասերը կարգավորում են կուսակցությունների հետ վարկային և ավանդի պայմանագրերի կնքման առանձնահատկությունները: Այսպես, կուսակցության հետ վարկային պայմանագիր կնքելու դեպքում այդ պայմանագրի պայմանները, ներառյալ՝ վարկի տոկոսադրույքը, պետք է համապատասխանեն շուկայում գործող սովորական պայմաններին և չպետք է էականորեն տարբերվեն այլ անձանց հետ նույնանման պայմաններում կնքվող պայմանագրերի պայմաններից:

Վարկային պայմանագրի դեպքում արգելվում են վարկը կամ դրանց տոկոսներն ամբողջությամբ կամ մասնակի վճարելու պարտականությունից կուսակցությանն ազատելը (պարտքը ներելը) կամ պայմանագիրը կնքելուց հետո տոկոսադրույքը վերանայելը, որի արդյունքում տոկոսադրույքը շուկայականից էականորեն կնվազի, կամ այդ պայմանագրերի հետ փոխկապակցված գրավի պայմանագիրը վաղաժամկետ լուծելը կամ պայմանագրի պայմանների այնպիսի փոփոխությունները, որոնք կարող են դիտվել ակնհայտ անհավասար այլ անձանց հետ կնքվող համանման պայմանագրերի պայմանների համեմատ կամ փաստացի կարող են հավասարվել պարտքը նե-

րելուն: Սույն դրույթների խախտումը կարող է դիտվել որպես իրավաբանական անձի կողմից նվիրատվություն և առաջացնել օրենքով սահմանված պատասխանատվություն:

Օրենսդիրը սահմանել է, որ վերը նշված պահանջների խախտման հետևանքով կուսակցության ձեռք բերած եկամուտը (խնայողությունը) համարվում է օրենքով արգելված նվիրատվություն, և նախատեսել է դրա բացական հետևանքը՝ սահմանելով, որ այդ եկամուտը ենթակա է փոխանցման պետական բյուջե, ինչպես նաև առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

Նույն տրամաբանությամբ օրենսդիրը սահմանել է, որ կուսակցության հետ բանկային ավանդի պայմանագիր կնքելիս պայմանագրի պայմանները, ներառյալ՝ բանկային ավանդի տոկոսադրույքը պետք է համապատասխանեն շուկայում գործող սովորական պայմաններին և չպետք է էականորեն տարբերվեն այլ անձանց հետ նույնանման պայմաններում կնքվող պայմանագրերի պայմաններից: Եթե բանկային ավանդի տոկոսադրույքը էականորեն գերազանցում է համանման պայմանագրերի դեպքում առաջարկվող տոկոսադրույքը, ապա ավանդի տոկոսների՝ համանման պայմանագրերի համեմատ էականորեն գերազանցող մասը դիտվում է որպես օրենքով չթույլատրված աղբյուրից նվիրատվություն և ենթակա է փոխանցման պետական բյուջե, ինչպես նաև այդ դրույթների խախտումը կարող է դիտվել որպես իրավաբանական անձի կողմից նվիրատվություն և առաջացնել օրենքով սահմանված պատասխանատվություն:

Ինչ վերաբերում է կուսակցության վերաբերյալ նյութերի և ապրանքների վաճառքին, ապա ընդհանուր առմամբ կուսակցությունների ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը որոշ երկրներում (Սինգապուր, Ճապոնիա և Մալազիա), համարվում է կուսակցությունների եկամուտների կարևոր աղբյուր:

Կուսակցությունների ֆինանսավորման ոլորտում առաջատար փորձագետ Մազնուս Օհմանը նշում է. «Հաշվի առնելով մի շարք կուսակցությունների պարագայում ֆինանսավորման բացակայությունը, բազմաթիվ մասնավոր կառույցների՝ կուսակցություններին սատարելու ցանկության բացակայությունը, խորհուրդ է տրվում դիտարկել կուսակցություններին սահմանափակ առևտրային գործունեությամբ զբաղվելու հնարավորության տրամադրումը՝ կապված

իրենց բնականոն գործունեության հետ, ինչպես, օրինակ, տպագրությունը կամ հրատարակչությունը»¹⁸:

Միաժամանակ, նա առաջարկում է նախատեսել մի շարք պայմաններ, որպեսզի՝

1. կուսակցություններն իրավունք չունենան մասնակցելու պետական գործարքներին,

2. ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը կուսակցության ընդհանուր գույքի մեջ լինի սահմանափակ,

3. ցանկացած առևտրային գործարք նշվի կուսակցության հաշվետվության մեջ¹⁹:

«Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում առկա ձևակերպումը՝ «սույն օրենքով սահմանված գործունեությունից ստացված եկամուտներ» որոշակի չէ: Դրա բովանդակության բացահայտման համար անհրաժեշտ է այն համադրել օրենքի այլ հոդվածներով նախատեսված կարգավորումների հետ, այդ թվում՝ կուսակցությունների՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի հետ:

Օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կուսակցությունն իրավունք չունի զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, ինչպես նաև լինելու առևտրային իրավաբանական անձի հիմնադիր կամ մասնակից, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի: Կուսակցությունների գործունեության բնույթի առանձնահատկությամբ պայմանավորված Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ թույլ է տալիս քաղաքական կուսակցություններին «հիմնել զանգվածային լրատվամիջոցներ, հրատարակչություններ», իսկ նույն հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ կուսակցության կողմից հիմնադրված զանգվածային լրատվության միջոցների և հրատա-

¹⁸ StE Council of Europe, Recommendations 1516 (2001) , Financing of political parties (Strasbourg, 2001), հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=16907&lang=en>:

¹⁹ StE International IDEA, International IDEA, Funding of Political Parties and Election Campaigns. A handbook on Political Finance (Stromsborg, 2014), էջ 48, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.eods.eu/library/IDEA.Funding%20of%20Political%20Parties%20and%20Election%20Campaigns.pdf>:

րակչությունների գործունեության արդյունքում ստացված և կուսակցությանը փոխանցված եկամուտը կարող է օգտագործվել միայն կուսակցության կանոնադրությամբ և ծրագրով սահմանված նպատակների համար:

Վերագրյալը թույլ է տալիս հանգելու եզրակացության առ այն, որ հրատարակչությունների գործունեության արդյունքում ստացված շահույթից բացի այլ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք կուսակցությունը չունի:

Պետական ֆինանսական աջակցության տրամադրման ձևաչափի ընտրությունը պետք է առաջին հերթին պայմանավորված լինի նրանով, թե ինչ նպատակ է հետապնդվում:

Ըստ Ինթերնեյշնլ ԻԴԵԱ (Ժողովրդավարության և ընտրական աջակցության ինստիտուտ) կազմակերպության՝ կարող է լինել երեք հիմնական նպատակ, որոնք են՝

1. օգնել բոլոր վերաբերելի քաղաքական ուժերին առավել արդյունավետ հարաբերվել ընտրողների հետ,

2. նվազեցնել ֆինանսական տարբերությունների ազդեցությունը հարուստ և աղքատ կուսակցությունների և թեկնածուների միջև,

3. խրախուսել ֆինանսավորում ստացողների կողմից դրական վարքագծի դրսևորումը²⁰:

Կուսակցությունների պետական աջակցությունն ընդհանրապես լինում է 2 տեսակի՝ ֆինանսական և անվճար կամ արտոնյալ պայմաններով ծառայություններ և ապրանքներ տրամադրելու միջոցով:

Չամաձայն միջազգային հեղինակավոր IDEA կազմակերպության կողմից անցկացված հետազոտության, 173 երկրներից 64-ում (37%) գործում է կուսակցությունների պետական ֆինանսական աջակցություն, իսկ սրանցից առավել մեծ խմբում՝ 21 տոկոսում, որպես ֆինանսների տրամադրման չափորոշիչ օգտագործվում է ստացված ձայների քանակը, որի շեմային ցուցանիշը 3.5 տոկոսն է:

²⁰ Stå International IDEA, International IDEA, Funding of Political Parties and Election Campaigns. A handbook on Political Finance (Stromsborg, 2014), էջ 25, հասանելի է հետևյալ հղմամբ՝

<http://www.eods.eu/library/IDEA.Funding%20of%20Political%20Parties%20and%20Election%20Campaigns.pdf>:

«Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ կուսակցությունների պետական ֆինանսավորումը (պետական սուբսիդավորումը) իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ նպատակ ունենալով խթանելու որոշակի հանրային աջակցություն ունեցող և եկամտի այլ էական աղբյուրներ չունեցող կուսակցությունների կենսունակությունն ու ինքնուրույնությունը:

Օրենսդիրը սահմանել է, որ պետական ֆինանսավորումը կազմված է երկու մասից՝ պետական ընդհանուր ֆինանսավորում և պետական նպատակային ֆինանսավորում:

Պետական ֆինանսավորում հատկացվում է այն կուսակցությանը, որի ընտրական ցուցակն Ազգային ժողովի վերջին ընտրությունների ժամանակ ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն երկու տոկոսը: Պետական ֆինանսավորումը հատկացվում է միայն այն կուսակցությունների դաշինքներին, որոնք հաղթահարել են «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված ընտրական արգելապատնեշը:

Օրենսդիրը սահմանել է, որ պետական ֆինանսավորում չի հատկացվում այն կուսակցությանը կամ կուսակցություններին դաշինքում ընդգրկված կուսակցությանը, որի ակտիվների արժեքը, ըստ կուսակցության տարեկան հաշվետվության, գերազանցում է պետական բյուջեով տվյալ տարում բոլոր կուսակցությունների պետական ֆինանսավորման համար նախատեսված ընդհանուր գումարի հնգապատիկը:

Ստացվում է, որ խորհրդարանական ընտրություններում երկու տոկոսի շեմը հաղթահարած կուսակցությունները կարող են ակնկալել պետական աջակցությունը: Ընդ որում՝ նույն հոդվածի 3-րդ մասը նախատեսում է խորհրդարանական ընտրություններում երկու տոկոսի շեմը հաղթահարած կուսակցությունների միջև պետական միջոցների բաշխման նվազման կարգով գործող մեխանիզմ՝ հետևյալ բանաձևով

1) 2-ից մինչև 5 տոկոս ձայներ ստանալու դեպքում՝ օրենքով

սահմանված նվազագույն աշխատավարձի չափով՝ յուրաքանչյուր ձայնի դիմաց.

2) 5-ից մինչև 20 տոկոս ձայներ ստանալու դեպքում՝ մինչև 5 տոկոսի սահմաններում տրված յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափով, իսկ 5-ից մինչև 20 տոկոսի սահմաններում տրված յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի կեսի չափով.

3) 20 և ավելի տոկոս ձայներ ստանալու դեպքում՝ մինչև 5 տոկոսի սահմաններում տրված յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափով, 5-ից մինչև 20 տոկոսի սահմաններում՝ յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի կեսի չափով, իսկ 20 տոկոսը գերազանցող սահմաններում տրված յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի մեկ քառորդի չափով:

Բնականաբար, կուսակցությունների պետական ֆինանսավորումն իրականացվում է տվյալ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ժամանակահատվածում և դադարեցվում Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտման օրը:

Կուսակցությունների ֆինանսական համակարգերը քննարկելիս հաջորդ կարևոր հարցը, որին պետք է անդրադառնանք թափանցիկությունն ու հաշվետվողականությունն է:

Հաշվի առնելով սույն հարցի կարևորությունը՝ այն կարգավորվել է ամենաբարձր մակարդակում՝ ՀՀ Սահմանադրությամբ: Սահմանադրության 46-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ կուսակցությունները տարեկան հաշվետվություններ են հրապարակում իրենց ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև իրենց գույքի մասին:

Սահմանադրական այս նորմի հիման վրա «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի հոդված 22-ում, որի 1-ին մասի 2-րդ կետով որպես կուսակցության պարտականություն նախատեսված է, որ կուսակցությունը պարտավոր է՝ յուրաքանչյուր տարի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև

գույքի մասին տարեկան հաշվետվությունը (այսուհետ՝ տարեկան հաշվետվություն): Կուսակցությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով պարտավոր է ներկայացնել տարեկան հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, վարկային տեղեկատվություն:

«Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի «կուսակցությունների հաշվետվությունները» վերտառությամբ 27-րդ հոդվածն առավել մանրամասն կարգավորում է կուսակցությունների կողմից պարտադիր ներկայացման ենթակա հաշվետվությունների ներկայացման կարգը և ժամկետները, ինչպես նաև հաշվետվությանը ներկայացվող պարտադիր պահանջները՝ պարտավորեցնելով կուսակցություններից տարեկան հաշվետվություններում արտացոլել մուտքերը, ելքերը, կուսակցության գույքը, կուսակցության պարտավորությունները:

Ընդ որում, պետական բյուջեից պետական ֆինանսավորում ստացած կուսակցությունների տարեկան հաշվետվությունները ենթակա են պարտադիր աուդիտի՝ անկախ հաշվետու տարում սահմանված մուտքերի կամ ելքերի չափից, մյուս կուսակցությունների տարեկան հաշվետվությունները ենթակա են պարտադիր աուդիտի, եթե հաշվետու տարվա ընթացքում մուտքերը կամ ելքեր գերազանցել են օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգհազարապատիկը, այն է՝ 25.000.0000 ՀՀ դրամը:

Սույն իրավակարգավորումները և ամենադրական փոփոխությունները չեն կարող ունենալ դրական ազդեցություն, եթե բացակայում է վերահսկողության և հնարավոր խախտումների համար պատասխանատվության արդյունավետ կառուցակարգեր:

Կուսակցությունների ֆինանսավորման ոլորտում պատժամիջոցները սահմանվում են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում 189.13-189.16 հոդվածներում:

«Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի

30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը, ներառյալ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվության ստուգումն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն օրենքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ	ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐՏԱՈՈՒԹՅՈՒՆ	ՉԱՆՑԱՆՔ	ՉԱՆՑԱՆՔԸ ԿՐԿԻՆ ԿԱՏԱՐԵԼ
Հոդված 189.13	Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին պետական լիազոր մարմին հաշվետվություն չներկայացնելը կամ դա չիրապարակելը	Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում լիազոր մարմին չներկայացնելը կամ դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չիրապարակելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասունապատիկից մինչև հիսնապատիկի չափով:	Նույն խախտումը, որը կատարվել է կրկին վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրհիսնապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով
Հոդված 189.14	Օրենքով սահմանված փաստաթղթերը պետական լիազոր մարմին չտրամադրելը	Կուսակցության իրապարակած և լիազոր մարմին ներկայացրած հաշվետվության հավաստիությունը ստուգելու համար լիազոր մարմնի պահանջի դեպքում օրենքով սահմանված փաստաթղթերը սահմանված ժամկետում չտրամադրելը՝ առաջացնում է	Նույն խախտումը, որը կատարվել է կրկին վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի

		տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:	չափով:
Հոդված 189.15	Կուսակցությանն օրենքով սահմանված նվիրատվությունները կամ կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելը	Կուսակցությանն օրենքով սահմանված նվիրատվություններն անկանխիկ չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվիրատու ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչև հիսնապատիկի չափով, իսկ կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:	Սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվիրատու ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրիսնապատիկի չափով, իսկ կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով:
		Կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ կուսակցության պաշտոնատար անձի	Սույն հոդվածի 3-րդ մասում նշված խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում՝ կուսակցության պաշտոնատար անձի

		նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:	նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով:
Հոդված 189.15	Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելը	Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով:	Նույն խախտումը, որը կատարվել է կրկին վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երկուհարյուրհիսնապատիկի չափով:

ԳԼՈՒԽ 2. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2.1 Կուսակցական համակարգերի տիպաբանությունը

Քաղաքական կուսակցությունները ժամանակակից ժողովրդավարական համակարգերի հիմնական ինստիտուտներից են: Կուսակցական համակարգերի տիպաբանությունը պետականագիտության և քաղաքական գիտության կարևոր ուսումնասիրման առարկաներից է, որը թույլ է տալիս հասկանալ տարբեր երկրների քաղաքական դինամիկան, իշխանության բաշխումը և կառավարման արդյունավետությունը:

Կարելի է ասել, որ ավանդական եվրոպական կուսակցական մոդելները՝ հիմնված XIX-XX դարերի փորձի վրա, այլևս բավարար չեն ժամանակակից աշխարհում կուսակցությունների բազմազանությունը արտացոլելու համար: Ուստի ժամանակակից քաղաքագիտությունը և պետականագիտությունը առաջարկում է նոր մոտեցումներ:

Օրինակ, Ռ. Գուլթերի և Լ. Դայմոնդի «Քաղաքական կուսակցությունների տեսակները. Նոր տիպաբանություն» (2003) աշխատությունը²¹, որը հիմնված է Սարտորիի դասական մոտեցումների վրա²², ներկայացնում է քաղաքական կուսակցությունների ուրույն դասակարգում: Այդ դասակարգման համար հիմք են վերցվում մի երեք հիմնական չափանիշներ՝

1. Ձևական կողմ՝ կազմակերպչական կառուցվածք,
2. Բովանդակային՝ ծրագրային կողմնորոշում,
3. Գործնական՝ ռազմավարական և վարքագծային վարք:

Այս չափանիշների հիման վրա առանձնացվում են հետևյալ տեսակի կուսակցությունները՝

²¹ Տե՛ս Richard Gunther, Larry Diamond, Species of Political Parties, A New Typology, Party Politics, Volume 9., No. 2, 2003, Sage Publications, էջեր 167-199:

²² Տե՛ս Giovanni Sartori, Parties and Party System, A framework for analysis, Volume 1, ECPR Press, 2005, 368 էջ:

- Էլիտարիստական,
- զանգվածային,
- Էթնիկական,
- ընտրապայքարային (Էլեկտորալ),
- շարժումային:

Սարտորիի և Նրա հետևորդների աշխատանքների հիման վրա զարգացած ժամանակակից տիպաբանությունները ցույց են տալիս, որ կուսակցական համակարգերի ուսումնասիրությունը պահանջում է՝

- հայեցակարգային ճշգրտություն և համատեղելիություն,
- Էմպիրիկ բազմազանության ճանաչում,
- պատմական և համատեքստային զգայունություն,
- Ժողովրդավարության հետևանքների մանրակրկիտ գնահատում:

Սիւննույն ժամանակ Նույն հեղինակները փաստում են, որ քաղաքական կուսակցությունները չեն առաջացել կամ զարգացել Նույնական, գծային կամ միագիծ ձևով, և ոչ էլ բոլորի զարգացման ուղին համընկել է կուսակցության մեկ մոդելի շուրջ: Հակառակը. կուսակցությունների կազմակերպչական ձևերի, ընտրական ռազմավարությունների, ծրագրային նպատակների և գաղափարախոսական կողմնորոշումների փոփոխությունները բազմաթիվ պատճառահետևանքային գործընթացների արդյունք են: Դրանցից մի քանիսը կապված են սոցիալական կամ տեխնոլոգիական փոփոխությունների ավելի լայն, երկարաժամկետ գործընթացների հետ, մյուսները՝ քաղաքական և սոցիալական Էլիտաների ավելի քիչ կանխատեսելի նորարարական վարքագծի հետ: Սա նշանակում է, որ սխալ կլինի ամբողջությամբ հենվել կուսակցությունների տեսակների սահմանափակ թվի վրա: Սա կհանգեցնի նրան, որ գիտնականները կփորձեն Նոր կուսակցությունները խցկել անհամապատասխան մոդելների մեջ կամ դադարեցնել Նոր տեսությունների կառուցման գործընթացը՝ եզրակացնելով, որ գոյություն ունեցող տեսություններն ու մոդելները պարզապես չեն համապատասխանում արդեն իսկ հաստատված կուսակցությունների տեսակներին: Սրանից ելնելով՝ պետք է եզրակացնել, որ Ներկայացված տիպաբանությունը՝ առավելագույնս

արտացոլում է աշխարհում կուսակցությունների տեսակների փոփոխությունների իրական տատանումները, և այն պետք է նպաստի քաղաքական կուսակցությունների ծագման, գործառույթների և էվոլյուցիոն հետազոտների վերաբերյալ բազմաթիվ վարկածների փորձարկմանը՝ տարբեր սոցիալական, քաղաքական, տեխնոլոգիական և մշակութային համատեքստերում²³:

Ի նկատի ունենալով կուսակցությունների ներկայացված տիպաբանությունը և չփորձելով խորանալ դրանց առաձևահատկությունների մեջ՝ փորձենք հասկանալ, թե ժամանակակից քաղաքական համակարգերում ինչ դեր ունեն միակուսակցական, երկկուսակցական և բազմակուսակցական համակարգեր և փորձենք դրանք այս կամ այն կերպ պրոեկտել հայկական իրականության վրա:

Տեսության մեջ վերոնշյալ բոլոր տեսակի կուսակցություններն էլ հնարավոր է, որ գործնականում հայտնվեն միակուսակցական, երկկուսակցական կամ բազմակուսակցական քաղաքական համակարգերում:

Միակուսակցական համակարգն այն քաղաքական կառուցվածքն է, որտեղ միայն մեկ կուսակցություն ունի իրավաբանական կամ փաստացի մենաշնորհ քաղաքական և պետական իշխանության վրա: Այս համակարգում այլ կուսակցությունների գործունեությունը կամ արգելված է, կամ էականորեն սահմանափակված:

Միակուսակցական համակարգերի հիմնական առանձնահատկությունները ներառում են՝

- քաղաքական ասպարեզում մրցակցության բացակայություն,
- կուսակցության և պետական ապարատի միաձուլում,
- գաղափարախոսական մենաշնորհ,
- վերից ներքև ուղղորդված որոշումների կայացում:

Միակուսակցական համակարգերում կուսակցությունը վերահսկում է պետական ինստիտուտները, զինված ուժերը, լրատվամիջոցները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:

²³ Տե՛ս Richard Gunther, Larry Diamond, *Species of Political Parties, A New Typology, Party Politics, Volume 9., No. 2, 2003, Sage Publications, էջեր 167-193:*

րը, եթե այդպիսիք ընդհանրապես կան: Հաճախ ամուր միակուսակցական համակարգերը կարող են ապահովել քաղաքական կայունություն և արագ արդիականացում, սակայն հաճախ դա իրականացվում է ժողովրդավարական ազատությունների սահմանափակման գնով:

Միակուսակցական համակարգերի դասական օրինակներ են եղել Անգլիան՝ Անգլիական Մեծ հեղափոխությունից հետո (1640-1650-ականներ), Ֆրանսիան՝ Ֆրանսիական Մեծ հեղափոխությունից հետո (1790-ականներ), Խորհրդային Միությունը (ԽՍՀՄ Կոմունիստական կուսակցություն) (1921-1991), Ֆաշիստական Իտալիան (1922-1943), Նացիստական Գերմանիան (1933-1945) և այլն: Ժամանակակից օրինակների շարքում են Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը, Հյուսիսային Կորեան, Կուբան, որտեղ կոմունիստական կուսակցությունները պահպանում են իշխանության մենաշնորհը:

Օրինակ, Նացիստական Գերմանիայում 1933թ-ի դեկտեմբերի 1-ի «Կուսակցության և պետության միասնության ապահովման» օրենքով Նացիստական կուսակցությունը հռչակվեց *«պետականության գաղափարի կրող և պետության հետ անքակտելիորեն կապված»*: Կուսակցությունը հռչակվեց պետության բոլոր հասարակական ինստիտուտների քաղաքական միջուկը:

Նացիստական կուսակցական ապարատը դարձավ պետական ապարատի անմիջական կառուցվածքի արտահայտությունն ու ղեկավարությունը: Բոլոր պետական ինստիտուտները գտնվում էին կուսակցության վերահսկողության տակ: Շրջանային կուսակցական ստորաբաժանումները գրեթե բոլոր տեղերում համընկնում էին ռազմական շրջանների և վարչական ստորաբաժանումների հետ, բնականաբար, ղեկավար անձնակազմը՝ ևս: Ընդհանուր առմամբ, պետական ապարատում աշխատողների ընդհանուր թվում Նացիստական կուսակցության անդամները կազմում էին 70 տոկոս: Բացի Գրմանիայի պետական բանակից՝ Վերմախտից, Գերմանիայի ուժային մարմինների մեջ էին մտնում նաև ամբողջությամբ կուսակցական գրոհային ջոկատները (*Sturmabteilung - SA*) և պահնորդական ջոկատները (*Schutzstaffeln - SS*):

Սա կուսակցություն-պետություն սերտաճման դասական օրինակ էր:

Մեզ համար ավելի հասկանալի և էմպիրիկ փորձի միջոց կիրառական է եղել ԽՍՀՄ քաղաքական համակարգը, որտեղ Կոմունիստական կուսակցությունը և պետական մարմինները, ըստ Էության, միևնույն քաղաքական իշխանության կրողն էին²⁴:

ԽՍՀՄ բոլոր սահմանադրություններում(1924, 1936, 1977), ինչպես նաև միութենական հանրապետությունների սահմանադրություններում ընդգծված էր Կոմունիստական կուսակցության դերը:

Այսպես. օրինակ՝ 1977թ-ի ԽՍՀՄ Սահմանադրության հոդված 6-ում սահմանված էր.

«Խորհրդային հասարակության առաջատար և ուղղորդող ուժը, նրա քաղաքական համակարգի և պետական ու հասարակական կազմակերպությունների միջուկը Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցությունն է: ԽՄԿԿ-ն գոյություն ունի ժողովրդի համար և ծառայում է ժողովրդին: Մարքսիստ-լենինյան ուսմունքով գինված՝ Կոմունիստական կուսակցությունը որոշում է հասարակության զարգացման ընդհանուր հեռանկարը, ԽՍՀՄ ներքին և արտաքին քաղաքականության գիծը, ուղղորդում է Խորհրդային ժողովրդի մեծ ստեղծագործական գործունեությունը և համակարգված, գիտականորեն հիմնավորված բնույթ է հաղորդում կոմունիզմի հաղթանակի համար նրանց պայքարին»:

Երկկուսակցական համակարգը բնութագրվում է երկու խոշոր կուսակցությունների գերակշռությամբ, որոնք մրցում են իշխանության համար: Սա չի նշանակում, որ բացառվում են այլ կուսակցությունների առկայությունը, սակայն գործնականում հիմնականում երկու խոշոր կուսակցություններ են ազդեցություն ունենում քաղաքական գործընթացների վրա:

Այդ համակարգերի հիմնական հատկանիշներից կարելի է նշել այն, որ՝

- Երկու խոշոր կուսակցությունների միջև տեղի է ունենում իշխանության պարբերապար փոփոխություն,

²⁴ Առավել մանրամասն տե՛ս Արամ Մանուկյան, Խորհրդային Հայաստանի միակուսակցական համակարգի ձևավորումը և գործունեության հետևանքները, 21-րդ դար, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, թիվ 1 (41), 2012թ., 104-110:

- Երբեմն առկա է լինում պարզ կառավարական պատասխանատվություն, երբ օրենսդիր իշխանությունում գերակայում է մեկ կուսակցություն, գործադիրում մյուսը (ԱՄՆ),
- Զաղաքական մեծամասնությունը ձևավորվում է հարաբերականորեն ավելի հեշտ,
- Զաղաքական ուղղվածությունը հիմնականում կենտրոնամետ քաղաքականությունն է
- և այլն:

Միացյալ Նահանգները և Միացյալ Թագավորությունը երկկուսակցական համակարգեր ունեցող պետությունների դասական օրինակներն են: ԱՄՆ-ում Դեմոկրատական և Հանրապետական կուսակցությունները, իսկ Բրիտանիայում Լեյբորիստական և Պահպանողական կուսակցությունները գերակշռում են քաղաքական ասպարեզում: Այս համակարգի դրական կողմերից կարելի է նշել, որ այն ապահովում է կառավարման կայունություն և պարզ քաղաքական ընտրություն է առաջարկում ընտրողներին: Սակայն այս կառուցվածքի քննադատները ընդգծում են, որ այս համակարգը կարող է սահմանափակել փոքրամասնությունների ներկայացվածությունը և նվազեցնել քաղաքական բազմազանությունը:

Բազմակուսակցական համակարգերը աչքի են ընկնում քաղաքական համակարգում ոչ սահմանափակ քանակի կուսակցությունների առկայությամբ, որոնք ապահովում են քաղաքական կամքի արտահայտման տարաբնույթ երանգները: Թե քաղաքական համակարգում քանի կուսակցությունների առկայությունն է, որ բավարար հիմք է տալիս եզրակացնելու բազմակուսակցական համակարգի առկայության մասին, դժվար է ասել, սակայն, ընդունված է, որ բազմակուսակցական կայուն և աշխատող համակարգերը նրանք են, որտեղ ոչ շատ քիչ և ոչ էլ անհամաչափ մեծ քանակության կուսակցություններ են գործում:

Բազմակուսակցական համակարգերի կառուցվածքային բնութագրիչներից մեկն այն է, որ բազմաթիվ կուսակցություններ ունեն իրական հնարավորություններ մասնակցելու կառավարության ձևավորման և պետության քաղաքական իշխանության իրացմանը: Այս

համակարգը հաճախ պահանջում է կոալիցիոն կառավարություններ, քանի որ որևէ մեկ կուսակցություն հազվադեպ է ձեռք բերում բացարձակ մեծամասնություն:

Բազմակուսակցական համակարգերի հիմնական առանձնահատկություններից են՝

- Զաղաքական ներկայացվածության բազմազանություն,
- Կոալիցիոն բանակցություններ,
- Ժողովրդավարական գործընթացներում մշտական համաձայնեցման անհրաժեշտությունը,
- Փոքրամասնությունների ավելի լայն ներկայացվածություն,
- և այլն:

Եվրոպական երկրների զգալի մասում կարող ենք տեսնել բազմակուսակցական համակարգերի բազմաթիվ օրինակներ՝ Ֆրանսիան, Նիդերլանդները, Բելգիան, Շվեյցարիան, Գերմանիան, Իտալիան և այլն:

Ի՞նչ գործոններ են հիմնականում ազդում կուսակցական համակարգի ընտրության կամ ձևավորման վրա, որո՞նք են դրանց ազդեցության մեխանիզմները և արդյո՞ք հնարավոր է որոշակիացնել որոշակի սկզբունքներ, կանոններ, որոնցով ավելի հստակ կլինի կուսակցության համակարգերի, կուսակցությունների մրցակցության առանձնահատկությունների և ընդհանրապես՝ կուսակցությունների գոյության ու զարգացման կապը՝ սրանք այն հարցերն են, որոնց շուրջ կան մեծ թվով հետազոտություններ, և, միաժամանակ, որոնց պատասխանը դեռևս հստակ չեն:

Գործոններից մեկը, որի կապակցությամբ նույնիսկ առկա է, այսպես կոչված, «օրենք», ընտրական համակարգի ազդեցության գործոնն է կուսակցական համակարգի ու կուսակցությունների մրցակցության բնույթի վրա: Թե ինչպես են ընտրական համակարգի շարունակական փոփոխությունները ազդել և շարունակում ազդել կուսակցական համակարգի, կուսակցական մշակույթի և կուսակցությունների մրցակցության վրա, դժվար է որոշակիացնել: Սակայն դրանում երբեմն օգնում է *Դյուվերդեի օրենքը*, որը դեռ բավականին վաղուց հնարավոր ազդեցության որոշակի բանաձևում է տվել:

Դյուվերդեի օրենքը քաղաքագիտության մեջ գործող կանոն է,

համաձայն որի մեծամասնական ընտրակարգի կիրառումը միամանդատ շրջանային ընտրություններում սովորաբար հանգեցնում է երկկուսակցական համակարգի զարգացմանը, մինչդեռ համամասնական ընտրակարգը խթանում է բազմակուսակցական համակարգերը: Այս միտումը հայտնաբերել է ֆրանսիացի սոցիոլոգ և քաղաքագետ Մորիս Դյուվերժեն, որը նկարագրել է այդ ազդեցությունը 1950-ական և 1960-ական թվականներին հրապարակված մի շարք հոդվածներում:

Այս օրենքը հիմնված է այն գաղափարի վրա, որ երկարաժամկետ հեռանկարում ռացիոնալ քաղաքական գործիչներն ու ընտրողները կհասկանան, որ միամանդատ ընտրատարածքային ընտրություններում մեծամասնական ընտրակարգի կիրառման պայմաններում անիմաստ է դառնում ունենալ երկուսից ավելի կուսակցություններ, որոնք մրցակցում են ազգային մակարդակով: Չնայած երեք կամ ավել կուսակցություններ կարող են մնալ մրցակցության մեջ մի քանի տարի, սակայն արդյունքում մյուս բոլոր կուսակցությունները կառերեսվեն սեփական ռեսուրսների շարունակական մարման հետ, եթե իրենց աջակցությունը հավասարաչափ չբաշխվի մյուս երկուսի մեջ²⁵:

Սակայն Դյուվերժենի այս մտքերը չպետք է ընդունել որպես մեխանիկական ազդեցության ապացույց: Հակառակը, նա՝ ինքն էր շեշտում, որ ընտրական համակարգերը միշտ չէ, որ վճռորոշ գործոն են, և, առավել ևս, որ չկա գծային, հստակ պատճառական կապ ընտրական և կուսակցական համակարգերի միջև: Ընտրական համակարգերի ազդեցությունը կարող է համեմատվել արգելակի կամ արագացուցչի հետ: Կուսակցություններ քանակի աճը, որը պայմանավորված է շատ այլ գործոններով, կարող է հեշտացվ մի տեսակի ընտրական համակարգի կողմից և խոչընդոտվել մյուսի կողմից: Ավելին. ընտրական համակարգի առանձնահատկությունների, դրանց կանոնների և կուսակցական համակարգերի միջև կապը մեխանիկական և ավտոմատ չէ: Կոնկրետ ընտրական համակարգը պարտադիր

²⁵ Սաևրամասն տե՛ս Maurice Duverger, *Political Parties: Their Organization and Activity in the Modern State*, Translated by Barbara and Robert North., New York: John Wiley & Sons, Inc.1954. Pp. xxxvii, 439:

չէ, որ կանխորոշի որոշակի կուսակցական համակարի ձևավորումը. այն պարզապէս գործում է այդ համակարգի ուղղութեամբ²⁶:

Այստեղ օգնության է գալիս նաև Սարտորիի փաստարկներից մեկը, համաձայն որի անհրաժեշտ և/կամ բավարար պայմանների վրա շեշտադրում անելու փոխարեն, կարելի է դիմել նպաստող և խոչընդոտող պայմանների, որոնք կարող են չունենալ նույն բացատրական ուժը, ինչը կարող են ունենալ առաջիններս, սակայն, միևնույն է, կարող են օգտակար գործիք լինել ընտրական համակարգերը վերլուծելու համար: Ընտրական համակարգերը պարտադիր չէ, որ պայմանավորեն կուսակցական համակարգը և կարող են նույնիսկ չլինել անհրաժեշտ կամ բավարար պայման ` այդ համակարգերին իրենց բնորոշ հատկանիշները տալու համար: Ընտրական համակարգերը, սակայն, կարող են նպաստել կամ խոչընդոտել ընտրատարածքում քաղաքական բևեռացման կամ մասնատման միտումներին²⁷:

Այս ամենի լույսի ներքո երբ դիտարկենք հայկական քաղաքական մշակույթն ու մասնավորապէս` կուսակցությունների համակարգը, շատ հարցերի պատասխաններ միգուցե երևան:

Ընդհանրապէս, կուսակցական համակարգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չկա համընդհանուր «լավագույն» մոդել` տիպ: Յուրաքանչյուր համակարգ ունի իր առավելություններն ու թերությունները, որոնք կախված են կոնկրետ երկրի պատմական, մշակութային և սոցիալ-տնտեսական առանձնահատկություններից: Միակուսակցական համակարգերը կարող են ապահովել կայունություն, բայց սահմանափակում են ժողովրդավարական մասնակցությունը: Երկկուսակցական համակարգերը տրամադրում են կառավարման պարզություն և պատասխանատվություն: Բազմակուսակցական համակարգերը առավել ներառական են, սակայն պահանջում են համաձայնության քաղաքական մշակույթ և կոալիցիոն բանակցությունների հմտություններ:

²⁶ Մանրամասն տե՛ս Miroslav Novak, The 'Sociological Laws' of Maurice Duverger: How They Evolved and Aspects of Methodology, (Takzvané „sociologické zákony“ Maurice Duvergera: jejich postupné formulování a jejich metodologické aspekty) Czech Sociological Review · February 2015, էջեր 3-39:

²⁷ Virgílio Afonso Da Silva, Duverger's Laws: Between social and institutional determinism, European Journal of Political Research 45: 31–41, 2006, էջ 38:

Ժամանակակից քաղաքական գիտությունը և պետականագիտությունը շարունակում են ուսումնասիրել այս համակարգերի դինամիկան, փոփոխությունները և հարմարվողականությունը Նոր մարտահրավերներին՝ գլոբալացման, թվայնացման և սոցիալական բևեռացման պայմաններում:

Եվ եթե այս ամենը դիտարկենք մեր օրինակով, ապա ուսումնասիրության առարկան էլ ավելի կբարդանա, քանի որ մենք գործ ենք ունենում արդեն ընդգծված անցումային քաղաքական համակարգ ունեցող միջավայրի հետ, որն անգամ չի կարողացել հասցնել ձևավորել իր ներսում քաղաքական, իրավական, պետական մշակույթ՝ դարերով օտար պետությունների նվաճման օբյեկտ լինելու պատճառով: Հայկական քաղաքական համակարգը դեռևս չի կարողանում ուշքի գալ ոչ միայն քաղաքական, այլ նաև պատմությունից եկող սոցիալ-հոգեբանական, պատմական, ազգային, մարդկային և ցեղասպանությունից (1885-1923թթ - Օսմանյան Կայսրության և Թուրքիայի Հանրապետության, 1989-1991, 2020-2023 – Ադրբեջանական Հանրապետության կողմից) ու պատերազմներից (1989-1994, 2016, 2020-2023 – Ադրբեջանական Հանրապետության կողմից) բխող այլ աղետներից:

Ուստի հայկական քաղաքական համակարգի ուսումնասիրության դեպքում դրա վրա ազդեցություն ունեցող գործոնների շարքում պետք է մտքում ունենալ ոչ միայն եվրոպական միջավայրին բնորոշ դասական սոցիալ-քաղաքական միջավայրային գործոնները, այլ նաև հայկական սոցիալ-պատմական էվոլյուցիայից բխող առանձնահատկությունները:

Հայաստանի Հանրապետության օրինակով խնդրին անդրադառնալիս նախ պետք է անցնենք և՛ իրավական, և՛ փաստական հարթություններով:

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածը հռչակում է.

*«1. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են գաղափարախոսական բազմակարծությունը և **բազմակուսակցական համակարգը**:*

2. Կուսակցությունները կազմավորվում և գործում են ազատորեն: Կուսակցությունների համար օրենքով երաշխավորվում են գործունեության հավասար իրավական հնարավորություններ:

3. Կուսակցությունները նպաստում են ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը:

4. Կուսակցությունների կառուցվածքը և գործունեությունը չեն կարող հակասել ժողովրդավարական սկզբունքներին»:

Կուսակցությունների հետ կապված իրավական կարգավորումներն այնքան են կարևորվում, որ ՀՀ Սահմանադրությունը «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքը դասակարգել է սահմանադրական օրենքների շարքին, որոնք ընդունվում են կամ դրա մեջ փոփոխություններ են կատարվում պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

Այդ օրենքը սահմանում է կուսակցությունը՝ որպես «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամավոր միավորում է, որի նպատակը հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելն է» (Հոդված 3):

Հայաստանի Հանրապետությունում կուսակցությունները հավասար են օրենքի առջև՝ անկախ իրենց ծրագրային փաստաթղթերում արտացոլված գաղափարախոսությունից, նպատակներից, խնդիրներից և այլ հանգամանքներից:

Դրանց գործունեությունը հիմնվում է անդամության կամավորության, անդամների իրավահավասարության, սեռից, ռասայից, մաշկի գույնից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից կախված խտրականության արգելման, կուսակցության անկախության, ինքնակառավարման, կոլեգիալության, գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքների վրա:

Կուսակցությունները ինքնուրույն են որոշում իրենց ներքին կառուցվածքը, նպատակները, գործունեության ձևերն ու մեթոդները, կուսակցության մարմինների ձևավորման կարգը, որոնք չեն կարող հակասել ժողովրդավարական սկզբունքներին:

Կուսակցությունների ինքնուրույնությունն ու կենսունակությունը երաշխավորելու համար հատկացվում է նաև պետական ֆինանսավորում:

Այսպես՝ կուսակցությունների պետական ֆինանսավորումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ նպատակ ունենալով խթանելու որոշակի հանրային աջակցություն ունեցող և եկամտի այլ էական աղբյուրներ չունեցող կուսակցությունների կենսունակությունն ու ինքնուրույնությունը: Պետական ֆինանսավորումը կազմված է երկու մասից՝ պետական ընդհանուր ֆինանսավորում և պետական նպատակային ֆինանսավորում: Յուրաքանչյուր տարվա համար պետական ընդհանուր ֆինանսավորումը կուսակցություններին տրամադրվում է կիսամյակային սկզբունքով, բայց ոչ շուտ, քան Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կուսակցության տարեկան հաշվետվության ստուգումը: Պետական նպատակային ֆինանսավորումը յուրաքանչյուր տարվա համար տրամադրվում է միանվագ՝ պայմանավորված կուսակցությունների կառուցվածքով և գործունեությամբ:

Պետական ֆինանսավորում հատկացվում է այն կուսակցությանը, որի ընտրական ցուցակն Ազգային ժողովի վերջին ընտրությունների ժամանակ ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն երկու տոկոսը: Պետական ֆինանսավորումը հատկացվում է միայն այն կուսակցությունների դաշինքներին, որոնք հաղթահարել են ՀՀ Ընտրական օրենսգրքով նախատեսված ընտրական արգելապատնեշ, և չի հատկացվում այն կուսակցությանը կամ կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությանը, որի ակտիվների արժեքը, ըստ կուսակցության տարեկան հաշվետվության, գերազանցում է պետական բյուջեով տվյալ տարում բոլոր կուսակցությունների պետական ֆինանսավորման համար նախատեսված ընդհանուր գումարի հնգապատիկը (Կուսակցությունների մասին ՀՀ օրենք, Հոդված 26):

Եթե փորձենք ժամանակի մասշտաբի ազդեցությամբ դիտարկենք կուսակցական մշակույթի զարգացման առանձնահատկությունները հայկական քաղաքական միջավայրում, ապա մեր առջև բացվելու է բավականին հակասական, երբեմն՝ իրարամերձ պատկերներով մի համալիր մի իրականություն:

ԽՍՀՄ փլուզումից և 15 անկախ հանրապետությունների ձևավորումից հետո մինչև այսօր հետխորհրդային բոլոր պետությունները փորձում են ձևավորել և զարգացնել բազմակուսակցական համակարգը:

Բնական է՝ չունենալով նախկինում բազմակուսակցական քաղաքական համակարգի զարգացած պրակտիկա՝ հետխորհրդային պետությունները հեշտությամբ չէին կարողանալու ապահովել անցումը միակուսակցականից բազմակուսակցական համակարգին և ճշմարտության համար պետք է փաստել, որ իրավաբանորեն ամրագրումը դեռևս գործնականում չի կարողացել ապահովել բազմակուսակցական համակարգի այն մակարդակը, որ կարողանա արտահայտել դրա էությունը: Այն, որ կուսակցությունների քանակը, տեսակները բազմազան են և հաճախ դրանք այս կամ այն չափով ազատորեն գործում են Հայաստանում և ԱՊՀ մյուս երկրներում, փաստ է, սակայն փաստ է նաև այն, որ այդ «բազմակուսակցական» իրականությունը հիմնականում արտահայտվում է ձևի մեջ և ոչ թե բովանդակության, որովհետև փաստացի գրեթե միշտ քաղաքական իշխանության գերակայությունը կենտրոնանում է մեկ քաղաքական կուսակցության ձեռքում, որն էլ ձգտում է լայնորեն օգտագործել պետական մարմինների հետ սերտաճման նախկին տասնամյակների պրակտիկան: Այսկերպ պետական պաշտոնատար անձ կամ հանրային ծառայող դառնալու գրավականը շարունակում է մնալ իշխող իշխանության անդամ կամ համակիր լինելը, այլ ոչ թե մասնագիտական ձեռնահասությունն ու պետության և ոչ թե կոնկրետ քաղաքական կուսակցության համար օգտակար լինելու ունակությունը:

Միակուսակցական համակարգի գայթակղությունը մեծ է, որովհետև յուրաքանչյուր անգամ որևէ քաղաքական կուսակցություն, գալով իշխանության, կատարում է **բոլոր իշխանությունների դասական սխալը**. Իրեն թվում է, որ իրենից ավելի խելացի, ավելի ազնիվ և ավելի հայրենասեր ուժ չկա և չի կարող լինել, հետևաբար ինքր՝ միայն ինքր, պետք է մասնակցի պետության համար քաղաքական որոշումների կայացման գործընթացին:

Այս մտածողությամբ պետական իշխանության հասած քաղաքական կուսակցությունը սկսում է սահմանափակել, իսկ հնարավորության դեպքում՝ նաև բացառել այլ կուսակցությունների ներկայությունը քաղաքական որոշումներ ընդունելու կառուցակարգերից:

Եվ եթե ուշադիր նայենք, օրինակ հանրապետական Հայաստանի գոյության մեկ դարյա ժամանակաշրջանը, ապա հստակ կերևա, որ հիմնադրումից ի վեր՝ 1918թ-ից, Հայաստանում գրեթե միշտ գերակայել է մեկ քաղաքական կուսակցություն, որին չի կարողացել հակակշռել որևէ այլ քաղաքական կուսակցություն՝ հակակշռելու հնարավորության փաստացի, հաճախ նաև՝ իրավական գործիքակազմի բացակայության պատճառներով:

Այսպես՝ 1918-1920թթ-ին Հայաստանի քաղաքական համակարգում բացարձակ իշխանություն է ունեցել Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը, 1920-1991թ-ը՝ Բոլշևիկյան, այնուհետև՝ վերանվանված ԽՍՀՄ Կոմունիստական կուսակցությունը, 1991-1998թթ՝ Հայ Համազգային Շարժում կուսակցությունը, 1998-2008թ-ը ՀՀ Նախագահի շուրջ միավորված մի քանի կուսակցությունների փոփոխվող դաշինքը, իսկ հիմնականում՝ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, 2008-2018թթ-ը՝ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, 2018թ-ից մինչև այսօր՝ Բաղաքցիական պայմանագիր կուսակցությունը:

Անգե՛ն աչքով տեսանելի է, որ անգամ ԽՍՀՄ շրջանից դուրս՝ Հայաստանի Առաջին և Երրորդ Հանրապետությունների գոյության ժամանակահատվածում, երբ երաշխավորված էր/է բազմակցուսակցական համակարգը, փաստացի չունենալ դրա բովանդակային արտահայտությունը և ընդհանուրի պետություն կոչված Հանրապետությունը կարողացել է ոչ այնքան ընդհանուրի կամքն արտահայտող քաղաքական համակարգ ձևավորել, այլ դեռևս շարունակում է գտնվել մեկ կուսակցության (հաճախ դրա առաջնորդի) կամքն արտահայտող քաղաքական համակարգում: Որոշ հետազոտողներ նման պետություններին անվանում ոչ թե հանրապետություններ, այլ «կուսակցապետություններ»: Սա քաղաքական ճգնաժամի դրսևորում է, որ արդեն բարձրանում է «բացասական» մշակույթի մաս, ինչն էլ պայմանավորում է հետագա բացասական ընթացքը:

1918թ-ի Առաջին Հանրապետությունից սկսած, Երկրորդ՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում արմատավորված և Երրորդ Հանրապետությունում կրկնվող մեկ քաղաքական ուժի՝ կուսակցության ձեռքում ամեն ինչ, իշխանության ամբողջ ծա-

վալը կուտակելու արդեն կայացած (կուսակցապետության) քաղաքական մշակույթը խորհրդարանական մշակույթում արտահայտվում է հենց ճգնաժամի տեսքով, որովհետև գրկում է խորհրդարանին՝ որպես ինքնուրույն իշխանության ճյուղ կայանալու, առավել ևս՝ գործադիրին հակակշիռ դառնալու հնարավորությունից: Արդյունքում խորհրդարանը դառնում է գործադիրի որոշումների, օրենսդրական նախաձեռնությունների վավերացման և ընդհանրապես՝ գործադիրի գործողությունների լեգիտիմացման ու լեգալացման գործիք²⁸:

Նման քաղաքական հետագիծ ունեն գրեթե բոլոր հետխորհրդային պետությունները, որովհետև դեռևս գտնվում են միակուսակցական համակարգից բազմակուսակցական համակարգ անցման փուլում: Սա բարդ և բավականին համալիր գործընթաց է, որի վրա ազդում են սոցիալ-հոգեբանական, պատմական, տնտեսական, տեխնոլոգիական և այլ գործոններ, որոնք ունեն իրենց ներքին դինամիկան, ինչն էլ ոչ բոլոր դեպքերում է համընկնում ընդհանուր պետությունների քաղաքական համակարգերի զարգացման հետ:

2.2 Կուսակցություններն ընտրական գործընթացներում

Կուսակցական համակարգերի և ընդհանրապես՝ կուսակցական մշակույթի զարգացման վրա էական ազդեցություն է ունենում նաև ընտրական համակարգերը և ընտրական գործընթացները, որոնք, ճիշտ է, բոլոր երկրներում գրեթե նույնական մոդելների շուրջ են ձևավորվում, սակայն իրենց ազդեցությամբ տարբեր են լինում տարբեր քաղաքական միջավայրերում:

Ընդհանուր միջազգային իրավունքը որևէ ցանկալի ընտրական համակարգ չի նախասահմանում²⁹: Փոխարենը այն ընդունում է, որ գոյություն չունի որևէ ընտրական համակարգ, որը հավասարապես

²⁸ Սիմոնյան Ս., Բալայան Ն., Խորհրդարանական մշակույթը և էթիկան Հայաստանի Հանրապետությունում, Երևան, Հայրապետ հրատարակչություն, 2024, էջ 156:

²⁹ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե 1981- 2014թթ.՝ 25-րդ ընդհանուր մեկնաբանություն (ԸՄ), 21-րդ պարբերություն:

պահը, երբ 2015թ-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում սահմանվեց, որ. « Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով» (Հոդված 89, 3-րդ մաս): Սրա հիման վրա ընդունված 2016թ-ին Ընտրական օրենսգիրքն արդեն մանրամասնեց, թե դա ինչ է նշանակում:

ՀՀ Ընտրական օրենսգիրքը այդ ժամանակ որդեգրեց «խառը» մոտեցումը, ըստ որի խորհրդարանական ընտրություններին մասնակցում են միայն կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքները, որոնց ցուցակներում ընդգրկված թեկնածուները մասնակցում են նաև վարկանիշային (ռեյտինգային) համակարգով ընտրությունների: Սա նշանակում էր, որ ընտրողը ընտրում է կուսակցություն և ըստ իր ընտրատարածքի նաև այդ կուսակցության ցուցակում ընդգրկված կուսակցության անդամ հանդիսացող կամ չհանդիսացող վարկանիշային թեկնածուներից որևէ մեկին:

Սա, ըստ էության, մեծամասնական ընտրական համակարգը համամասնական ընտրական համակարգի ներքո աշխատեցնելու փորձ էր, որը երկար չտևեց: 2017 և 2018 թվականներին տեղի ունեցած Ազգային ժողովի ընտրություններում գործադրվելուց հետո, այն վերացվեց 2021թ-ի Ընտրական օրենսգրքի փոփոխություններով, և արդեն նույն թվականի խորհրդարանի ընտրություններում ընտրողն այլևս հնարավորություն չուներ մարդ ընտրել. նա կարող էր միայն կուսակցություն ընտրել:

Այդ փոփոխությունից ի վեր Հայաստանի Հանրապետությունում ընտրողն ընդհանրապես չի կարողանում ընտրություններում ընտրել մարդ-թեկնածու, քանի որ 2015թ-ի սահմանադրական փոփոխությունները վերացրեցին Հանրապետության Նախագահ ընտրելու ինստիտուտը, այնուհետև՝ Ընտրական օրենսգիրքը՝ նաև պատգամավոր ընտրելու ինստիտուտը, իսկ Հայաստանի խոշոր համայնքներում նաև՝ համայնքապետ ընտրելու ինստիտուտը: Փոխարենը ընտրողը կարող է ընտրել միայն կուսակցություն, որը ընտրություններին մասնակցում է իր ցուցակով և այն գլխավորող անձով:

Ընդհանրապես, մեծամասնական, իսկ այնուհետև վարկանիշային ընտրական համակարգից աստիճանաբար հրաժարվելու քաղաքականությունը այն առաջ տանողների կողմից հրապարակայնորեն հիմնավորվում էր մի նպատակով՝ կուսակցական մշակույթի զարգացման և այդկերպ նաև քաղաքական մշակույթի զարգացման

նպատակով:

Սակայն եթե անգամ դա ազնիվ նպատակ էր և դրա հեղինակները իրականում առաջնորդվում էին այդ ազնիվ մղումներով, իրականությունում նման քայլերով ո՛չ կուսակցական մշակույթն է զարգանում, ո՛չ քաղաքական մշակույթը: Համենայն դեպս պրակտիկան բավականին բարձր ծայնով խոսում է դրա մասին: Պատճառն այն է, որ այդ մշակույթերի զարգացումը տեսականորեն հնարավոր է, երբ սոցիալ-քաղաքական, սոցիալ-պետական, իրավական, աշխարհաքաղաքական և այլ միջավայրերը գտնվում են կայուն դիսամիկայի մեջ: Միջդեռ երբ դրանք տարբեր պատճառներով, այդ թվում՝ տեխնոլոգիական թռիչքային զարգացումների պատճառով անկայունության փուլում են գտնվում կամ պարբերապար մտնում են անցումային և բիֆուրկացիոն (ճյուղավորումների) փուլեր, սկզբնական նպատակի և ներդրված ճանապարհի ու միջոցների միջև կապը գծային չի մնում, հաճախ խաթարվում է, իսկ հիմնականում՝ միջոցները սկսում են աշխատել այդ նպատակին հակառակ:

Սա շատ նման է Չարլզ Գուդհարթի օրենքին, որը սահմանում էր. **«երբ միջոցը դառնում է նպատակ, այն դադարում է լավ միջոց լինելուց»**³⁴:

Իսկ երբ այս ամենին գումարվում է նաև ժամանակակից աշխարհում զարգացող կուսակցությունների ճգնաժամը, դրանց սոցիալական դերի ու դրանց նկատմամբ հանրային վստահության զգալի անկումը, ապա ստացվում է մի իրավիճակ, որ մենք օրենսդրորեն նպաստում ենք, որ ընտրական գործընթացների մենաշնորհը կենտրոնանա սոցիալ-քաղաքական այն ինստիտուտների ձեռքերում, որոնք ամեն օր, ամեն տարի շարունակաբար կորցնում են իրենց վստահությունը հանրության շրջանում, այդ թվում՝ նաև այն պատճառով, որ դրանք հեռանում են քաղաքական գաղափար, միտք, սկզբունք, քաղաքական ուղղություն գեներացնելու և հանուն դրա քաղաքականությամբ զբաղվելու իրենց կոնսոլիդացնող գործառնություններից և կենտրոնանում են ընտրությունից ընտրություն ամեն կերպ վերարտադրվելու նպատակի վրա:

³⁴ Առավել մանրամասն տե՛ս Goodhart, C.A.E. (1981). "Problems of Monetary Management: The U.K. Experience." In Inflation, Depression, and Economic Policy in the West, edited by Anthony S. Courakis, էջեր 111-146. Mansell and Alexandrine Press:

Արդեն ավելի քան երեսուն տարվա ընտրությունների հայկական փորձից կարող ենք եզրակացնել, որ մեծամասնական ընտրական համակարգից աստիճանաբար հրաժարվելու արդյունքում ոչ միայն չի զարգացել կուսակցական և քաղաքական մշակույթը Հայաստանում, այլ նաև խորհրդարանի ութ գումարումների աշխատանքի որակները համեմատելու պարագայում տեսնում ենք, որ նույնիսկ զգալի անկում է ապրել, իսկ կուսակցությունները դարձել են ոչ թե գաղափարական, կոլեկտիվ քաղաքական միտք արտահայտող, քաղաքական միտք ձևավորող, քաղաքական դաստիարակություն տարածող և զարգացնող սոցիալ-քաղաքական ինստիտուտներ, այլ դարձել են կամ միգուցե ավելի ճիշտ կլինի ասել՝ ավելի են դարձել կոնկրետ անձին քաղաքական իշխանության բերելու, նրա քաղաքական իշխանությունը բացարձակ դարձնելու, նրա իշխանությունը ամեն կերպ երկարաձգելու և այդ ընթացքում քաղաքական կամ այլ հանրային պաշտոններ ձեռք բերելու խողովակ:

Սա այն չէ, ինչը՝ որպես լավագույն կառավարման վարճած (ռեժիմ), փորձում է հիմնավորել ժողովրդավարության դասական փիլիսոփայությունը: Հակառակը. այն ամբողջությամբ կազմաքանդում է ժողովրդավարության էությունը, քանի որ ունեցում է դրա հիմնաքարերին՝ քաղաքականությունը՝ որպես հանրային կյանքի կառավարման մակարդակը պարբերաբար թարմ ու կարող ուժերով փոխարինելու, սերնդափոխության արդյունավետ համակարգ երաշխավորելու և ընդհանրապես՝ այն՝ որպես մարդկանց երջանկության արվեստ ծառայեցնելու արհեստողանի գաղափարին:

Հետաքրքիր է, որ և՛ ընտրությունների մշակույթի, և՛ խորհրդարանական մշակույթի առումով գրանցվող անկումը շարունակական է եղել՝ սկսված Երրորդ Հանրապետության առաջին գումարման խորհրդարանից:

Անկախության առաջին գումարման խորհրդարանի մշակույթը շահեկանորեն տարբերվում էր մյուս բոլոր գումարումների խորհրդարաններից նախ և առաջ նրանով, որ պատգամավորները հասարակության սերուցքն էին՝ ճանաչված և հարգանք վայելող գրողներ, գիտնականներ (260 պատգամավորից մոտ 60 գիտությունների ակադեմիկոս, դոկտոր և թեկնածու), բժիշկներ, մանկավարժներ, ֆիզիկոսներ, նկարիչներ, մաթեմատիկոսներ՝ մտավորականների մի աստղաբույլ,

շատերը վաստակավոր և ժողովրդական կոչումներ ունեցող, ում խոսքը, միգրացե, մեծամասամբ քաղաքական չէր (ինչպես այդ ժամանակ գրեթե բոլորինը), սակայն, հանրային ազդեցիկության և արժեքային փարոսիկներ տարածելու առումով, ահռելի էր:

Այս գումարման կարևոր առաջնահատկությունից էր նաև այն, որ խորհրդարանական աշխատանքներում ու դրանց արդյունքներում գերակայում էին խիստ ազատական և խիստ ազգային գաղափարական ուղղվածությունները: Առաջին հայացքից, կարծես, դժվար համակեցող, սակայն փաստացի հետաքրքիր կերպով ներդաշնակեցվող այս գաղափարական ուղղությունները դարձան գերակայող խորհրդարանի գրեթե բոլոր որոշումներում, օրենսդրական ակտերում, պատգամավորների խոսքերում և ընդհանրապես՝ խորհրդարանական մշակույթում:

Հանրություն – խորհրդարան հարաբերությունները, հատկապես սկզբնական փուլում, գրանցում էր վստահության ամենաբարձր մակարդակը, ինչը ունեցել է խորհրդարանն անկախության ամբողջ ժամանակշրջանում, նաև հենց ներգրավված պատգամավորների բարձր մտավոր արժանիքների շնորհիվ և հասարակությունում տիրող ազգային գաղափարական ռոմանտիզմի շնորհիվ³⁵:

Այս միտումներն ի նկատի ունենալով՝ պետք է կարողանանք դրանց լույսի ներքո վերլուծել առաջարկվող ընտրական գործընթացների կառուցակարգերը՝ հասկանալու համար դրանց արդյունավետությունը՝ ժողովրդավարության իրական էությունն արտահայտող նպատակին համադրած:

Ընտրական գործընթացն ու ինստիտուցիոնալ շրջանակը առանցքային դեր են խաղում աշխարհի տարբեր երկրների ժողովրդավարական լանդշաֆտի ձևավորման գործում: Ընտրական համակարգերի ուսումնասիրությունը եւ դրանց փոխազդեցությունը ավելի լայն ինստիտուցիոնալ միջավայրի հետ առաջնային կաեւորություն ունեն քաղաքական գիտության եւ կառավարման հետազոտությունների ոլորտում: Ընտրությունները՝ որպես ժողովրդավարության հիմնասյուներից մեկը, ծառայում են որպես քաղաքացիների մասնակցության, ներկայացվածության եւ հաշվետվողականության էական

³⁵ Սիմոնյան Տ., Բալայան Ն., խորհրդարանական մշակույթը և էթիկան Հայաստանի Հանրապետությունում, Երևան, Հայրապետ հրատարակչություն, 2024, էջ 47-48:

մեխանիզմ: Այնուամենայնիվ, ընտրական համակարգերի արդյունավետությունն ու ամբողջականությունը մեծապես կախված են այն ինստիտուցիոնալ միջավայրից, որտեղ նրանք գործում են³⁶: Հետխորհրդային երկրներում շահառու խմբերի ձևավորման եւ զարգացման վրա մեծ ազդեցություն են թողել սոցիալ-քաղաքական կտրուկ փոփոխություններն ու քաղաքական ավանդույթները: Խնդիրը կայանում է նրանում, որ այդ երկրներում քաղաքացիական հասարակությունը դեռ կայացման փուլում է, առանձին խմբերի շահերը դեռ հստակ չեն ձևավորվել, եւ նոր են ստեղծվում կազմակերպչական կառույցները³⁷: Հետխորհրդային ժամանակահատվածը խորհրդանշվում է առավել էական ընտրական օրենսդրական խոչընդոտների առկայությամբ: Սա բխում էր հատկապես նախկին հասարակարգի արժեհամակարգով, քաղաքական մշակույթի, կառավարման մոդելի եւ այլ հատկանիշներով էր պայմանավորված, ինչը, ըստ Էուբյան, առավել շատ էր ընդգծում նոր ընտրական օրենսդրության ձևավորման անհրաժեշտությունը: Սա հատկապես պայմանավորված էր նախկին միակուսակցական համակարգով, որը դժվարացնում էր ազատ ընտրական համակարգի ներդրումը³⁸:

Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացը մանրամասն կարգավորված է ՀՀ Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում: Եթե փորձենք ընդհանրացնել ընտրական գործընթացի կարգավորումները, կարող ենք դրանք դասակարգել որոշակի փուլերի՝

1 Ընտրությունների նախապատրաստական փուլ.

Առաջին փուլի առանցքային մաս է ընտրողների ցուցակների կազմելը: Բնակչության պետական ռեգիստրը կազմում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը: Այս մարմինը տարին երկու անգամ՝

³⁶ Մուղեցյան Տ., Ընտրական համակարգը Ուկրաինայում եւ Հայաստանում ժողովրդավարական փոփոխությունների համատեքստում (2005-2019. համեմատական վերլուծություն), Գիտական Արցախ, No 1(20), Երեւան, 2024, էջ 63:

³⁷ Մանուկյան Ա., Ժամակակալից քաղաքական գործընթացներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ, ԵՊՀ, Երեւան., 2011, էջ 68:

³⁸ Սողոմոնյան Լ., Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգի ձեւավորման որոշ առանձնահատկությունները հետխորհրդային ժամանակաշրջանում, Գիտական Արցախ, No 1 (24), 2025, էջ 151-152:

հունիսին և նոյեմբերին (առաջին մեկ շաբաթվա ընթացքում), ընտրողների ռեգիստրը՝ ըստ համայնքների, էլեկտրոնային եղանակով ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով: Վերջինս իշխանության երեք թևերից անկախ, առանձին սահմանադրական մարմին է, որը կազմակերպում է ընտրությունների ամբողջ գործընթացը:

Ընտրական ցուցակներում ընդգրկվում են ընտրելու իրավունք ունեցող անձինք: Ի տարբերություն շատ այլ երկրների՝ Հայաստանում առանձին ընտրություններում ընտրելու իրավունք ունեն ոչ միայն ՀՀ քաղաքացիներն, այլև նաև քաղաքացի չհանդիսացող անձինք: Այսպես՝ ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն ընտրության օրը 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում՝

1) մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները.

2) մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում չունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք համայնքում հաշվառվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելու կամ ազատագրվման ձևով պատիժը կրելուց ազատվելու հանգամանքներով պայմանավորված.

3) մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք:

Ընտրելու իրավունքից զրկված են դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: (Հոդված 2, ՀՀ Ընտրական օրենսգիրք)

2 Ընտրական տեղամասերի ձևավորումը.

Ընտրական տեղամասերի ձևավորումը պահանջում է հատուկ կարգ, որը կոչված է լինելու ապահովել ընտրական գրոծընթացների անցկացումը: Այն կազմավորվում է քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ՝ հաշվի առնելով տեղական և այլ պայմաններ, նպա-

տակ ունենալով առավել նպաստավոր պայմաններ ստեղծել քվեարկության կազմակերպման համար: Ընտրատեղամասի ընտրությունը կախված է լինում տվյալ բնակավայրում ընտրողների քանակից, ինչը պայմանավորում է վերջինիս մեծությունը: Ամեն դեպքում այն կազմավորման պահին չպետք է ունենա ավելի քան 2200 ընտրող:

3 Ընտրությունների մասնակցելու առաջադրում.

Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները: Կուսակցությունների դաշինքները կարող են կազմավորվել առնվազն երկու կուսակցության կողմից: (Հոդված 81, ՀՀ Ընտրական օրենսգիրք)

Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու չեն կարող առաջադրվել դատավորները, դատախազները, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, հակակոռուպցիոն կոմիտեում, դատական ակտերի հարկադիր կատարման, փրկարարական, հարկային, մաքսային մարմիններում, քրեակատարողական ծառայությունում, պրոբացիայի ծառայությունում, փրկարար ծառայությունում ծառայողները, զինծառայողները, ընտրական հանձնաժողովների անդամները, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք:

Ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցություն (կուսակցությունների դաշինք) առաջադրում է թեկնածուների մեկ ընտրական ցուցակ: Կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի առաջին մասում առաջին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով եռյակներում (1-3, 1-6, 1-9 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 տոկոսը: Կուսակցության կամ դաշինքի ընտրական ցուցակի առաջին մասում ընդգրկվում է ոչ պակաս, քան 80, և ոչ ավելի, քան 300 թեկնածու: Կուսակցության կամ դաշինքի ընտրական ցուցակի առաջին մասում կարող են ընդգրկվել նաև այդ կուսակցության (դաշինքի անդամ կուսակցություններից որևէ մեկի) անդամ չհանդիսացող անձինք, որոնց թիվը չի կարող գերազանցել ընտրական ցուցակի առաջին մասում ընդգրկված թեկնածուների ընդհանուր թվի 30 տոկոսը: Ընտրական ցուցակում պարտադիր է չորս առավել խոշոր ազգային փոքրամասնությունների (եզ-

դի, քուրդ, ռուս, ասորի) մեկական թեկնածուի առաջադրում:(Հոդված 83, ՀՀ Շնտրական օրենսգիրք)

4 Նախընտրական քարոզարշավ.

Նախընտրական քարոզչություն իրականացնելու համար ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) բացում է նախընտրական հիմնադրամ, որտեղ կուսակցությունը կամ դաշինքն իրավունք ունեն մուծելու նվազագույն աշխատավարձի մինչև 800 000-ապատիկի չափով գումար: Դրանից ավելի գումարի ծախսելու իրավունք չկա: Այսինքն օրենսդրորեն սահմանափակվել է նախընտրական քարոզարշավի համար ծախսվող գումարը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանում է հատուկ կարգ, որով կուսակցություններին կամ դրանց դաշինքներին տրամադրվում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների եթերաժամերից անվճար և վճարովի նախընտրական քարոզչությունն իրականացնելու նպատակով եթերային ժամանակ³⁹:

5 Քվեարկություն.

Քվեարկությունը կատարվում է ընտրատեղամասերում, ընտրողի անձը հաստատող փաստաթղթով ընտրատեղամաս ներկայանալու դեպքում, ժամը 08:00-ից մինչև 20:00-ն:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության օրը՝ ժամը 8.00-ին, հայտարարում է քվեարկության սկիզբը և թույլատրում ընտրողների մուտքը քվեարկության սենյակ: Հանձնաժողովի նախագահը կազմակերպում և վերահսկում է քվեարկության անցկացումը: Ընտրողը քվեարկությանը մասնակցում է անձամբ: Լիազորված քվեարկությունն արգելվում է: Ինքնության հաստատումից, քվեարկության կտրոնի ստացումից անմիջապես հետո ընտրողը

³⁹ Ընտրություններին մասնակցող կուսակցությունն իրավունք ունի անվճար օգտվելու հանրային տեսալսողական հեռարձակողի եթերաժամից ոչ ավելի, քան 90 րոպե, հանրային լսողական հեռարձակողի եթերաժամից՝ ոչ ավելի, քան 150 րոպե, իսկ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս հեռարձակողների եթերաժամից՝ ոչ ավելի, քան 25-ական րոպե: Ընտրություններին մասնակցող կուսակցությունն իրավունք ունի իր նախընտրական հիմնադրամի հաշվին վճարովի հիմունքներով օգտվելու հանրային տեսալսողական հեռարձակողի եթերաժամից ոչ ավելի, քան 120 րոպե, իսկ հանրային լսողական հեռարձակողի եթերաժամից՝ ոչ ավելի, քան 180 րոպե:

մոտենում է հանձնաժողովի՝ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամին և ներկայացնում քվեարկության կտրոնը: Ստանալով քվեաթերթիկն ու ծրարը՝ ընտրողը ընտրախցիկում կատարում է իր ընտրությունը և քվեաթերթիկը՝ ծրարի մեջ, գցում քվեատուփի մեջ:

6 Ընտրությունների արդյունքների ամփոփում.

Քվեների հաշվարկը կատարվում է հրապարակայնորեն, 20:00-ից՝ ընտրատեղամասի փակվելուց հետո: Ընտրությունների արդյունքների մասին հայտարարվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից:

Ազգային ժողովի մանդատները բաշխվում են այն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջև, որոնք ստացել են կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի՝ կուսակցության դեպքում՝ 5, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ 7 տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ: Եթե կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն 5 (7) տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացել են 3-ից պակաս կուսակցություն (կուսակցությունների դաշինք), ապա մանդատների բաշխմանը մասնակցում են առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած 3 կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները:

Մանդատները բաշխվում են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև՝ նրանցից յուրաքանչյուրին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվին համամասնորեն⁴⁰:

⁴⁰ Յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) հասանելիք մանդատների թվի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկված քվեաթերթիկների թվը բազմապատկվում է 101-ով, արդյունքը բաժանվում է արգելապատնեշը հաղթահարած կուսակցություններին (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի վրա, և առանձնացվում են ամբողջ թվերը, որոնք յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) հասանելիք մանդատների թվերն են: Մինչև 101 մանդատ մնացած մանդատները կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև բաշխվում են ըստ մնացորդների մեծության հերթականությամբ՝ յուրաքանչյուրին մեկական մանդատ սկզբունքով: Մնացորդների մեծության հավասարության դեպքում վիճարկվող մանդատը տրվում է

Ընտրությունների արդյունքները կարող են բողոքարկվել ՀՀ Սահմանադրական դատարանում այդ արդյունքները ամփոփող Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման հրապարակման պահից հինգ օրվա ընթացքում:

Ազգային ժողովի պատգամավորների մանդատների նախական բաշխումից հետո բաշխման մասին նախատեսված որոշումն ընդունվելուց հետո՝ 6 օրվա ընթացքում, ընտրական արգելապատնեշները հաղթահարած ցանկացած կուսակցություն (կուսակցությունների դաշինք) կարող է քաղաքական կոալիցիա կազմել ընտրական արգելապատնեշները հաղթահարած այլ՝ առավելագույնը երկու կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) հետ, եթե նրանց օգտին տրված ձայների գումարը բավարար է բաշխված մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունն ստանալու համար, և նրանք եկել են համաձայնության վարչապետի թեկնածուի վերաբերյալ:

Մինչև կոալիցիա ձևավորելու վերջնաժամկետի օրվա ժամը 18.00-ն կոալիցիայի անդամ կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) պետք է Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնեն կոալիցիա կազմելու մասին կոալիցիայի անդամ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների անդամ բոլոր կուսակցությունների) մշտական գործող ղեկավար մարմինների որոշումները: Կոալիցիա կազմելու մասին որոշումը պետք է պարունակի վարչապետի թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը: Սահմանված ժամկետում չշված որոշումները չներկայացնելու կամ թերի ներկայացնելու դեպքում կոալիցիան համարվում է չձևավորված:

Եթե ձևավորված կոալիցիան ստացել է բաշխված մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը, սակայն 54 տոկոսից պակաս, ապա կոալիցիան ստանում է այնքան նվազագույն թվով լրացուցիչ մանդատներ, որ արդյունքում կոալիցիայի մանդատների ընդհանուր քանակը տոկոսային արտահայտությամբ լինի ոչ պակաս, քան 54 տոկոսը:

այն կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին), որին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվն ամենամեծն է, իսկ դրանց հավասարության դեպքում մանդատը տրվում է վիճակահանությամբ (հոդված 95, ՀՀ Ընտրական օրենսգիրք):

Լրացուցիչ մանդատները բաշխվում են կոալիցիայի անդամ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև՝ նրանցից յուրաքանչյուրին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվին համամասնորեն: Յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) հասանելիք մանդատների թվի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը բազմապատկվում է լրացուցիչ մանդատների թվով, արդյունքը բաժանվում է կոալիցիայի անդամ կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի վրա, և առանձնացվում են ամբողջ թվերը, որոնք յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) հասանելիք լրացուցիչ մանդատների թվերն են: Մնացած մանդատները կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև բաշխվում են ըստ մագորդների մեծության հերթականության՝ յուրաքանչյուրին մեկական մանդատ սկզբունքով: Մագորդների մեծության հավասարության դեպքում վիճարկվող մանդատը տրվում է այն կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին), որին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվին ամենամեծն է, իսկ դրանց հավասարության դեպքում մանդատը տրվում է վիճակահանությամբ: Սույն մասով նախատեսված դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նաև որոշում է կայացնում լրացուցիչ մանդատներ հատկացնելու մասին: (Հոդված 97, ՀՀ Ընտրական օրենսգիրք)

Այս կառուցակարգի ներդրման նպատակը եղել է սահմանադրական կայունությունից բխող քաղաքական կայունության հաստատումը և կուսակցությունների միջև քաղաքական երկխոսության զարգացման ուղղությամբ աշխատանքներ տանելու նպատակով նրանց խրախուսելը կամ դրդելը:

Այս նպատակով ՀՀ Սահմանադրությունը սահմանում է, որ Հայաստանում «*Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը*»: (Հոդված 89, ՀՀ Սահմանադրություն)

Կառավարությունը կազմավորվում է վարչապետ նշանակվելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում: Իր նշանակումից հետո վարչապետը հնգօրյա ժամկետում Հանրապետության նախագահին առաջարկում է փոխվարչապետների և նախարարների թեկնածուներին: Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում կամ նշանակում է փոխվարչապետներին և նախարարներին, կամ դիմում է Սահմանադրական դատարան: Սահմանադրական դատարանը դիմումը քննում և որոշում է կայացնում հնգօրյա ժամկետում: Եթե Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում չի կատարում սույն հոդվածով սահմանված պահանջները, ապա համապատասխան փոխվարչապետը կամ նախարարը նշանակված է համարվում իրավունքի ուժով: (Հոդված 150, ՀՀ Սահմանադրություն)

Մանրամասն կարգավորված այս ընտրական գործընթացը Ընտրական օրենսգրքի մակարդակով չափազանց ծայրահեղացվում է: Հաճախ օրենսդրական մակարդակում կարգավորվում են այնպիսի նեղ, մանրամասն, դետալացված հարաբերություններ, որոնք նույնիսկ ենթաօրենսդրական ակտի կարգավորման առարկա չեն: Հասկանալի է, սա արվել և շարունակում է արվել, քանի որ ընտրակեղծիքների քանակն ու պարբերականությունն այնքան ահազնացող տեմպերի է հասել ժողովրդավարական վարչաձևը նոր ընտրած հանրույթներում, որ դրա դեմ պայքարելու ձևաչափերից մեկը դարձել է օրենսդրական մակարդակում չափազանց մանրամասնեցված գործընթացների ներկայացումը:

Իհարկե, սա չի խոսում կուսակցական և քաղաքական մշակույթի զարգացման բարձր մակարդակից, սակայն հուշում է, որ առնվազն այդ մշակույթը զարգացնելու գործնական քայլեր գոնե թե օրենսդրական մակարդակում կատարվում են: Նման քաղաքականության հիմնական նպատակը ոչ միայն կանխելն է հնարավոր ընտրակեղծիքները, այլ նաև ընտրողներին «վարժեցնելն է» ընտրական իրենց իրավունքի իրացումն առավել արդյունավետ կատարելու գործին:

Այդուհանդերձ, կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորման ներդրված կառուցակարգը գործնականում ծայրահեղացնում է «կայունության» գաղափարը և հայկական իրական քաղա-

քական կյանքում իր ներդրված օրվանից մինչ օրս քաղաքական միջավայրը տեղափոխել է խիստ անկայունության փուլ: Մեծ հաշվով, ներդրված լինելով 2017-2018թթ-ին՝ այս համակարգի պայմաններում մինչև 2025թ-ը տեղի է ունեցել երկու արտահերթ խորհրդարանական ընտրություններ (2018 և 2021թթ-ին), ժողովրդական հուզումների աջակցությամբ իշխանափոխություն կամ հեղափոխություն (2018), առնվազն երկու անգամ կառավարության ղեկավարի և հետևաբար՝ ամբողջ կառավարության հրաժարական, հասարակական չդադարող և ահագնացող հուզումներ, որոնց հիմնական նպատակը ձևավորված կառավարությունների հրաժարականի չընդհատվող պահանջն է եղել: Եթե սրան գումարենք նաև արտաքին սպառնալիքները և պատերազմական գործողությունների դեպքերը Ադրբեյջանի կողմից, պատկերն էլ ավելի կսրվի:

Այստեղ ևս կարելի է տարաբնույթ պատճառներ ներկայացնել քաղաքական կայունության ենթադրող խորհրդարանական կամ սահմանադրական մեծամասնության գործնականում ձախողման առնչությամբ, սակայն կրկին փաստը խոսում է նրա մասին, որ քաղաքական և սահմանադրական հստակ նպատակին ուղղված միջոցները, որոնք ծայրահեղացվում և իրենք են դառնում նպատակ, դադարում են լավ և արդյունավետ միջոց լինելուց:

Այս ամենի հիման վրա կարելի է եզրակացնել, որ կուսակցական համակարգերի և ընտրական գործընթացների ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետության օրինակով բացահայտում է համալիր և հակասական իրավիճակ, որը բնորոշ է հետխորհրդային անցումային պետություններին:

Տեսական մակարդակում կուսակցական համակարգերի ժամանակակից տիպաբանությունները հստակորեն ցույց են տալիս, որ չկա համընդհանուր «լավագույն» կուսակցական և ընտրական համակարգի մոդել: Յուրաքանչյուր համակարգ՝ լինի դա միակուսակցական, երկկուսակցական թե բազմակուսակցական, ունի իր առավելություններն ու թերությունները, որոնք պայմանավորված են կոնկրետ երկրի պատմական, մշակութային և սոցիալ-տնտեսական համատեքստով:

Հայաստանի Հանրապետության և շատ հետխորհրդային պետությունների դեպքում գործնականում ակնհայտ է դառնում իրավաբանորեն երաշխավորված բազմակուսակցական համակարգի և

փաստացի միակուսակցական իրականության միջև խորը անդունդը:

Ընտրական համակարգերի զարգացման ուղին Հայաստանում ևս արտացոլում է այս հակասությունները: Մեծամասնական համակարգից աստիճանաբար անցումը մաքուր համամասնական համակարգին, այնուհետև՝ վարկանիշային համակարգի վերացումը, տեսականորեն նպատակ ունենալու է կուսակցական մշակույթի զարգացումը: Սակայն այս փոփոխությունները գործնականում հանգեցրին հակառակ արդյունքի՝ ընտրողը զրկվեց մարդ-թեկնածու ընտրելու իրավունքից և կարող է միայն կուսակցություն ընտրել: Սա ոչ միայն չնպաստեց կուսակցական մշակույթի զարգացմանը, այլև խորացրեց քաղաքացիների և քաղաքական ինստիտուտների միջև անվստահությունը:

Կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորման մեխանիզմի ներդրումը, որը նպատակ ունենալու է քաղաքական կայունություն, գործնականում հանգեցրեց ճիշտ հակառակի: 2017 թվականից ի վեր Հայաստանը ապրել է շարունակական քաղաքական անկայունության շրջան՝ երկու արտահերթ խորհրդարանական ընտրություններ, իշխանափոխություն, կառավարությունների հրաժարականներ և անդադար հասարակական հուզումներ: Սա համապատասխանում է Զարգ Գուդարթի օրենքին՝ «երբ միջոցը դառնում է նպատակ, այն դադարում է լավ միջոց լինելուց»:

Հայկական քաղաքական համակարգի առանձնահատկությունները պայմանավորված են նաև ավելի խորը պատմական, սոցիալ-հոգեբանական և աշխարհաքաղաքական գործոններով: Դարերով օտար տիրապետության ներքո գտնվելը, ցեղասպանությունների և պատերազմների ողբերգական փորձը, անկախ պետականության փորձի պակասը՝ բոլորը հանգեցրել են այն իրավիճակին, երբ քաղաքական, իրավական և պետական մշակույթը դեռևս ձևավորման փուլում է: Հետխորհրդային անցումային շրջանի բարդությունները, գլոբալացման մարտահրավերները և կուսակցությունների համընդհանուր ճգնաժամը միջազգային մակարդակով լրացուցիչ դժվարություններ են ստեղծում հայկական քաղաքական համակարգի զարգացման համար:

Ընտրական գործընթացների չափազանց մանրամասն օրենսդ-

րական կարգավորումը, մի կողմից, ցույց է տալիս ընտրակեղծիքների դեմ պայքարի ջանքերը, մյուս կողմից՝ վկայում է քաղաքական մշակույթի անբավարար զարգացման մասին: Պետական ֆինանսավորման, սեռային քվոտայի, ազգային փոքրամասնությունների ներկայացվածության և այլ մեխանիզմների ներդրումը դրական քայլեր են, սակայն դրանք միայն չեն կարող ապահովել կուսակցությունների իսկական դերափոխումը՝ կոնկրետ անձանց իշխանության բերելու «խողովակներից» վերածվելով իրական քաղաքական գաղափարներ ձևավորող և քաղաքական կամք արտահայտող ինստիտուտների:

Առաջընթացի համար անհրաժեշտ է համակարգային մոտեցում, որը կներառի ոչ միայն ինստիտուցիոնալ բարեփոխումներ, այլև քաղաքական մշակույթի խորը վերափոխում: Սա երկարաժամկետ գործընթաց է, որը պահանջում է կայուն սոցիալ-քաղաքական և սոցիալ-պետական միջավայրերի ստեղծում, քաղաքական դաստիարակության համակարգի զարգացում և կուսակցությունների իսկական դերափոխում՝ դրանց վերածելով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման և արտահայտման իրական սուբյեկտների: Միայն այս պայմաններում է հնարավոր անցնել «կուսակցապետությունից» իսկական հանրապետությանը՝ որտեղ բազմակուսակցական համակարգը կլինի ոչ թե միայն իրավական հռչակագիր, այլ կենդանի իրականություն:

ԳԼՈՒԽ 3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻԾԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԵՎ ԶԱՂԱԶԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Կառավարական կառավարումը և խորհրդարանական գործունեությունը

- *Կառավարության ձևավորում և ծրագրային քաղաքականության իրականացում*

Կառավարության կազմավորման գործընթացը սերտորեն կապված է Վարչապետի ընտրության հետ, իսկ Վարչապետի ընտրության ու նշանակման և Կառավարության կազմավորման գործընթացները հստակ սահմանված են Սահմանադրության 149-րդ և 150-րդ հոդվածներով:

Սահմանադրության 149-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրապետության Նախագահը Նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվելուց հետո անհապաղ վարչապետ է նշանակում խորհրդարանական մեծամասնության ներկայացրած թեկնածուին:

Տարբեր է կարգավորումն այն դեպքում, երբ վարչապետի պաշտոնը թափուր է մնում ոչ թե Ազգային ժողովի ընտրությունների հետ կապված, այլ՝ Սահմանադրության 158-րդ հոդվածով նախատեսված մյուս պատճառներով՝ Կառավարությանը վստահություն չհայտնելու, վարչապետի կողմից հրաժարական ներկայացնելու և այլն:

Այս դեպքերում Կառավարության հրաժարականն ընդունելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում Ազգային ժողովի խմբակցություններն իրավունք ունեն առաջադրելու վարչապետի թեկնածուներ: Ազգային ժողովը վարչապետին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Վարչապետ չընտրվելու դեպքում քվեարկությունից յոթ օր հետո անցկացվում է վարչապետի Նոր ընտրություն, որին մասնակցելու իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից առաջադրված վարչապետի թեկնածուները: Եթե պատգամավորների ընդհանուր թվի

ծայրերի մեծամասնությամբ վարչապետ չի ընտրվում, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով:

Սահմանադրության 150-րդ հոդվածը սահմանում է Կառավարությունը կազմավորվման կարգը, որում առանցքային նշանակություն ունի վարչապետը և նրա նշանակումը:

Կառավարությունը կազմավորվում է վարչապետ նշանակվելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում: Իր նշանակումից հետո վարչապետը հնգօրյա ժամկետում Հանրապետության նախագահին առաջարկում է փոխվարչապետների և նախարարների թեկնածուներին: Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում կամ նշանակում է փոխվարչապետներին և նախարարներին, կամ դիմում է Սահմանադրական դատարան: Սահմանադրական դատարանը դիմումը քննում և որոշում է կայացնում հնգօրյա ժամկետում:

Փաստորեն, ձևական-իրավական տեսանկյունից Հանրապետության նախագահն է նշանակում փոխվարչապետներին և նախարարներին, սակայն նախագահը չի կարող մերժել համապատասխան պաշտոնների նշանակումները բացառությամբ այն դեպքերի, երբ Սահմանադրական դատարանը որոշում է կայացնում այն մասին, որ վարչապետի կողմից առաջադրված թեկնածուն չի համապատասխանում Սահմանադրությամբ Կառավարության անդամին ներկայացվող պահանջներին:

Նախագահի կողմից իր լիազորությունների հնարավոր չարաշահման նորմ-երաշխիք սահմանվել է, որ Հանրապետության նախագահի կողմից կառավարության անդամի նշանակումը մերժելու ցանկացած այլ դեպքում «համապատասխան փոխվարչապետը կամ նախարարը նշանակված է համարվում իրավունքի ուժով»:

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածն առավել մանրամասն է կարգավորում կառավարությունը կազմավորման ընթացակարգային հարցերը: Այսպես.

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը տառացիորեն կրկնում է Սահմանադրության 150-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումը՝ սահմանելով, որ կառավարությունը կազմավորվում է վարչապետ նշանակվելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում: Իր նշանակումից հետո վարչապետը հնգօրյա ժամկետում Հանրապետության

Նախագահին Ե ներկայացնում փոխվարչապետների և նախարարների թեկնածու նշանակելու մասին գրավոր առաջարկություն, որը ներառում է համապատասխան թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը և համապատասխան պաշտոնը, որում առաջարկվում է նշանակել նրան:

Նույն հոդվածի 2-րդ մասը նախատեսում է այն փաստաթղթերի սպառնիչ ցանկը, որն անհրաժեշտ է ներկայացնել Վարչապետի գրավոր առաջարկությանը կից: Դրանք են

1) թեկնածուի գրավոր հայտարարությունը՝ Կառավարության անդամի համապատասխան պաշտոնում նշանակվելու համաձայնության մասին.

2) տեղեկանք՝ թեկնածուի՝ վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին.

3) հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթղթի պատճենը կամ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության տված տեղեկանքը.

4) թեկնածուի՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

5) թեկնածուի համառոտ կենսագրությունը.

6) Կառավարության անդամ նշանակելու մասին Հանրապետության նախագահի համապատասխան հրամանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ վերը նախատեսված փաստաթղթերը և տեղեկությունները ներկայացվելուց հետո Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում հրամանագիր է ընդունում առաջարկված թեկնածուին Կառավարության անդամ նշանակելու վերաբերյալ կամ դիմում է Սահմանադրական դատարան:

Եթե Սահմանադրական դատարանը որոշում է, որ Հանրապետության նախագահին ներկայացված առաջարկությունը համապատասխանում է Սահմանադրությանը, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում հրամանագիր է ընդունում Կառավարության անդամին նշանակելու վերաբերյալ:

Եթե Սահմանադրական դատարանը որոշում է, որ Հանրապետության նախագահին ներկայացված առաջարկությունը չի համապատասխանում Սահմանադրությանը, ապա վարչապետը հնգօրյա

ժամկետում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով առաջարկում է Նոր թեկնածու:

Եթե Հանրապետության Նախագահը եռօրյա ժամկետում չի կատարում սույն հոդվածի 5-6-րդ մասերում նշված գործողությունները, ապա Սահմանադրության 150-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխան փոխվարչապետը կամ Նախարարը նշանակված է համարվում իրավունքի ուժով, որի մասին վարչապետն անհապաղ գրավոր հայտարարություն է տարածում:

Օրենսդիրը սահմանել է, որ գրավոր հայտարարությունը ստորագրում է վարչապետը, և հրապարակվում է Կառավարության պաշտոնական կայքէջում: Կարևոր է նաև օրենսդրական այն կարգավորումը, որ Կառավարությունը համարվում է կազմավորված, եթե նշանակվել է Կառավարության անդամների առնվազն երկու երրորդը:

Օրենսդիրը կառավարության անդամների լիազորությունների ստանձնումը կապել է նշանակման փաստը հավաստող անհատական ակտի հրապարակման հետ:

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Կառավարության անդամն իր լիազորություններն ստանձնում է Հանրապետության Նախագահի հրամանագրի հրապարակման պահից: Հանրապետության Նախագահի հրամանագիրը հրապարակվում է Հանրապետության Նախագահի պաշտոնական կայքէջում: Իրավունքի ուժով նշանակված Կառավարության անդամն իր լիազորություններն ստանձնում է փոխվարչապետին կամ Նախարարին իրավունքի ուժով նշանակելու մասին գրավոր հայտարարությունը Կառավարության պաշտոնական կայքէջում հրապարակման պահից:

Նույն մոտեցմամբ Կառավարության անդամները երդվում են Հանրապետության Նախագահի ներկայությամբ Հանրապետության Նախագահի նստավայրում, իսկ իրավունքի ուժով նշանակված Կառավարության անդամները երդվում են վարչապետի ներկայությամբ վարչապետի նստավայրում: Ընդ որում՝ Կառավարության անդամի փոփոխության դեպքում Կառավարության Նոր անդամը լիազորություններն ստանձնում է սույն հոդվածով սահմանված կարգով:

Կառավարության կազմավորումից հետո քսանօրյա ժամկե-

տում, վարչապետն Ազգային ժողով է ներկայացնում Կառավարության ծրագիրը: Ընդ որում՝ Ազգային ժողովը Կառավարության ծրագրին հավանություն է տալիս յոթնօրյա ժամկետում՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Կառավարության ծրագիրը ամենաառանցքային փաստաթղթերից է, որը բովանդակային առումով իրենից ներկայացնում է կառավարության կողմից մշակված գործողությունների համակարգ, որի նպատակն է ապահովել երկրի տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ ոլորտների զարգացումը: Կառավարության ծրագիրը և Ծրագրային քաղաքականության իրականացումը կառավարության արդյունավետության ամենակարևոր չափանիշներից է: Այդ գործընթացի հաջողությունը կախված է ոչ միայն ծրագիր կազմելու որակից, այլև դրա իրականացման գործիքակազմից, հանրային մասնակցությունից և հաշվետվողականությունից:

Վերոգրյալի հաշվառմամբ էական է, որպեսզի Կառավարության ծրագրային քաղաքականությունն պարունակի հետևյալ հիմնական հատկանիշները՝

- **Ռազմավարական ուղղվածություն՝** հիմնված ազգային առաջնահերթությունների վրա,
- **Չափելիություն՝ ծրագրում պետք է արտացոլված լինեն հստակ չափելի նպատակներ՝** կոնկրետ արդյունքներով և դրանց հասնելու կարճաժամկետ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ լինելու վերաբերյալ ամրագրումով
- **Իրավական և ֆինանսական ապահովում՝** իրավական ակտերի և բյուջեի միջոցով:

• *Խմբակցության կարգապահություն և օրենսդրական գործընթացը*

Կուսակցական կարգապահությունը քաղաքական համակարգերի առանցքային բաղադրիչ է ամբողջ աշխարհում և մեծապես նպաստում է քաղաքական կուսակցությունների միասնականությանն ու հետևողական գործունեությանը: Այն վերաբերում է այն իրողություններին, երբ կուսակցության անդամները հետևում են կուսակցության ղեկավարության կողմից ընդունված որոշումներին և քաղաքականությանը՝ հաճախ ենթարկվելով ներազդեցության տար-

բեր միջոցների, օրինակ՝ քվեարկության հստակ ցուցումներով ստանալով, կուսակցական վերահսկող մարմինների (whips)⁴¹ հսկողությանը և չինագանդվելու համար կիրառվող պատժամիջոցներով: Հատկապես միապալատ համակարգում, որտեղ առկա է միայն մեկ օրենսդիր մարմին, կուսակցական կարգապահությունը դառնում է առավել կարևոր՝ ուղղակիորեն ազդելով իշխող կուսակցության՝ արդյունավետ կառավարելու և օրինագծերի հաստատման կարողության վրա:

Կուսակցական կարգապահությունն էական նշանակություն ունի քաղաքական կուսակցությունների արդյունավետ գործունեության և իրենց նպատակների իրագործման համար: Այն ապահովում է, որ կուսակցության անդամները համախմբված գործեն ընդհանուր օրակարգի շուրջ՝ դրանով իսկ նպաստելով արդյունավետ որոշումների կայացմանն ու քաղաքականությունների իրականացմանը: Առանց կուսակցական կարգապահության՝ առանձին անդամները կարող են առաջնահերթություն տալ անձնական շահերին կամ հակասական գաղափարախոսություններին՝ մի կողմ թողնելով համատեղ շահը, ինչը կարող է հանգեցնել կազմակերպչական քաոսի, իսկ վերջնարդյունքում կուսակցության նպատակներին չհասնելուն:

Կարող ենք փաստել, որ կուսակցական կարգապահությունը հանդես է գալիս որպես մեխանիզմ՝ ապահովելու քաղաքական կուսակցության ներքին միասնությունը: Հետևելով կուսակցության ղեկավարության կողմից ընդունված որոշումներին և քաղաքական գծին՝ անդամները դրսևորում են համերաշխություն և հասարակո-

⁴¹Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի միացյալ թագավորության խորհրդարանում հատուկ պաշտոն զբաղեցնող խորհրդարանի անդամ, որին նշանակում է կուսակցությունը՝ որպես կազմակերպիչ: Կուսակցական կազմակերպիչի հիմնական պարտականություններից մեկը կուսակցության՝ հնարավորինս շատ անդամների և կուսակցության դիրքորոշմանը համաձայն քվեարկելն ապահովելն է: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ կուսակցական կազմակերպիչն ամեն շաբաթ խորհրդարանի անդամներին է ուղարկում խորհրդարանի նիստին ներկա գտնվելու անհրաժեշտության մասին ծանուցագիր, որը պարունակում է տեղեկատվություն առաջիկա խորհրդարանական նիստերի օրակարգի, նախատեսվող քվեարկությունների և կուսակցության դիրքորոշման մասին:

յանը ներկայանում են որպես մեկ միասնական ուժ: Այս միասնությունը կենսական նշանակություն ունի հանրային վստահության և աջակցության ձեռքբերման տեսանկյունից: Բացի այդ, կարգապահությունը կանխում է ներքին հակասությունները և պառակտումները՝ օգնելով կուսակցությանը կենտրոնացած մնալ իր ռազմավարական նպատակների վրա:

Կուսակցական կարգապահությունն ունի և՛ առավելություններ, և՛ թերություններ, որոնք տարբեր շահագրգիռ կողմեր ընկալում են տարբեր կերպ: Կարգապահության կողմնակիցները պնդում են, որ այն խթանում է կուսակցության համախմբվածությունը, ապահովում է արդյունավետ կառավարում և հեշտացնում է կուսակցության ծրագրերի իրականացումը: Այն հնարավորություն է տալիս համատեղ որոշումների կայացման և օրենսդրության արագ ընդունման:

Սակայն քննադատները փաստում են, որ կուսակցական կարգապահությունը կարող է խեղդել այլախոհությունը և սահմանափակել առանձին պատգամավորների՝ իրենց ընտրողների շահերը ներկայացնելու կարողությունը: Այս վիճակը կարող է հանգեցնել կուսակցության ներսում գաղափարների բազմազանության և բազմակարծության սահմանափակմանը և չխթանել անկախ մտածողությունը:

Կուսակցական կարգապահության կիրառման նշանավոր օրինակ է **Մեծ Բրիտանիայի պառլամենտական համակարգը**, որտեղ կուսակցական կազմակերպիչները կարևոր դեր ունեն պատգամավորների՝ կուսակցության գործունեությանը համահունչ գործունեությունն ապահովելու հարցում: Խորհրդարանի անդամները պարտավոր են քվեարկել կուսակցության դիրքորոշմանը համապատասխան, իսկ դրա չկատարումը կարող է հանգեցնել խիստ հետևանքների, օրինակ՝ կարևոր պաշտոններից հեռացման կամ վերընտրության ժամանակ կուսակցությունից չառաջադրվելու⁴²:

Մեկ այլ օրինակ է Չինաստանի կոմունիստական կուսակցությունը, որտեղ խիստ կուսակցական կարգապահությունը պահպանվում է հիերարխիկ կառուցվածքի միջոցով, իսկ անհնազանդության դեպքում կիրառվում են խիստ պատժամիջոցներ:

⁴² Առավել մանրամասն տե՛ս UK government & politics by Andy Williams, 1998, էջ 94-95:

Այս օրինակները ցույց են տալիս, թե որքան տարբեր ձևերով կարող է կուսակցական կարգապահությունը դրսևորվել տարբեր քաղաքական համակարգերում:

Հայաստանի Հանրապետություն 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությանն էական դերակատարում է վերապահել խմբակցություններին:

ՀՀ սահմանադրության 105-րդ հոդվածը, որպես ընդհանուր դրույթ, ամրագրել է, խմբակցությունները նպաստում են Ազգային ժողովի քաղաքական կամքի ձևավորմանը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 4-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է խմբակցություններին: Այն պարունակում է երեք հոդվածները, մասնավորապես՝

7-րդ հոդվածը սահմանում է, թե ինչպես են կազմավորվում խմբակցությունները, սահմանում է խմբակցությունների դասակարգումը՝ կառավարող և ընդդիմադիր,

8-րդ հոդվածում թվարկված են խմբակցության լիազորությունները,

9-րդ հոդվածում ամրագրված են խմբակցության գործունեության ընդհանուր կանոնները:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ ազգային ժողովի ընտրության արդյունքով մանդատների ընդհանուր թվի ոչ պակաս, քան 54 տոկոսը ստացած կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ քաղաքական կոալիցիայի անդամ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ստեղծած խմբակցությունները համարվում են կառավարող, իսկ մյուս խմբակցությունները՝ ընդդիմադիր: Կառավարության կազմավորման վերաբերյալ հուշագիր ստորագրած կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) ստեղծած խմբակցությունները համարվում են կառավարող, իսկ մյուս խմբակցությունները՝ ընդդիմադիր:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ խմբակցությունն իրավունք ունի Կանոնակարգով սահմանված կարգով՝

1) հանդես գալու օրենսդրական նախաձեռնությամբ.

2) Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու Ազգային ժողովի որոշման, հայտարարության կամ ուղերձի նախագիծ.

3) իր առաջադրած օրենքի նախագիծը համարելու առաջնահերթ.

4) քաղաքական կոալիցիա կազմելու այլ խմբակցությունների հետ, ինչպես նաև դուրս գալու կոալիցիայից.

5) մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի իրեն վերապահված պաշտոնում առաջադրելու թեկնածու.

6) Ազգային ժողովի հանձնաժողովում իրեն վերապահված տեղում նշանակելու խմբակցության անդամի, ինչպես նաև նրան փոխելու.

7) առաջադրելու վարչապետի թեկնածու.

8) իրավասու մշտական հանձնաժողովին առաջադրելու թեկնածուներ Ազգային ժողովի կողմից ընտրվող կամ նշանակվող պաշտոններում.

9) առաջադրելու Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածու.

9.1) օրենքով նախատեսված դեպքերում առաջադրելու ինքնավար մարմնի անդամի պաշտոնում թեկնածու.

9.2) Կանոնակարգի 146-րդ հոդվածի 2.2-րդ մասով նախատեսված դեպքում Ազգային ժողովի խորհրդին առաջադրելու ինքնավար մարմնի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար ձևավորվող մրցութային խորհրդի անդամի թեկնածու.

9.3) հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար ձևավորվող մրցութային խորհրդի (այսուհետ՝ Մրցութային խորհուրդ) կազմում անդամ նշանակելու վերաբերյալ դիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, Ազգային ժողովի խորհրդին առաջադրելու Մրցութային խորհրդի անդամի թեկնածու.

10) գրավոր հարցապնդումներով դիմելու Կառավարության անդամներին.

11) ներկայացնելու առաջարկներ Սահմանադրության փոփոխությունների, օրենքի, Ազգային ժողովի որոշման, հայտարարության կամ ուղերձի նախագծի վերաբերյալ.

12) նշանակելու և փոխելու խորհրդում իր ներկայացուցչին:

13) իր անդամին առաջարկելու միջազգային խորհրդարանական կազմակերպության, ինչպես նաև միջխորհրդարանական հանձնաժողովում Ազգային ժողովի կամ այլ պաշտոնական պատվիրակության կազմում.

14) իր անդամին առաջարկելու Ազգային ժողովի բարեկամական խմբի կազմում.

15) հրավիրելու խորհրդարանական լսումներ.

16) իր անդամին խմբակցությունից հեռացնելու:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իր լիազորություններն իրականացնելիս խմբակցությունն ընդունում է որոշումներ, իսկ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ խմբակցության որոշումների ընդունման կարգը՝ նախատեսելով, որ այդ որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած խմբակցության անդամների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է խմբակցության անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

Օրենսդիրը ամրագրել է նաև, որ յուրաքանչյուր խմբակցություն պետք է ունենա իր որոշմամբ հաստատված կանոնադրություն, և իր գործունեությունն իրականացնելիս պետք է առաջնորդվի Կանոնակարգով և կանոնադրությամբ: Օրենսդիրը նաև սահմանել է, որ այն անհրաժեշտ վավերապայմանները, որոնք պետք է սահմանված լինեն խմբակցության կանոնադրությամբ՝ չսահմանափակելով խմբակցության գործունեության կարգին վերաբերող այլ դրույթների ամրագրման հնարավորությունը: Մասնավորապես՝ Կանոնակարգի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խմբակցության կանոնադրությամբ սահմանվում են՝

- 1) խմբակցության անվանումը,
- 2) խմբակցության անդամների իրավունքները և պարտականությունները,
- 3) խմբակցության ղեկավարի և քարտուղարի ընտրության կարգը, ինչպես նաև նրանց լիազորությունները,
- 4) խմբակցության նիստերի գումարման և անցկացման կարգը,
- 5) խմբակցության որոշումների ընդունման կարգը,
- 6) խմբակցության կողմից օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու ընթացակարգը,
- 7) խմբակցության կողմից Ազգային ժողովի որոշման, հայտարարության կամ ուղերձի նախագծի ներկայացման ընթացակարգը,
- 8) խմբակցության կողմից վարչապետի թեկնածուի առաջադրման ընթացակարգը,
- 9) իրավասու մշտական հանձնաժողովին Ազգային ժողովի կող-

մից ընտրվող կամ նշանակվող պաշտոններում խմբակցության կողմից թեկնածուների առաջադրման ընթացակարգը,

9.1) ինքնավար մարմնի անդամի պաշտոնում թեկնածուի առաջադրման ընթացակարգը,

10) խմբակցության կողմից Կառավարության անդամներին գրավոր հարցապնդումներով դիմելու ընթացակարգը,

11) հանրաքվեի և Հանրապետության Նախագահի ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով խմբակցության կողմից Սահմանադրական դատարան դիմելու ընթացակարգը,

12) Սահմանադրության փոփոխությունների, օրենքների և Ազգային ժողովի որոշման Նախագծերի վերաբերյալ խմբակցության առաջարկների ներկայացման ընթացակարգը,

13) խմբակցության անդամին հեռացնելու կարգը,

14) խմբակցության որոշումների ընդունման ընթացակարգը:

Կուսակցական կարգապահության տեսանկյունից ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ոչ միայն խմբակցությունն իրավունք ունի իր անդամին հեռացնելու խմբակցությունից, այլ պատգամավորն իրավունք ունի դուրս գալ խմբակցության կազմից («Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ):

Օրենսդրական նման կարգավորման դեպքում կուսակցության ղեկավարությունը չի կարող պահանջել վայր դնելու մանդատը: Սակայն նման իրավիճակներում չի բացառվում այնպիսի իրավիճակ, երբ պառլամենտական մեծամասնության պատգամավորներից մի քանիսը դուրս գան խմբակցությունից, ինչի արդյունքում պառլամենտական մեծամասնությունը կարող է վերածվել պառլամենտական փոքրամասնության, իսկ պառլամենտական ընդդիմությունն էլ մեծամասնություն դառնալու հնարավորություն չունի: Նման իրավիճակը կարող է հանգեցնել պառլամենտական ճգնաժամի: Բացառված չէ նաև, որ պառլամենտական ընդդիմության մեկ կամ մի քանի պատգամավորներ դուրս գան խմբակցությունից՝ չիրաժարվելով մանդատից: Նման իրավիճակում ընդդիմությունը պառլամենտում 30 տոկոսից պակաս է դառնում, ոյսպիսի իրավիճակը ևս հակասում է ՀՀ օրենսդրությանը:

Այսպես. ԱԺ ութերորդ գումարման ընթացքում կան որևէ խմբակցություններում չընդգրկված չորս պատգամավորներ⁴³ Յովիկ Յովսեփի Աղազարյան⁴⁴, Յակոբ Արսենի Ասլանյան⁴⁵, Իշխան Սերժիկի Չաքարյան⁴⁶, Գեղամ Արմենակի Նազարյան⁴⁷:

<u>Աղազարյան Յովիկ Յովսեփի</u>	<u>054</u>	Անկուսակցական
<u>Ասլանյան Յակոբ Արսենի</u>	<u>057</u>	Անկուսակցական
<u>Չաքարյան Իշխան Սերժիկի</u>	<u>104</u>	«Հայրենիք»
<u>Նազարյան Գեղամ Արմենակի</u>	<u>099</u>	Անկուսակցական

Ազգային ժողովի յոթերորդ գումարման ընթացքում որևէ

⁴³ Տե՛ս՝ http://www.parliament.am/deputies.php?lang=arm&sel=factions&SubscribeEmail=&show_session=8

⁴⁴ Յովիկ Յովսեփի Աղազարյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության որոշմամբ հեռացվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից՝ պետական և կուսակցական նշանակության կոնֆիդենցիալ տեղեկատվության արտահոսքերի, ինչպես նաև հանրության բարոյական նորմերի կոպիտ խախտումների պատճառով, իսկ Աղազարյանը հայտարարել էր, որ դուրս է գալիս «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունից, ամբողջական հողվածը հասանելի հետևյալ հղմամբ՝ <https://www.1lurer.am/hy/2024/12/04/1/1230942>:

⁴⁵ Յակոբ Ասլանյանը հեռացվեց իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունից «լրջագույն կարգապահական խախտման, ինչպես նաև «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության որդեգրած արժեքների և քաղաքական ուղեգծի հետ խիստ անհամատեղելի վարքի պատճառով», ամբողջական հողվածը հասանելի հետևյալ հղմամբ՝ <https://www.azatutyun.am/a/hakob-aslanyany-heratsvets-kaghakatsiakan-paymanagir-khmbaktsoutyouunits/33236443.html>:

⁴⁶ Իշխան Չաքարյանը գրություն է ուղղել ԱԺ նախագահին՝ հայտնելով, որ ինքը դուրս է եկել «Պատիվ ունեմ» խմբակցության կազմից և գործելու է որպես անկախ պատգամավոր, ամբողջական հողվածը հասանելի հետևյալ հղմամբ՝ <https://www.azatutyun.am/a/31603109.html>:

⁴⁷ Գեղամ Նազարյանը հեռացվել է «Հայաստան» խմբակցությունից՝ պայմանավորվախ այն հանազամանքով, որ վերջին շրջանում պատգամավոր Գեղամ Նազարյանի դիրքորոշումները տարբերվում են խմբակցության քաղաքական ուղեգծից ու առաջնահերթություններից, ամբողջական հողվածը հասանելի հետևյալ հղմամբ՝

<https://hraparak.am/post/857ca62c2ec9672c11ba10b06602f4df>:

խմբակցություններում չընդգրկված պատգամավորների թիվն ինն էր⁴⁸:

<u>Աթաբեկյան Վարդան Նելսոնի</u>	<u>059</u>	«Քաղաքացիական պայմանագիր»
<u>Բաբաջանյան Արման Շամիրի</u>	<u>115</u>	Անկուսակցական
<u>Բազրատյան Սերգեյ Պապաշի</u>	<u>097</u>	«Բարգավաճ Հայաստան»
<u>Գեւորգյան Գոռ Գեւորգի</u>	<u>033</u>	Անկուսակցական
<u>Գրիգորյան Աննա Արամի</u>	<u>084</u>	Անկուսակցական
<u>Թովմասյան Թագուհի Մանվելի</u>	<u>072</u>	Անկուսակցական
<u>Հովսեփյան Սոֆիա Ազատի</u>	<u>082</u>	Անկուսակցական
<u>Ուրիխանյան Տիգրան Խաչատուրի</u>	<u>092</u>	«Այնս» առաջադիմական ցենտրիստական կուսակցություն
<u>Պետրոսյան Գեւորգ Վորոյայի</u>	<u>096</u>	«Բարգավաճ Հայաստան»

Առավել խնդրահարույց են այն դեպքերը, երբ պատգամավորները դուրս են գալի կամ հեռացվում են ընդդիմադիր խմբակցություններից, ինչի արդյունքում փոխվում է հարաբերակցությունը օրենսդիր իշխանության մարմնում և չի ապահովվում ընդդիմության 30 տոկոսի առկայությունը պառլամենտում:

⁴⁸ Տե՛ս http://www.parliament.am/deputies.php?lang=arm&sel=factions&SubscribeEmail=&show_session=7

Ընդ որում՝ որևէ իրավական արժևորում չունի նաև այն հանգամանքը, որ դուրս եկած պատգամավորները հայտարարում են իրենց ընդդիմադիր լինելու մասին, քանի որ Կանոնակարգի համաձայն՝ ոչ թե անհատն է համարվում ընդդիմություն, այլ խմբակցությունը՝ որպես քաղաքական միավոր:

Ազգային ժողովի յոթերորդ գումարման ընթացքում անկախ պատգամավորներ Սերգեյ Բագրատյանն ու Տիգրան Ուրիխանյանը երկու նախագիծ են ներկայացրել եւ առաջարկել փոփոխություն կատարել «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում՝ առաջարկելով, որ «խմբակցությունից դուրս գալու կամ հեռացվելու դեպքում ՀՀ Ազգային ժողովի խորհրդին ուղղված գրավոր դիմումով ընդգրկվելու միջազգային խորհրդարանական կազմակերպությունների, միջխորհրդարանական հանձնաժողովների, Ազգային ժողովի պատվիրակությունների եւ Ազգային ժողովի բարեկամական խմբերի կազմում»⁴⁹, իսկ մեկ այլ փոփոխությամբ առաջարկում էին սահմանել, որ պատգամավորը իրավունք կունենա ոչ միայն դուրս գալու խմբակցությունից, այլեւ խմբակցությունից դուրս եկած կամ հեռացված պատգամավորների հետ կազմելու խումբ⁵⁰:

Գտնում ենք, որ խիստ խնդրահարույց է նման իրավակարգավորման մասին անգամ մտածելը: Ընդ որում, գտնում ենք, որ նման իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է հատկապես համամասնական ընտրակարգով ընտրած պատգամավորի՝ խմբակցությունից դուրս գալու կամ հեռացվելու դեպքում օրենքով սահմանել մանդատը վայր դնելու պարտականություն:

⁴⁹ 07.04.2021 թվականին հեղինակը նախագիծը հետ է վերցրել, օրենքի նախագիծը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=12240&Reading=0>:

⁵⁰ 07.04.2021 թվականին համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի՝ օրենքի նախագծի քննարկումը մշտական հանձնաժողովի նիստում հետաձգվել է մինչև երկամսյա ժամկետով, իսկ 09.06.2021 Յետաձգված նախագիծն Ազգային ժողովում հանվել է շրջանառությունից՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն: Օրենքի նախագիծը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=12242&Reading=0>:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ պետք է փաստել, որ կուսակցական, ինչպես նաև խորհրդարանում ներկայացված խմբակցությունների կարգապահությունը միապալատ համակարգում երկսայր սուր է: Այն կարող է նպաստել կառավարության կայունությանն ու օրենսդրական գործընթացի արդյունավետությանը, սակայն կարող է նաև սահմանափակել գաղափարների ազատ շրջանառությունը խորհրդարանում՝ վտանգելով ժողովրդավարական արժեքները: Ինչպես հանրային նշանակություն ունեցող հարցերում, այնպես էլ սույն հարցում ժողովրդավարական հասարակությունում կարևորվում է արդարացի հավասարակշռության ապահովումը կուսակցական կարգապահության և քաղաքական բազմակարծության միջև:

- *Ընդդիմության դերը և կառավարչական հսկողությունը:*

Հայաստանում սահմանադրական բարեփոխումների արդյունքում սկիզբ առած խորհրդարանական կառավարման ձևը ենթադրում է խորհրդարանի դերի և նշանակության հայեցակարգային վերանայում և այդ համատեքստում շատ կարևոր է խորհրդարանական ընդդիմության կարգավիճակի հստակ ամրագրումն ու լիազորությունների ընդլայնումը, ինչը ենթադրում է այնպիսի երաշխիքներ, որոնք կապահովեն վերջինիս արդյունավետ մասնակցությունը պետական իշխանության իրականացմանը և, մասնավորապես, քաղաքական որոշումների կայացմանը՝ թույլ չտալով, որպեսզի խորհրդարանական կառավարման համակարգը վերածվի խորհրդարանական մեծամասնության դիկտատուրայի:

Նոր սահմանադրական իրողությունում ընդդիմությանը Հայաստանում վերապահվել է, ըստ էության, սահմանադրական ինստիտուտի կարգավիճակ: Այս պնդումը հիմնավորվում է Սահմանադրությամբ ամրագրված մի շարք դրույթներով:

Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ազգային ժողովն իր կազմից ընտրում է Ազգային ժողովի նախագահ և նրա երեք տեղակալ: Տեղակալներից մեկն ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորների թվից (...):

Որպես խորհրդարանական ընդդիմության գոյությունն ապահովող երաշխիք՝ ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանադրական օրենքի

96-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե որևէ կուսակցություն սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերի հերթական կիրառման արդյունքում ստացել է 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերով բաշխված մանդատների ընդհանուր թվի 2/3-ից ավելին, ապա մյուս կուսակցություններն ստանում են այնքան նվազագույն թվով լրացուցիչ մանդատներ (ԼՄ), որ արդյունքում նրանց մանդատների ընդհանուր թիվը լինի Ազգային ժողովի մանդատների ընդհանուր թվի 1/3-ից ոչ պակաս: Յուրաքանչյուր կուսակցությանը հասանելիք լրացուցիչ մանդատների թիվը որոշվում է հետևյալ կերպ. այդ կուսակցության ստացած մանդատների թիվը բազմապատկվում է ԼՄ թվով, ստացված թիվը բաժանվում է լրացուցիչ մանդատներ ստացող կուսակցությունների՝ մինչև լրացուցիչ մանդատներ տալը ստացված մանդատների ընդհանուր թվի վրա, և առանձնացվում են ամբողջ թվերը, որոնք տվյալ կուսակցությանը հասանելիք լրացուցիչ մանդատների թվերն են: Մնացած մանդատները կուսակցության միջև բաշխվում են ըստ մնացորդների մեծության հերթականության՝ յուրաքանչյուրին մեկական մանդատ սկզբունքով: Մնացորդների մեծության հավասարության դեպքում վիճարկվող մանդատը տրվում է այն կուսակցությանը, որի մանդատների թիվն ամենամեծն է, իսկ դրանց հավասարության դեպքում մանդատը տրվում է վիճակահանությամբ:

Այսինքն՝ օրենսդիրը սահմանել է խորհրդարանում ընդդիմության նվազագույն ներկայացվածության ապահովման համար նվազագույն քանակ՝ ամրագրելով, որ որևէ կուսակցությանը բաշխված մանդատների ընդհանուր թվի 2/3-ից ավելին կազմելու դեպքում քաղաքական փոքրամասնությանը պատկանող պատգամավորների նվազագույն քանակը պետք է լինի ոչ պակաս, քան Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի 1/3-ը:

Փաստորեն, հաշվի առնելով խորհրդարանական ընդդիմության կարևոր դերակատարումը պետությունն իր վրա է վերցրել խորհրդարանում ընդդիմության երաշխավորված ներկայությունն ապահովելու պարտականությունը:

«Ընդդիմության դերը ժողովրդավարական խորհրդարանում» վերտառությամբ զեկույցում Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ մեծամասնության քաղաքական կամքն արտահայտող մեծամասնության կառավարման սկզբունքը ժողովրդավարության հիմնական

ձևական և իրավական չափանիշն է: Խորհրդարանում որոշումները կայացնում է մեծամասնությունը, և խորհրդարանական կառավարման համակարգին բնորոշ է այն հանգամանքը, որ կառավարությունն, ընդհանուր առմամբ (թեև ոչ միշտ), վայելում է մեծամասնության աջակցությունը: Ընդդիմությունը սովորաբար փոքրամասնություն է, և, որպես ընդհանուր կանոն, իրավասու չէ որոշումներ ընդունել: Ընդդիմության գործառույթը իշխանությունն իրականացում չէ: Փոխարենը՝ ընդդիմությունը կատարում մի շարք այլ կարևոր գործառույթներ: Այդ գործառույթների լավագույնս թվարկման հարցը վիճահարույց է, սակայն դրանց թվում կարելի է նշել հետևյալը.

- քաղաքական այլընտրանքներ առաջարկել,
- ձևակերպել և առաջ մղել իրենց ընտրողների շահերը,
- առաջարկել այլընտրանքներ Կառավարության և մեծամասնության ներկայացրած որոշումներին,
- նպաստել խորհրդարանական որոշումների կայացման գործընթացների կատարելագործմանը՝ ապահովելով բանավեճ, քննադատություն և հակադրություն,
- վերլուծել և ստուգել կառավարության օրենսդրական և բյուջետային առաջարկները,
- վերահսկել և վերահսկողություն իրականացնել կառավարության և վարչական մարմինների նկատմամբ,
- նպաստել քաղաքական գործընթացների կայունության, լեգիտիմության, հաշվետվողականության և թափանցիկության բարձրացմանը⁵¹:

Սահմանադրությունը սահմանել է ընդդիմությանը վերապահվող լրացուցիչ լիազորություններ և գործունեության երաշխիքներ, որոնք, ըստ իրենց բնույթի, կարելի է բաժանելի երկու խմբի՝

1) խորհրդարանի կողմից հանրային-իրավական որոշումների կայացման գործընթացում ընդդիմության դերակատարումը մեծացնող լիազորություններ,

2) վերահսկողական լիազորություններ:

1-ին խմբին են պատկանում խորհրդարանի կողմից հանրային

⁵¹Stu European commission for democracy through law (Venice commission) Report on the Role of the Opposition in a Democratic Parliament, Strasbourg, 15 November 2010, պարագրաֆ 25:

նշանակության կարևորագույն հարցերով որոշումների կայացումը պատգամավորների ընդհանուր թվի որակյալ մեծամասնությամբ:

2-րդ խումբը ներառում է քննիչ հանձնաժողովների, հարցապնդումների ինստիտուտը, ընդդիմության ներկայացուցչին Ազգային ժողովի նախագահի տեղակալներից մեկին պաշտոնի տրամադրումը և այլն:

Հանրային նշանակության կարևորագույն հարցերով որոշումների կայացման համար պատգամավորների որակյալ մեծամասնության շեմ սահմանելու մոտեցման կարևորությունն ընդգծվել է նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից:

Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ խորհրդարաններում հիմնական սկզբունքն այն է, որ որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ քվեարկության արդյունքում: Սակայն գոյություն ունի երկու բացառություն: Առաջինը՝ այն կանոններն են, որոնք որոշում ընդունելու համար պահանջում են որակյալ մեծամասնություն: Երկրորդը՝ այն կանոններն են, որոնք որոշում կայացնելու լիազորություն են տալիս որակյալ փոքրամասնությանը:

Այս երկու կատեգորիաները փոխկապակցված են, սակայն ունեն տարբերություններ: Որակյալ մեծամասնության կանոնն ընդդիմությանը բացասական լիազորություն է տալիս խոչընդոտել որոշումների ընդունմանը: Այս մոտեցումը սովորաբար կիրառվում է առանձնահատուկ կարևորություն ունեցող որոշումների դեպքում, օրինակ՝ Սահմանադրության փոփոխություն, ինքնիշխանության պատվիրակում և նմանատիպ հարցեր:

Որակյալ փոքրամասնության կանոնը, հակառակը, փոքրամասնությանը տալիս է դրական լիազորություն՝ սեփական նախաձեռնությամբ որոշում նախաձեռնելու և ընդունելու: Այս կանոնը հիմնականում կիրառվում է ընթացակարգային հարցերի դեպքում, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողության կամ հսկողությանն առնչվող իրավիճակներում⁵²:

Սահմանադրությունն Ազգային ժողովի կողմից որակյալ մեծամասնությամբ որոշումների ընդունման կառուցակարգը դիտարկում

⁵² Տե՛ս European commission for democracy through law (Venice commission) Report on the Role of the Opposition in a Democratic Parliament, Strasbourg, 15 November 2010, պարագրաֆ 67:

Է երկու հարթությունում՝ Ազգային ժողովի կողմից

1. Սահմանադրության և սահմանադրական օրենքների ընդունում ու դրանցում փոփոխությունների կատարում,

2. որոշակի պետական պաշտոններում նշանակումների կատարում:

1-ին դեպքում Սահմանադրության 202-րդ հոդվածը սահմանում է, որ Սահմանադրության փոփոխության և Նոր Սահմանադրության ընդունման հարցով Ազգային ժողովը նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ որոշումն ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

Սահմանադրության 202-րդ հոդվածով նախատեսված իրավա-կարգավորումը վերաբերում է ինչպես Սահմանադրության որոշակի հոդվածները փոփոխելուն, այնպես էլ Նոր Սահմանադրության կամ դրանում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերին:

Հաջորդիվ, պետք է անդրադառնալ սահմանադրական օրենքներին: Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասում առանձնացված է մյուս օրենքների համեմատությամբ հիմնարար բնույթ ունեցող՝ սահմանադրական օրենքների շարք, որոնց ընդունման կամ փոփոխման համար անհրաժեշտ է ավելի բարձր շեմ՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 3/5-ը: Դրանք են Ազգային ժողովի կանոնակարգը, Ընտրական օրենսգիրքը, Դատական օրենսգիրքը, Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Հանրաքվեի մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը և Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը:

Սահմանադրությամբ Ազգային ժողովին տրվել է լիազորություն՝ պատգամավորների ընդհանուր թվի որակյալ մեծամասնությամբ՝ 3/5-ով ընտրել պաշտոնատար անձանց լայն շրջանակ: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի նախագահը (Սահմանադրության 166-րդ հոդվածի 5-րդ մաս), Գլխավոր դատախազը (Սահմանադրության 177-րդ հոդվածի 1-ին մաս), Մարդու իրավունքների պաշտպանը (Սահմանադրության 192-րդ հոդվածի 1-ին մաս), Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը և մյուս անդամները (Սահմանադրության 195-րդ հոդվածի 2-րդ մաս), Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամները (Սահմանադրության 197-րդ

հողվածի 2-րդ մաս), Հաշվեքննիչ պալատի նախագահի և մյուս անդամները (Սահմանադրության 199-րդ հոդվածի 2-րդ մաս), Կենտրոնական բանկի նախագահը (Սահմանադրության 201-րդ հոդվածի 1-ին մաս), Սահմանադրական դատարանի դատավորները (Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մաս), Բարձրագույն դատական խորհրդի 5 անդամները (Սահմանադրության 174-րդ հոդվածի 3-րդ մաս) ընտրվում են Ազգային ժողովի կողմից պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

Սահմանադրությունն առանձնահատուկ կարգավորում է նախատեսել կապված Հանրապետության նախագահի ընտրության հետ: Այսպես՝ Սահմանադրության 125-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որը ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք քառորդը: Եթե Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա անցկացվում է ընտրության երկրորդ փուլ, որին կարող են մասնակցել առաջին փուլին մասնակցած բոլոր թեկնածուները: Երկրորդ փուլում Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որն ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդը: Եթե Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա անցկացվում է ընտրության երրորդ փուլ, որին կարող են մասնակցել երկրորդ փուլում առավել ձայներ ստացած երկու թեկնածուները: Երրորդ փուլում Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որն ստանում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը:

Դրական գնահատելով որոշակի պաշտոնատար անձանց պատգամավորների ընդհանուր թվի որակյալ մեծամասնությամբ՝ 3/5-ով ընտրելու իրավակարգավորման նախատեսումը՝ գտնում ենք, որ նման իրավակարգավորումն անհրաժեշտ, սակայն բավարար չէ ժողովրդական հասարակայնությունում: Հաշվի առնելով վերը թվարկված սահմանադրական պաշտոնների անկախ բնույթը, գտնում ենք, որ վերջիններիս ավելի բարձր լեգիտիմության ապահովման և կառավարող կուսակցությունից կախումն բացառելու, խորհրդարանական երկխոսությունն ապահովելու տեսանկյունից կարևոր է նշված պաշտոններում անձանց ընտրության հարցում ընդդիմության ուղղակի մասնակցության ապահովումը: Օրինակ, կարող է նախատեսվել, որ

վերջիններս ընտրվում են Ազգային ժողովի կողմից պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, բայց ոչ պակաս, քան ընդդիմադիր խմբակցության որոշակի տոկոսի մասնակցությամբ: Ընդ որում՝ պաշտոնների նշանակման հարցում հնարավոր սահմանադրական ճգնաժամն հաղթահարելու տեսանկյունից կարող է նախատեսվել իրավակարգավորում առ այն, որ ընդդիմադիր խմբակցությունների անհրաժեշտ ձայները չստանալու դեմքում տվյալ պաշտոնատար անձն ընտրվում է Ազգային ժողովի կողմից պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով և/կամ համարվում է ընտրված իրավունքի ուժով:

Հաջորդիվ, գտնում ենք, որ պետք է քննարկել ընդդիմությանը վերապահված գործունեության երաշխիքների հաջորդ խումբը՝ կապված վերահսկողական լիազորությունների իրականացման հետ՝ շեշտադրումը կատարելով հատկապես քննիչ հանձնաժողովների, հարցապնդումների ինստիտուտի, ընդդիմության ներկայացուցչին Ազգային նախագահի տեղակալներից մեկին պաշտոնի տրամադրման վրա:

Խորհրդարանական վերահսկողության կարևորագույն ասպեկտներից է հանրային հետաքրքրությունն ներկայացնող առանձին հարցերով ուսումնասիրություններ իրականացնելը, փաստեր պարզելը և դրանք խորհրդարանական քննարկման առարկա դարձնելը: Նշված գործառույթը խորհրդարանները, որպես կանոն, իրականացնում են հատուկ ստեղծվող խորհրդարանական հանձնաժողովների՝ քննիչ հանձնաժողովների միջոցով:

Խորհրդարանական կառավարման համակարգերում, որտեղ օրենսդիր և գործադիր իշխանությունները, որպես կանոն, նույն քաղաքական ուժն են ներկայացնում, քննիչ հանձնաժողովները գործնականում հանդես են գալիս, առաջին հերթին, որպես խորհրդարանական փոքրամասնության վերահսկողական գործիք⁵³:

Քննիչ հանձնաժողովների ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունն առաջին անգամ ներմուծվել է 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 108-րդ հոդվածով: Այսինքն՝ ամենաբարձր՝

⁵³ Տե՛ս Խորհրդարանական վերահսկողություն. գործիքակազմն ու մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում, Դավիթ Հարությունյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2020թ., էջ 54-55:

Սահմանադրության մակարդակով է ամրագրված քննիչ հանձնաժողովի գործառույթը, ստեղծման կարգը, քննիչ հանձնաժողովի արդյունավետ գործունեությունն ապահովելուն ուղղված որոշակի երաշխիքներ, ինչպես նաև որոշակի ոլորտներում քննիչ հանձնաժողովի ստեղծման համար հատուկ սուբյեկտ:

Քննիչ հանձնաժողովներին է նվիրված «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև՝ ԱԺ կանոնակարգ) 7-րդ գլուխը, որը պարունակում է կարգավորումներ՝ կապված **Քննիչ հանձնաժողովի ստեղծման, քննիչ հանձնաժողովի գործունեության, քննիչ հանձնաժողով հրավիրված անձանց իրավունքների և պարտականությունների հետ, ինչպես նաև քննիչ հանձնաժողովի գործունեության սահմանափակումների հետ կապված: Օրենսդիրը սահմանել է նաև որոշակի իրավակարգավորումներ՝ կապված քննիչ հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի, քննիչ հանձնաժողովի գործունեության արդյունքով ներկայացվող զեկույցի հետ կապված և քննիչ հանձնաժողովի լիազորությունների ավարտի հետ:**

Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք Ազգային ժողով ներկայացնելու նպատակով, իրավունքի ուժով ստեղծվում է Ազգային ժողովի քննիչ հանձնաժողով:

Սույն իրավանորմի տառացի մեկնաբանությունից բխում է, որ քննիչ հանձնաժողովը ստեղծվում է իրավունքի ուժով, եթե առկա է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջը: Իրավունքի ուժով ստեղծումը սահմանադրական գործունեության շրջան է, որի բովանդակությունը հանգում է նրան, որ քննիչ հանձնաժողովի ստեղծումը կախված չէ Ազգային ժողովի, կառավարող խմբակցության և/կամ որևէ անձի սուբյեկտիվ հայեցողությունից կամ չի պահանջում որևէ այլ հատուկ որոշման կայացում: Դրանով իսկ բացառվում է քննիչ հանձնաժողովի ստեղծման ճանապարհին հնարավոր խոչընդոտների հարուցումը՝ հաշվի առնելով, որ նման հանձնաժողովները հանդես են գալիս առավելապես որպես պառլամենտական փոքրամասնության գործիք: Դրանով է պայմանավոր-

ված քննիչ հանձնաժողովի ստեղծման համար սահմանված ցածր շեմի նախատեսումը՝ կապված պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջը՝ նպատակ ունենալով ապահովելու վերահսկողական այս կարևոր գործիքից խորհրդարանական փոքրամասնության օգտվելու իրական հնարավորությունը:

Աժ կանոնակարգի 20-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քննիչ հանձնաժողով ձևավորելու համար անհրաժեշտ թվով պատգամավորները գրավոր դիմում են ներկայացնում Ազգային ժողովի նախագահին:

Դիմումում պարտադիր նշվում է քննիչ հանձնաժողովի՝ • քննության առարկան և իրավասության ոլորտը, • նախագահի անունը, ազգանունը, • լիազորությունների ժամկետը (մաս 3), • դիմումին կցվում է քննիչ հանձնաժողովի անդամների • թիվը սահմանելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը (մաս 4):

Աժ կանոնակարգի 20-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դիմումին քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ կցելու և դրան հաջորդող գործընթացները խնդրահարույց են՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Աժ կանոնակարգի 38-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի համաձայն՝ հերթական նստաշրջանի օրակարգի կամ դրանում լրացումներ կատարելու մասին նախագծում ընդգրկվում են հերթական նիստերի առաջին օրվա դրությամբ նստաշրջանի օրակարգում ընդգրկվելու ենթակա հետևյալ հարցերը. Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին հարցը:

Ստացվում է, որ ձայների պարզ մեծամասնությամբ Աժ-ն հաստատում կամ մերժում է քննիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին որոշման նախագիծը: Աժ քաղաքական մեծամասնությունը կարող է արգելափակել հանձնաժողով ստեղծելու քաղաքական փոքրամասնության նախաձեռնությունը ու քաղաքական մեծամասնության այդ հնարավորությունը բացարձակ է, քանի որ օրենքը որևէ բացառություն չի սահմանում խորհրդարանական փոքրամասնության համար: Այլ կերպ ասած, խորհրդարանական փոքրամասնությունը որևէ հնարավորություն չունի ստեղծելու քննիչ հանձնաժողով, եթե դա չի ցանկանում խորհրդարանական մեծամասնությունը: Ըստ եռթյան նման ընթացակարգը Աժ քաղաքական մեծամասնությանը

օժտում է քննիչ հանձնաժողով ստեղծելու նախաձեռնության նկատմամբ վետոյի իրավունքով⁵⁴: Նման պարագայում Սահմանադրությամբ 108-րդ հոդվածի 1-ին մասով և ԱԺ կանոնակարգի 20-րդ հոդվածով նախատեսված քննիչ հանձնաժողովի՝ «իրավունքի ուժով» ստեղծվելու նորմ-երաշխիքը խորհրդարանական փոքրամասնության համար դառնում է ոչ արդյունավետ և պատրանքային:

Ազգային ժողովի կանոնակարգը պատասխան չի տալիս այն հարցին, թե ի՞նչ է տեղի ունենում այն դեպքում, երբ Ազգային ժողովը որոշում չի ընդունում քննիչ հանձնաժողովի անդամների թվի հետ կապված: Այդուհանդերձ, սահմանադրական կարգավորումներից ուղղակիորեն բխում է, որ անթույլատրելի է քննիչ հանձնաժողովի ձևավորումից հետո նրա գործունեության կազմակերպման առնչվող հարցերով խոչընդոտներ ստեղծել: Այսինքն՝ այն հանգամանքը, որ քննիչ հանձնաժողովի անդամների թիվը որոշում է Ազգային ժողովը, հիմք չի տալիս պառլամենտական մեծամասնությանը խաթարել հանձնաժողովի ձևավորումը: Նման կերպ քննիչ հանձնաժողովի ստեղծման կամ գործունեության կասեցման հնարավորությունը խնդրահարույց է և գործնականում կարող է հանգեցնել պառլամենտական վերահսկողության համար նման կարևոր գործիքի չեզոքացմանը⁵⁵:

Այսպիսով, քննիչ հանձնաժողովի իրավասության առարկան սահմանափակված է մի շարք սահմանադրաիրավական պահանջներով, որոնք նույնությամբ կրկնվում են ԱԺ կանոնակարգի 20-րդ հոդվածի 1-ին մասում: Դրանք են.

• *Չարքը պետք է հանրային հետաքրքրություն ներկայացնի*

Քննության ենթակա հարցերը պետք է հետաքրքրական լինեն հասարակության լայն շերտերի համար: Շատ հաճախ այդպիսի հարցերը բարձրացնում և հասարակության ուշադրությունը դրանց վրա են հրավիրում զանգվածային լրատվության միջոցները: Ի վերջո, թե

⁵⁴ Տե՛ս «Քննիչ հանձնաժողովների արդյունավետությունը խորհրդարանական վերահսկողության լուսի ներքո» հետազոտությունը, Արա Ղազարյան, Դավիթ Ասատրյան, Երևան, 2022 թվական, էջ 16:

⁵⁵ Տե՛ս Խորհրդարանական վերահսկողություն. գործիքակազմն ու մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում, Դավիթ Հարությունյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2020թ., էջ 58:

որքանով է հարցը հանրային հետաքրքրություն ներկայացնում, գնահատում են քննիչ հանձնաժողով ստեղծելու նախաձեռնություն ցուցաբերած պատգամավորները:

• *Հարցը պետք է մտնի Ազգային ժողովի իրավասության ոլորտի մեջ*

Ազգային ժողովի գործառույթները, ըստ այդմ՝ նաև իրավասության ոլորտն ամրագրված է Սահմանադրության 88-րդ հոդվածում, որից հետևում է, որ Ազգային ժողովի առանցքային գործառույթների և իրավասության երեք ոլորտներ.

1. օրենսդրության ընդունումը,
2. վերահսկողության իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ,
3. պետական բյուջեի ընդունում,
4. Սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթների իրականացում:

Գործառույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննիչ հանձնաժողովի քննության առարկա կարող է դառնալ ողջ գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողությունը՝ նրա իրավասությանը վերապահված ոլորտներում: Ընդ որում, քննության առարկան կարող է ընդգրկել ինչպես գործադիր իշխանության կենտրոնական և տարածքային պետական մարմինները, այնպես էլ տեղական՝ համայնքային, ինքնակառավարման բնագավառը, որովհետև սրանք նույնպես որպես վարչարարություն իրականացնող պետք է ընկալվեն որպես գործադիր իշխանություն Սահմանադրության 4-րդ հոդվածի իմաստով: Բացի այդ, Ազգային ժողովը Սահմանադրության 182-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն օրենսդրական կարգավորման է ենթարկում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները: Նշված գործառույթի իրականացումը անհնարին է առանց տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանն առնչվող հարցերը քննարկման առարկա դարձնելու՝ դրանով իսկ վերջիններիս գործունեությունը նույնպես դարձնելով քննիչ հանձնաժողովի իրավասության առարկա:

«Իրավասության ոլորտ» հասկացությունը ամբողջությամբ կարող է տեղավորվել օրենքի 23-րդ հոդվածում սահմանված քննիչ հանձնաժողովի գործունեության սահմանափակումների մեջ: Մասնավորապես՝ քննիչ հանձնաժողովի գործունեությունը չի կարող

դուրս գալ Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող հարցերի շրջանակից, ինչպես նաև հանձնաժողովի քննության առարկա չեն կարող հանդիսանալ նախնական քննության կամ դատավարության որևէ այլ փուլում գտնվող հարցերը, ինչպես նաև այն հարցերը, որոնք հաստատվել կամ հերքվել են օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:

Կարևոր է, որ օրենսդիրը սահմանել է, որ վերոնշյալ երկու սահմանափակումների խախտումը հիմք է հանդիսանում սահմանադրական մարմնի կողմից Սահմանադրական դատարան դիմելու համար:

- ***Չարցը պետք է վերաբերի փաստերի.***

Քննիչ հանձնաժողովի քննության առարկան հստակեցնող հաջորդ նախապայմանն այն է, որ քննության առարկա կարող են լինել միմիայն փաստերը, այսինքն՝ այն ամենը, ինչ գոյություն ունի օբյեկտիվ իրականության մեջ և ապացուցման ենթակա է:

Նման պահանջը կապված է որոշակիության և իշխանությունների բաժանման սկզբունքների հետ: Չավարտված գործընթացները, որոնցով իրավասու մարմինը դեռևս վերջնական որոշում չի կայացրել, չեն կարող համարվել «հասունացած» հաստատված փաստ լինելու համար: Նման դեպքում քննության առարկան չի կարող բավարար չափով պարզ լինել և որոշակի լինել: Բացի այդ, պառլամենտական քննիչ հանձնաժողովը, ստանալով նման մանդատ, կմիջամտի գործադիր իշխանության կենտրոնական ոլորտին, եթե խառնվի այն գործընթացների մեջ, որոնք դեռևս գտնվում են պետական միջոցառումների և որոշումների նախապատրաստման փուլում⁵⁶:

Աժ կանոնակարգի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավակարգավորման բովանդակությունից հետևում է, որ բոլոր այն դեպքում, երբ դիմումը չի համապատասխանում օրենքի պահանջներին և երեք աշխատանքային օրվա ընթացքում դրանց չի համապատասխանեցվում, ապա Ազգային ժողովի նախագահը վերադարձնում է դիմումը՝ նշելով պատճառների մասին:

⁵⁶Տե՛ս Խորհրդարանական վերահսկողություն. գործիքակազմն ու մեխանիզմները Չայաստանի Հանրապետությունում, Դավիթ Հարությունյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2020թ., էջ 61-66:

Դիմումի՝ օրենքի պահանջներին համապատասխանելու դեպքում քննիչ հանձնաժողովը համարվում է ստեղծված պահանջն Ազգային ժողովի նախագահին ներկայացվելու պահից, որի մասին հայտարարում է Ազգային ժողովի նախագահը:

Սույն իրավակարգավորման մասով կարևոր է շեշտադրել, որ ԱԺ կանոնակարգը, փաստորեն, քննիչ հանձնաժողովի ստեղծման ընթացակարգի ապահովման հարցում որոշակի լիազորություններ է վերապահել Ազգային ժողովի նախագահին, սակայն պետք է նկատել, որ Ազգային ժողովի նախագահն իրավասու է միայն ստուգել ներկայացվող դիմումի համապատասխանությունը օրենքի պահանջներին, սակայն ոչ դրա ստեղծման նպատակահարմարությունը և/կամ անհրաժեշտությունը:

ԱԺ կանոնակարգի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը մինչև վեց ամիս է, որը կարող է երկու անգամ, հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ երկարաձգվել մինչև վեցական ամսով⁵⁷:

Քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանվելուց հետո, խմբակցությունները իրենք են որոշում, թե իրենց խմբակցությունից ովքեր պետք է նշանակվեն հանձնաժողովի կազմում: Քննիչ հանձնաժողովի կազմից իրենց անդամի դուրս գալու հարցը նույնպես որոշում է խմբակցությունը:

Սահմանադրության 108-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ քննիչ հանձնաժողովում նախագահում է պահանջը ներկայացնող պատգամավորներից մեկը: Քննիչ հանձնաժողովի նախագահի ընտրությունը պահանջ ներկայացրած պատգամավորների կազմից կատարելը տրամաբանական է: Դա նաև խորհրդարանական փոքրամասնության շահերի պաշտպանության համար նախատեսված երաշխիք է, եթե հանձնաժողովը ստեղծվել է խորհրդարանական փոքրամասնության նախաձեռնությամբ:

Հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի ընտրության

⁵⁷ Մինչև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-352-Ն օրենքի ընդունումը (սույն օրենք ուժի մեջ է մտել 14.10.2022 թվականին) քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը մինչև վեց ամիս էր, որը կարող է մեկ անգամ, հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ երկարաձգվել մինչև վեց ամսով:

հարցում կրկին փորձ է արվել հավասարակշռել խորհրդարանական ուժերի դասավորվածությունը: Այսպես. օրենսդիրը սահմանել է, որ այն դեպքում, երբ հանձնաժողովի նախագահի պաշտոնը զբաղեցնում է կառավարող խմբակցության ներկայացուցիչը, ապա հանձնաժողովի նախագահի տեղակալի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը պատկանում է ընդդիմադիր խմբակցությանը, իսկ եթե հանձնաժողովի նախագահի պաշտոնը զբաղեցնում է ընդդիմադիր խմբակցության ներկայացուցիչը, ապա հանձնաժողովի նախագահի տեղակալի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը պատկանում է կառավարող խմբակցությանը:

Օրենքով բացառություն է նախատեսված միայն պաշտպանության և անվտանգության բնագավառների քննիչ հանձնաժողովի նախագահի և տեղակալի համար, որի համաձայն՝ պաշտպանության և անվտանգության բնագավառների քննիչ հանձնաժողովի նախագահի գործառույթներն իրականացնում է Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի նախագահը, իսկ նախագահի տեղակալին՝ այդ հանձնաժողովի նախագահի տեղակալը:

Առանձնակի կարևորություն ունի այն վերջնական արդյունքը, որը հնարավոր է ստանալ խորհրդարանական վերահսկողության այս գործիքի միջոցով: Այդ նպատակով շատ կարևոր է հասկանալ, թե ի՞նչ իրավաբանական ուժ ունի և ի՞նչ հետևանքներ կարող է առաջացնել քննիչ հանձնաժողովի գործունեությունը:

Քննիչ հանձնաժողովի ստեղծումն ու դրա գործունեությունն ինքնանպատակ չէ, այն պետք է ավարտվի փաստերի պարզմամբ և դրանք Ազգային ժողով ներկայացմամբ, ինչպես նաև դրանց առնչությամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ հանձնաժողովի եզրահանգումները:

Աժ կանոնակարգի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քննիչ հանձնաժողովը իր գործունեությունը ավարտում է Ազգային ժողովի նախագահին ներկայացված զեկույցով, որը պետք է ներառի քննիչ հանձնաժողովի ստեղծման համար հիմք հանդիսացած հարցի վերաբերյալ պարզված փաստերը և դրանց վերաբերյալ քննիչ հանձնաժողովի եզրահանգումները: Չեկույցն Ազգային ժողովի նախագահին ներկայացվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, քննարկվում է Ազգային ժողովի հերթական նիստում:

Չեկույցի ներկայացման ժամանակ նույնպես հաշվի է առնվել

փոքրամասնության շահերը: Աժ կանոնակարգի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, եթե քննիչ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ քառորդը զեկույցի վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա նրանց ներկայացուցիչը կարող է Ազգային ժողովի նիստում զեկույցի քննարկման ընթացքում հանդես գալ հարակից զեկուցմամբ՝ ներկայացնելով հատուկ կարծիքը:

Հարցի քննարկումն ավարտվելուց հետո քննիչ հանձնաժողովի զեկույցը, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ներկայացված հատուկ կարծիքն Աշխատակարգով սահմանված կարգով ուղարկվում է զեկույցում նշված պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու պաշտոնատար անձանց, որոնք կարող են զեկույցի վերաբերյալ իրենց գրավոր պատասխանն Ազգային ժողովի նախագահին ուղարկել մեկամսյա ժամկետում, որը տեղադրվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Չեկույցի իրավական նշանակությունը և ներգործությունը կայանում է նրանում, որ Ազգային ժողովը, հաստատելով քննիչ հանձնաժողովի կողմից պարզաբանված փաստերը, իր հեղինակությամբ բարձրաձայնում է դրանցում տեղ գտած խնդիրները: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ փաստերի պաշտոնական հաստատումը խորհրդարանի կողմից ժողովրդավարական իրավական պետությունում շատ հաճախ ունենում է զգալի ազդեցություն քաղաքական գործընթացների և հասարակության վրա: Օրինակ, «The Watergate Committee» անունը ստացած՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Սենատի կողմից ստեղծված քննիչ հանձնաժողովի գործունեությունը հանգեցրեց Նահանգների պատմության մեջ պետության նախագահի (Ռիչարդ Նիքսոն) հրաժարականի առաջին դեպքին⁵⁸: Այս գործում շատ մեծ կարևորություն է ունեցել քննիչ հանձնաժողովի աշխատանքների հրապարակայնությունը, ինչի արդյունքում քննիչ հանձնաժողովը ստացել է զանգվածային լրատվության միջոցների և բնակչության աջակցությունը:

Այս տեսանկյունից հետաքրքրական է ուսումնասիրել ութերորդ

⁵⁸Տե՛ս խորհրդարանական վերահսկողություն. գործիքակազմն ու մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում, Դավիթ Հարությունյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2020թ., էջ 76:

գումարման Ազգային ժողովում ձևավորված քննիչ հանձնաժողովները.

2025 թվականի սեպտեմբերի դրությամբ Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային ժողովում 22.10.2021 թվականին ստեղծվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հավաքագրված եւ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված միջոցների օգտագործումը ուսումնասիրող քննիչ հանձնաժողովը, որը ստեղծվել է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով:

Ազգային ժողովի կողմից 27.10.2021 թվականի որոշմամբ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հավաքագրված եւ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված միջոցների օգտագործումն ուսումնասիրող Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանվել է տասնմեկ: Հանձնաժողովի նախագահն է Արծվիկ Մինասյանը (ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության), հանձնաժողովի նախագահի տեղակալն է Սերգեյ Բազրատյանը (կառավարող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն)⁵⁹:

Առավել հետաքրքրական է 25.10.2021 թվականին պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով ստեղծված Դատարաններում գործերի՝ օրենքով սահմանված բաշխման կարգի խախտմամբ, ինչպես նաեւ Արդարադատության նախարարի կողմից դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների հարուցմամբ արդար դատաքննությունը խոչընդոտող փաստերն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով:

Ազգային ժողովի պաշտոնական էջում զետեղված տեղեկատվության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին Ազգային ժողովի որոշումը չի ընդունվել:

Սա այն դեպքերից է, որ Ազգային ժողովում քվեարկության դրվեց ընդդիմադիր «Հայաստան» և «Պատիվ ունեն» խմբակցությու-

⁵⁹ Տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.parliament.am/committees.php?do=members&ID=111230&month=all&year=2025&lang=arm>:

յունների նախաձեռնած՝ Դատարաններում գործերի՝ օրենքով սահմանված բաշխման կարգի խախտմամբ, ինչպես նաև արդարադատության նախարարի կողմից դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների հարուցմամբ արդար դատաքննությունը խոչընդոտող փաստերը ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին որոշման նախագիծը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը չմասնակցեց քվեարկությանը, ինչի արդյունքում նախագիծը ստացավ ընդամենը 25 կողմ ձայն, Դեմ-0, Ձեռնպահ – 1⁶⁰, որի արդյունքում որոշումը չընդունվեց, քանի որ որոշման ընդունման համար անհրաժեշտ էր 28 ձայն:

Արդյունքում ստեղծվել է վերը նշված այն իրավիճակը, երբ հանձնաժողովն Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված իրավունքի ուժով ստեղծվել է, սակայն քննիչ հանձնաժողովի անդամների թվի հաստատման որոշման նախագծի քվեարկությանը չմասնակցելու արդյունքում կառավարող խմբակցության խոչընդոտել է և արգելակել հանձնաժողովի ձևավորումը:

Ընդ որում՝ հետաքրքրական է, որ վարման կարգով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Նազելի Բադդասարյանը նշել է, որ քաղաքացիական պայմանագիրն այս նախաձեռնությանը կողմ չէր կարող քվեարկել, որովհետև այն ԱԺ-ի իրավասություններից դուրս է⁶¹:

Այս առումով նկատենք, որ Ազգային ժողովի որևէ մարմին, այդ թվում՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը, իրավասու չէ՝ որոշելու որևէ հարցի՝ Ազգային ժողովի ԱԺ-ի իրավասությունների սահմաններում կամ այդ սահմաններից դուրս լինելու հարցը: Այս կապակցությամբ անհամաձայնություն և օրենքով նախատեսված սահմանափակումների խախտման վերաբերյալ համոզմունք ունենալու պարագայում կառավարող խմբակցությունը պետք է օգտվեր սահմանադրական մարմնի կողմից Սահմանադրական դատարան դիմելու իրավունքից:

10.02.2022 թվականին պատգամավորների ընդհանուր թվի

⁶⁰ Առավել մասնրամասն տես <http://www.parliament.am/register.php?ID=626#28.10.2021>:

⁶¹ ՀՀ ԱԺ ութերորդ գումարման երկրորդ նստաշրջանի հերթական՝ 28.10.2021 թվականի նիստը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.youtube.com/watch?v=coXlv1ebfho>:

առնվազն մեկ երրորդի պահանջով ստեղծվել է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով քննիչ հանձնաժողով: Հանձնաժողովի լիազորությունների ժամկետը երկարաձգվել է 05.10.2022 թվականին «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի որոշմամբ:

Հանձնաժողովի լիազորությունների ժամկետը երկարաձգվել է 03.05.2023 թվականին «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի որոշմամբ: Սույն հանձնաժողովը ստեղծվել է կառավարող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների նախաձեռնությամբ, հանձնաժողովի նախագահին է Անդրանիկ Բոչայրյանը, հանձնաժողովի նախագահի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է⁶²:

Բռնի տեղահանված եւ Հայաստանի Հանրապետություն տեղափոխված Արցախի Հանրապետության ժողովրդի կենսագործունեության կազմակերպման պայմանների ուսումնասիրություն իրականացնող քննիչ հանձնաժողովը ստեղծվել է 25.09.2024 թվականին «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով:

Սույն քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին Ազգային ժողովի որոշումը ևս չի ընդունվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ կողմ են քվեարկել 29, դեմ՝ 58-ը, որի արդյունքում որոշումը չի ընդունվել⁶³:

Քվեարկությունից առաջ «Քաղաքացիական պայմանագիր»

⁶² Տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝

<http://www.parliament.am/committees.php?do=members&ID=111232&lang=arm>:

⁶³ Տե՛ս ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման ութերորդ նստաշրջանի 2024 թվականի հոկտեմբերի 01 -02-ի հերթական նիստերի արձանագրություն 02.10.2024 թվականին քննարկված 16-րդ հարցը. հասանելի է հետևյալ հղմամբ.

<http://www.parliament.am/register.php?ID=718#02.10.2024>:

խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը նշել է, որ նախագծին դեմ են քվեարկելու, քանի որ քննիչ հանձնաժողով ստեղծելու անհրաժեշտության մասին հիմնավորումները փաստարկված չեն⁶⁴:

Յոթերորդ գումարման Ազգային ժողովում ձևավորվել են հետևյալ քննիչ հանձնաժողովները.

➤ 05.12.2019 թվականին պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով ստեղծվել է 2018 թվականի սեպտեմբերից սկսած տարբեր սուբյեկտների կողմից Երեւան համայնքին տրանսպորտային միջոցների եւ այլ գույքի փոխանցման, ծառայությունների մատուցման պայմանագրերի, ինչպես նաեւ Երեւան համայնքի կողմից դրանց հետ կապված այլ անշարժ կամ շարժական գույքի փոխանցման, այդ թվում՝ գույքային, ինչպես նաեւ ոչ գույքային իրավունքների, շինարարության թույլտվությունների, արտոնությունների տրամադրման իրավաչափությունն ու կոռուպցիոն ռիսկերն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովը:

➤ 31.05.2019 թվականին պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով ստեղծվել է Արարատի եւ Արմավիրի մարզերում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի, դրա կառուցվածքային ստորաբաժանումների եւ ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակի գործունեության արդյունավետությունն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով, որի լիազորությունների ժամկետը երկարաձգվել է 10.12.2019 թվականին «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի որոշմամբ:

➤ 19.11.2019 թվականին պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով ստեղծվել է Հայաստանի Հանրապետության ցամաքային ուղեւորափոխադրումների կազմակերպման գործընթացը եւ 2016-2019թթ. ոլորտը սպասարկող, հա-

⁶⁴ ՀՀ ԱԺ ութերորդ գումարման երկրորդ նստաշրջանի հերթական՝ 02.10.2024 թվականի նիստը հասանելի է հետևյալ հղմամբ
<https://www.youtube.com/watch?v=SEdzRB9uHlY&t=294s>:

մակարգող եւ վերահսկող լիազոր մարմինների գործունեությունն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով: Հանձնաժողովի լիազորությունների ժամկետը երկարաձգվել է 06.05.2020 թվականին «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի որոշմամբ:

➤ 26.09.2019 թվականին պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով ստեղծվել է Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում ներդրումային ծրագրերի շրջանակներում գործադիր իշխանության մարմիններին ներկայացված եւ նրանց կողմից ընդունված ֆինանսական եւ այլ հաշվետվությունների օրինականությունը, հիմնավորվածությունը եւ արժանահավատությունը ուսումնասիրող քննիչ հանձնաժողով, որի լիազորությունների ժամկետը երկարաձգվել է 12.05.2020 թվականին «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի որոշմամբ:

➤ 02.07.2020 թվականին պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով ստեղծվել է Նոր կորոնավիրուսի (COVID 19) տարածումը կանխելու, այդ վիրուսի դեմ պայքարի՝ համաճարակի հետեւանքների մեղմման կամ վերացման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության և պարետատուն իրականացրած միջոցառումների արդյունավետությունը, ինչպես նաեւ արտակարգ դրության ժամանակահատվածում մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների սահմանափակումների արդյունավետությունն ու իրավաչափությունն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովը: Հանձնաժողովի լիազորությունների ժամկետը երկարաձգվել է 24.03.2021 թվականին «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի որոշմամբ: Սույն հանձնաժողովի բաժնում 19.03.2021 թվականին տեղադրվել են ստացված պատասխանները, իսկ 15.06.2021 թվականին տեղադրվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանից ստացված պատասխանները:

Վեցերորդ գումարման Ազգային ժողովում ձևավորվել հետևյալ քննիչ հանձնաժողովները.

➤ Արդարադատության իրականացմանը խոչընդոտելու, արդար դատաքննության իրավունքի եւ հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը խախտելու փաստերի առնչությամբ երկրում

մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակը քննության առարկա դարձնելու նպատակով ստեղծված քննիչ հանձնաժողովը,

➤ ՀՀ գազի եւ էլեկտրաէներգիայի մատակարարման եւ բաշխման համակարգերի գործունեությունը, գազի եւ էլեկտրաէներգիայի գործող սակագների հիմնավորվածությունը ուսումնասիրելու նպատակով ստեղծված քննիչ հանձնաժողովը:

Հատկանշական է, որ քննիչ հանձնաժողովի ինստիտուտը պահանջում է, որ զեկույցը, որպես կանոն, հրապարակվի: Օբյեկտիվորեն, դա անհրաժեշտ է տվյալ մարմնի կամ պաշտոնատար անձի քաղաքական պատասխանատվության, գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության, օրենսդրության մշակման և ներկայացուցչական ժողովրդավարության նպատակների համար, որոնք բոլորը Ազգային ժողովի գործառույթներն են:

Խնդրահարույց է այն հանգամանքը, որ հանձնաժողովների լիազորությունների ժամկետները պարբերաբար վերանայվում ու երկարաձգվում են, սակայն այդ քննիչ հանձնաժողովների գործունեության արդյունքում զեկույցները չեն հրապարակվում, որի արդյունքում հնարավոր չէ հասկանալ, թե դրանք ինչպիսի ազդեցություն կարող են ունենալ այս կամ այն ոլորտի բարելավման վրա:

Ավելի խնդրահարույց է, որ օրենքը չի սահմանում, որ զեկույցը պետք է հրապարակվի ԱԺ պաշտոնական ինտերնետային կայքում այն պարագայում, երբ զեկույցի առաջարկությունների առնչությամբ պետական մարմիններից ստացված պատասխանները հրապարակվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: Անհասկանալի է նման կարգավորումը, երբ հիմնական փաստաթղթի հրապարակման ընթացակարգ չի սահմանվում, մինչդեռ սահմանվում է ածանցյալ փաստաթղթերի հրապարակման ընթացակարգ:

Թեև պաշտոնապես հրապարակվել է մեկ զեկույց, դրա տեքստը ԱԺ պաշտոնական ինտերնետ կայքում հայտնաբերելը դյուրին չէ: ԱԺ ինտերնետ կայքում յուրաքանչյուր քննիչ հանձնաժողովի համար ստեղծվում է առանձին հարթակ, որում տեղադրվում են տվյալ քննիչ հանձնաժողովի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն՝ հանձնաժողովի կազմը, աշխատակարգը, նախագծերը, նիստերի օրակարգերը և նիստերի արձանագրությունները: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տասը քննիչ հանձնաժողովների վերաբերյալ

նշված տեղեկությունները կազմակերպված եղանակով, պարբերաբար և ամբողջությամբ չեն հրապարակվում: Ինչ վերաբերում է մինչ այժմ հրապարակված գեկույցներին, դրա տեքստը հնարավոր եղավ գտնել ոչ թե տվյալ հարթակից, այլ <https://www.google.com/> որոնողական կայքից՝ որոշակի բանալի բառերի օգնությամբ: Թեև գեկույցները էլեկտրոնային հասցեները հուշում են, որ տեքստը հրապարակված է ԱԺ պաշտոնական կայքում, հնարավոր չէ պարզել, թե պաշտոնական կայքի կոնկրետ ո՞ր հարթակում է հրապարակված գեկույցների տեքստերը: Այսպիսով, ԱԺ պաշտոնական կայքը չի ապահովում գեկույցի էլեկտրոնային տեքստի մատչելիության արդյունավետ հնարավորություն⁶⁵:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հարկ ենք համարում նշել, որ քննիչ հանձնաժողովների աշխատանքը և դրա երաշխիքները թեպետ կարգավորված և նախատեսված են «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով, այդուհանդերձ, դրանց գործունեության արդյունավետությունը դեռևս ընդգծված ցածր է և բացակայում է քննիչ հանձնաժողովների հաշվետվողականությունն ապահովելու համապատասխան գործիքակազմը:

Գտնում ենք, որ քննիչ հանձնաժողովների կողմից գործունեության արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից պետք է նախատեսել որոշակի սահմանափակումներ: Օրինակ՝ սահմանված ժամկետում քննիչ հանձնաժողովի կողմից գեկույցի չհրապարակման դեպքում կարելի նախատեսել իրավակարգավորում, որը կարգելի տվյալ հանձնաժողովի նախագահին հետագայում մասնակցել որևէ այլ քննիչ հանձնաժողովի աշխատանքներին կամ հանդես գալ նման նախաձեռնությամբ:

Խորհրդարանական վերահսկողության կարևորագույն ասպեկտներից է Կառավարության անդամներին գրավոր հարցապնդումներով դիմելու կառուցակարգը:

ՀՀ Սահմանադրության 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ազգային ժողովի խմբակցություններն ունեն Կառավարության ան-

⁶⁵ «Քննիչ հանձնաժողովների արդյունավետությունը խորհրդարանական վերահսկողության լուսի ներքո» հետազոտությունը, Արա Ղազարյան, Դավիթ Ասատրյան, Երևան, 2022 թվական, էջ 20:

դամներին գրավոր հարցապնդումներով դիմելու իրավունք: Կառավարության անդամները հարցապնդմանը պատասխանում են այն ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հարցապնդումների պատասխանները ներկայացվում են Ազգային ժողովի նիստում: Խմբակցության առաջարկությամբ հարցապնդման պատասխանը քննարկվում է: Եթե քննարկման արդյունքով պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից ներկայացվում է վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ, ապա կիրառվում են Սահմանադրության 115-րդ հոդվածի դրույթները: Հարցապնդման արդյունքով Ազգային ժողովը կարող է առաջարկել վարչապետին քննարկել Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը:

Կարևոր է նկատել, որ Ազգային ժողովի խմբակցության կողմից հարցապնդում ներկայացնելու իրավունքին համապատասխանում է դրան հստակ սահմանված ժամկետում (այն ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում) Կառավարության անդամի՝ պատասխանելու սահմանադրական պարտականությունը, որի իրացման արդյունքում խմբակցության առաջարկությամբ պատասխանը քննարկվում է: Բացի դրանից, գործող Սահմանադրությամբ առաջին անգամ ամրագրվել են հարցապնդումների քննարկման արդյունքում առաջացող հնարավոր իրավական հետևանքները, դրանք են՝ վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկը կամ Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցի քննարկումը վարչապետին առաջարկելը:

Թեև ՀՀ Սահմանադրությունը այս իրավունքի քանակական և ժամանակային առումով որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը սահմանում է հարցապնդումների իրավունքից օգտվելու մի շարք սահմանափակումներ:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խմբակցությունը նույն հերթական նստաշրջանի ընթացքում Կառավարության անդամներին հարցապնդումով կարող է դիմել ոչ ավելի, քան մեկ անգամ:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հարցապնդումների պատասխանները ներկայացվում և խմբակցության առաջարկությամբ

քննարկվում են Կանոնակարգի 36-րդ հոդվածի 1-ին մասում նշված ժամկետներում գումարվող յուրաքանչյուր հերթական նիստերի չորեքշաբթի օրվա երրորդ հիմնական նիստում: Յուրաքանչյուր շաբաթվա հերթական նիստերում կարող է ներկայացվել և քննարկվել մեկ հարցապնդման պատասխան:

Նույն հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ հարցի քննարկման ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում, որևէ խմբակցություն չի կարող միևնույն հարցապնդումով Կառավարությանը կրկին դիմել կամ քննարկված հարցապնդման արդյունքով ներկայացնել վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 2-րդ, 6-րդ և 14-րդ մասերի համադրված վերլուծությունից հետևում է, որ խմբակցությունների գրավոր հարցապնդումների ընթացակարգում օրենսդիրը կիրառել է հետևյալ սահմանափակումները

- այդ իրավունքի իրականացման քանակական սահմանափակումը (այն է՝ խմբակցությունը նույն հերթական նստաշրջանի ընթացքում Կառավարության անդամներին հարցապնդումով կարող է դիմել ոչ ավելի, քան մեկ անգամ),

- հարցապնդումների քննարկման քանակական սահմանափակումը (յուրաքանչյուր շաբաթվա հերթական նիստերում կարող է ներկայացվել և քննարկվել մեկ հարցապնդման պատասխան)

- տարեկան ժամկետային սահմանափակումը՝ միևնույն բովանդակությամբ հարցապնդման համար (այն է՝ հարցի քննարկման ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում, որևէ խմբակցություն չի կարող միևնույն հարցապնդումով Կառավարությանը կրկին դիմել կամ քննարկված հարցապնդման արդյունքով ներկայացնել վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ):

Պետք է նշել, որ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ ՀՀ Սահմանադրական դատարանը, քննարկման առարկա է դարձրել «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը: ՀՀ Սահմանադրական դատարանը գտել է, որ «Ազգային

ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

Բարձր դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ «հաշվի առնելով գործող իրավակարգավորումներով հարցապնդման ինստիտուտի էությունը և ընթացակարգային ու այլ առանձնահատկությունները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրական օրենքով խմբակցությունների՝ հարցապնդման իրավունքի իրացման քանակական սահմանափակումները սահմանադրորեն ինքնին արգելելի չեն և, մի կողմից՝ ապահովում են այս գործիքի կիրառման արդյունավետությունը՝ պահպանելով իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքը, մյուս կողմից՝ երաշխավորում են օրենսդիր ու գործադիր մարմինների բնականոն գործունեության և սահմանադրական առաքելության անխափան իրականացումը»:

Բարձր դատարանը կատարել է նաև հետևյալ դիտարկումը. «(...) հարցապնդման եղանակով խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու արդյունքում հետապնդվող նպատակին հասնելու համար անհրաժեշտ է մի դեպքում՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի համաձայնությունը (վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ ներկայացնելու համար), մյուս դեպքում (Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը վարչապետի քննարկմանն առաջարկելու մասին Ազգային ժողովի որոշման ընդունման համար)՝ քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությունը, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: Հետևաբար՝ վերահսկողության այս ձևի կիրառմամբ որոշակի հետևանքների հասնելը փոքրամասնության համար ունի «արգելակող բնույթ», որպիսի պայմաններում հարցապնդումը չի կարող համարվել խորհրդարանական փոքրամասնության համար եզակի և հիմնարար բնույթ ունեցող գործիք: Ուստի՝ դրա իրացման համար նստաշրջանի ընթացքում քանակական սահմանափակումների գոյությունը չի խաթարում խորհրդարանական վերահսկողության իրականացումը»⁶⁶:

⁶⁶ Տես Սահմանադրական դատարանի 11.10.2022 թվականի թիվ ՍԴՈ-1666 որոշումը:

Խորհրդարանական փոքրամասնությանը վերապահված վերահսկողական մյուս լծակն Ազգային ժողովի փոխնախագահի պաշտոնի վերապահումն է ընդդիմադիր պատգամավորներից մեկին: Այս իրավական գործիքը ընդդիմությանը տալիս է որոշակի լծակներ վերահսկելու Ազգային ժողովի աշխատանքի օրինականությունը: Մասնավորապես, Ազգային ժողովի նախագահի տեղակալն Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով սահմանված դեպքերում նախագահում է Ազգային ժողովի նիստերը, ունի արտահերթ ելույթի իրավունք, անհրաժեշտության դեպքում փոխարինում է Ազգային ժողովի նախագահին՝ իրականացնելով նրա լիազորությունները և այլն:

Ընդդիմության ներկայացուցիչը, դառնալով Ազգային ժողովի նախագահի տեղակալ, հնարավորություն է ստանում հատկապես նիստերը վարելու ժամանակ հետևել օրենսդրական գործընթացի և խորհրդարանական մյուս ընթացակարգերի օրինականությանը, ընդդիմության իրավունքների բնականոն իրացմանը, ինչպես նաև ի պաշտոնե ծանոթանալ Ազգային ժողովի նյութական միջոցների տնօրինման արդյունավետությանը, բարձրաձայնել այդտեղ առկա խնդիրների և հնարավոր չարաշահումների մասին և այլն:

Ազգային ժողովի ընդդիմադիր փոխնախագահի կարգավիճակն ամրապնդելու համար Ազգային ժողովի կանոնակարգում կարելի է սահմանել որոշակի երաշխիքներ, որոնք թույլ կտան այդ պաշտոնը զբաղեցնող ընդդիմության ներկայացուցչին առավել մեծ արդյունավետությամբ իրականացնել իր լիազորությունները, օրինակ՝ բավականին օգտակար կարող է լինել յուրաքանչյուր քառօրյայի նիստերից առնվազն մեկի վարումն Ազգային ժողովի ընդդիմադիր փոխնախագահի կողմից:

Այս համատեքստում պետք է քննարկել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ներկայացրած Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Իշխան Սաղաթեյանին Ազգային ժողովի նախագահի տեղակալի պաշտոնից հետ կանչելու վերաբերյալ ԱԺ որոշումը:

Սույն որոշման նախագծի հեղինակը «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն է, իսկ որոշման քննարկման և ընդունման համար 01.07.2022 թվականին ԱԺ պատգամավորների նախաձեռնությամբ արտահերթ նստաշրջան է գումարվել, որի արդյունքում Ազգային ժողովը, առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ»

սահմանադրական օրենքի 149-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ մասերով, կայացրել է որոշում Իշխան Սաղաթեյանին հետ կանչել Ազգային ժողովի նախագահի տեղակալի պաշտոնից: Առավել հետաքրքրական է որոշման նախագծի հիմնավորումը, որում սկզբում նշվում է, որ «Այսպիսով՝ Իշխան Սաղաթեյանը 2022թ.-ի հունվարի 17-ից առ հունիսի 29-ը ներառյալ, այսինքն 2022թ. առաջին օրացուցային կիսամյակի նիստերի թվով 342 քվեարկություններից ունեցել է 198 բացակա: 8-րդ գումարման Ազգային ժողովի խորհուրդը իր ձևավորման պահից, այսինքն՝ 2021թ. օգոստոս ամսից առ այսօր գումարել է թվով 25 նիստ:

Ազգային ժողովի նախագահի տեղակալ Իշխան Սաղաթեյանը նշված 25 նիստերից ներկա է եղել միայն 7 նիստի: Բացակայել է Ազգային ժողովի խորհրդի 18 նիստերից, որոնցից 11-ը՝ 8-րդ գումարման առաջին օրացուցային կիսամյակի, իսկ 7-ը՝ երկրորդ օրացուցային կիսամյակի ընթացքում: Այսպիսով՝ թե՛ Ազգային ժողովի լիազույժար նիստերից և թե՛ Ազգային ժողովի խորհրդի նիստերից հաճախակի բացակայությունների պատճառով չի կատարել իր անմիջական պարտականությունները:

Իշխան Սաղաթեյանի հաճախակի բացակայությունների պատճառով նաև անհնարին է դարձել վերջինիս Ազգային ժողովի նախագահի կողմից հանձնարարություններ տալը և լիազորությունների պատվիրակումը, ինչի հետևանքով նաև չեն իրացվել Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմերը»: Այնուհետև նշվում է, որ «(...) պարոն Սաղաթեյանը ոչ միայն չի կատարել համերաշխության ապահովմանն ուղղված իր առաքելությունը, այլ նաև հրահրել է բախումներ, օգտագործել ատելության խոսք, վիրավորել հանրության տարբեր ներկայացուցիչների, Ազգային ժողովի պատգամավորների:

Մասնավորապես 2022թ.-ի հունիսի 3-ին Իշխան Սաղաթեյանի դրդմամբ երթի մասնակիցները փորձել են ճեղքել Պռոշյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում գտնվող ոստիկանական շղթան: «Կանայք և աղջիկները թող էս կողմ գան, էս փողոցը հենց հիմա պտի բացվի, մեր դիմաց փակ փողոց չկա: Պնացինք փողոցը բացելու»: Իշխան Սաղաթեյանի այս կոչին հաջորդել են զանգվածային անկարգություններ, երթի մասնակիցները, չենթարկվելով ոստիկանների օրինական պահանջին, քարերով, մետաղյա ձողերով, շշերով, ինչպես

նաև այլ առարկաներով հարվածներ են հասցրել ոստիկաններին: Հրահրված բախման հետևանքով բուժհաստատություններ է դիմել թվով 60 անձ, որոնցից 39-ը ոստիկանության ծառայողներ: (...)

Վերը նշվածը վկայում է այն մասին, որ Իշխան Սաղաթեյանը չի կատարում և չի ցանկանում կատարել որպես ՀՀ ազգային ժողովի նախագահի տեղակալ ՀՀ Սահմանադրությամբ և այլ օրենքներով իրեն վերապահված գործառույթները: Վերոգրյալի հաշվառմամբ՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը Ազգային ժողովի պատգամավոր Իշխան Սաղաթեյանին Ազգային ժողովի նախագահի տեղակալի պաշտոնից հետ կանչելու վերաբերյալ որոշման ընդունմամբ նպատակ ունի հետագայում ընտրելու Ազգային ժողովի նախագահի՝ ընդդիմության կողմից առաջադրված այնպիսի տեղակալի, որը կկատարի իր պարտականությունները հավուր պատշաճի, ապահովելով Ազգային ժողովի բնականոն գործունեությունը, ինչի մասին «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները խոսել են դեռևս ԱԺ նախագահի տեղակալի թեկնածու Իշխան Սաղաթեյանի ընտրության ժամանակ՝ հույս հայտնելով, որ ընդդիմադիր խմբակցության կողմից առաջադրված Ազգային ժողովի նախագահի տեղակալը կկատարի ՀՀ Սահմանադրությամբ և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված պարտականությունները, ինչը Իշխան Սաղաթեյանը ձախողել է»:

Որոշման նախագծի մեջ տեղ գտած հիմնավորումների համադրումից պարզ է դառնում, որ սույն քաղաքական որոշումն ընդունվել է «պատժելու» մտադրությամբ, քանի որ կատարվել են պնդումներ ԱԺ նախագահի տեղակալի կողմից ՀՀ Սահմանադրությամբ և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված պարտականությունները չկատարելու և դրա արդյունքում վերջինիս Ազգային ժողովի նախագահի կողմից հանձնարարություններ տալը և լիազորությունների պատվիրակումը անհնարին դառնալու մասին, չի ներկայացվել որևէ հիմնավորում, թե դրա արդյունքում Ազգային ժողովի գործունեությունն ինչպես է խաթարվել:

Ի ամփոփումն վերոշարադրյալի՝ հարկ ենք համարում նշել, որ Սահմանադիրը և օրենսդիրն որպես ելակետ ունեն և շարժվում են քաղաքական փոքրամասնության դերի և նշանակության վերաի-

մաստավորումը և այդ դրան ուղղված որոշակի նորմ-երաշխիք ամ-րագրման ճանապարհով: Սակայն պետք է նկատել, որ գործող երաշ-խիքները չեն ապահովում ընդդիմության գործառնությունների արդյու-նավետ իրականացումը: Միևնույն ժամանակ պետք է նկատի ունե-նայ, որ Սահմանադրությամբ և օրենքներով ընդդիմության գործու-նեության արդյունավետությունը կախված է և պայմանավորված է ոչ միայն օրենսդրական կարգավորումներով, այլ Հայաստանի քաղա-քական համակարգի սուբյեկտների սահմանադրական և քաղաքա-կան մշակույթի մակարդակով: Եվ քանի դեռ այդ մշակույթը չի հասել քաղաքական և իրավական հասունության մակարդակի, սահմա-նադրական և օրենսդրական բարեփոխումներն ու փոփոխություն-ները որևէ կերպ չեն կարող նպաստել մեծամասնության և ընդդի-մության փոխհարաբերությունների սահմանադրական զարգացմա-նը և զսպումների ու հակակշիռների համակարգի արդյունավետ գոր-ծողությանը:

Պետք է փաստել, որ թեև ՀՀ Սահմանադրությունն ընդդիմութ-յան կարգավիճակի վերանայման հիմքում դրել է խորհրդարանական փոքրամասնության ձայնը ոչ միայն «լսելի», այլև «իրավաբանորեն ներգործելի» դարձնելու տեսլականը, սակայն փաստերի ներկա իրո-ղությունը ցույց է տալիս, որ ընդդիմությունը չունի ներգործության արդյունավետ միջոցներ, իսկ քննադատությանը կամ իշխող մեծա-մասնության ու Կառավարության ներկայացուցչին գործնականում ի-րավական հետևանքներ չունեցող հարցեր տալը, քննիչ հանձնաժո-ղովներ ստեղծելը և հարցապնդումներ անելը բավարար չեն ընդդի-մության գործառնությունների արդյունավետ իրագործման տեսանկյու-նից:

3.2. Կուսակցությունները և քաղաքացիական հասարակությունը

Հասարակական կազմակերպությունների և շահերի խմբերի հետ փոխհարաբերությունները, հասարակական շարժումների ազ-դեցությունը կուսակցական քաղաքականության վրա

Ժամանակակից հասարակությունների քաղաքական կյանքում քաղաքացիների համընդհանուր շահերն ու պահանջմունքները չեն կարող իրացվել միայն կուսակցությունների միջոցով: Այս գործում հսկայական դերակատարում ունեն քաղաքացիների ամենատարբեր

ինքնադեկավարվող միությունները՝ հասարակական կազմակերպությունները, միավորումները, բարեգործական միությունները, կրոնական խմբավորումները, արհեստակցական խմբերը և այլն:

Դրանք հասարակական-քաղաքական գործընթացների բնականոն զարգացման անհրաժեշտ պայման են և քաղաքացիական հասարակության (այսուհետ նաև՝ ԶՀ և/կամ քաղհասարակություն) զարգացման կարևոր ցուցիչ: Վերջիններս առանցքային դեր են խաղում մասնակցային ժողովրդավարության, դրա հիմնարար արժեքների և իրավունքի գերակայության ամրապնդման գործում: Եվ այս տեսանկյունից առանցքային նշանակություն ունի քաղաքացիական հասարակության տարբեր միավորների և քաղաքական կուսակցությունների միջև երկխոսության ու թիրախային համագործակցության ձևավորումն ու զարգացումը:

Հայաստանում քաղհասարակության և քաղաքական կուսակցությունների միջև երկխոսությունն ու համագործակցությունն ունի ինչպես հաջողված, այնպես էլ ձախողված օրինակները:

Որպես երկխոսության հաջողված օրինակ կարելի է առանձնացնել «Հայ ազգային կոնգրես», «Ժառանգություն»-ԶՀ համագործակցությունը 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների ընթացքում: 2014 թվականի սեպտեմբերին ստեղծվել էր «ԶԵՔ անցկացնի» քաղաքացիական նախաձեռնությունը, որը սահմանադրական փոփոխությունների գործընթացը կասեցնելու նպատակ էր հետապնդում: Նախաձեռնության նպատակն էր միավորել ուժերը (թե խորհրդարանական, թե արտախորհրդարանական) և միասնական ճակատով պայքարել սահմանադրական փոփոխությունների դեմ: Արդյունքում 2015 թվականի սեպտեմբերի 12-ին նախաձեռնությունը հրավիրել էր համաժողով, որին մասնակցած քաղաքական կուսակցությունները, այդ թվում՝ Ազգային ժողովում խմբակցություններ ունեցող «Հայ ազգային կոնգրես»-ը և «Ժառանգություն»-ը, ինչպես նաև մի շարք հասարակական կազմակերպություններ և քաղաքացիական նախաձեռնություններ ստեղծեցին սահմանադրական փոփոխությունների դեմ պայքարի «ՈՉ»-ի ճակատը⁶⁷:

Հետաքրքրական էր նաև, այնպես կոչված «4+4+4» համագոր-

⁶⁷ Պարտադրված սահմանադրական փոփոխությունների ընդունման գործընթացի վերաբերյալ զեկույց, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, Վանաձոր, 2016, էջ 59:

ծակցության ձևաչափը: ՀՀ կառավարությունը 2016 թվականի մարտի 3-ի նիստում հաստատեց ՀՀ ընտրական օրենսգրքի նախագիծը, և այն ուղարկեց Ազգային ժողովի հաստատմանը:

Ընտրական օրենսգրքի նախագծի շուրջ «4+4+4» (իշխանական կոալիցիա, ոչ իշխանական կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ) ձևաչափով նախագծի հիմնական հարցերի շուրջ կոնսենսուս ձևավորելու նպատակով ընտրությունների ոլորտում փորձառություն ունեցող և ավելի քան 200 քաղաքացիական հասարակության կառույցների կողմից պատվիրակված ներկայացուցիչների մասնակցությամբ Ազգային ժողովում տեղի ունեցան բանակցությունները-քննարկումներ: Այս ձևաչափով քննարկումներին մասնակցած հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները հանրային հաշվետվություն ներկայացրեցին, որում նշում էին, որ «չնայած ներդրված ջանքերին՝ ակնկալվող կոնսենսուսը չկայացավ, և «քննարկումները ՀՀ պետական մարմինների ներկայացուցիչների անզիջում դիրքորոշման պատճառով որևէ էական արդյունք չտվեցին, որը կարելի լիներ գնահատել որպես Հայաստանի ընտրական համակարգի բարեփոխման նախադրյալ»⁶⁸, այդուհանդերձ, այն ձևաչափը քաղաքացիական հասարակության և քաղաքական կուսակցությունների միջև երկխոսության ու համագործակցության հարցում մեկ քայլ առաջ էր՝ առնվազն ինստիտուցիոնալ երկխոսության մշակույթի ձևավորման տեսանկյունից:

Ինչ վերաբերում է քաղաքական կուսակցություններ-ԶԿԿ երկխոսության ձևաչափերին, քաղաքականությունների մշակման ոլորտում քաղաքական գործիչների հետ դեմ առ դեմ հանդիպումներն ու հանրային լուծումները քաղհասարակության և որոշում կայացնողների միջև ամենահաճախ օգտագործվող գործիքակազմերից են, որոնց իրականացման հարցում կարևոր դերակատարում ունեն հենց ԶԿԿ-ները:

ԶԿԿ-ները հայաստանյան կուսակցությունների հետ երկխոսում և համագործակցում են հիմնականում կարճաժամկետ և միջնաժամկետ նպատակների իրականացման համար: Երկխոսության ձևաչա-

⁶⁸ Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.civilnet.am/news/166356/444-ձևաչափով-ակնկալվող-կոնսենսուսը-չկայացավ-հաշվետվություն/>:

փերն են՝ համատեղ աշխատանքային խմբերը, դեմ-առ-դեմ հանդիպումները, պանելային քննարկումները և այլն:

2019 թվականին կատարվեցին փորձեր, որոնք միտված են կուսակցությունների և ԶՀ-ների միջև երկարաժամկետ և արդյունավետ համագործակցություն հաստատելուն: Օրինակ՝ «ՕքսիՋեն» հիմնադրամի կողմից Նախաձեռնվել է «Ազգային ժողով-քաղաքացիական հասարակություն» համագործակցության հարթակը:

2019թ. մարտի 8-ին Ազգային ժողովի «Ոսկեգոծ» դահլիճում, ստորագրվեց ԱԺ- ԶՀ փոխըմբռնման հուշագիր, որով կազմավորվեց երկկողմ համագործակցության բաց հարթակ՝ հասարակական կազմակերպությունների և ՀՀ 7-րդ գումարման Ազգային ժողովի միջև՝ հանուն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման⁶⁹:

ԱԺ-ԶՀ համագործության բաց հարթակի 2019 թվականի գնահատման զեկույցի⁷⁰ բովանդակությունից պարզ է դառնում, որ սույն համագործակցությունն ունեցել է դրական արդյունքներ, մասնավորապես նշված է. Արդյունք N1-ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի Նախարարությունը Նախնական հավանություն է տվել Հարթակի կողմից ներկայացված՝ ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով Նախատեսված երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող կնոջ ամուսնուն տրամադրվող մինչև երկու ամիս տևողությամբ չվճարվող արձակուրդը վճարովի դարձնելու առաջարկին: Խնդրի կարգավորումը Նպատակահարմար է համարվել, սակայն առաջարկվում է հավելյալ քննարկումներ անցկացնել շահակիցների շրջանում՝ այդ հարցով պայմանավորված հնարավոր ֆինանսական բեռը հաշվարկելու և իրատեսական կարգավորում տալու նպատակով: Արդյունք N2-Նախարարությունը հավանություն է տվել Հարթակի կողմից ներկայացված առաջարկին՝ հաշմանդամություն ունեցող երեխաների և ծերերի խնամելու ժամանակահատվածը աշխատանքային ստաժում հաշվարկելու վերաբերյալ: Նշվել է, որ խնդիրը բազմիցս արձարծվել է Նախարարությանը հասցեագրված դիմումներում և ներկայումս քննարկվում է այս հարցի

⁶⁹ Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://oxygen.org.am/հարթակներ-և-դաշինքներ/ազգային-ժողով-քիկ-հարթակ/>:

⁷⁰ Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://havasir-infohub.am/wp-content/uploads/2020/03/գնահատման-զեկույց.pdf>:

կարգավորումը անձնական օգնականների ինստիտուտի զարգացման միջոցով⁷¹:

Մեկ այլ օրինակ է «Քաղաքական երկխոսություն» ՀԿ-ի նախաձեռնությամբ ձևավորված «Երկխոսության հարթակը», որի նպատակն է կոտրել քաղաքական և քաղաքացիական ուժերի միջև առկա անջրպետը՝ խթանելով կառուցողական երկխոսություն: Նշվում է, որ ժողովրդավարությունն սկսում է երկխոսությամբ: Երկխոսության հարթակի շրջանակներում կազմակերպվել և շարունակվում են կազմակերպվել քննարկումներ տարբեր թեմաների շուրջ, ինչպես օրինակ աշխատանքային իրավունքներ, դատաիրավական բարեփոխումներ, Արցախյան հիմնահարց, մեդիառեֆորմներ և այլն: Քննարկումների մասնակիցներն ու բանախոսներն են խորհրդարանական և արտախորհրդարանական կուսակցությունների անդամները, քաղաքացիական հասարակության և փորձագիտական համայնքի ներկայացուցիչները: Քննարկումները անցկացվում են ինչպես փակ ֆորմատով, այնպես էլ հանրային մասնակցությամբ⁷²:

Կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ Հայաստանում շատ քիչ են քաղաքացիական կազմակերպությունները, որոնք հետաքրքրված են կամ նպատակ են հետապնդում կուսակցությունների հետ երկարաժամկետ երկխոսություն հաստատել: Հիմնվելով ԶԿ համայնքի կողմից արդեն իսկ իրականացված հետազոտությունների, ինչպես նաև ֆոկլուս-խմբային քննարկման ժամանակ հնչեցված կարծիքների վրա՝ կարող ենք եզրակացնել, որ ԶԿ-ները երկխոսություն ծավալելիս նախապատվություն են տալիս ուղղակիորեն և շարունակաբար համագործակցելու պետական կառույցների և իշխանության հետ, իսկ քաղաքական կուսակցությունների հետ երկխոսությունը եղել է իրավիճակային⁷³:

Այս առումով Եական նշանակություն ունի կուսակցությունների

⁷¹Տե՛ս ԱԺ-ԶԿ համագործության բաց հարթակի 2019 թվականի գնահատման զեկույցի «Արդյունքներ» վերտառությամբ բաժին, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://havasar-infohub.am/wp-content/uploads/2020/03/gnahnatman-qezkuyg.pdf>:

⁷² Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://political.am/companyprograms>:

⁷³Տե՛ս «Քաղաքական կուսակցությունների հետ և միջև երկխոսության առանձնահատկությունները», «Քաղաքական երկխոսություն» ՀԿ, Սոնա Մխիթարյան, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://epfarmeria.am/sites/default/files/Document/DATA_Research_on_Characteristics_of_Dialogue_Between_Political_Parties_PD_NGO.pdf:

և քաղհասարակության կազմակերպությունների համագործակցությանն արգելակող և երկխոսությանը խոչընդոտող հանգամանքների վերհանումն ու հասցեավորումը:

Առանցքային խոչընդոտը կուսակցությունների և քաղհասարակության ներկայացուցիչների միջև առկա անվստահությունն է: Կուսակցությունների շրջանում կա կարծիք, որ հայաստանյան ԶՀԿ-ները չափից դուրս քաղաքականացված են: Միևնույն ժամանակ, խորհրդարանական և որոշ արտախորհրդարանական կուսակցությունների շրջանում շեշտադրվում է այն հանգամանքը, որ ԶՀԿ-ները ինչպես քաղաքականությունների մշակման գործընթացում, այնպես էլ այդ գործընթացից դուրս դրսևորում են իշխանամետ վարքագիծ:

Պետք է նկատել, որ սույն խնդիրը բնորոշ չէ միայն հայաստանյան իրականությանը: Պետությունների, քաղաքական կուսակցությունների և բիզնեսի հետ փոխկախվածությունն ընդգծելու համար ի հայտ են եկել այնպիսի տերմիններ, ինչպիսիք են՝ GONGO (կառավարության կողմից կազմակերպված ՀԿ), PONGO (կուսակցության կողմից կազմակերպված կամ քաղաքական ՀԿ) և BONGO (բիզնեսի կողմից կազմակերպված ՀԿ)⁷⁴:

Տարբեր երկրներում, անգամ զարգացած ժողովրդավարական երկրներում, որոշ հասարակական կազմակերպություններ սերտորեն կապված են կառավարության հետ: Ավելին, կառավարության կողմից կազմակերպված և/կամ ուղղորդվող ՀԿ-ները կոչվում են (ԳՈՆԳՈ)-ներ (Government-organized NGO (GONGO)): ԳՈՆԳՈ-ի այս հասկացությունը հակասում է ՀԿ-ների սկզբնական սահմանմանը որպես ոչ կառավարական: Դրանք, երբեմն, ստեղծվում են որոշակի ռեժիմի նպատակներին հասնելու համար: Միացյալ Թագավորությունում կիսաինքնավար ՀԿ-ները անվանում են QUANGO, որոնք կառավարության կողմից ֆինանսավորվող այն կազմակերպություններն են, և հիմնականում գործում են հանրային ծառայություններ մատուցելու համար⁷⁵:

⁷⁴Stu Handbook of Social Policy and Development edited by James Midgley, Rebecca Surrender, Laura Alfes, Cheltenham, UK; Northampton, MA: Edward Elgar, 2019, էջ 453:

⁷⁵Stu Rules, Norms and NGO Advocacy Strategies. Hydropower Development on the Mekong River. By Yumiko Yasuda. Edition 1st Edition. First Published 2015, էջ 25:

Մյուս կողմից, ԶԿ համայնքում ներկայացուցիչներից ոմանք ֆոկլուս-խմբային քննարկումների ընթացքում նշում են, որ որոշ կուսակցությունների հետ տեսնում են արժեքային անհամաձայնություններ, որոնց հետ խուսափում են երկխոսելուց ու համագործակցելուց: Մյուս կողմից, արժեքային ու գաղափարական մակարդակում որևէ կուսակցությանը համակրելն ուղղակիորեն չի նշանակում, որ ԶԿ-ն հետաքրքրված է տվյալ կուսակցության հետ երկխոսությամբ ու համագործակցությամբ: ԶԿ-ներն առաջին հերթին կարևորում են կուսակցությունների քաղաքական կապիտալն ու լայն ընտրազանգվածի առկայությունը, ինչպես նաև որոշումների կայացման մակարդակում վերջիններիս դերը: Վերոնշյալ հարցազրույցների և ֆոկլուս-խմբային քննարկումների ընթացքում որպես խոչընդոտ դիտարկվել է կուսակցությունների և ԶԿ-ների կողմից հետապնդվող շահերի տարբերությունը⁷⁶:

Լոբբիստական գործունեություն և ազդեցության ուղիները.

Լոբբիզմը գոյություն ունի անհիշելի ժամանակներից, և անկասկած, կա հիմք ասելու, որ լոբբիզմը աշխարհի ամենահին մասնագիտություններից մեկն է: Երբ անհատը կամ խումբը իշխանություն է իրականացնում հասարակության վրա, կլինեն այլ անհատներ կամ անհատների խմբեր, որոնք կփորձեն համոզել նրանց այդ իշխանությունը որոշակի ձևով իրականացնել: Լոբբիզմը և՛ բնական է, և՛ անխուսափելի:

Հունաստանի և Հռոմի ֆորումներին հաճախակի էին այցելում լոբբիստներ, որոնք ձգտում էին ազդել ինչպես սենատորների, այնպես էլ պլեբեյների վրա՝ օրակարգի հարցերի օգտին կամ դեմ: Եթե բարոնները լոբբիստական գործունեություն չիրականացնեին, ապա Ջոն թագավորը չէր ստորագրի Մագնա Կարտան Ռանիմեդում:

Լոբբիզմի՝ որպես տերմինի և որպես կազմակերպված գործունեության տեսակի իրական ծագումը վիճելի է: Վարկածներից մեկն

⁷⁶Տե՛ս «Քաղաքական կուսակցությունների հետ և միջև երկխոսության առանձնահատկությունները», «Քաղաքական երկխոսություն» ՀԿ, Սոնա Մխիթարյան, հասանելի է հետևյալ հղմամբ՝

https://epfarmeria.am/sites/default/files/Document/DATA_Research_on_Characteristics_of_Dialogue_Between_Political_Parties_PD_NGO.pdf:

այն է, որ այս տերմինը ծագել է Վաշինգտոնում 1860-ական թվականներին: Նրանք, ովքեր ձգտում էին ազդել Նախագահ Ուլիսես Ս. Գրանտի վրա, հավաքվում էին Ուիլարդ հյուրանոցի Նախասրահում և փորձում էին գրավել նրա ուշադրությունը, երբ նա գնում էր դեպի հյուրանոցի բարը՝ նրա մոտ որոշակի ոլորտների կապակցությամբ իրենց մտահոգությունները բարձրացնելու համար: Ավանդազրույցի համաձայն՝ որոշ ժամանակ անց Նախագահ Գրանտը հոգնել է նրանց ուշադրությունից և նրանց արհամարհանքով անվանել է լոբբիստներ⁷⁷:

Լոբբինգի էությունը բացատրող երեք հիմնական տեսություն գոյություն ունի.

- Լոբբինգը որպես «quid pro quo» («ոչինչ ոչնչի դիմաց») գործընթաց: Այստեղ լոբբինգն իրականացվում է ընտրական գործընթացներին աջակցելու միջոցով (հիմնականում քարոզարշավին գումարի տեսքով աջակցությամբ)՝ դրա փոխարեն կոնգրեսականներից ստանալով աջակցություն որոշակի օրենսդրություն ընդունելու կամ փոփոխելու հարցում, որոնք շահավետ են որոշակի խմբի համար:

- Լոբբինգը որպես դաշնակիցների հետ աշխատանք: Այստեղ լոբբիստները աշխատում են նրանց հետ, ովքեր արդեն իսկ դրական են տրամադրված կոնկրետ դիրքորոշման հարցում:

- Լոբբինգը՝ որպես համոզման միջոց տեղեկատվության փոխանցման շնորհիվ:

Այստեղ շահերի խմբերը համոզում են օրենսդիրներին՝ ընդունելու որոշակի օրենքներ՝ տրամադրելով այդ հարցի շուրջ իրենց ընտրողների կարծիքը:

«Լոբբինգ» եզրույթը հաճախ բացասական իմաստով է ընկալվում՝ որպես մի երևույթ, որը կապված է ապօրինի ազդեցություն գործելու և կոռուպցիոն գործընթացների հետ: Այնուամենայնիվ, այն ժողովրդավարական համակարգի կարևոր և լեգիտիմ բաղադրիչ է, որի միջոցով ժողովրդավարական հասարակությունը կարողանում է իր ազդեցությունն ու ասելիքն ունենալ քաղաքական գործընթացների վրա:

⁷⁷ Stew Lobbying: The Art of Political Persuasion by Lionel Zetter (2011), 1.2. «Պատմություն» վերտառությամբ բաժին:

Կարևոր է նկատել, որ լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորումն ունի առանցքային նշանակություն իշխանության ներկայացուցիչների և լոբբիստների ստվերային փոխգործակցությունը նվազեցնելու և դրա փոխարեն ապահովելու իրավական ակտերի ընդունման գործընթացի թափանցիկությունն ապահովելու տեսանկյունից:

Այս գործընթացի օրինականությունն ու թափանցիկությունն ապահովելու համար, լոբբիստական գործունեությունը խիստ վերահսկվում է տարբեր երկրների, հատկապես՝ ԱՄՆ օրենսդրությամբ: ԱՄՆ-ում գոյություն ունեն չորս հիմնական դաշնային օրենքներ, որոնք կանոնակարգում են լոբբիստական գործընթացը՝ 1938թ. «Օտարերկրյա գործակալների գրանցման ակտը» (FARA), 1946թ. «Լոբբիստական գործունեության կանոնակարգման մասին ակտը» (RLA), 1995թ. «Լոբբիստական գործունեության բացահայտման ակտը» (LDA) և 2007թ. «Ազնիվ առաջնորդության և բաց կառավարման ակտը» (HLOGA)⁷⁸:

1938 թվականին «Օտարերկրյա գործակալների գրանցման մասին» (FARA) ակտի կամ «Մաքժորմակի օրենքի» ընդունումը նպատակ էր հետապնդում լոբբիստների գրանցմամբ ԱՄՆ-ում սահմանափակել նացիստական քարոզչության տարածումը: 1946 թվականին իրական հասարակական կարծիքի գնահատման նպատակով ակտում կատարվեցին մի շարք փոփոխություններ և այն վերանվանվեց «Լոբբինգի գրանցման ակտ»: Այն ուներ բազմաթիվ սողանքներ, որոնք թույլ էին տալիս թողարկել լոբբինգի համար ծախսված գումարները:

1995 թվականի «Լոբբիստական գործունեության բացահայտման ակտը», որը լրացվել է 2007 թվականի «Ազնիվ առաջնորդության և բաց կառավարման ակտով», պահանջում է լոբբիստներից հայտարարագրել իրենց գործունեության հետ կապված որոշ տեղեկություններ, այդ թվում՝ ֆինանսավորման տվյալներ:

Հաշվի առնելով լոբբիստական գործունեության կարգավորման միջազգային փորձը և միտումները, Հայաստանի Հանրապետություն-

⁷⁸ St' u Jacob R. Straus, The Lobbying Disclosure Act at 20: Analysis and Issues for Congress, Congressional Research service, 2015, 38 էջ:

նում հասարակության և պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության գործընթացին քաղաքակիրթ, իրավական բնույթ տալու, ինչպես նաև քաղաքացիների և կազմակերպությունների կողմից իշխանության մարմինների որոշումների ընդունման գործընթացի վրա ազդեցության հնարավորություններ ընձեռելու անհրաժեշտությունը ՀՀ կառավարության կողմից դեռևս 2005 թվականին հավանության էր արժանացրել «Լոբբիստական գործունեության մասին» ՀՀ օրենքի հայեցակարգը, որով կարևորվում էր նշված հարաբերությունների կարգավորմանն ուղղված օրենքի նախագծի մշակումն ու ընդունումը: Ընդ որում՝ նախատեսվում էր, որ սույն հայեցակարգին համապատասխան ընդունված օրենքը կգործի մինչև «Լոբբիստական գործունեության և լոբբիստների պալատի մասին» ՀՀ օրենքի ընդունումը⁷⁹:

Հայեցակարգում նախատեսված էր օրենքի նպատակը և խնդիրները: Մասնավորապես՝ օրենքի նպատակը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների նստավայրում և դրանից դուրս լոբբիստական գործունեություն իրականացնելու համար լիարժեք և հավասար պայմանների ստեղծումն էր, իսկ խնդիրները՝ լոբբիստական գործունեության կանոնակարգումը և իրավաստեղծ գործընթացում ապօրինի միջամտությանը հակազդելն էր:

Հայեցակարգի 12-րդ կետը սահմանում էր լոբբիստական գործունեությունը հասկացությունը՝ նախատեսելով, որ լոբբիստական գործունեությունը նպատակաուղղված է իրավաստեղծ մարմիններում իրավական ակտերի ընդունմանն անմիջական մասնակցություն չունեցող անձանց շահերն այդ գործընթացում ներկայացնելու համար հնարավորությունների ապահովմանը, իսկ 13-րդ կետը սահմանում էր, որ լոբբիստական գործունեության առարկա են Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերը և դրանց նախագծերը:

Հստակ նախատեսված էր արգելք, որի համաձայն՝ լոբբիստական գործունեության առարկա չէին կարող հանդիսանալ դատական

⁷⁹ ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 24-ի N 11 նիստի արձանագրությունից քաղվածքը՝ «Լոբբիստական գործունեության մասին» ՀՀ օրենքի հայեցակարգին հավանություն տալու մասին, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.irtek.am/views/act.aspx?aid=29489>:

ակտերը: Հետաքրքրական է, որ լոբբիստի գործունեությունը նախատեսված էր որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ:

Նախագծի համաձայն՝ լոբբիստական գործունեության ոլորտում լիազորված պետական մարմինը սահմանելու է «Լոբբիստի վարքագծի» կանոնագիրքը, վարելու է լոբբիստների ռեգիստրը, վերահսկելու է լոբբիստների գործունեության համապատասխանությունն օրենսդրության պահանջներին:

2005 թվականին կառավարության կողմից հավանության արժանացած և ԱԺ ներկայացված «Լոբբիստական գործունեություն մասին» օրենքի նախագիծը⁸⁰ չընդունվեց Ազգային ժողովի կողմից:

Մեր օրերում ևս սույն հարցը և լոբբիստական հարաբերությունների կարգավորմանն ուղղված օրենքի նախագծի մշակումն ու ընդունումը շարունակում է մնալ օբյեկտիվ անհրաժեշտություն՝ բացառելու, առնվազն նվազագույնի հասցնելու օրենսդիր, գործադիր, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը ապօրինի միջամտության, և դրա փոխարեն ապահովելու այդ նույն մարմինների կողմից կայացվող որոշումների ընդունմանն անմիջական մասնակցություն չունեցող անձանց շահերի ներկայացման թափանցիկ հնարավորություն: Ընդ որում՝ պետք է նաև հաշվի առնել, որ «Լոբբիստական գործունեության մասին» ՀՀ օրենքի մշակումը ու ընդունումը կարող է ծառայել որպես հակակոռուպցիոն գործիք:

3.3 Մեդիա և հանրային կարծիքի ձևավորումը

- Կուսակցական հաղորդակցության ռազմավարությունները

Կուսակցական-քաղաքական հաղորդակցությունը հաղորդակցության առանձնահատուկ տեսակն է, որը ենթադրում է քաղաքական մտքերի գեներացում, տարածում և շրջանառություն, որը տեղի է ունենում քաղաքական ուղերձների (որոնք ներառում են բազմաշերտ տեղեկատվություն քաղաքական ոլորտին առնչվող ինչ-որ

⁸⁰ «Լոբբիստական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հասանելի է հետևյալ հղմամբ՝

<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=793&Reading=0&lang=arm&enc=utf8>:

երևույթի վերաբերյալ) և քաղաքական տեքստերի (որոնք պարունակում են համապարփակ տեղեկատվություն քաղաքական ոլորտին առնչվող որևէ երևույթի մեկ կամ մի քանի ասպեկտների մասին) միջոցով: Ընդունված է տարբերակել հաղորդակցության ներքին (քաղաքական համակարգի ներսում գործող դերակատարների միջև) և արտաքին (տեղեկատվական-հաղորդակցական տարածք հաղորդվող՝ հասարակական համակարգին ուղղված) տեսակները:


Այս ոլորտում հետազոտությունների հիմնադիրը համարվում է ամերիկացի քաղաքականագետ Ջարոլդ Լասուելը, որը զբաղվել է քաղաքական հաղորդակցության ուսումնասիրությամբ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում և դրանից հետո: Նրա աշխատությունների մեծ մասը նվիրված է քաղաքական պրոպագանդային, որը նա հասկանում էր որպես հասարակական կարծիքի և վարքագծի կառավարման գործընթաց՝ նշանակալի խորհրդանիշների օգնությամբ:

XX դարի երկրորդ կեսին այս ոլորտը ձևավորվեց որպես ինքնուրույն ուղղություն՝ քաղաքական կոմունիկատիվիստիկա, ինչը պայմանավորված էր նոր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ, ինչպես նաև հաղորդակցության նոր տեսությունների և հայեցակարգերի առաջացմամբ, ներառյալ Կ. Դոյչի կիբեռնետիկ տեսությունը (մոդելը): Այսօր բազմաթիվ հետազոտողներ ձգտում են տարբեր հասարակական կառուցվածքները դիտարկել հաղորդակցության պրիզմայով:


Կ. Դոյչն իր մոդելում հաղորդակցությունը դրեց քաղաքական համակարգի հիմքում՝ վերջինս նմանեցնելով կիբեռնետիկ համակարգի: Այդ կերպ հեղինակը քաղաքականությունն ու քաղաքական գործընթացները դիտարկում է որպես համակարգի տարրերի (անձանց) ջանքերի կառավարման և համակարգման գործընթաց: Իսկ համակարգի ներսում շրջանառվող քաղաքական տեղեկատվության հոսքերը կատարում են նյարդային համակարգի գործառույթը: Ի դեպ, քաղաքագետ Ժան-Մարի Կոտտրեն նշել է, որ քաղաքական հաղորդակցությունը հասարակության մեջ իր նշանակությամբ և դերով համարժեք է արյան շրջանառությանը մարդու օրգանիզմում:

XX դարի երկրորդ կեսից բազմաթիվ հետազոտողներ փորձել են

սխեմատիկորեն ներկայացնել քաղաքական հաղորդակցության գործընթացը: **Հարուդ Լասուելն** առաջարկել է գործընթացը պատկերացնել որպես հետևյալ շղթա-սխեմայի տեսքով⁸¹.




Հետագայում այս շղթան լրացվել է այլ հետազոտողների կողմից: **Ռ. Բրեդդոկն** ավելացրել է բաղադրիչներ «**Ի՞նչ պայմաններում**» և «**Ի՞նչ նպատակով**»:




Կ. Շենոնը և Ռ. Ուիլբերոն այս շղթայում ավելացրեցին «**Արտաքին աղմուկներ և խանգարող գործոններ**»:

⁸¹ Lasswell H. D. The Structure and Function of Communication in Society // Mass Communication. Wilbur Schramm (ed.) Urbana, 1949. Էջ. 102-115.



Մ. Դեֆլերն ավելացրեց «Չետադարձ կապ» (feedback):
 Հարկ է նշել, որ միևնույն Դեֆլերի մոդելը քաղաքական հաղորդակցությունը դիտարկվում էր որպես **գծային և միակողմանի գործընթաց**:



Կախված հաղորդակցության միջոցին՝ ընդունված է տարբերակել հաղորդակցության հետևյալ եղանակները.

- **Հաղորդակցություն ոչ ֆորմալ ալիքների միջոցով** (օրինակ՝ անձնական շփումներ, սոցիալական ցանցերի օգտատերերի միջև փոխանցվող տեղեկատվություն),

- **Հաղորդակցություն կազմակերպությունների միջոցով** (քաղաքական կուսակցություններ, ՀԿ-ներ, նախաձեռնող խմբեր և այլն),

- **Հաղորդակցություն զանգվածային հաղորդակցության միջոցների միջոցով** (ռադիո, հեռուստատեսություն, համացանցային մեդիա, սոցիալական մեդիա և այլն):

Տարածված է հաղորդակցային գործընթացի՝ տարբեր հիմքերով դասակարգումը: Այսպես ըստ մասնակիցների քանակականի՝ Կ.-Դոյչն առանձնացնում է քաղաքական համակարգում հաղորդակցության երեք հիմնական տեսակ.

- Անձնական, ոչ ֆորմալ հաղորդակցություններ (face-to-face) — երբ տեղեկատվությունը փոխանցվում է անմիջական շփման միջոցով,

- Հաղորդակցություններ կազմակերպությունների միջոցով, երբ քաղաքացիներն ու խմբերը կապի մեջ են կառավարության հետ՝ կուսակցությունների, ճնշում գործադրող խմբերի և այլ կազմակերպությունների միջոցով,

- Հաղորդակցություններ տպագիր և էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցների միջոցով, որոնց դերը հետադարձաբերական հասարակությունում անընդհատ աճում է:

Կ. Դոյչի գաղափարներն ընդլայնելով՝ Մ.Բ.Գլոտովն առաջարկում է հաղորդակցության հետևյալ տեսակները.

- Անձի և այլ անձի միջև հաղորդակցություն՝ միջանձնային հաղորդակցություն,

- Անձի և սոցիալական համայնքի միջև հաղորդակցություն՝ անձ-խմբային,

- Անձի և սոցիալական հաստատության միջև հաղորդակցություն՝ անձ-հաստատություն,

- Սոցիալական համայնքների միջև հաղորդակցություն՝ միջխմբային,

- Սոցիալական համայնքի և սոցիալական հաստատության

միջև հաղորդակցություն՝ հաստատություն-խումբ,

- Սոցիալական հաստատությունների միջև հաղորդակցություն՝ միջհաստատություն հաղորդակցություն⁸²:

Սոցիալական ցանցերի և ժամանակակից տեխնոլոգիաների դերը

Ժամանակակից հասարակություններում սոցիալական մեդիայի (սոցիալական ցանցերի) միջոցով մարդկանց հաղորդակցման և տեղեկատվության փոխանցման գործընթացն անսախառնելի ծավալների է հասել: Ընդ որում՝ միջազգային և ազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սոցիալական մեդիայի հարթակն ակտիվորեն օգտագործվում է նաև կուսակցությունների և տարբեր քաղաքական միավորումների կողմից իրենց քաղաքական գործունեության, այդ թվում՝ նախընտրական քարոզարշավներում:

Պետք է նկատել, որ ինտերնետային այս կտրուկ փոփոխությունները սկսեցին 2000-ականներին՝ «Web 2.0» անվանումով հայտնի գործիքների ներդրմամբ, որոնք սահմանվում են որպես ինտերնետում հաղորդակցության ցանկացած ինտերակտիվ ձև, ինչպիսիք են՝ էլ. փոստը, բլոգները, վիքիները, փողքաթերը, RSS հոսքերը, միկրոբլոգները, սոցիալական ցանցերը և տեսանյութերի փոխանակման կայքերը⁸³: Այսուամենայնիվ, Web 2.0-ի բոլոր գործիքները նույնը չեն: Այսօր գոյություն ունեն **սոցիալական մեդիայի տարբեր տեսակներ, որոնց թիվն** օրեցօր աճում է, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկություններն ու նպատակները: Սոցիալական մեդիայի առավել տարածված տեսակներն են՝

- **սոցիալական ցանցային կայքերը**, ինչպիսիք են Facebook-ը և LinkedIn-ը,

- **միկրոբլոգային հարթակները**, ինչպես Twitter-ը,

- **տեսանյութեր տարածող հարթակները**, օրինակ՝ YouTube-ը,

⁸² Ст'ю Глотов М. Б. Виды и формы социальной коммуникации // Социальные коммуникации и информация: исследования, образование, практика. Тезисы межвузовской научно-практической конференции 11-12 ноября 1999 г. СПб.: ООО 'Петрополис', 1999. Т. 4:

⁸³ Ст'ю Web 2.0 Technologies and Democratic Governance: Political, Policy and Management Implications (Public Administration and Information Technology, 1) 2013th Edition by Christopher G. Reddick, Stephen K. Aikins, Т. 186:

- **լուսանկարներ տարածող հարթակները**, օրինակ՝ Instagram-ը և Snapchat-ը,

- **առցանց ֆորումները**, օրինակ՝ Reddit-ը:

Այս հարթակներն էական դեր են խաղացել և շարունակում են խաղալ ժամանակակից քաղաքականության մեջ՝ ձևավորելով մարդկանց հաղորդակցության և քաղաքական ներգրավվածության եղանակները: Չնայած վերջին գործիքներն ունեն եզակի առանձնահատկություններ, դրանք ունեն մեկ ընդհանուր բնութագիր. դրանք կապում են այն մարդկանց, ովքեր ձգտում են ստեղծել և կիսվել իրենց սեփական բովանդակությամբ:

Թվային հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումը հանրային կապերի մասնագետների համար մի կողմից նոր մարտահրավերներ հաղթահարելու հնարավորություն է տալիս, մյուս կողմից ստեղծում է նոր մարտահրավերներ:

Յուրաքանչյուր իրավաբանական անձի, և հատկապես՝ քաղաքական միությունների համար կարևորվում է հաղորդակցության ռազմավարության մշակումը, ինչը հանրության և թիրախային խմբերի հետ գրագետ շփման, փոխհարաբերությունների ձևավորման և հետադարձ կապի ապահովման գլխավոր գրավականներից է: Գրագետ հաղորդակցության ռազմավարության իրականացումը հանգեցնում է վստահության ավելացման:

Միանշանակ է, որ սոցիալական մեդիան փոխել է մարդկանց հաղորդակցման ձևը: Այս բաժնում քննարկել ենք սոցիալական մեդիայի մի շարք հիմնական փոփոխությունները:

Առաջին փոփոխությունը վերաբերում է սոցիալական մեդիայի օգտագործողների անանուկությանը: Շատ հաճախ մարդիկ գրում և մեկնաբանում են մականուններով կամ կեղծանուններով: Թեպետ անանուկությունն հնարավորություն է տալիս արտահայտվել զգայուն թեմաների շուրջ, այն նաև կարող է հանգեցնել վիրավորական քննարկումների (այսպես կոչված «flame wars») և պատասխանատվությունից խուսափելու: Իրական անունով հանդես գալը հաղորդագրությանը կշիռ է հաղորդում (օրինակ՝ «Խմբագրին նամակ» բաժնում), քանի որ հեղինակը ցանկանում է բացահայտ նշել, որ ինքը պատասխանատու է ասածի համար: Շփվողները պետք է կարողանան ներկայանալ իրենց իսկ անուններով:

Երկրորդ փոփոխությունն այն է, որ տեղեկատվությունն այժմ

շատ ավելի բազմազան և հարուստ է: Օգտատերերն այլևս կախված չեն մեկ աղբյուրից, այլ կարող են զուգահեռ օգտագործել տարբեր մեդիաներ: Այս մոտեցումը կարելի է բնութագրել որպես «ռեմեդիացիա», երբ մեդիաները օգտագործում, փոփոխում և վերակազմավորում են այլ աղբյուրներից վերցված բովանդակությունը: Այս նոր տեղեկատվական միջավայրում միևնույն ժամանակ հնարավոր չէ մասնակցել բոլոր քննարկումներին:

Երրորդ փոփոխությունն ամենահաստությունն է ու ամենատարածվածությունն է: Այլևս չկան մեկուսացված վայրեր կամ թաքստոցներ: Նույնիսկ հանրային դեմքերի անձնական և մասնավոր կյանքը խառնվել են ու դարձել հանրային: Շատ քաղաքական գործիչներ ստիպված են եղել ընդունել, որ իրենց մասնավոր խոսակցության ընթացքում ասված մի արտահայտություն կամ կատակը կարող է արտաքին մարդով ձայնագրվել ու արագորեն հրապարակվել համացանցում:

Չորրորդ փոփոխությունն արագությունն է: Նորությունները և տեղեկատվությունը տարածվում են երբևէ չտեսնված արագությամբ: Այս արագության պահանջը կարող է հանգեցնել նաև չստուգված տեղեկությունների տարածման:

Հինգերորդ փոփոխությունն այն է, որ օգտատերերը ստանձնում են բազմաթիվ դերեր և փոխկապակցվածություն ունեն միմյանց հետ: Սոցիալական մեդիային բնորոշ է հիերարխիայի բացակայությունը: Օրինակ՝ Wikipedia-ն, որն չունի գլխավոր խմբագիր, այլ ունի տասնյակ հազարավոր գրողներ, ստուգողներ և խմբագիրներ: Այսպիսով, եթե սխալներ են հայտնաբերվում, ո՞ւմ բողոքել: Պատասխանը հետևյալն է՝ մի՛ բողոքեք: Պարզապես ուղղեք կամ լրացրեք հոդվածը ինքներդ:

Վեցերորդ փոփոխությունն այն է, որ այժմ հնարավոր է միավորել տարբեր տեսակի տեղեկատվություն՝ շատ ճկուն ձևով: Սոցիալական մեդիան միայն տեքստ չէ, այլ նաև պատկերներ, ձայն, տեսանյութ, անիմացիա՝ այս ամենը միասին: Ժամանակակից տեսախցիկներով, ձայնագրիչներով, նոթբուքերով և մատչելի ծրագրերով կարելի է հեշտությամբ ստեղծել և խմբագրել տպավորիչ նյութեր:

Յոթերորդ փոփոխությունն այն է, որ ավանդական վերահսկողության մեթոդները գրեթե բացակայում են: Թեև կառավարությունները կարող են փորձել սահմանափակել սոցիալական մեդիայի

բովանդակությունը, ավանդական գրաքննությունը չի հասցնում փոփոխվող կայքերին:

Ժամանակակից գլոբալ քաղաքականության մեջ քաղաքական հաղորդակցությունն արմատապես փոխվել է սոցիալական մեդիայի շնորհիվ, որը հարթակ է տրամադրում քաղաքական հարցերի շուրջ ներգրավման և հանրային կարծիքի ձևավորման համար՝ ինչպես անհատների, այնպես էլ կազմակերպությունների կողմից: Սոցիալական մեդիայի կիրառումը հնարավորություն է տվել քաղաքական գործիչներին և կուսակցություններին կապ հաստատել ընտրողների հետ, մոբիլիզացնել աջակցություն իրենց քարոզարշավների համար, ինչպես նաև անհատներին արտահայտել իրենց քաղաքական դիրքորոշումները և մասնակցել առցանց ակտիվիզմին:

Սոցիալական մեդիան կարևոր դեր է խաղացել նաև ընտրությունների և այլ քաղաքական իրադարձությունների արդյունքների վրա ազդելու գործում: Տեղեկատվության և գաղափարների տարածումը շատ ավելի դյուրին է դարձել այս հարթակների միջոցով՝ հնարավորություն տալով մարդկանց կապ հաստատել միմյանց հետ, երբ նրանք կիսում են նման քաղաքական նպատակներ:

Ինչպես գլոբալ, այնպես էլ ներքին քաղաքականության վրա սոցիալական մեդիայի անհերքելի ազդեցությունը բացահայտող դեպքերը բազմաթիվ են, ուստի ցանկանում ենք քննարկել մի քանի ուշագրավ օրինակներ.

Արաբական Գարուն (2011)-Արաբական գարնան ընդվզումները, որոնք հաճախ նաև անվանվում են «**Facebook-ի հեղափոխություն**», ապացուցեցին սոցիալական մեդիայի ձևափոխող ուժը ժամանակակից գլոբալ քաղաքականության մեջ: Twitter-ը և Facebook-ը վճռորոշ դեր խաղացին՝ մարդկանց մոբիլիզացնելու համար զանգվածային բողոքի ցույցերի և հանրահավաքների ընթացքում Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում:

Ինֆորմացիայի արագ տարածման և գործողությունների համակարգման հնարավորությունը դարձավ շարժման հաջողության հիմնական գործոններից: Արաբական Գարունը ընդգծեց, որ սոցիալական մեդիան կարող է մարտահրավեր նետել բռնապետական ռեժիմներին և նպաստել քաղաքական փոփոխություններին՝ դրանով

իսկ բացելով առցանց ակտիվիզմի ու ներգրավվածության նոր դարաշրջան⁸⁴:

Հաջորդ հետաքրքրական դեպքը ԱՄՆ 2016 թվականի նախագահական ընտրություններն էին: 2016 թվականի ԱՄՆ նախագահական ընտրությունները դարձան շրջադարձային կետ՝ ցույց տալով սոցիալական մեդիայի ազդեցությունն ընտրական գործընթացների վրա: Սոցիալական մեդիայի հարթակներն օգտագործվել են քարոզչություն և ապատեղեկատվություն տարածելու համար՝ նպատակ ունենալով ազդեցություն ունենալ ընտրության արդյունքների վրա:

Ռուսական գործակալները օգտագործել են ալգորիթմներ՝ նպատակային ընտրազանգվածներ թիրախավորելու համար: **Google-ը բացահայտել է, որ ռուսական գործակալները գովազդ են գնել YouTube-ում, Gmail-ում և Google որոնման համակարգում՝ նպատակ ունենալով ազդել ԱՄՆ 2016 թվականի նախագահական ընտրությունների վրա:** ԱՄՆ հետախուզական ծառայությունները եզրակացրել են, որ Ռուսաստանի նպատակն էր աջակցել **Դոնալդ Թրամփի հաղթանակին**⁸⁵: Այս ընտրությունները դարձան հստակ հիշեցում այն մասին, թե որքան հզոր կարող է լինել սոցիալական մեդիան քաղաքական արդյունքների ձևավորման և հանրային կարծիքի վրա ազդեցություն գործելու հարցում:

«Թավշյա հեղափոխությունը»-2018 թվականին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած իշխանափոխության իրադարձություններն աննախադեպ էին իրենց ծավալով, ապակենտրոն բողոքի ակցիաներով: Կարճ ժամանակահատվածում այդքան համախոհներ ձեռք բերելը և բողոքի խաղաղ ակցիաներ անցկացնելը նախնառաջ արդյունք էին ճիշտ կազմակերպված և ծրագրավորված միջոցառումների, որոնցում իրենց հատուկ տեղն ունեին հաղորդակցության միջոցները:

⁸⁴Stéu Wolfsfeld, G., Segev, E., & Sheaffer, T. (2013). Social media and the Arab Spring: Politics comes first. The International Journal of Press/Politics, 18(2), 115-137. հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://doi.org/10.1177/1940161212471716>:

⁸⁵ Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.theguardian.com/world/2017/oct/09/russian-operatives-spent-thousands-of-dollars-on-google-ads-source-claims?utm_source=chatgpt.com:

Այսպես, բազմաթիվ հետաքրքրաշարժ թռուցիկներ, տեսահոլովակներ և այլ քարոզչական նյութեր ստեղծվում և տարածվում էին հենց սոցիալական հարթակներում: Բազմաթիվ բողոքի ակցիաներ, օրինակ՝ գիշերային շերտփագարկերը, ուղղորդվում էին ֆեյսբուքյան event-ների և «Տելեգրամում» դրված կոչերի միջոցով:

Հարկ է առանձնացնել հատկապես «Ֆեյսբուքն» ու «Յութուբը», որոնք ավելի շատ օգտագործվում էին ուղիղ եթերներ հեռարձակելու համար: Ինչպես նկատում է տեղեկատվական անվտանգության փորձագետ Սամվել Մարտիրոսյանը, ուղիղ եթերներն ամենամեծ դերը խաղացին հեղափոխության հաջողության հարցում:

- Երբ դրանք իրականացնում էին հենց քաղաքական գործիչները, հատկապես Փաշինյանը, ստեղծվում էր խիստ անմիջական մթնոլորտ:

- Ուղիղ եթերները խափանեցին բազմաթիվ միջնորդ ինստիտուտների աշխատանքները, հեղափոխական թիմի հայտարարությունները հասնում էին հանրությանը առանց խմբագրական միջամտությունների, պալատական քաղաքագետների մեկնաբանությունների:

- Ուղիղ եթերները հնարավորություն ընձեռեցին նվազագույնի հասցնելու կեղծ լուրերի տարածումը, քանի որ անմիջապես հերքելու հնարավորություն կար:

- Ուղիղ եթերները դարձան ուղիղ կառավարման միջոց, քանի որ բողոքի ակցիաները տեղի էին ունենում իրարից ֆիզիկապես կտրված տարածքներում:

- Դրանք դարձան ներգրավման միջոց. Սփյուռքը նույնպես արձագանքեց՝ դառնալով իրադարձությունների ոչ միայն ականատես, այլև մասնակից⁸⁶:

Սակայն առավել հետաքրքրականն այն է, որ ուղիղ ֆեյսբուքյան եթերները փաստացի ինստիտուցիոնալիզացվեցին, վարչապետի համար դարձան ոչ միայն՝ հանրության հետ շփվելու միջոց, այլև քաղաքականությունը վարելու միջոց: Դրա վկայությունն է Հայաստանի

⁸⁶ Տե՛ս Ս. Մարտիրոսյան, Սոցցանցերն ու Հայաստանի թավշյա հեղափոխությունը՝ սիրո պատմություն, հասնելի է հետևյալ հոմամբ՝ (<http://theanalyticon.com/?p=1066>):

Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից (Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Նրա Ներկայացուցիչների դեմ 2025 թվականի մայիսի 29-ից մեկնարկված, հստակ դերաբաշխմամբ արշավը:

Թվային գործիքների առաջարկած դրական կողմերի կողքին պետք է նաև փաստել, որ սոցիալական մեդիան **օգտագործվել է նաև սխալ տեղեկատվության տարածման և ծայրահեղական տեսակետների ուժեղացման համար**, որը հանգեցրել կամ ավելի է խորացել է քաղաքական դիսկուրսի բևեռացումը:

Որոշ կառավարություններ կիրառում են կոշտ միջոցներ, օրինակ՝ սոցիալական մեդիայի հարթակների ժամանակավոր փակումը քաղաքական բողոքի ցույցերի ժամանակ կամ մարդկանց ձերբակալումը՝ իրենց առցանց ակտիվության պատճառով:

Այս առումով հետաքրքրական է, որ արաբական երկրներում զանգվածային շարժումներից հետո Չինաստանում միջոցներ ձեռնարկվեցին՝ կանխելու ծավալած գործընթացները: «Ոսկե վահան» նախագիծը, որին հաճախ անվանում են «Չինական մեծ վերալստ» գտում է «վտանգավոր» բովանդակությունը հիմնաբառերով և սահմանափակում տեղական սև ցուցակում գտնվող կայքերի մոտքը:

Թեպետ սոցիալական մեդիայում քաղաքական գրաքննությունը երբեմն դիտարկվում է որպես անհրաժեշտ միջոց՝ հասարակական անվտանգությունն ապահովելու և ժողովրդավարական գործընթացի ամբողջականությունը պահպանելու համար, այն կարող է բացասաբար անդրադառնալ խոսքի ազատության և ժողովրդավարական կառավարման վրա:

Հենց այստեղ է, որ Էականորեն կարևորվում է արդարացի հավասարակշռության ապահովումը՝ նկատի ունենալով, որ Նժարի մի թեևն ազատ արտահայտվելու իրավունքի և բազմակարծության խթանումն է, մյուս կողմից անվտանգային հարցերը և վնասակար բովանդակության տարածման կանխարգելումը:

Ամփոփելով վերոշարադրյալը հարկ է նշել, որ ներկայում, առավել քան երբևէ, կարևորվում է թվային հաղորդակցությունը: Ընդ որում՝ մինչ թվային հաղորդակցության ռազմավարություն մշակելն անհրաժեշտ է հստակեցնել թիրախային լսարանը, վերլուծել իրադրությունը, հստակ սահմանել նպատակներն ու խնդիրները:

Թվային հաղորդակցության ռազմավարությունը կօգնի համոզվելու՝

- Արդյո՞ք հաղորդակցական գործողությունները կնպաստեն տվյալ կազմակերպության նպատակների և առաքելության իրականացմանը,

- Ինչպե՞ս պլանավորել և բաշխել կազմակերպության մարդկային ռեսուրսն ու տեխնիկական հնարավորությունները,

- Կազմակերպության հաղորդակցության նպատակների իրականացումն արդյո՞ք կնպաստի հասարակությանը օպերատիվ տեղեկատվություն փոխանցելուն, թիրախային լսարանի վերաբերմունքն ու վարքը փոփոխելուն՝ տեղեկատվության մատուցման տարատեսակ մեթոդների կիրառման համատեքստում:

Թվային հաղորդակցության ռազմավարությունը մշակելիս անհրաժեշտ է՝

- Արդյունքները վերլուծել, որը հնարավորություն կտա հետևելու նախատեսված պլանին, սոցիարցումների արդյունքներին, վիճակագրության վերլուծություններին, որոնք կազմակերպության ռազմավարական պլանավորման հաջող գործընթացի կարևոր դերակատարներն են դառնում:

- Վերլուծել կազմակերպությունում տիրող իրավիճակը, խնդիրներն ու մարտահրավերները,

- Հստակեցնել հաղորդակցության նպատակները, որոնք կարող են օգնել դիմագրավելու կազմակերպության առջև ծառացած մարտահրավերները,

- Հստակեցնել թիրախային լսարանը մարտահրավերներին դիմակայող մասնագիտական խմբերի ներգրավմամբ,

- Մշակել հանրույթին ուղղված համապատասխան ուղերձներ և մտածել, թե ինչ մեթոդներ ու գործիքներ են անհրաժեշտ տեղեկատվությունը օպերատիվ փոխանցելու համար,

- Ընտրելով մեթոդը՝ ուսումնասիրել, թե լսարանը ինչպես է սպառում տեղեկատվությունը և լսարանին դիմելու լավագույն ձևը որն է,

- Փորձարկել մոտեցումներն ու որդեգրած քաղաքականությունը փոքր խմբերում կամ անհատական շփման մակարդակում, որովհետև մինչև ուղերձներն ու տեսանյութերը մեծ լսարանին հասցնելը

չօգտագործվեն, հնարավոր չի լինի որոշել տվյալ ուղերձի արդյունավետությունը,

- Հստակեցնել անհրաժեշտ ռեսուրսներն ու սահմանել ժամանակացույց,

- Ստեղծել գնահատման մեխանիզմ, որտեղ ներառված կլինեն չափորոշիչները: Չափազանց կարևոր է նկատի ունենալ, որ մարդու ուշադրության կենտրոնացման միջին տևողությունը 8 վայրկյան է, կայքի կամ էջի այցելուների 55%-ը 15 վայրկյանից ավելի քիչ է անցկացնում տվյալ հարթակում: Լսարանին մատուցվող նյութը բովանդակային և տեխնիկական այնպիսի լուծումներ պետք է ունենան, որ հարյուրավոր մրցակիցների շարքում ուշադրություն հրավիրելու հնարավորությունն առավել մրցակցային դարձնի այն:

- Հանրային օրակարգի ձևավորում և քաղաքական դիսկուրս ժամանակակից քաղաքագիտության մեջ լայնորեն օգտագործվող «օրակարգ» եզրույթը գիտական շրջանառություն մեջ է մտել 20-րդ դարում, երբ զանգվածային հաղորդակցության քաղաքական ազդեցությունները ուսումնասիրելու արդյունքում հետազոտողները բացահայտեցին որոշակի խնդիրների շրջանակ, որոնք այս կամ այն ձևով առնչվում են մարդկանց շահերին:

1970-1980-ականներին մշակվում և շրջանառության մեջ է դրվում «օրակարգի ձևավորման» կոնցեպցիան: Առաջին անգամ այն ներկայացվել է Մ. Մաքքոմբսի և Դ. Շոյի հոդվածում, որտեղ հեղինակները ցույց են տվել հստակ կապ մեդիայի կողմից ձևավորվող խնդիրների շրջանակի և լսարանի միջև, որը կողմնորոշվում է՝ հաշվի առնելով մեդիայի ցանկությունները: Մեդիան չէր կարող ուղղակի ասել մարդկանց՝ ինչի մասին մտածել, բայց, կարևոր հարցերը առաջ բերելով, հնարավորություն ուներ ուղղորդելու մարդկանց անհրաժեշտ ուղղությամբ, ինչը և օգտագործվում էր⁸⁷: «Օրակարգի ձևավորման» հասկացությունը թույլ էր տալիս մշակել գործիքներ՝ հասարակությանը կառավարելու համար՝ նրան սեփական կամքը թելադրելու միջոցով, ինչը չէր կարող վրիպել քաղաքական գործիչների ուշադրությունից:

«Օրակարգի ձևավորման» կոնցեպցիան դարձավ այն գործոնը,

⁸⁷Stu Липман У. Общественное мнение. М., 2004, էջ 384:

որը պահանջեց ընդլայնել «օրակարգ» հասկացությունը: Այս տեսության համաձայն՝ կարելի է եզրակացնել, որ մամուլը և զանգվածային լրատվամիջոցները օբյեկտիվորեն չեն արտացոլում իրականությունը, նրանք «գտում են» տեղեկատվությունը և արդյունքում ձևավորում իրենց անհրաժեշտ պատկերացումը իրադարձությունների մասին՝ թույլ չտալով տեղեկատվությունն ստացողին ընդունել անկախ որոշում: Մեկ այլ հետաքրքիր հանգամանք այս կոնցեպցիայում այն է, որ զանգվածային հաղորդակցության միջոցները կենտրոնացած են միայն որոշ խնդիրների և երևույթների վրա:

Անկասկած, այսօր «օրակարգ» կատեգորիան ունի շատ ավելի լայն իմաստային ընդգրկում, քան ընդունված է այն սահմանափակել զանգվածային հաղորդակցության տեսության շրջանակում:

Ընդհանուր առմամբ «օրակարգ» հասկացությունը սահմանեք որպես խնդրահարույց հարցերի ամբողջություն, որոնք պահանջում են պետական մարմինների և հասարակության արձագանքը և դառնում են զանգվածային հաղորդակցության միջոցների քննարկման առարկա, ապա անխուսափելի է դառնում պետական մարմինների և հանրային կյանքի մյուս դերակատարների դերի հարցը: Այլ կերպ ասած՝ «օրակարգ» կատեգորիան իմաստ ձեռք է բերում միայն այն ժամանակ, երբ կապված է կոնկրետ գործող դերակատարների և կոնկրետ ժամանակահատվածի հետ:

Այս ամենից ելնելով՝ ժամանակակից գիտության մեջ «օրակարգ» կատեգորիան ունի առնվազն երեք մոդել:

1. **Մեդիա օրակարգ**, որը ձևավորվում է հիմնականում զանգվածային լրատվամիջոցների միջոցով:

2. **Հասարակական օրակարգ**, որը ձևավորվում է սովորական մարդկանց կողմից:

3. **Քաղաքական օրակարգ**, որը ձևավորվում է քաղաքական դերակատարների՝ հիմնականում տարբեր մակարդակների պետական մարմինների կողմից:

Ի տարբերություն **մեդիա օրակարգի**, որը ձևավորվում է լրատվամիջոցների ղեկավարության խմբագրական նախընտրությունների հիման վրա, և **հասարակական օրակարգի**, որը ներկայացնում է առօրյա խնդիրների ամբողջություն, քաղաքական միջավայր տեղափոխված սկզբում ոչ քաղաքական հարցերը ոչ միայն ձեռք են բերում նոր կարգավիճակ, այլև նոր լուծման մեխանիզմներ

և գործիքներ, այսինքն՝ ձեռք են բերում **քաղաքական նշանակություն**:

Հանրային քաղաքական օրակարգում որևէ հարցի ներառման գործընթացը բաղկացած է մի քանի հաջորդական փուլերից.

1. **Առաջին փուլում** տեղի է ունենում հանրության մեծամասնությանն անհայտ խնդրի բացահայտում:

2. **Երկրորդ փուլում** տեղի է ունենում խնդրի արդիականացում և ներառում քաղաքական օրակարգում: Սա սովորաբար պայմանավորված է խնդրի վերաբերյալ գիտելիքների կուտակմամբ կամ ինչ-որ իրադարձությամբ, որն ստիպում է հաշվի առնել դրա առկայությունը:

3. **Երրորդ փուլում** ձևավորվում է հասարակական և քաղաքական հետաքրքրություն խնդրի նկատմամբ: Խնդիրը ամրապնդվում է քաղաքական օրակարգում՝ դրա նկատմամբ հետաքրքրությունը պահպանելու միջոցով: Այստեղ խնդրի մասշտաբը փոխվում է՝ այն դադարում է լինել միայն մասնագետների հետաքրքրությունը և սկսում է ազդել հասարակության լայն շերտերի կյանքի վրա:

4. **Չորրորդ փուլում** ձևավորվում են դերակատարների նախընտրությունները և առաջարկվում են խնդրի լուծման տարբերակներ: Այս փուլում սրվում է քաղաքական մրցակցությունը, և խնդիրը քաղաքականացվում է:

5. **Հինգերորդ փուլը** կապված է խնդրի հանդեպ հետաքրքրության աստիճանական մարելու և օրակարգից դուրս մղվելու հետ՝ ավելի արդիական խնդիրներով փոխարինվելու արդյունքում: Սակայն եթե հասարակությունը դժգոհ է իրականացված քայլերից, կամ ի հայտ են գալիս նոր հանգամանքներ, հին խնդիրը կարող է կրկին վերադառնալ օրակարգ:

ԳԼՈՒԽ 4. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՊԱԳԱՆ

4.1 Գլոբալիզացիայի և տեխնոլոգական փոփոխությունների ազդեցությունը

XXI դարի սկզբին ընդհանրապես՝ քաղաքական համակարգերը, և մասնավորապես՝ քաղաքական կուսակցությունները, բախվել են ամենակարևոր մարտահրավերներից մեկին՝ գլոբալիզացիայի կերպափոխմանը կամ նոր գլոբալիզացիոն զարգացումների և տեխնոլոգական հեղափոխության ազդեցությանը:

Աշխարհը, որտեղ մենք ապրում ենք, ձեռք է բերել նոր որակներ, որոնք անսահմանորեն տարբերություններ են մտցնում նախկին սոցիալական, քաղաքական և իրավական միջավայրերի հետ համեմատության մեջ: Հիմնական առանձնահատկությունը փոփոխությունների տեմպն է, պարբերականությունը, ծավալը և փուլերը, որոնք մենք տեսնում ենք մեկ անձի կյանքի ընթացքում: Այս ամենն անձանց, հասարակությունների, պետությունների և, ընդհանուր առմամբ, մարդկության իրական կյանքը դարձնում է նոր փոփոխություններով և դրանց համար լուծումների խորը բացերով լի:

Սոցիալական արագ կերպափոխումներն այս տեսակ իրականությունների անքակտելի մասն են: Երբեմն դրանք առաջացնում են քաոսի զգացողություն, և սոցիալ-քաղաքական, պետաիրավական, ֆինանսատնտեսական մարտահրավերները դրսևորվում են քաոսի սահմանայնությունում, որտեղ սոցիալական կյանքի կազմակերպումը դառնում է նոր մեթոդներ և նոր հարացույցներ պահանջող համալիր խնդիր: Հարացուցային փոփոխությունները պահանջվում են նաև սոցիալական իրականության նկատմամբ իրավական հայացքում:

Փոփոխության ընթացքում այս տեսակ փուլերը երբեմն անվանում են «հեղափոխություն», որոնք սկսում են սոցիալական միջավայրի փոխկապակցված համալիր կառուցվածքների խորքային շերտերում, ծավալվում են որոշակի անցումային ժամանակահատվա-

ծում և կուտակվող ֆլուկտուացաներով⁸⁸ պայթում են շատ կարճ ժամանակահատվածում՝ ձևավորելով ապագա զարգացումների ճյուղավորումների (բիֆուրկացիների)⁸⁹ լայն շրջանակ:

Եթե նայենք մեր շուրջը, նկատելը շատ դժվար չի լինի, որ մեզ շրջապատող սոցիալ-քաղաքական, տեխնոլոգիական, պետաիրավական և այլ միջավայրերը դրսևորում են արագացող փոփոխությունների վարքագիծ, որն առաջացնում է քաոսի կամ առնվազն տարբեր ճյուղավորումներով քաոսի սահմանայնության զգացում⁹⁰:

Այս ամենն էլ ավելի է բարդանում, երբ Չորրորդ արդյունաբերական հեղափոխությունն՝ իր արհեստական բանականության, քվանտային համակարգիչների և այլ տեխնոլոգիական նորարարություններով ուղղակիորեն ազդում է ամբողջ տնտեսության կառուցվածքի կերպափոխումների և քաղաքական համակարգի դանդաղ հարմարվողականության, և բոլոր հնարավոր հանրային գործընթացների շարժընթացի վրա:

Այս գործընթացները հիմնովին փոխում են քաղաքական մրցակցության բնույթը, կուսակցությունների կազմակերպական մոդելները և նրանց՝ քաղաքացիների հետ փոխհարաբերությունների ձևերը:

Այս տեսանկյունից կուսակցական համակարգի վերաբերյալ մեր պատկերացումները ևս փոխվում են, քանի որ փոփոխության են ենթարկվում հենց կուսակցությունների բնույթը, դրանց սոցիալական դերն ու նշանակությունը, դրանց առջև ծառացող մարտահրավերները, վերջիններիս արագ կերպափոխումները և այլն: Դրանից ելնելով էլ՝ առավել զարգացած քաղաքական համակարգ ունեցող հասարա-

⁸⁸ Չափի, քանակի, որակի (և այլն) մեջ բազմաթիվ փոփոխություններից մեկը, որը հաճախ է տեղի ունենում, հատկապես՝ մեկ ծայրահեղությունից մյուսը:

<https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/english/fluctuation>

⁸⁹ Պարամետրային տարածությունում կան որոշակի պահեր, որտեղ փոփոխությունը պայթունային է: Համակարգը հատում է անտեսանելի սահմանը և ատտրակտորների դաշտը կտրուկ փոփոխվում է: Նման փոփոխությունները կոչվում են բիֆուրկացիաներ (ճյուղավորումներ): Russ Marion, The Edge of Organization, Chaos and Complexity Theories of Formal Social Systems, Sage Publications, 1999, էջ 20

⁹⁰ Տ.Վ. Սիմոնյան, Իրավունքի սիներգետիկա. Պետաիրավական համալիրություն և սիներգետիկա. Մաս 2, Երևան, 2023, էջ. 36:

կություններում և նման համակարգ զարգացնող հայկական քաղաքական միջավայրում առանցքային նշանակություն է ձեռք բերում մի քանի խնդիրների առանձնացումը՝ որպես ընդհանուր պատկերի վրա ազդեցության առավել մեծ գործոններ:

Ազգային ինքնությունը և գլոբալ ինտեգրացիան

XIX դարից սկսած՝ ազգային ինքնության թեման առանձին կուսակցությունների գաղափարական հիմքն է եղել: Չափավոր ազգային քաղաքականության կողմնորոշում ունեցող կուսակցություններից (օրինակ՝ Հայ Յեղափոխական Դաշնակություն), որոնք արդյունավետորեն գործում են ցայսօր, մինչև ծայրահեղական թևի կուսակցություններ (օրինակ՝ Նացիոնալ-սոցիալիստական գերմանական բանվորական կուսակցություն), որոնք մարդկության համար աղետաբեր են եղել՝ բոլորն էլ քաղաքական ծրագրի և գաղափարախոսության հիմքում ունեցել են ազգային ինքնության առանցքը:

Տարբեր գլոբալիզացիոն գործընթացներ նոր մարտահրավերներ են բերել, քանի որ յուրաքանչյուր գլոբալ ինտեգրման գործընթաց քաղաքական առաջնահերթություն է դարձրել գլոբալիզացիոն այդ տեսակի ինտեգրման կառուցակարգի գործարկման և ազգային ինքնության պահպանության հարցը. օրինակ՝ կոմունիզմն ու ազգային հարցը, լիբերալիզմն ու ազգային հարցը և այլն:

Գլոբալիզացիա ասելով՝ այստեղ ի նկատի ունենք գործոնների բարդ խմբավորում, որոնք *«քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլն համակարգերը դնում են աճող փոխկապակցվածության մեջ»*⁹¹, և, ընդհանուր առմամբ, կարող են բնորոշվել որպես *«աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների միջև աճող փոխկապակցվածություններ»*⁹²:

Այս համատեքստում անգեն աչքով էլ դժվար չէ նկատել, որ Երկիր մոլորակի վրա մարդկանց քանակի կտրուկ աճի, տեղեկատվա-

⁹¹ Տե՛ս Jean-Bernard Auby, *Globalization, Law and the State*, Oxford and Portland, Oregon, Hart Publishing, 2017, էջ 1:

⁹² Տե՛ս David Goldman, *Historical Aspects of Globalization and Law*, in Catherine Dauvergne (ed), *Jurisprudence for an Interconnected Globe* (Aldershot, Ashgate, 2003), էջ 43:

կան հասարակությունների զարգացման, միջսահմանային տնտեսական հարաբերությունների զարգացման, անձանց, ծառայությունների, կապիտալի ազատությունների և դրանց միջսահմանային շարժի աճին զուգահեռ, աճում է նաև տարբեր ազգերին և հասարակություններին պատկանող մարդկանց հարաբերությունների բազմազանությունը, մշակութային երկխոսություններն ու բախումները, իրավական, տնտեսական, քաղաքական մոտարկումներն ու ինտեգրացիաները: Սրան գումարվում է նաև սոցիալական ցանցերի դերը և մշակութային հաղորդակցումն ու փոխներազդեցությունը տվյալների փոխանցման այդ գործիքների միջոցով: Այս ամենի համալիրությունը չի կարող չազդել մարդկանց և հասարակությունների մտածողության փոփոխության վրա:

Աշխարհը մեծանում է հնարավորությունների տեսքով, բայց փոքրանում է հասանելիության տեսքով՝ առնվազն վիրտուալ մակարդակում: Դրանց անհամապատասխանելիությունն, իհարկե, կարող է հանգեցնել սոցիալական և անհատական դեպրեսիաների, սակայն զուտ դրանց առկայությունն արդեն խոսում է անհատական և սոցիալական մակարդակում կյանքի իմաստի, սոցիալական արժեքների, քաղաքական նպատակադրությունների և ընդհանրապես՝ ազգային ինքնության հարցերում վերաիմաստավորման գործընթացների, ընդհուպ մինչև՝ սոցիալական շարժումների:

XXI դարում խորը և համապարփակ հետազոտություն և վերլուծություն անելու համար անհրաժեշտ է նոր մոտեցում, նոր հարացույց, որը համապատասխանում է փոխկապակցված աշխարհի պահանջներին, և որտեղ բոլոր տարրերը սիներգիայի գործընթացի մեջ են, իսկ ընդհանուրը շատ ավելին է, քան պարզապես դրա տարրերի գումարը: Այս բարդ և փոխկապակցված իրականությունը սոցիալական գիտություններում և նույնիսկ՝ իրավագիտությունում ուսումնասիրվում է նաև նոր մեթոդաբանությամբ, նոր տեսությամբ, որն արդեն իսկ սահմանվել է որպես համալիրության կամ համալիր համակարգերի տեսություն, քանի որ հենց *«համալիրության տեսությունն*

Ե տրամադրում իրավունքի տեսության նոր հարացույցի անալոգիական հիմքերը»⁹³:

Սա նաև ուղղակիորեն անդրադառնում է պետական ինքնիշխանության և՛ գաղափարի վերաիմաստավորման, և՛ գործնականում դրա կիրառման կառուցակարգերի փոփոխությանը: Պետական ինքնիշխանության և գլոբալիզացիայի միջև «լարվածությունը» ծագում է նաև նրանից, որ գլոբալիզացիայի միջազգային բնույթը հաճախ մարտահրավեր է ներկայացնում ազգային պետությունների ինքնավարության համար: Ազգային կուսակցությունների համար սա նշանակում է, որ նրանց ծրագրերը և քաղաքականությունը չեն կարող լինել բացարձակապես ինքնավար: Դրանք կարող են և պետք է հաշվի առնեն գլոբալիզացիոն գործընթացները և ինքնիշխանության հանցակարգի փոխակերպման հիմնական ուղղությունները՝

1. **Տնտեսական ինքնավարության սահմանափակումը** – շատ պետություններից մի քանի անգամ մեծ ֆինանսներ գեներացնող և տիրապետող միջազգային կորպորացիաները, գլոբալ շուկաների ձևավորումը և ֆինանսական գործընթացների կարգավորման խնդիրները նվազեցնում են պետությունների ինքնիշխան հնարավորությունները ֆինանսատնտեսական ոլորտում և ավելացնում դրանց կախվածությունը միջազգային ոչ պետական կազմավորումներից:
2. **Վերազգային ինստիտուտների ազդեցությունը** - միջկառավարական կազմակերպությունները, միջազգային ոչ-կառավարական կազմակերպությունները և միջազգային կորպորացիաները, որոշակի կանգառներով ու երբեմն՝ անկումներով, սակայն հաստատում քայլերով ավելացնում են իրենց զգալի դերը պետությունների վրա ազդեցության բնագավառում: Ոչ-պետական խաղացողներն, ինչպիսիք են միջկառավարական կազմակերպությունները (IGO), միջազգային ոչ-կառավարական կազմակերպությունները (INGO) և տրանսազգային կորպորացիաները (TNC), ստանձնել են ավելի մեծ քաղաքական և տնտեսական

⁹³ Sté u Ruhl. J. B., Complexity theory as a paradigm for the dynamical law-and-society system: A wake-up call for legal reductionism and the modern administrative state, Duke Law Journal, volume 45, 1996a, 849-928, էջ 906:

նշանակություն ժամանակակից աշխարհում: Այս խաղացողներից շատերը խորը ներթափանցում են ազգային իրավական, տնտեսական, քաղաքական համակարգերի մեջ և նպաստում են այդ համակարգերի փոխակերպումներին և միջազգայնացմանը: Այս համատեքստում կուսակցությունները գնալով ավելի են հարմարվում գլոբալ քաղաքական դիսկուրսին և հաշվի են առնում վերազգային գործոնները իրենց տեղական քաղաքականության մեջ:

- 3. Մշակութային ինքնավարության մարտահրավերները** - մշակութային գլոբալիզացիան, որը ընթանում է տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց աճին զուգահեռ, կարող է նվազեցնել ազգային ինքնությունը՝ սոցիալ-հոգեբանական մակարդակում, որը ազգային պետությունների հիմքն է:

Միջազգային կուսակցական ցանցերի ազդեցությունը

Գլոբալիզացիան նպաստել է նաև միջազգային կուսակցական համագործակցության ինստիտուցիոնալիզացմանը և քաղաքականության վերազգայնացմանը: Այս գործընթացը ստեղծել է նոր դինամիկա ազգային կուսակցությունների և գլոբալ քաղաքական ցանցերի միջև: Եվրոպական խորհրդարանում, օրինակ, գործող կուսակցական խմբերը, ինչպիսիք են Եվրոպական ժողովրդական կուսակցությունը (EPP), սոցիալիստների և դեմոկրատների խումբը (S&D), կամ լիբերալների խումբը (Renew Europe), ցույց են տալիս, որ կուսակցական քաղաքականությունը գնալով ավելի է վերազգային դառնում:

Այդ ընթացքում նշմարվում են համալիր ազդեցության որոշ ուղղություններ.

- 1. Գաղափարական համակարգում և քաղաքական դիրքորոշումներ.**

Միջազգային կուսակցական ընտանիքների շրջանակներում մշակվող ընդհանուր դիրքորոշումներն ազդում են ազգային կուսակցությունների ծրագրերի վրա: Այս համատեքստում կարող են նշել, որ, օրինակ, թվային հասարակությունների վերաբերյալ ձևավորվել են գաղափարական դիրքորոշումներ՝ «*Հարթակային նեոլիբերալիզմ*», «*Սոցիալական լիբերալիզմ*», «*Հարթակային սոցիալիզմ*»: Սրանք այս կամ այն կերպ վիջազգային կուսակցական ընտանիքներ-

րից դանդաղ, բայց հաստատուն կերպով իջնում են ազգային կուսակցությունների մակարդակ ու ծրագրեր:

2. Զաղաքական պրակտիկաների փոխանակում.

Միջազգային համագործակցության շրջանակներում ազգային կուսակցությունները միմյանց հետ փոխանակվում են հաջողված քաղաքական տեխնոլոգիաներով, ընտրական ռազմավարություններով և կազմակերպական նորարարություններով և այլն:

3. Ֆինանսական և տեխնիկական աջակցություն.

Նույն համագործակցության շրջանակներում տեղի է ունանում նաև քաղաքական հիմնադրամների և միջազգային կազմակերպությունների աջակցությունը, ներառյալ՝

- Տեխնիկական գիտելիքների փոխանակում,
- Ընտրական արշավների ֆինանսավորում,
- Կուսակցական աշխատակիցների վերապատրաստում
- և այլն:

Ժամանակակից գլոբալիզացիոն գործընթացներից բխող տնտեսական, իրավական և քաղաքական ինտեգրացիաները նպաստում են, որ ազգային, ներպետական կուսակցությունները ևս մասնակցել ինտեգրացիոն գործընթացներին և մտնեն միջազգային կուսակցական միությունների, ընտանիքների մեջ՝ այլ պետությունների ազգային կուսակցությունների հետ միասին: Սա շատ տարածված պրակտիկա է Եվրոպական Խորհրդի և Եվրոպական միության տարածքում: Անգամ հայկական կուսակցություններ կան, որոնք մտնում են այս կամ այն չափով գաղափարական ընդհանուրություններ ունեցող միջազգային կուսակցական միությունների մեջ:

Այսպես. հայկական մի շարք կուսակցություններ դիտորդի կամ լրիվ իրավունքներով անդամակցում են կամ անդամակցության թեկնածու են համարվում այդպիսի միություններում: Օրինակ՝ Հայ Ազգային կոնգրեսը և Լուսավոր Հայաստան կուսակցություններն անդամակցում են Եվրոպայի լիբերալների և դեմոկրատների դաշինք կուսակցությանը (ALDE, Renew Europe)⁹⁴, Հայաստանի Հանրապետական և Ժառանգություն կուսակցություններն անդամակցում են

⁹⁴ <https://www.aldeparty.eu/>

Եվրոպայի ժողովրդական կուսակցությանը (EPP)⁹⁵, Հայ Յեղափոխական Դաշնակցությունն անդամակցում է Եվրոպական սոցիալիստների կուսակցությանը⁹⁶, Եվրոպայի պահպանողականների և ռեֆորմիստների կուսակցությանը⁹⁷ Հայաստանից անդամակցում է Բարգավաճ Հայաստան կուսակցությունը և այլն: Հետաքրքրաշարժ է, որ Եվրոպական Ազատ Դաշինք կուսակցությունը⁹⁸ Արցախի Հանրապետության կուսակցություններից Արցախի ժողովրդավարական կուսակցությանը ընդգրկել է իր անդամների ցանկում⁹⁹:

Հայկական կուսակցությունները ունեն նաև համագործակցության լայն շրջանակներ ռուսական և ԱՊՀ անդամ պետություններից որոշների քաղաքական համակարգը ներկայացնող կուսակցությունների հետ: Ի տարբերություն Եվրոպական միջազգային կուսակցությունների միությունների, որոնք առավելապես մեկ՝ միության շրջանակներում մի քանի կուսակցություններ են միավորում՝ ԱՊՀ շրջանակներում հիմնականում երկկողմանի փոխհամագործակցության ձևաչափով է համագործակցությունը տեղի ունենում: Այսպես, օրինակ, «Միացյալ Ռուսաստան» կուսակցության հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետական կուսակցությունը երկարատև համագործակցություն է իրականացնում ԱՊՀ հորհրդարանական վեհաժողովում, ԵԱՀԿ հորհրդարանական վեհաժողովում, ՀԱՊԿ հորհրդարանական վեհաժողովում, Ուղղափառության հորհրդարանական վեհաժողովում:¹⁰⁰

Սա, իհարկե, չի նշանակում, որ վերոնշյալ հայկական կուսակցությունները, որոնց գրեթե բոլորի քաղաքական ծրագրերում հայկական ինքնության պահպանումն ու զարգացումը, ինչպես նաև հայկական ազգային (այդ թվում՝ պատմականորեն ժառանգած) խնդիրների լուծումն այս կամ այն չափով կազմում է քաղաքական նպատակների առանցքը, անդամագրվելով նման մեծ կուսակցական

⁹⁵ <https://www.epp.eu/>

⁹⁶ <https://pes.eu/>

⁹⁷ <https://ecrparty.eu/>

⁹⁸ <https://e-f-a.org/>

⁹⁹ Ավելի մանրամասն տե՛ս Anna Barseghyan and Harout Manougian, Armenian Political Parties' Affiliations With Their European Counterparts, հասնելի է հետևալ հղմամբ՝ <https://evnreport.com/politics/armenian-political-parties-affiliations-with-their-european-counterparts/> :

¹⁰⁰ <http://www.hhk.am/hy/international/>

միություններում, հեռանում են ազգային ինքնության պահպանման իրենց քաղաքական ծրագրերից: Հակառակը, շատ դեպքերում նրանք ստանում են ավելի մեծ հարթակներ այդ ինքնության նկատակներում ամփոփված ազգային շահերի առաջ մղման և սպասարկման ավելի լայն հնարավորություններ:

Միևնույն ժամանակ նրանք ինչ-որ առումով նաև աճող քաղաքական փոխկապվածությունների ուժով ստիպված են լինում առանձին հարցերում գնալ հարմարվողական քաղաքականության ճանապարհով՝ քաղաքական «առևտրի» սեղանին դնելով իրենց առաջնահերթությունները: Սա է գլոբալիզացիայի դրական ու բացասական կողմերը, ռիսկերն ու հնարավորությունները, որոնք արդի աշխարհում գնալով ավելի համալիր են դառնում: Իհարկե, քաղաքական փոխկապվածությունը ևս ունի համալիրության (բարդության) աճի հարաբերական սահման, որտեղ որոշումների ընդունման կառուցակարգերը հնարավոր է առերեսվեն քաղաքական սինգուլյարությանը (եզակիության), սակայն դա դեռևս հայկական կուսակցություններին մեծապես չի սպառնում՝ փոխկապվածության սկզբնական և ցածր մակարդակի պատճառով:

Հայկական կուսակցությունները, մասնակցելով միջխորհրդարանական համագործակցությանը իրենց ԱԴՀ գործընկերների հետ, գործում են ԱԴՀ անդամ պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի (ՄԽՎ-ԱԴՀ) կողմից ձևավորված իրավական և ինստիտուցիոնալ շրջանակում: Հիմնադրված 1992 թվականին՝ ԱԴՀ ՄԽՎ-ն կարևոր դեր է խաղում տարածաշրջանում օրենսդրության ներդաշնակեցման, ինչպես նաև քաղաքական և ընտրական գործունեության համար միասնական չափանիշների մշակման գործում: Վեհաժողովի հիմնական գործիքներից են մոդելային օրենքներն ու օրենսգրքերը, որոնք նախատեսված են ԱԴՀ երկրների ազգային խորհրդարանների համար՝ որպես ազգային օրենսդրական շրջանակների մշակման ուղեցույցներ:

ԱԴՀ ՄԽՎ շրջանակներում կիրառվող մոդելային օրենսդրական մեխանիզմը արդար է և համապատասխանում է միջազգային լավագույն օրենսդրական փորձին, քանի որ այն հիմնականում ապահովում է յուրաքանչյուր անդամ պետության ազգային ներկայացվածությունը ինչպես նախագծման գործընթացում, այնպես էլ դրանց

հաստատման վերաբերյալ որոշումների կայացման ընթացքում: Բացի այդ, ԱՊՀ ՄԽՎ փորձագիտական խորհուրդների միջոցով ներգրավված փորձագիտական համայնքի կողմից մոդելային օրենսդրական ակտերին ցուցաբերվող համապարփակ աջակցությունը ապահովում է մշակվող կարգավորող իրավական ակտերի գիտական հիմնավորվածությունը, օբյեկտիվությունը և գործնական կիրառելիությունը:¹⁰¹

Ընտրական գործընթացներին վերաբերող ԱՊՀ ՄԽՎ մոդելային օրենքները հատկապես կարևոր են քաղաքական կուսակցությունների ինստիտուցիոնալ ձևավորման համար: Մասնավորապես, մոդելային ընտրական օրենսգիրքը առաջարկում է քաղաքական կուսակցությունների գրանցման, նրանց ընտրություններին մասնակցության, ինչպես նաև ներկայացուցչության և ձայների հաշվարկի մեխանիզմների ստանդարտացված ընթացակարգեր: Այս նորմերը ստեղծում են կուսակցությունների գործունեության իրավական հիմք՝ որպես քաղաքացիների քաղաքական կամքի ձևավորման միջնորդներ, միաժամանակ ապահովելով ընտրական գործընթացների թափանցիկությունն ու կանխատեսելիությունը: Նմանապես, «Ընտրությունների և հանրաքվեների միջազգային դիտարկման մասին» մոդելային օրենքը սահմանում է քաղաքական կուսակցությունների և դիտորդական մարմինների փոխգործակցության չափանիշներ՝ ամրապնդելով վստահությունը ընտրությունների օրինականության և լեգիտիմության նկատմամբ:

ԱՊՀ ՄԽՎ գործունեության շրջանակներում քաղաքական կուսակցությունները ձեռք են բերում փորձի փոխանակման և ընթացակարգային նորմերի ներդաշնակեցման հարթակ, ինչը կարևոր նախապայման է ԱՊՀ երկրներում կայուն կուսակցական համակարգի ձևավորման համար: Սոդելային օրենքներում ամրագրված ընթացակարգերի միավորումը հնարավորություն է տալիս կուսակցություններին գործել համեմատելի իրավական շրջանակներում՝ դրանով իսկ նպաստելով երկկողմ և բազմակողմ փոխգործակցություններին: Այդ-

¹⁰¹ St' u Pravo. Bezopasnost'. Chrekhvychaynye situatsii. 2025 № 1, էջ 27-36: Роль МПА СНГ в создании единого правового пространства на территории Содружества», Мушкет И.И., Громская Н.А.

պիսի փոխգործակցության օրինակ է Հայաստանի Հանրապետական կուսակցության և «Միացյալ Ռուսաստան» կուսակցության համագործակցությունը ԱՊՀ Խորհրդարանական վեհաժողովի, ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի, ՀԱՊԿ Խորհրդարանական վեհաժողովի և Ուղղափառության Խորհրդարանական վեհաժողովի շրջանակներում:

Այսպիսով, ԱՊՀ ՄԽՎ-ն անուղղակի, սակայն Էական ազդեցություն ունի քաղաքական կուսակցությունների զարգացման վրա՝ սահմանելով չափորոշիչներ և առաջարկություններ, որոնք նպաստում են թափանցիկ, ինստիտուցիոնալ առումով կայուն կուսակցական համակարգերի ձևավորմանը և բարձրացնում կուսակցությունների դերը ժողովրդի քաղաքական կամքի արտահայտման գործընթացում: Վեհաժողովի մոդելային օրենքները ձևավորում են քաղաքական կուսակցությունների օրինական գործունեության, ընտրական գործընթացներին նրանց մասնակցության և միջազգային համագործակցության ընդհանուր շրջանակ՝ այդպիսով ամրապնդելով տարածաշրջանում ժողովրդավարական գործընթացները:

Չնայած ԱՊՀ ՄԽՎ-ն ուղղակիորեն չի կարգավորում քաղաքական կուսակցությունների գործունեությունը ԱՊՀ մակարդակով (քանի որ դա ազգային իրավական համակարգերի իրավասությունն է), դրա մոդելային օրենքներն ու օրենսգրքերը ստեղծում են իրավական հիմք ընտրական համակարգերի մոտեցումների, պետականաշինության ընթացակարգային նորմերի և քաղաքական գործընթացների մոնիտորինգի մեխանիզմների միավորման համար: Մոդելային ընտրական օրենսգրքի և դրան կից ակտերի առկայությունը ազդում է կուսակցական ենթակառուցվածքների զարգացման, ինչպես նաև քաղաքական գործընթացներին կուսակցությունների մասնակցության պայմանների վրա՝ ընթացակարգերի և տերմինաբանության ստանդարտացման միջոցով:

Միևնույն ժամանակ, ճշմարտության համար պետք է նշել, որ գլոբալիզացիան նպաստել է տեղական և ազգային ինքնության նկատմամբ հակազդեցության ծագմանը: Ռուանդա Ռեբերտսոնի «գլոկալիզացիայի» հայեցակարգը ցույց է տալիս, որ գլոբալ գործընթացները ոչ միշտ են հանգեցնում համատարած միասնականացմանը, այլ կարող են ուժեղացնել տեղական առանձնահատկությունները:

Գլոկալիզացիայի հայեցակարգը մարտահրավեր է ներկայացնում գլոբալիզացիայի գործընթացների պարզեցված պատկերացումներին, որոնք դրանք դիտում են որպես տարածքային մակարդակների գծային ընդլայնում: Գլոբալիզացիան ցույց է տալիս, որ մայրցամաքային և համաշխարհային մակարդակների աճող նշանակությունը տեղի է ունենում տեղական և տարածաշրջանային մակարդակների աճող կարևորության հետ միասին: Հոմոգենության և կենտրոնացման միտումները հայտնվում են հետերոգենության և ապակենտրոնացման միտումների կողքին: Բայց գլոբալիզացիայի հայեցակարգը ենթադրում է նույնիսկ ավելի արմատական տեսանկյունային փոփոխություն. այն ցույց է տալիս գլոբալ և տեղական մակարդակների փոխկապակցվածությունը: Այս եզրույթի օգտագործողների մեծամասնությունը ենթադրում է երկմակարդակ համակարգ (գլոբալ և տեղական)¹⁰² նշելով այնպիսի երևույթներ, ինչպիսին է հիբրիդացումը, որպես աճող փոխկապակցվածության արդյունք: Տեղական տարածքները ձևավորվում են և տեղական ինքնություններն ստեղծվում են թե՛ գլոբալացված կապերի, թե՛ տեղական հանգամանքների ազդեցությամբ: Այսպիսով, գլոբալիզացիան չի ենթադրում ո՛չ աշխարհագրության վերջը, ո՛չ էլ հետերոգենության նվազումը¹⁰²:

Գլոկալիզացիայի արդյունքում նկատվել է ինքնության քաղաքականության, իսկ որոշ դեպքերում՝ նաև ազգայնամոլության վերակենդանացում: Ի հակադրություն գլոբալիզացիայի պատճառով մշակութային փոխանակման և գլոբալ մշակույթի առաջացման՝ որոշ դեպքերում կուսակցությունների և հանրային կարծիք ձևավորող այլ ուժերի մոտ նկատվում է ընդգծված պահպանողական քաղաքականության աճ, սակայն ոչ այնքան նրա համար, որ դա է իրենց քաղաքական գաղափարախոսական ուղվածությունը, այլ որովհետև այդպես կրանք ձեռք են բերում հանրության որոշ շերտերի ձայները ստանալու հնարավորությունը: Այս գործընթացը հատկապես նկատելի է պոպուլիստական շարժումների և կուսակցությունների վերելքի մեջ, որոնք օգտագործել են հակա-գլոբալիզացիական տրամադրությունները և մշակութային միասնականացման մտահոգությունները:

¹⁰² Առավել մանրամասն տե՛ս Roland Robertson, *Glocalization: Time-Space and Homogeneity-Heterogeneity*, In: Featherstone, M., Lash, S. and Robertson, R., Eds., *Global Modernities*, Sage Publications, London, էջեր 25-44:

Թվային Ժողովրդավարության մարտահրավերները

XX դարի վերջի և XXI դարի սկզբի տեխնոլոգական զարգացումները, ինչպես նաև ընթացող Զորրորդ արդյունաբերական հեղափոխությունը¹⁰³ հիմնովին փոխել և շարունակում են փոխել քաղաքական հաղորդակցության և մասնակցության ձևերը: Համացանցի և սոցիալական ցանցերի տարածումը ստեղծել է «ցանցային հասարակության»: Այս հայեցակարգի հեղինակներից Մանուել Կաստելը ուշագրավ դիտարկումներ ունի ցանցային հասարակության առանձնահատկությունների և դրանցով պայմանավորված սոցիալ-քաղաքական փոփոխությունների առնչությամբ: Ըստ նրա՝ մարդկային գործունեության և փորձառության բնագավառներում ծագող սոցիալական կառույցներ գնալով ավելի են կազմակերպվում ցանցերի շուրջ: Ցանցերը կազմում են մեր հասարակությունների նոր սոցիալական մորֆոլոգիան, իսկ ցանցային տրամաբանության տարածումը Էականորեն փոխում է արտադրության, փորձառության, իշխանության և մշակույթի գործընթացների գործառնությունն ու արդյունքները:

Այս ներքին շարժընթացը հասկանալու համար նախ պետք է հասկանանք, թե թվային հասարակության պայմաններում ինչ են իրենցին ներկայացնում ցանցերը: Կաստելը այս համատեքստում ցանցերը ներկայացնում է որպես բաց կառույցներ, որոնք կարող են անսահմանափակ ընդլայնվել՝ ինտեգրելով նոր հանգույցներ այնքան ժամանակ, քանի դեռ նրանք կարող են հաղորդակցվել ցանցի ներսում, այսինքն՝ քանի դեռ նրանք ունեն նույն հաղորդակցական ծածկագրերը (օրինակ՝ արժեքներ կամ կատարողական նպատակներ): Այս հիմքի վրա հիմնված սոցիալական կառույցը բարձր դինամիկ, բաց համակարգ է, որը հակված է նորարարության՝ առանց իր հավասարակշռությունը սպառնալիքի տակ դնելու: Ցանցերը համապատասխան գործիքներ են նորարարության, գլոբալիզացիայի և ապակենտրոնացվածության վրա հիմնված կապիտալիստական տնտե-

¹⁰³ Մանրամասն տե՛ս Klaus Schwab, The Fourth Industrial Revolution, World Economic Forum, Geneva, 2016, https://law.unimelb.edu.au/_data/assets/pdf_file/0005/3385454/Schwab-The_Fourth_Industrial_Revolution_Klaus_S.pdf:

սության համար, ճկունության և հարմարվողականության վրա հիմնված աշխատանքի, աշխատակիցների և ձեռնարկությունների համար, մշտական քանդման ու վերակառուցման մշակույթի համար, նոր արժեքների և հանրային տրամադրությունների ակնթարթային մշակման վրա կողմնորոշված քաղաքականության համար և այլն: Սակայն, ըստ նրա, ցանցային մորֆոլոգիան նաև քաղաքականության ներսում և հատկապես՝ իշխանական հարաբերությունների կտրուկ, երբեմն՝ դրամատիկ վերակազմակերպման աղբյուր է: Ցանցերը միացնող «անջատիչները» (օրինակ՝ ֆինանսական հոսքեր, որոնք վերահսկում են մեդիա կայսրություններին, որոնք ազդում են քաղաքական գործընթացների վրա) իշխանության արտոնյալ գործիքներն են: Այսպիսով, «անջատիչները» իշխանության յուրօրինակ կրողներն են: Զանի որ ցանցերը բազմակի են, ցանցերի միջև փոխգործող ծածկագրերն ու անջատիչները դառնում են հիմնարար աղբյուրներ հասարակությունների ձևավորման, ղեկավարման և հաճախ նաև՝ դետափոյալ սխալ ուղղորդման գործում: Սոցիալական էվոլյուցիայի և տեղեկատվական տեխնոլոգիաների համագումարումը ստեղծել է նոր նյութական հիմք ամբողջ սոցիալական կառույցում գործունեության իրականացման համար: Ցանցերում կառուցված այս նյութական հիմքը գերիշխանություն է սոցիալական գործընթացների նկատմամբ, ինչն էլ պայմանավորում է ամբողջ սոցիալական կառույցվածքը¹⁰⁴:

Այս պայմաններում նրա եզրակացությունը ոչ այդքան հուսադրող է. *«Պատմական էվոլյուցիայի և տեխնոլոգիական փոփոխության համատեղման արդյունքում մենք մտել ենք սոցիալական փոխազդեցության և սոցիալական կազմակերպության բացառապես մշակութային օրինաչափության մեջ: Հենց դրա համար է տեղեկատվությունը մեր սոցիալական կազմակերպության հիմնական բաղադրիչը, և հենց դրա համար են ցանցերի միջև հաղորդագրությունների ու պատկերների հոսքերը կազմում մեր սոցիալական կառույցի հիմնական թելը: Սա չի նշանակում, որ պատմությունն ավարտվել է մարդկության՝ ինքն իր հետ երջանիկ հաշտության մեջ: Իրականում,*

¹⁰⁴ Stéu Manuel Castells, The Rise of the Network Society - The InformationAge: Economy, Society, and Culture, 2009, էջ 500, հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://onlinelibrary.wiley.com/doi/book/10.1002/9781444319514>:

դա ամբողջությամբ հակառակն է. պատմությունը միայն սկսվում է, եթե պատմության տակ հասկանանք այն պահը, երբ բնության հետ հազարամյակների նախապատմական պայքարից հետո՝ նախ գոյատևելու, այնուհետև՝ այն հպարտելու միջոցով մեր տեսակը հասել է գիտելիքի և սոցիալական կազմակերպության այնպիսի մակարդակի, որը թույլ կտա մեզ ապրել սոցիալական աշխարհում գերիշխողի դիրքերից: Դա նոր գոյության սկիզբ է, և, իսկապես, նոր դարաշրջանի՝ Տեղեկատվական դարաշրջանի սկիզբը, որը բնութագրվում է մշակույթի ինքնավարությամբ ընդդեմ մեր գոյության կյուրթական հիմքերի: Բայց դա ոգևորության միանշանակ առիթ չէ: Որովհետև, վերջապես մեր մարդկային աշխարհում միայնակ, մենք ստիպված պետք է լինենք նայել մեզ պատմական իրականության հայելում: Եվ հնարավոր է, որ մեզ դուր չգա այդ տեսարանը»¹⁰⁵:

Հավանենք, թե չհավանենք, սակայն մենք պարտավոր ենք առերեսվել դրա հնարավոր քաղաքական ազդեցության, իսկ սույն աշխատանքի շրջանակներում նաև կուսակցական գործունեությունում հնարավոր զարգացումների վրա:

Ցանցային հասարակություններում թվային տեխնոլոգիաների օգտագործումը փոխակերպում է կուսակցությունների ներքին կազմակերպական կառույցները և ռազմավարությունները, կուսակցական անդամների և քաղաքացիների միջև հաղորդակցության ձևերը, և նույնիսկ կուսակցությունների (հատկապես ավանդական կուսակցական կառույցների) կարողությունը քաղաքացիների հետ ավելի մոտ և ուղղակի կապ հաստատելու գործում՝ ընդլայնելով և նորացնելով քաղաքական գործընթացներին ներգրավվածության մակարդակը: Հաճախ դա տեղի է ունենում ինքնստիներյան, առանց այդ նույն քաղաքացիների կուսակցականացման կամ որևէ ձևական ընթացակարգերով քաղաքական գործընթացներում ներառելուն:

Եթե փորձենք տարածել ցանցային հասարակություններում թվային գործիքների ազդեցության հիմնական ուղղությունները կուսակցությունների գործունեության վրա, ապա ընդհանրացնելով կստանանք հետևյալ պատկերը՝

¹⁰⁵ St u Manuel Castells, The Rise of the Network Society - The InformationAge: Economy, Society, and Culture, էջ 508-509:

1. **Կազմակերպական փոփոխություններ** – ցանցային միջավայրով զարգացող գլոբալիզացիայի դարաշրջանում կուսակցությունները օգտագործում են թվային գործիքները ներկուսակցական ժողովրդավարության բարելավման, թեկնածուների և ղեկավարների ընտրության, և քաղաքական որոշումների կայացման համար:

2. **Քաղաքական հաղորդակցության փոխակերպում** - սոցիալական ցանցերը և թվային հարթակները դարձել են քաղաքական հաղորդակցության հիմնական գործիքներ, ինչը թույլ է տալիս կուսակցություններին ավելի հեշտությամբ և անմիջականորեն հասնելի ընտրողներին:

3. **Մասնակցային քաղաքականության նոր ձևեր** - օնլայն քվեարկություն, թվային խորհրդակցություններ և քաղաքացիական ակտիվացման նոր մեխանիզմներ:

Հնարավորությունների լայն շրջանակը, որ բացվում են այս գործիքակազմով բավականին մեծ է:

Դրանց թվում կարելի է նշել՝

- ուղղակի հաղորդակցություն քաղաքացիների հետ,
- տեղեկատվության արագ տարածում,
- կազմակերպական ծախսերի նվազում,
- մասնակցային ժողովրդավարության նոր ձևեր,
- գլոբալ քաղաքական ցանցերի հետ կապի հեշտացում:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նաև հիշել մարտահրավերների և ռիսկերի մասին: Դրանք կարող ենք ամբողջացնել մի քանի կետում՝

1. **Տեղեկատվական անվտանգություն** – Սոցիոլոգիական և քաղաքական հետազոտությունները ցուցադրում են, որ կուսակցական աշխատակիցները, քաղաքականությամբ ակտիվ և ոչ այնքան ակտիվ զբաղվող քաղաքացիներն առավել մտահոգված են կիբեռանվտանգության սպառնալիքներով, որոնք կապված են ներկուսակցական կամ պետական ընտրությունների ժամանակ քվեարկությունների ընթացակարգերում թվային տեխնոլոգիաների օգտագործման հետ: Դրանք ներառում են այնպիսի անվտանգային հարցեր, ինչպիսիք են՝ անհատական տվյալների պաշտպանությունն ու ընտրաձայների գոյությունը:

2. **Կեղծ լուրերի տարածում** - Ipsos ինստիտուտի կողմից UNESCO-ի հանձնարարությամբ ընդհանուր ընտրություններ անցկացնող 16 երկրներում 2024 թվականին կատարված հարցման արդյունքները վկայում են կեղծ տեղեկատվության ազդեցության վերաբերյալ լայն մտահոգության մասին: Հետազոտության տվյալների համաձայն՝ հարցվածների 85%-ը մտահոգված է եղել քաղաքացիների վրա կեղծ լուրերի ազդեցությամբ, իսկ 87%-ը գնահատում է տեղեկատվական խեղաթյուրումը՝ որպես իրենց երկրների քաղաքական համակարգի համար սպառնալիք: Ուսումնասիրությունը փաստում է սոցիալական ցանցերի դերակատարության էական աճը լրատվական ծառայությունների ոլորտում: Հարցվածների 56%-ը նշել է այդ հարթակները՝ որպես հիմնական տեղեկատվական աղբյուր: Միևնույն ժամանակ, արձանագրվում է վստահության ցածր մակարդակ սոցիալական մեդիայի նկատմամբ. մասնակիցների 68%-ը գնահատել են այն որպես կեղծ տեղեկատվության ամենատարածված աղբյուր: Հարցման արդյունքները բացահայտում են տեղեկատվական խեղաթյուրման գործնական ազդեցության մասշտաբները: 94% մասնակիցներ հաստատում են, որ առնվազն մեկ անգամ ենթարկվել են կեղծ տեղեկատվության ազդեցությանը: 87% հարցվողներ ընտրական գործընթացների անկեղծության հարցում արտահայտում են առնվազն մտահոգություն, իսկ 90%-ը գնահատում է կեղծ տեղեկատվության հիմնախնդիրը՝ որպես լուրջ մարտահրավեր, որը պահանջում է համակարգված լուծումներ¹⁰⁶:

3. **Տեղեկատվական պղպջակներ և քաղաքական բևեռացում.**

Իրավագետ Սանսթեյնի ուսումնասիրություններն ի հայտ բերեցին խմբային բևեռացում երևույթը՝ որպես ժամանակակից հասարակությունների սոցիալ-քաղաքական ընդգծված մարտահրավեր: Այս երևույթը բնութագրում է այն իրադրությունը, երբ որևէ դիրքորոշում ունեցող մարդկանց խմբերը ոչ թե քննարկումների կամ բանավեճերի արդյունքում գալիս են տարբեր դիրքորոշումների համադրման, այլ շարժվում են իրենց սկզբնական դիրքերից դեպի ավելի ծայ-

¹⁰⁶ World Economic Forum. (2024). Influence of fake news. Հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://www.weforum.org/videos/influence-of-fake-news/>:

րահեղ դիրքեր՝ ձևավորելով միմյանց հետ չհատվող տեղեկատվական պոլարիզացիաներ, որոնք, հիմքում ունենալով ոչ այնքան հիմնավոր գաղափարական և էմպիրիկ փաստարկներ, դառնում են ինքնանպատակ՝ մոռանալով սկզբնական սոցիալ-քաղաքական կոնկրետ խնդրի լուծման թիրախը և դառնալով սեփական «ճշմարտություն» ամեն կերպ պաշտանելու գործիք: Սա վերաբերում է սոցիալական տարբեր խմբերից մինչև կուսակցություններ:

Էմպիրիկ տվյալների համադրման միջոցով Սանսթեյնը այս համակարգում բացահայտեց երկու հիմնական կառուցակարգ՝ *սոցիալական համեմատություն* (միևնույն դիրքորոշում ունեցող մարդկանց խմբում անհատները տեղաշարժվում են՝ պահպանելու համար ցանկալի հարաբերական դիրքն այդ նույն խմբում) և *սահմանափակ փաստարկների միջավայր* (միատիպ խմբերը ստեղծում են դիրքորոշման աջակցող անհամաչափ քանակությամբ փաստարկներ)¹⁰⁷:

Այս հետազոտությունը փաստագրեց բևեռացումը տարբեր բնագավառներում՝ դատական քննարկումներից մինչև ռիսկերի պատասխանատվությունն ընդունման որոշումներ և քաղաքական դիրքորոշումներ: Այս հետազոտության արդյունքները մարտահրավեր նետեցին խորհրդակցությունների միջոցով ժողովրդավարության իրականացմանն ու դրա զարգացմանը:

Խնդիրն այն է, որ տարբեր դիրքորոշում ունեցող խմբային քննարկումները ժամանակակից արագ փոփոխվող սոցիալ-քաղաքական միջավայրերում ոչ թե ուղղվում են կողմնակալությունների, սուբյեկտային դիրքորոշումների վերացման և ընդհանուր առմամբ՝ առավելագույն արդյունավետությունն ապահովող որոշումների ընդունման, այլ ուղղակիորեն ուժեղացնում են հակադրությունն ու դիրքորոշումների բևեռացումը: Սա նպաստում է քաղաքական քննարկումների ձևականացմանը, քաղաքական դիրքորոշումների ծայրահեղացմանը և քաղաքական կուսակցությունների միջև համագործակցության հնարավորությունների նվազեցմանը: Նման լինելով անտիկ

¹⁰⁷ Առավել մանրամասն տե՛ս Sunstein, C. R., The law of group polarization. University of Chicago Law School, John M. Olin Program in Law and Economics Working Paper, 1999, էջ 91, հասանելի հետևյալ հասցեում՝https://chicagounbound.uchicago.edu/cgi/viewcontent.cgi?article=1541&context=law_and_economics;The:

Ժամանակաշրջանի զարգացած սոփեստականության դրսևորումներին՝ տեղեկատվական պղպջակներում արտահայտվող քաղաքական բևեռացումները բացասաբար են ազդում ժողովրդավարական գործընթացներին՝ դարձնելով դրանք ձևական և առաջացնելով նիհիլիստական վերաբերմունք հենց այդ նույն գործընթացների նկատմամբ:

Քաղաքական միջավայրում սա արտահայտվում է քաղաքական բևեռացմամբ, ինչն արդի քաղաքական համակարգերի ամենավտանգավոր երևույթներից մեկն է դարձել:

Հետազոտողները համակարծիք են, որ քաղաքական բևեռացումը մտահոգիչ երևույթ է, որը պետք է գրավի հանրության կամ քաղաքական գործիչների առաջնահերթ ուշադրությունը, և համեմատական քաղաքագիտությունը արտացոլում է այս մտահոգությունները: Օրինակ, ժողովրդավարության բազմազանության ինստիտուտի 2022 թ. ժողովրդավարության զեկույցի՝ «ավտոկրատականացման» «փոփոխվող բնույթին» վերաբերող 60 էջերում «բևեռացում» բառը հանդիպում է 210 անգամ¹⁰⁸: Քաղաքական բևեռացման թեմայով հրապարակումների քանակը աճել է բազմապատիկ անգամ: 1975թ-ից քաղաքագիտական հանդեսների հոդվածների շարքում այս թեմային առնչվող հոդվածները հայտնվել են վերջին հինգ տարիների ընթացքում (2018 թվականից ի վեր) և քանակապես կազմում են ընդհանուրի կեսից ավելին (373-ը 704-ից)¹⁰⁹: Ընդհանուր առմամբ, գաղափարը դարձել է «քաղաքագիտության ակադեմիական ուսումնասիրության հիմքի կենտրոնական մաս»¹¹⁰: Թեև դրա բնույթը, էմպիրիկ միտումները, պատճառները և հետևանքները դեռևս քննարկման առարկա են¹¹¹:

Քաղաքական բևեռացման հիմնական խնդիրներից մեկն էլ այն

¹⁰⁸ Ståu Varieties of Democracy Institute, Democracy Report 2022: Autocratization Changing Nature? (Gothenburg: University of Gothenburg, 2022):

¹⁰⁹ Ståu Clarivate Web of Science (<https://www.webofscience.com>). Տերմինի փնտրում. Polarization (Article Title). Ոլորտ. Political Science. Փաստաթղթի տեսակ. Article. Ժամանակահատված. All Years (սկսած 1975 մինչ օրս). Փնտրման օր. 25 February 2023:

¹¹⁰ Ståu Elizabeth R. Nugent, The Psychology of Repression and Polarization, World Politics 72 (April 2020): 291–334, էջ 29:

¹¹¹ Ståu Schedler Andreas, Rethinking Political Polarization, Political Science Quarterly, 2023, Vol. 138, No. 3, 335-360, էջ 336:

Ե, որ հակառակորդ կողմերը միմյանց թշնամի են հռչակում այնքան եռանդով, որքան եռանդով միգուցե արտաքին թշնամիներին չվերաբերեին: Թշնամակցը արտահայտվում է հիմնականում նրանում, որ հակառակորդները, միմյանց թշնամի համարելով, հռչակում են միմյանց որպես ընդհանրապես ժողովրդավարության համար գոյաբանական սպառնալիք և այդպես ցանկանում են հասարակության լայն շերտերին տրամադրել միմյանց դեմ: Սա արդեն առանձին հանրությունում հանգեցնում է հասարակության բևեռացմանը, ինչը շատ ավելի մեծ խնդիր է:

Կարծիք կա, որ բևեռացման ավելի բարձր մակարդակը կարող է օգտակար լինել հասարակության համար՝ կանխատեսելով քաղաքական մասնակցության ավելի բարձր մակարդակ և ընտրական գործընթացների բարձր ընկալումներ¹¹²: Այնուամենայնիվ, քաղաքական բևեռացումը կարող է նաև վնասակար լինել ժողովրդավարության համար՝ մեծացնելով իշխանության կենտրոնացումը մեկ քաղաքական ուժի ձեռքում¹¹³: Ոլորտում ուսումնասիրությունները ընդգծել են նաև քաղաքական բևեռացման միջանձնային հետևանքները, ներառյալ քաղաքական հակառակորդների հետ շփվելու կամքի բացակայությունը¹¹⁴ և անմարդկայնացումը¹¹⁵: Այս ամենը տեղի է ունենում սոցիալական մեդիա աճող ազդեցության պայմաններում: Եվ *«հաշվի առնելով, որ մարդիկ պատրաստ չեն առօրյա շփումների մեջ մտնել իրենց քաղաքական հակառակորդների հետ, շատերը հակառակորդների մասին իրենց տպավորությունները կառուցում են լրատվամիջոցների միջոցով, ինչը նշանակում է, որ (սոցիալական) լրատվամիջոցները ավելի ու ավելի են ձևավորում այն, թե ինչպես ենք*

¹¹² Մանրամասն տե՛ս Wagner, M. (2021). Affective polarization in multiparty systems. *Electoral Studies*, 69, 1–13.
<https://doi.org/10.1016/j.electstud.2020.102199>:

¹¹³ Մանրամասն տե՛ս Lee, F. E. (2015). How party polarization affects governance. *Annual Review of Political Science*, 18(1), 261–282.
<https://doi.org/10.1146/annurev-polisci-072012-113747> :

¹¹⁴ Մանրամասն տե՛ս Frimer, J. A., Skitka, L. J., & Motyl, M. (2017). Liberals and conservatives are similarly motivated to avoid exposure to one another's opinions. *Journal of Experimental Social Psychology*, 72, 1–12.
<https://doi.org/10.1016/j.jesp.2017.04.003>:

¹¹⁵ Մանրամասն տե՛ս Mason, L. (2018). *Uncivil agreement: How politics became our identity*. University of Chicago Press:

մենք ընկալում քաղաքական միջավայրը»¹¹⁶:

4. **Թվային անհավասարություն.** Թեև մենք արդեն գտնվում են թվային արդյունաբերական հեղափոխության գագաթնակետին և արդեն մտել ենք չորրորդ արդյունաբերական հեղափոխություն (արհեստական բանականության և քվանտային համակարգիչների օգնությամբ)¹¹⁷ սոցիալական միջավայրում ոչ թե գործընթացները ընթանում են թվային հնարավորությունների հավասարեցման, այլ հակառակը՝ անհավասարության աճի ճանապարհով: Նրանք, ովքեր տիրապետում են թվային տեխնոլոգիաներին, արհեստական բանականությանն ու ոչ թե միայն օգտվում են դրանցից, այլ նաև գեներացնում են այն ալգորիթմները, որոնցով աշխատում են դրանք, դառնում են մարդկանց քանակի ու նրանց մտքի, ցանկությունների, երազանքների, ընդհուպ մինչև երջանկության պատկերացումների ձևավորման տեսանկյունից ազդեցության շատ ավելի մեծ լծակների, հետևաբար՝ իշխանության տեր ուժեր, քան կարելի էր պատկերացնել ամբողջ մարդկության պատմության ընթացքում:

Սոցիալական ցանցերի ալգորիթմները, որոնք ունակ են խորքային ուսուցման գործիքակազմով ձևավորել անձանց հոգեբանական պատկերն ու առանձնահատկությունները, նախասիրություններն ու ցանկությունները, հանրության լայն շերտերի ցածր թվային գրագիտությունը և հետևաբար՝ խոցելիությունը, ինչպես նաև սուր քաղաքական բևեռացումը վատթարացնում են իրավիճակը:

Այս ամենով հանդերձ՝ վերոգրյալի լույսի ներքո կարելի է ամբողջացնել այն գաղափարը, որ գլոբալիզացիայի և տեխնոլոգիական փոփոխությունների ազդեցությունը կուսակցական համակարգերի վրա երկակի բնույթ ունի: Մի կողմից, այն բացում է նոր հնարավորություններ քաղաքական մասնակցության և ժողովրդավարական գործընթացների համար: Մյուս կողմից, այն ստեղծում է նոր մարտահրավերներ և ռիսկեր, որոնք պահանջում են արդի ժողովրդավարական ինստիտուտների հարմարվողականություն և նորարարական մոտեցումներ:

¹¹⁶ St' u Kubin, E., & von Sikorski, C., The role of (social) media in political polarization: a systematic review, Annals of the International Communication Association, 2021, VOL. 45, NO. 3, 188–206, էջ 188, <https://doi.org/10.1080/23808985.2021.1976070>:

Եթե փորձենք առանձնացնել դրական և բացասական հետևանքներն, ապա կստացվի հետևյալը՝

Դրական հետևանքները՝

- Տնտեսական զարգացում և կենսամակարդակի բարելավում միջազգային համագործակցության միջոցով.
- Թվային տեխնոլոգիաների միջոցով ժողովրդավարական գործընթացների բարելավում.
- Զաղաքական մասնակցության և ներգրավվածության նոր հնարավորություններ.
- Գլոբալ գիտելիքների և լավագույն պրակտիկաների փոխանակում:

Բացասական հետևանքները և ռիսկերը՝

- Զաղաքական ինքնավարության կորուստ և գլոբալ շուկաներից կախվածություն.
- Օգուտների անհավասար բաշխում և ազգային ինքնության մասնակի կորուստ.
- Կեղծ տեղեկատվության տարածում և քաղաքական բևեռացում.
- Կիբեռանվտանգության սպառնալիքներ և գաղտնիության խախտումներ:

Վերջապես, գլոբալիզացիան և տեխնոլոգիական այս փոփոխությունները պահանջում են ժամանակակից ժողովրդավարական ինստիտուտների հարմարվողականություն և նորարարական մոտեցումներ: Կուսակցությունները, որպես ժողովրդավարական համակարգի հիմնական սյուներ, միգուցե՝ քաղաքական կամքի արտահայտման խողովակներ, պետք է ի վիճակի լինեն արձագանքել այս մարտահրավերներին՝ միաժամանակ պահպանելով իրենց հիմնական գործառույթները՝ քաղաքական կամքի ձևավորում, ներկայացուցչություն և ժողովրդավարական նույնականության պահպանում փոփոխվող աշխարհում:

4.2 Պոպուլիզմը և ավանդական կուսակցությունների ճգնաժամը

Կուսակցությունների զարգացման պատմական ընթացքը դիտելիս դժվար չէ նկատել, որ XVIII դարի կուսակցական ձևավորման ավանդույթները էականորեն տարբերվում են XIX դարի կուսակցությունների կայացման ավանդույթներից, այդ երկու դարերի կուսակցական ավանդույթներն էլ ամբողջությամբ տարբերվում են 20-րդ դարը նվաճած սոցիալիստական, կոմունիստական, նացիստական և լիբերալիստական կուսակցական գերակայություններից: Այսօր էր արդեն նկատելի է այս երեք դարերի կուսակցական զարգացումների ամբողջական տարբերությունները XXI դարի զարգացումներից, որոնք որոշ հետազոտողների կարծիքով կուսակցությունների՝ որպես քաղաքական համակարգի առանցքային ինստիտուտների վերջնական անկման և/կամ վերաիմաստավորման նախերգանքն են:

Արդեն նկատելի է, որ, XXI դարի երկրորդ տասնամյակից սկսած, դասական ժողովրդավարությունները հայտնվել են ճգնաժամային իրավիճակում, որը բնութագրվում է ավանդական կուսակցությունների նկատմամբ վստահության կտրուկ անկմամբ և պոպուլիստական շարժումների կտրուկ վերելքով: Այս գործընթացները ոչ միայն փոխում են քաղաքական լանդշաֆտը, այլև բարձրացնում են հարցեր ներկայացուցչական ժողովրդավարության էությանն ու ապագայի վերաբերյալ:

Ե՛վ ժողովրդավարական զարգացող ավանդույթներ ունեցող պետություններում, ինչպիսիք են Հայաստանն ու ԱՊՀ մյուս պետությունները, և՛ ժողովրդավարական զարգացած ավանդույթներ ու բազմակուսակցական համակարգ ունեցող պետություններում անգնե աչքով նկատելի է կուսակցական կառուցակարգերի երկարաժամկետ գաղափարական առանցքից անցումը դեպի քաղաքական իշխանության ձեռքբերման համար իրավիճակային գաղափարներին տուրք տվող և գաղափարական հստակ առանցք չպահող մարտավարություններին: Սա ճանապարհ է, որ վերաիմաստավորում է հենց կուսակցության՝ որպես քաղաքական համակարգի ներսում քաղա-

քական գաղափարախոսության կրողի նշանակությունը և շատ հաճախ այն դարձնում նոր միջոց՝ օպորտունիստական և/կամ պոպուլիստական մտքերի գեներացման քաղաքական խողովակ կամ իշխանության գալու համար միջոց՝ «մեքենա», այլ ոչ թե մի յուրօրինակ քաղաքական միասնական աշխարհայացք, միտք, կամք, նպատակ ու ճակատագիր ունեցող մարդկանց միություն, ինչպիսին որ ձևավորվում էր կուսակցականությունն իր սաղմնավորման ժամանակ:

Պոպուլիստական գործունեությունը սովորաբար տարբերվում է՝ ըստ կուսակցությունների և ոլորտների: Ժամանակակից պոպուլիզմը, ընդհանուր առմամբ, դիտվում է որպես սոցիալ-տնտեսական և մշակութային դժգոհությունների լայն շրջանակի արձագանք, այն կարող է նաև դիտվել որպես քաղաքական դժգոհության արտահայտություն, որը մեծապես կախված է ազգային քաղաքական ցիկլից և պոպուլիստական մոբիլիզացիայի համար ստեղծված կարճաժամկետ՝ երկրին բնորոշ հնարավորություններից:

Դժվար է տալ պոպուլիզմի սահմանումը, որը կբարարարեր խնդրով հետաքրքրված բոլորին: Հատկապես տարբեր են պոպուլիզմի ընկալումները հասարակության տարբեր շերտերի ու տարբեր մասնագետների մոտ: Ակադեմիական շրջանակներ, քաղաքական գործիչներ, լրագրողներ, իրավապաշտպաններ և այլն՝ նրանք բոլորն էլ կարող են ունենալ պոպուլիզմի ամբողջությամբ տարբերվող պատկերացումներ:

Ակադեմիական շրջանակներում առավելապես ընդունված է Կաս Մյուդեի բնորոշումը, համաձայն որի այն *գաղափարախոսություն է, «որը հասարակությունը բաժանում է ամբողջությամբ երկու՝ միատարր և անտագոնիստական խմբերի՝ «մաքուր ժողովուրդ» ընդդեմ «կոռումպացված էլիտայի», և որը պնդում է, որ քաղաքականությունը պետք է լինի ժողովրդի ընդհանուր կամքի (volonté générale) արտահայտություն»:*

Այս բնորոշման շրջանակներում պոպուլիզմը պնդումներ է առնում էլիտաների և ժողովրդի միջև (իրական և ցանկալի) հարաբերությունների մասին, բայց զուրկ է կոնկրետ քաղաքական օրակարգից: Միևնույն ժամանկ, ըստ այս սահմանման, պոպուլիզմը, ըստ էության, մի շարք գաղափարների ամբողջություն է, ինչն ընդգծում է,

որ կուսակցական կազմակերպության և ղեկավարության նման հատկությունները էական չեն երևույթի պոպուլիստական լինելը որոշելու համար: Նաև պոպուլիզմը ոչ միայն հակաէլիտար է, այլև հակապյուրայիստական, քանի որ պոպուլիստները արտահայտում են այն գաղափարը, որ գոյություն ունի «ընդհանուր կամք» և նվազեցնում են հասարակության մեջ «ժողովրդի» միջև սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային բաժանումների բազմազանությունը¹¹⁷:

Սրանով է, միգուցե, բացատրվում այն, որ շատ պոպուլիստական քաղաքական ուժեր իշխանության գալուց հետո հիմնականում դառնում են անհանդուրժող, նույնիսկ՝ ավտորիտար՝ մոռանալով ժողովրդավարության հիմնաքարային պահանջները: Պատճառն այն է, որ նրանք ինչ-որ փուլում իրապես «հավատում են», որ միայն իրենք են ժողովրդի *ընդհանուր կամքի* արտահայտողը, և հետևաբար, ովքեր իրենց դիրքորոշմանը կամ կամքին դեմ են, դեմ են դուրս գալիս ժողովրդի *ընդհանուր կամքին*: Այստեղ միանգամից առաջանում են բևեռացման ալգորիթմները, և նման քաղաքական գծի հավատարիմ կուսակցությունները, իշխանության գալուց հետո անգամ, չեն դադարում «ընդդիմություն» լինել, սակայն այս անգամ՝ արդեն իշխանական լծակներով և հնարավորություններով: Սա ավելի է իրական դարձնում նրանց ավտորիտ քաղաքական ուժի վերածվելու և «հանուն ժողովրդավարության» հակաժողովրդավարական քաղաքական ռեժիմ սահմանելու հնարավորությունները:

Նման միտումներ ավելի ընդգծված նկատելի է, երբ իշխանափոխությունը տեղի է ունենում հեղափոխական շարժումների արդյունքում, և իշխանության են գալիս պոպուլիստական քաղաքական ուժեր: Այս հատկությունը ընդգծված է հատկապես երիտասարդ ժողովրդավարական հանրապետություններում, ինչպիսիք են հետխորհրդային պետությունները: Այն վառ արտահայտվեց նաև հայկական իրականությունում 2018թ-ի իշխանափոխությունից և Քաղաքացիական պայմանագիր կուսակցության իշխանության գալուց հետո:

¹¹⁷ Stijn van Kessel, Populism and Parties, Carter, Neil et al, The Routledge Handbook of Political Parties. Routledge, New York, 2023, 269-277, էջ 270:

Ամեն դեպքում, պարզ է, որ պոպուլիստական կուսակցությունները հանդես են գալիս տարբեր գաղափարախոսական կերպարանքներով, և որ «Ժողովուրդ» և «Էլիտա» վերացական հասկացություններին նրանց տված իմաստը մեծապես պայմանավորված է նաև նրանց, այսպես կոչված, ամբոխային գաղափարախոսությամբ: Օրինակ՝ պոպուլիստական արմատական աջ կուսակցությունները սահմանում են «Ժողովրդին» սոցիալ-մշակութային և/կամ էթնիկ առումով, չնայած նրանք հաճախ ավելի հստակ են այն հարցերում, թե ում են բացառում (սովորաբար՝ ներգաղթյալներին կամ էթնիկ փոքրամասնություններին): Նրանց դեմ հանդես եկող Էլիտաները սովորաբար կապ չունենող լիբերալներ են, որոնք քիչ բան են անում ազգի ենթադրյալ մշակութային քայքայումը կանխելու համար: Սոցիալ-տնտեսական առումով ձախակողմյան պոպուլիստները սովորաբար դիմում են անապահով և ճնշված «Ժողովրդին» և դեմ են հարուստ, կորպորատիվ «Էլիտաներին» ու հաստատված քաղաքական գործիչներին, որոնք ներկայացվում են որպես նեոլիբերալիզմի սպասարկուներ: Նրանց պիտակավորում են տարբեր բառերով՝ օլիգարխ, նախկին, կուլակ և այլն, ինչն ավելի է հեշտացնում «սևերի» և «սպիտակների» բաժանման քաղաքականությունը հասարակության լայն զանգվածներին համար: Այս ամենը վառ արտահայտվեց նաև հայկական միջավայրում: «Սևերի» և «սպիտակների» պայքարը անգամ բարձրացվեց քաղաքական լոզունգների մակարդակ և ներդրվեց Երևան քաղաքի ավագանու ընտրությունների պայքարում: Օրինակ՝ «Իմ քայլ» կուսակցությունների դաշինքը, որի առաջնորդի հայտարարությամբ սկիզբ դրվեց «սևերի և սպիտակների» պայքարին, դրա ամենից ակնհայտ արտահայտությունն էր: Կարծես՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում նման բևեռացված քաղաքական խոսույթ չպետք է գերիշխեր, սակայն արդի քաղաքական կերպափոխումների համատեքստում և պոպուլիստական կուսակցությունների ընդգծված կեցվածքի պատճառով այն արտահայտվում է նաև այդ տեսակ ընտրապայքարումներում:

Պոպուլիստական կուսակցությունների գաղափարախոսական բազմազանությունը նաև նշանակում է, որ մենք չենք կարող իսկա-

պես խոսել պոպուլիստական «կուսակցական ընտանիքի» մասին: Ավելին, հաշվի առնելով, որ տարբեր տեսակի պոպուլիստներ անդրադառնում են տարբեր խնդիրների և համատեքստին բնորոշ դժգոհությունների, պոպուլիզմի ի հայտ գալը բացատրող ցանկացած տեսությունն պետք է լինի բավականաչափ «աբստրակտ»՝ պոպուլիստական շարժումների լայն բազմազանությունը արտացոլելու համար¹¹⁸:

Վերջին տասնամյակում պոպուլիստական շարժումները դարձել են նույնիսկ զարգացած ժողովրդավարական ավանդույթներ ունեցող արևմտյան քաղաքական համակարգերի անբաժանելի մասը: Շատ եվրոպական երկրներում պոպուլիստական կուսակցությունները տոնում են իրենց հաղթանակը խորհրդարանական ընտրություններում. օրինակ՝ աջակողմյան «Ազատության համար կուսակցություն» (PVV) պոպուլիստական կուսակցության հաղթանակը Նիդեռլանդներում 2023թ-ին, Ջորջիա Մելոնիի աջակողմյան «Իտալիայի եղբայրներ» (FDI) կուսակցության հաղթանակը Իտալիայում 2022թ-ին, Ֆրանսիայում Մարին Լե Պենի «Ազգային հավաք» կուսակցության շարունակական զորեղացումը և այլն¹¹⁹:

Եվրոպական պոպուլիզմի ուսումնասիրությունների կենտրոնի (ECPS) զեկույց է հրապարակել, որով ուսումնասիրվել են պոպուլիստական կուսակցությունների ընտրական ցուցանիշները և ազդեցությունը 2024 թվականի Եվրոպական ընտրություններում: ECPS զեկույցը ցույց տվեց պոպուլիզմի բազմազանությունը և դրա դրսևորումների բազմազանությունը քաղաքական սպեկտրում: Ներկայիս միտումը պոպուլիստական կուսակցությունների առաջնայնության և սովորական պրակտիկա դառնալու աճն է՝ մի կողմից պոպուլիստների կողմից արդիականացման և չափավորության, իսկ մյուս կողմից՝ հիմնական կուսակցությունների կողմից պոպուլիստական գաղա-

¹¹⁸ Stijn van Kessel, Populism and Parties, Carter, Neil et al, The Routledge Handbook of Political Parties. Routledge, New York, 2023, 269-277, էջ 273:

¹¹⁹ Մանրամասն տե՛ս David Luhnow, Bertrand Benoit and Noemie Bisserbe, Populist Right-Wing Parties Lead Polls in Europe's Biggest Economies, The Wall Street Journal, հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://www.wsj.com/world/europe/right-wing-europe-dd4f1156?mod=Searchresults&pos=1&page=1>:

փարների և քաղաքականության հարմարեցման արդյունքում: Չեկույցում նշվում է, որ պոպուլիստական քաղաքականության արդիականացումը, մասնավորապես, վերաբերում է այդ կուսակցությունների դիրքորոշումների չափավորությանը և մշուշային մոտեցումներին եվրոպական ինտեգրման հարցերում, ինչը նպատակ է հետապնդում մեծացնել ԵՄ-ի կողմնակից ընտրողների համար դրանց գրավչությունը և խթանել հիմնական կամ ավանդական կուսակցությունների հետ համագործակցությունը:

2024 թվականի Եվրոպական ընտրությունների արդյունքները եապես հաստատել են Եվրոպայում պոպուլիստական մոտեցումների համախմբումը: 2024 թվականին այս կուսակցությունները նվաճեցին ԵՄ խորհրդարանում 720 տեղերից 263-ը՝ մոտավորապես 36%: Վեց երկրներում ընտրություններում առաջին տեղը գրավեցին պոպուլիստները, չորս երկրներում՝ արմատական աջ պոպուլիստները, մինչդեռ ևս երկու երկրներում առաջատար դիրք գրավեցին կենտրոնամետ պոպուլիստները: Նման արդյունքներն արտացոլում են վերջին համապետական ընտրություններում պոպուլիզմի աջակցության աճը, ինչպես նաև Եվրոպայում պոպուլիստական կուսակցությունների թվի և աշխարհագրական տարածման աճը: 2024 թվականի հունիսին ԵՄ 26 անդամ պետությունների ոչ պակաս, քան 60 պոպուլիստական կուսակցություններ ներկայացվածություն ստացան Եվրախորհրդարանում: Համեմատության համար նշենք, որ 2019 թվականի ընտրություններում ընդհանուր առմամբ 40 պոպուլիստական կուսակցություններ տեղեր էին ստացել ԵՄ 22 երկրներում¹²⁰:

Նույն միտումը նկատելի է նաև Ատլանտյան օվկիանոսից այն կողմ: ԱՄՆ-ում հաղթանակ տարավ Դոնալդ Թրամփի «Make America Great Again» շարժումը, որը դարձել է Հանրապետական կուսակցության ներսում գերիշխող ուժ: Արգենտինայում կրկին պոպուլիս-

¹²⁰ St'u Ivaldi, Gilles & Zankina, Emilia (Eds). (2024). 2024 EP Elections under the Shadow of Rising Populism. European Center for Populism Studies (ECPS). October 29, 2024. Brussels, հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://doi.org/10.55271/rp0059> , <https://www.populismstudies.org/wp-content/uploads/2024/10/DOWNLOAD-REPORT.pdf> :

տական քաղաքական գծի ներկայացուցիչ խավիեր Միլեյը հաղթանակ տարավ 2023 թ. դեկտեմբերին, Էլ Սալվադորում Նայիբ Բուկելեն վերընտրվեց 80%-ից ավելի ձայներով:

Այս բոլոր երկրների փորձն ուսումնասիրելու դեպքում, կարելի է նկատել որոշ նմանություններ և փորձել դրանց հիման վրա վերհանել հարաբերական ընդհանուր օրինաչափություններ:

Այսպես, XIX դարի երկրորդ տասնամյակից արդեն շատ նկատելի դարձած պոպուլիստական կուսակցությունների աճին զուգահեռ նկատելի է ներկայացուցչական ժողովրդավարության ճգնաժամ և անմիջական ժողովրդավարության պահանջարկի աճ: Խորհրդարանների դերը նկատելիորեն անկում է ապրում (հաճախ նաև խորհրդարանականների վարքագծի պատճառով), ինչը բարձրացնում է այդ նույն խորհրդարաններում ներգրավված կուսակցությունների ղեկավարների դերը: Իսկ եթե վերջիններս նաև պոպուլիստական քաղաքական մշակույթի կրող են լինում, ապա այդ դրան զուգահեռ աճում է նրանց նկատմամբ լայն զանգվածների համակրանքը: Վերջիններս Էլ դրա հիման վրա իրենք իրենց հռչակում են «անմիջական ժողովրդավարության» լավագույն խոսափողները՝ «ընդհանուրի կամքի» անխիջական արտահայտողները:

Բնականաբար այս ամենն ուղղակիորեն հարվածում է նաև կուսակցություններին և դրանց ճգնաժամը դարձնում ամենից առանցքային խնդիրներից մեկը:

Վերլուծաբանները համաձայն են, որ քաղաքական կուսակցությունները ճգնաժամի առջև են կանգնած, հատկապես՝ ժողովրդավարական ներկայացուցչություն ստեղծելու իրենց անկարողության առումով: Որոշ հիմնարար աշխատանքներ տեսականորեն վերլուծել են ժամանակակից իրադրությունների համատեքստում այս ներկայացուցչության ճգնաժամը¹²¹: Այնուամենայնիվ, կուսակցական ճգնաժամը չի հանգեցրել կուսակցությունների գործառույթի և ժողովրդավարության հետ դրանց կապի վերաբերյալ նոր տեսական հայեցակարգերի, ինչն Էլ հանգեցրել է քաղաքական կուսակցություն-

¹²¹ Մակրամասն տե՛ս Manin B (1997) The Principles of Representative Government. New York: Cambridge University Press:

ների նոր բնորոշումների առաջ քաշելուն, որոնք հիմնվում են կուսակցությունների ժողովրդավարական ներկայացուցչություն ստեղծելու կարողության վրա (հորիզոնական համակարգման և շահերի ու պահանջների ուղղահայաց ձևավորումն ունակությունը չափելու միջոցով)¹²²:

Ավանդական կուսակցությունների ճգնաժամերի հարակից հետևանքներն այն են, որ դրանք ու դրանց ղեկավարությունը կորցնում են լեգիտիմությունը, մեծ քանակությամբ նոր կուսակցություններ են ի հայտ գալիս, ինչը, բնականաբար, նվազեցնում է ընդհանրապես կուսակցությունների քաղաքական արժեքը: Ինստիտուցիոնալ տեսանկյունից խորհրդարանական ինստիտուտների արդյունավետությունն է նվազ, իսկ գործադիր մարմինների ինստիտուցիոնալ դինամիկան դառնում է շատ ավելի անկայուն:

Ընդհանուր առմամբ կարող ենք նաև տեսնել շարժընթացի ցկային փուլերը: Պայմանականորեն կարող ենք այդ փուլերը դասակարգել հետևյալ կերպ՝

ՓՈՒԼ 1. Ճգնաժամի փուլ. Տնտեսական, սոցիալական, անվտանգության, իրավական և քաղաքական ճգնաժամերը նվազեցնում են գործող ինստիտուտների նկատմամբ վստահությունը, որոնք սոցիալական բեռի մեծ մասն իր վրա կրող սերունդը համարում է ավանդական:

Ճգնաժամի փուլում դրսևորվում են տարաբնույթ ենթաճգնաժամեր սոցիալական կյանքի տարբեր բնագավառներում: Սառցաբեկորի վերևում ընդգծված երևում են, օրինակ՝ լեգիտիմության ճգնաժամ (երբ ավանդական ինստիտուտները կորցնում են իրենց նախնական օրինականությունը ու վստահությունը), արդյունավետության ճգնաժամ (երբ ավանդական լուծումները չեն կարողանում տրամադրել արդյունավետ պատասխաններ բարդ խնդիրներին), գործառույթի ճգնաժամ (երբ ժողովրդավարական գործընթացները դառնում են դանդաղ և անիմաստ):

¹²² Տե՛ս Juan Pablo Luna, Rafael Piñeiro Rodríguez, Fernando Rosenblatt, Gabriel Vommaro, Political parties, diminished subtypes, and democracy, March 2021, Party Politics 27(2): էջեր 1-14, էջ 10:

ՓՈՒԼ 2. Պոպուլիստական արձագանք. Կուտակվող անվտանգությունն ի վերջո գեներացնում է արձագանք, իսկ այդ արձագանքը հիմնականում հանգեցնում է խնդիրների լուծման ավելի հեշտ, պարզ, լայն զանգվածների համար հասկանալի, նույնիսկ՝ հաճելի խոսույթով արտահայտվող «պոպուլիստական ալիքի», ինչից չեն կարող չօգտվել պոպուլիստական կուսակցությունները: Այս փուլում յուրաքանչյուր սոցիալական խնդրին պոպուլիստները գտնում են պարզ ու հեշտ պատասխան՝ մեղադրելով կոնկրետ անձին կամ անձանց խմբին: Այսկերպ մարդկանց մոտ առաջանում է պատկերացում, որ կոնկրետ անձին կամ անձանց խմբին հեռացնելով որոշումներ կայացնելու բնագավառից, իսկ առանձին դեպքերում՝ նաև պատժելով, ամբողջ քաղաքական համակարգը, նույնիսկ իրենց անձնական կյանքը արմատապես փոխվելու է, անձնական մակարդակում բավարարվածությունը մեծանալու է, իսկ կոլեկտիվ կյանքն անցնելու է ավելի արդար ու ավելի արդյունավետ կառավարման:

Հետաքրքիր է նաև այն, որ հենց այս փուլում է արտահայտվում այն առանձնահատկությունը, որ կուսակցությունները «որսում են» իրենց ապագա ընտրողներին ոչ թե կուսակցական գաղափարախոսության տարածման եղանակով, այլ հակառակը: Իրենք փորձում են «որսալ» այն գաղափարը, միտքը, պահանջմունքը, որ հետաքրքրում է ապագա ընտրողին կամ կարող է նրան շահագրգռել և ըստ այդ մտքի, ըստ այդ դրդապատճառի իրենք՝ հենց կուսակցությունն են իրավիճակային որոշումների, խոսույթի միջոցով փոփոխվում, հարմարվում իրենցից քանակական արժեք ներկայացնող ընտրողների խմբի քաղաքական կամ այլ պահանջմունքներին, միայն թե արժանանան նրաց ընտրաձայնին: Սա հանգեցնում է նրան, որ ոչ թե քաղաքական կուսակցություններն են դառնում քաղաքական գաղափար գեներացնող, դրանով հանրությանն ուղղորդով, առաջնորդող ուժ, այլ կերպափոխվում են մի աղապտիվ, գերձկուն, շատ դեպքերում ամորֆ միավորի, որ պատրաստ է ճկվել, հարմարվել և կցվել ցանկացած մտքին, գաղափարին, միայն թե կարողանա այդ մտքի կրող մարդկանց խմբին բերել ընտրախցիկ և ապահովել իր օգտին նրա ընտրությունը:

Այսկերպ պոպուլիստական կուսակցությունների գաղափարական հարմարվողականությունը դառնում է գերճկուն և գերիրավիճակային՝ հանուն ցանկացած խումբ ընտրողների, որոնք քանակական, երբեմն էլ՝ որակական տեսանկյունից արժեք են ներկայացնում: Սա օպորտունիստական քաղաքական վարք է, որ բնորոշ է գրեթե բոլոր պոպուլիստական կուսակցություններին:

ՓՈՒԼ 3. Կառավարչական փորձարկում - Պոպուլիստական կուսակցությունները հասնում են իշխանության, բայց ապացուցում են անբավարար արդյունավետություն: Միևնույն ժամանակ, իշխանությունում մնալու համար կարիք են զգում ռեսուրսի: Եվ քանի որ այդ ռեսուրսը չեն կարող գեներացնել արդյունավետ աշխատանքի և ստացված օգտակար արդյունքի միջոցով (տարբեր պատճառներով՝ կոմպետենտ մարդկային ռեսուրսի, արագ փոփոխվող սոցիալ-քաղաքական և այլ որակական միջավայրային փոփոխությունների պատճառով), ստիպված վերադառնում են քաղաքական հակադրության տրամաբանությանը՝ «վերակենդանացնելով» նախկին, արդեն տապալված քաղաքական հակառակորդներին՝ այդկերպ օգտվելով «գոհի» և հավերժ «ընդդիմություն» մնալու քաղաքական մարտավարությունից:

Այստեղ կարևոր զգուշացում է անում Ի. Բերենդը, ով ուսումնասիրել է վերջին հարյուրամյակում պոպուլիստ դեմագոգների բերած քաղաքական հետևանքները. *«Դուռը դեռևս լայն բաց է պոպուլիստական դեմագոգների համար՝ զանգվածներին և պատմությունը բռնաբարելու համար: Եվրոպայի համար չափազանց կարևոր է իմանալ դեմագոգների խոստումների և նրանց համոզիչ լեզվի հետևում թաքնված իրականությունը՝ նրանց ճանապարհը դեպի քսանմեկերորդ դարի քաղաքականություն փակելու համար»*¹²³:

ՓՈՒԼ 4. Խորացող վստահության ճգնաժամ.

Անարդյունավետ կառավարումն ու քաղաքական ճախողումների քանակը, որն արդեն զգալի է դառնում հանրության լայն շերտերի

¹²³ St'u Berend, I. T. (2020). A Century of Populist Demagogues: Eighteen European Portraits, 1918–2018. Central European University Press, էջ 36:

անձնական կյանքում, ավելի է խորացնում վստահության ճգնաժամը նույնիսկ պոպուլիստական գաղափարներով ժամանակին տարված հանրային զանգվածների մոտ: Սա ավելի է խորացնում տնտեսական, սոցիալական, անվտանգության, իրավական և քաղաքական ճգնաժամերը:

Այս բնագավառում ԵԱՀԿ-ի կատարած համալիր հետազոտությունները վեր են հանել ճգնաժամի ահագնացող միտումներ կառավարությունների աշխատանքի գրեթե բոլոր բնագավառներում, ինչին նպաստում են տեղեկատվական հոսքերի զարգացումներ ժամանակակից միտումները, տեղեկատվական միջավայրը զգալիորեն ազդում է հանրային ընկալումների և պետական հաստատությունների նկատմամբ վստահության վրա¹²⁴:

ՓՈՒԼ 5. Վերադարձ. Ցիկլի կրկնություն նոր ճգնաժամերի ժամանակ:

Պոպուլիզմի և ավանդական կուսակցությունների ճգնաժամը ներկայացնում է ժամանակակից ժողովրդավարության հիմնական մարտահրավերներից մեկը: Այս ճգնաժամը միաժամանակ և՛ ախտանիշ է, և՛ պատճառ՝ ստեղծելով կրկնվող ցիկլ, որտեղ վստահության անկումը հանգեցնում է պոպուլիստական կուսակցությունների ազդեցության աճին, որոնք, ի վերջո, ավելի են խորացնում վստահության ճգնաժամը:

Կարելի է նկատել, որ այս ամենի արդյունքում՝

- ընտրողները դիմում են պոպուլիստական, օպորտունիստական կուսակցություններին և՛ ականջահաջող գաղափարների, և՛ գործող կառավարությունների ձախողումների պատճառով: Թե դրանցից որն է ավելի շատ գերակայում, կախված է կոնկրետ ժամանակից, միջավայրից, հանրույթի առանձնահատկություններից և այլն.
- ընդգծվում են քաղաքական բաժանումների խորացումը, այդ

¹²⁴ Տե՛ս OECD (2024), OECD Survey on Drivers of Trust in Public Institutions – 2024 Results: Building Trust in a Complex Policy Environment, OECD Publishing, Paris, <https://doi.org/10.1787/9a20554b-en>։

թվում՝ մշակույթի և նույնիսկ՝ ինքնության հարցերի շուրջ: Զաղաքական բևեռացումների աստիճանն այնքան է մեծանում, որ շատ դեպքերում միմյանց նկատմամբ ատելությունն ու անհանդուրժողականությունը տարածվում է նաև ինքնության հարցերի շուրջ բանավեճը անգամ շատ մեծ ու խորիք ազդային ինքնություն ունեցող հանրությաների մոտ:

- բևեռացման չափազանց հակադիր մակարդակները վտանգում են ժողովրդավարական կայունությունը: Այս բևեռացումն ուղղակիորեն ազդում է նաև ժողովրդավարական ինստիտուտների աշխատանքին, որոնք շատ դեպքերում «զոհաբերվում են»՝ հանուն ամեն գնով հակադիր բևեռին իշխանություն չթողնելու կամ ցանկացած տեսակի որոշումների կայացմանը մասնակից չդարձնելու նպատակին:
- ավանդական կուսակցությունները դժվարանում են նոր իրականությանը հարմարվելու գործում, ինչն էլ ավելացնում է նրանց ձախողումները թե՛ որպես իշխանություն, թե՛ որպես ընդդիմություն: Սա ազդում է նաև նրանց կուսակցական հեղինակության և ընդհանրապես՝ գոյության նպատակահարմարության վրա,
- և ցիկլը կրկնվում է:

Այս իրավիճակը պահանջում է համալիր մոտեցում, որը ներառում է ինչպես ինստիտուցիոնալ բարեփոխումներ, այնպես էլ քաղաքացիական կրթության և քաղաքական մշակույթի նորացում, իսկ առանձին հասարակություններում՝ նաև գաղափարախոսական համապարփակ աշխատանք՝ կենցաղային մակարդակում անհատական ու կոլեկտիվ կյանքի իմաստից մինչև պետական ու քաղաքականության նպատակ, միգուցե՝ առաքելություն:

Կուսակցական համակարգի ապագան կախված է նրանից, թե արդյոք ավանդական կուսակցությունները կկարողանան վերակազմավորվել և մշակել նոր, ավելի արդյունավետ ձևեր քաղաքացիների հետ հաղորդակցվելու համար, նոր՝ շատ ավելի արագ կերպափոխվող աշխարհում, կկարողանան արդյոք շրջակա միջավայրի արագ և կտրուկ փոփոխությունների պայմաններում զարգացնել իրենց ար-

ձագանքների ճկունությունը և սոցիալական էներգիան կոլեկտիվ քաղաքական կամքի ձևավորելու կարողությունը, թե՛ իրենց տեղը շարունակելու են զիջել իրավիճակային, անձերից մեծ կախում ունեցող և պոպուլիստական կուսակցություններին, կամ իրենք դառնան այդպիսին:

4.3 Կուսակցական համակարգի ապագան և նորարարական ձևաչափերը

Գլոբալիզացիայի, դրա դեմ պայքարի, թվային ժողովրդավարության, ընդհանրապես՝ տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման, քաղաքական համակարգերում պոպուլիստական ալիքների, բևեռացումների և ավանդական կուսակցությունների ճգնաժամի պայմաններում ի հայտ են գալիս կուսակցական գործունեություն իրականացնելու նորարարական մոտեցումներ, որոնք փորձում են նորովի իմաստավորել քաղաքականությունը, վերաբժեքավորել քաղաքական համակարգերում կուսակցությունների դերը, փորձում են նոր հնարավորություններ ընձեռել ժողովրդավարական ներկայացուցչության համար և ամրապնդել քաղաքացիների մասնակցությունը քաղաքական գործընթացներին: Այս փոփոխությունները ոչ միայն արձագանքում են արդի մարտահրավերներին, այլև ուրվագծում են կուսակցական քաղաքականության ապագայի հնարավոր ուղղությունները:

Ակնհայտ է, որ ավանդական կուսակցություններն՝ իրենց ներքին կազմակերպչական, որոշումների կայացման ավանդական կառուցակարգերով և գաղափարախոսական ավելի կայուն համակարգով, չեն կարողանում արդյունավետորեն մրցակցել ժամանակակից մարտահրավերներին ավելի արդյունավետ հարմարվող, հանրության իրավիճակային պահանջմունքներին զգալի ճգնաժամային արձագանքող պոպուլիստական քաղաքական ուժերի հետ: Ուստի իրենք էլ են փորձում լուծումներ գտնել նոր իրականությունում՝ փորձելով պահպանել այն գաղափարն ու միտքը, որի համար ի սկզբանե ձևավերվել էին:

Այս բոլոր գործընթացների արդյունում կարող ենք ասել, որ նկատելի է նոր՝ հիբրիդային կուսակցական մոդելների զարգացումը, որոնք մի կողմից փորձում են պահպանել ավանդական կուսակցություններին հատուկ՝ առնվազն գաղափարական ուղեգիծը՝ ատտրակտորը¹²⁵, մյուս կողմից սոցիալ-տեխնոլոգիական շարժընթացին զուգահեռ փորձում են օգտվել առկա տեխնոլոգիական և հասարակության կերպավորումից բխող հնարավորություններից:

Հիբրիդային կուսակցական մոդելների զարգացումը

Հիբրիդային կուսակցական մոդելներից կարելի է նշել թվային կուսակցությունների գաղափարը:

Ի տարբերություն ավանդական կուսակցությունների, որոնք ապավինում են ուղղահայաց հաղորդակցությանը, որտեղ տեղեկատվության մեծ մասը հոսում է կուսակցության գլխավոր գրասենյակից, թվային կուսակցությունը ընկալվում է որպես ապահիերարխիկ, քանի որ այն առաջնային պլան է մղում մասնակցական մոտեցման միջոցով արտահայտվող լայն շրջանակների ներգրավվածությունը այդ թվում հիմնական որոշումների կայացման գործընթացներում¹²⁶:

Պաուլո Ժերբաուդոն իր՝ «Թվային կուսակցություն» գրքում ցույց է տալիս, որ թվային կուսակցությունները հիմնականում աջակցություն են ստանում թվային տեխնոլոգիաներին տիրապետող երիտասարդությունից, ովքեր երկար ժամանակ իրենց մեկուսացված են զգացել քաղաքական գործընթացներից: Ըստ նրա թվային կուսակցությունները քաղաքականության մեջ բերում են իրավասությունների վերափմաստավորված չափում: Բանն այն է, որ, ըստ նրա, նման կուսակցական ղեկավարությունը հիմնված չէ հեղինակության աստիճանակարգության, այլ խարիզմատիկ առաջնորդության վրա, որտեղ «գերառաջնորդը» մագնիսականորեն գրավում է և վայելում է

¹²⁵ Մանրամասն տե՛ս Gilstrap L. D., Strange Attractors and Human Interaction: Leading Complex Organizations through the Use of Metaphors, Complicity, «An International Journal of Complexity and Education» 2005, no. 2 (1), էջ 55–69:

¹²⁶ Տե՛ս Edwin Babeiya, Book Review, The Digital Party: Political Organization and Online Democracy, p. 74, հասանելի է հետևյալ հասցեով՝ https://www.researchgate.net/publication/378036907_The_Digital_Party_Political_Organization_and_Online_Democracy :

միմյանց հետ կապակցված, սակայն «դրսի» մարդ համարվող անձանց անչափելի աջակցությունը: Այստեղ հեղինակը թվային կուսակցությունը դիտում է որպես կուսակցական քաղաքականությունը վերականգնողական գործընթաց: Նա ցույց է տալիս, որ թվային կուսակցությունների ի հայտ գալը ներկայացնում է այն ուղերձը, որ ի տարբերություն ավանդական կուսակցությունների, որոնք հակված էին գործել կուսակցության շտաբից, թվային կուսակցությունը ֆիզիկապես ոչ մի տեղ չկա, բայց էլեկտրոնային եղանակով ամենուր է, որտեղ կա համացանց: Սա տանում է նրան, որ առցանց կապը և ցանցային քաղաքականությունը կուսակցական կադրերի առկայությունը դարձնում է ավելորդ, քանի որ ով միացված է թվային քաղաքական ցանցին կամ հարթակին, ավտոմատ կերպով դառնում է քաղաքական պոտենցիալ կադր: Այսպես թվային կուսակցությունը մշտապես հակազդեցություն է ստանում իր անդամ-օգտատերերի բազայից, հավաքում է գաղափարներ սոցիալական զանգվածներից, քվեարկություններ է իրականացնում, չափում է հանրության արձագանք և համապատասխանաբար փոփոխում իր ռազմավարությունը, մարտավարությունն ու հանրության հետ իր հաղորդակցությունը¹²⁷:

Նման մոդելների քաղաքական կուսակցությունները, որոնք ամբողջությամբ իրենց տեղաբաշխում են այս միջավայրում, սովորաբար պայմանականորեն ունենում են նաև ներքին տեսակներ:

Կրկին պայմանականորեն դրանք երկու մեծ տեսակների են բաժանվում՝

- Հարթակային կուսակցություններ (Platform Party) և
- Ցանցային կուսակցություններ (Networked Party):

Հարթակային կուսակցություններին հատուկ է էլեկտրոնային հարթակների միջոցով քաղաքական կենտրոնացվածության բարձր մակարդակ, որտեղ բոլոր գործընթացները ղեկավարում է խարիզմա-

¹²⁷ Մանրամասն տե՛ս Gerbaudo, P. (2019). The Digital Party: Political Organisation and Online Democracy. Pluto Press. <https://doi.org/10.2307/j.ctv86dg2g> :

տիկ առաջնորդը, ով հիմնականում ոչ այնքան արժեքային խարիզմատիկ որակներով է առաջնորդում իր «կուսակցականներին», որքան հուզական և իռացիոնալ¹²⁸: Նման հարթակային կուսակցություններին բնորոշ է նաև խիստ կենտրոնացվածությունը ընտրական գործընթացների վրա և ռեսուրսների հիմնական մասի ուղղորդումը ընտրական մրցակցությանը: Նման քաղաքական ուժի օրինակ է իտալական *Movimento 5 Stelle* («5 աստղ շարժումը»), որը ստեղծվեց որպես պոպուլիստական կուսակցություն:

Ցանցային կուսակցությունները շատ ավելի ապակենտրոնացված քաղաքական ուժեր են, որտեղ քաղաքականության ուղղությունների առաջարկությունները, քննարկումները, դրանց հիման վրա որոշումների կայացումն ու այնուհետև՝ դրանց իրականացման ուղղությամբ գործողությունների կատարումը, նույնիսկ՝ առաջնորդությունը բխում են ցանցից: Նման կուսակցության օրինակ է «Barcelona en Comú» կուսակցությունը (կատալոներեն՝ «Բարսելոնան՝ ընդհանուր»): Այն սկզբնապես ստեղծվել է որպես ընտրողների խմբավորում 2014 թվականին, և նրա քաղաքականության օրակարգը ներառում է սոցիալական արդարադատության և համայնքային իրավունքների պաշտպանությունը, մասնակցային ժողովրդավարության խթանումը, կոռուպցիայի դեմ պայքարի մեխանիզմների ներդրումը և Բարսելոնայի համար զբոսաշրջության նոր մոդելի մշակումը:

Այս կուսակցությունների առանձնահատկությունները հիմնականում նրանում են, որ վերջիններս շատ ավելի լայն ծավալով են օգտվում ժամանակակից տեխնոլոգիական հնարավորություններից, այդ թվում՝ սոցիալական մեդիայի ներուժը՝ որոշումների կայացման գործում համաձայնություն ձեռք բերելու և ցանցային մասնակցային հարթակները՝ նոր անդամներ ներագրավելու համար:

Ե՛վ հայկական քաղաքական իրականությունում, և՛ ԱԴՅ մյուս երկրների մոտ, և՛ թե եվրոպական ու ամերիկյան քաղաքական միջավայրերում նկատելի է սոցիալական ցանցերի և համացանցի

¹²⁸ Արժեքային և իռացիոնալ խարիզմատիկ առաջնորդության մասին առավել մանրամասն տես Weber, M. (1958). "The three types of legitimate rule". Berkeley Publications in Society and Institutions, 4 (1), թարգմանությունը Hans Gerth-ի:

տված այլ հնարավորությունների միջոցով քաղաքական գործընթացների ակտիվացում:

Բավարար է նշել, որ Արաբական գարնան հեղափոխությունների շարքից սկսված մինչև ԱՊՀ տարածքում տեղի ունեցած հեղափոխություններ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում 2018թ. հանրության մեծ շարժման արդյունքում տեղի ունեցած իշխանափոխությունը, պարտական են համացանցին և դրանում գործող սոցիալական ցանցերին:

Եվ արդեն քաղաքական գործիչների մոտ սկսել է ներքին մրցակցություն, թե ով և ինչքան ավելի շատ ներգրավվածություն կունենա սոցիալական ցանցերում, ով և ինչքան ավելի շատ դիտումներ և հավանումներ կհավաքի: Եթե մեկ տասնամյակ առաջ դա դիտվում էր որպես ոչ այդքան լուրջ կամ սկսնակ քաղաքական գործիչների վարք, այսօր դա դարձել է համատարած և քաղաքական հաջողության ցուցանիշ, երբեմն՝ նույնիսկ գրավական: Ավելին, հաճախ կուսակցությունները ներկայացնող կամ առանձին գործող քաղաքական գործիչների վարքը կարելի է նմանեցնել բլոգերների կամ իրենց կենսաձևը գովազդող շոուբիզնեսի ներկայացուցիչների վարքագծին: Նման վարքի հիմնական պատճառն այն է, որ նպատակ է դարձել ոչ թե քաղաքական միտքն ու գաղափարը տարածելը, գաղափարակիցներ գտնելը, միավորելը, ուղղորդելը, այլ առավել մեծ լսարան ու հավանումներ հավաքելը, ինչը կբարձրացնի տվյալ ուժի կամ անձի քաղաքական կշիռը ամբողջ քաղաքական համակարգում: Այսկերպ քաղաքականությունը մի կողմից դառնում է ավելի մատչելի, մյուս կողմից ձեռք է բերում ոչ թե արիստոտելյան տերմինաբանությամբ ասված «մարդկանց կյանքն ավելի երջանիկ դարձնելու արվեստի», որքան ականջահաճո խոսքի ու ակնհաճո տեսարանների միջոցով քաղաքական գործչի ու ուժի ինքնագովազդի ու քաղաքական շոուի որակներ: Մեծ հաշվով՝ այս միտումները սնում են պոպուլիզմին և պոպուլիստական քաղաքական կուսակցություններին: Միևնույն ժամանակ, դրա դրական ու բացասական կողմերի մասին կարելի է երկար խոսել, սակայն դրա համար, միգուցե, անհրաժեշտ կլինի այլ գիտական հետազոտություն:

Այս պայմաններում, հեռուստատեսությունը, ռադիոն և տեղեկատվության փոխանցման ավելի ավանդական եղանակներն, իհարկե, շարունակում են իրենց տեղը պահպանել քաղաքական աշխատանքների տիրույթում, սակայն տասնամյակի և անգամ հնգամյակի կտրվածքով դիտելիս, ակնհայտ է դրանց ազդեցության կտրուկ անկումը քաղաքական գործընթացների վրա՝ հաշվի առնելով որ յուրաքանչյուր ընտրողի ձեռքում է գտնվում այդ թվում՝ քաղաքական տեղեկատվության ստացման և փոխանցման ամենաարագ, ամենաարդյունավետ և ցենզուրայի չենթարկվող գործիքը՝ խելացի հեռախոսը:

Հետևաբար կուսակցությունները ևս պետք է իրենց տեղավորեն այս նոր միջավայրում և օգտվեն տեղեկատվական տեխնոլոգիաների առկա հնարավորություններից, ինչը շատերն անում են: Սա արդեն ոչ միայն զարմանալի չէ, այլ նաև անհրաժեշտ է, եթե քաղաքական ուժը ցանկանում է ճանաչելի և հասանաելի լինել հանրության լայն զանգվածներին, իսկ եթե հաջողվի նաև այլ հաթակների միջոցով վերջիններին ներգրավել որպես համակիրներ կամ կուսակիցներ, ապա դա այդ նույն սոցիալական հարթակներին դարձնում է ժամանակակից ավենաարդյունավետ քաղաքական գործունեության միջավայրերը: Իհարկե, այս ամենը պետք է արվի զգուշորեն և մտածված, այլ ոչ թե հախուռն և հոսանքին տրված:

Արդի մարտահրավերներին հարմարվող և ապագայի մարտահրավերներին պատրաստվող կուսակցությունները, գուցե, կհամատեղեն ավանդական և թվային մոտեցումները՝ ստեղծելով հիբրիդային մոդել, որը՝

- կպահպանի և կօգտագործի ցանցային միջավայրերի տրամադրող հնարավորությունները.
- կապահովի հանրության տարբեր շերտերի հետ ֆիզիկական հանդիպումների շարունակականությունը.
- կխթանի քաղաքական միտք ու կամք ձևավորելու համար անհրաժեշտ հանդիպումներին, քաղաքական քննարկումներին տարբեր մարդկանց, այդ թվում՝ տարբեր մասնագիտություններ, տարբեր աշխարհընկալում ունեցող մարդկանց մասնակցությունը.

- կգարգացնի կուսակցական, համակիր և պոտենցիալ ընտրող կարգավիճակի տրամաբանության մեջ տեղավորվող քաղաքացիներին ներգրավելու կառուցակարգերը, նրանց կամքն ու ձգտումները քաղաքական որոշումների և հոսանքների ձևակերպելու հմտությունները.
- կաշխատի հնարավոր աշխարհաքաղաքական և տեղական – քաղաքական գործընթացների կանխատեսման, միգուցե կանխորոշման սեփական հնարավորությունների ընդարձակման վրա
- և այլն:

Միևնույն ժամանակ պետք է չմոռանալ, որ, եթե ժամանակակից տեխնոլոգիական զարգացումները չհանգեցնեն վերջին 2-3 դարերի ընթացքում ձևավորված քաղաքական համակարգի ամբողջական վերանայմանը և կուսակցությունները շարունակեն ինչ-որ դեր պահպանել քաղաքական համակարգում, դրանց ապագան կապված է լինելու ոչ միայն տեխնոլոգիական նորարարությունների հետ, այլև ավելի խորը ինստիտուցիոնալ բարեփոխումների անհրաժեշտության հետ՝

1. **Ընտրական համակարգերի շարունակական բարեփոխում, որի շրջանակներում կառաջարկվեն** ավելի արդյունավետ մրցակցային և ներկայացուցչական համակարգեր.
2. **Ֆինանսավորման թափանցիկություն** - կուսակցական ֆինանսավորման նոր կանոններ և ավելի մեծ հսկողություն.
3. **Քաղաքացիական կրթության ամրապնդում** – քաղաքագիտության, իրավագիտության և սոցիալական այլ գիտությունների բնագավառում անհրաժեշտ նվազագույն կրթության տրամադրում, որը պիտի զուգահեռվի թվային գրագիտության բարձրացման և քաղաքական մասնակցության ծրագրերում քաղաքացիներին պարբերաբար ներգրավելու հետ:

Պետք է ընդունել, որ կուսակցական համակարգի ապագան գտնվում է որակական և կառուցվածքային դինամիկ փոփոխությունների մեջ, որոնք և՛ արտաքին՝ միջավայրային գործոնների, և՛ ներքին

ադապտիվ կառուցվածքների արագ գործընթացներով են պայմանավորված: Ժամանակակից սոցիալ-քաղաքական և տեխնոլոգիական փոփոխություններն, իհարկե, ամբողջությամբ վերափոխելու են և արդեն վերափոխում են այն քաղաքական համակարգը, որին մենք սովոր ենք: Շատ հավանական է, որ կուսակցությունների կողմից քաղաքականության իրականացման կառուցակարգային վերափոխումները այնքան արմատական փոփոխությունների ենթարկվեն, որ նախկին կուսակցությունների մեր պատկերացումներից շատ հատկանիշներ չմնան, սակայն դժվար կարելի է հանգել այն եզրակացությանը, որ դրանք ընդհանրապես կվերանան: Կվերանան այն կառուցակարգերը, որոնք արդիական էին նախորդ երկու կամ երեք դարերի ընթացքում և ի հայտ կգան արդեն XXI դարի հասարակությունների քաղաքական պահանջմունքներին բավարարող նոր կառուցակարգեր:

Տեխնոլոգիական հնարավորությունների ընդարձակումը կընդարձակեն նաև ուղղակի ժողովրդավարության կառուցակարգերը՝ հնարավորություն տալով յուրաքանչյուր քաղաքացուն հեռահար կարգով մասնակցություն ունենալ յուրքանչյուր առանձին քաղաքական նշանակության հարցի քննարկմանը կամ որոշմանը: Սակայն միևնույն ժամանակ ժամանակակից պետությունների սոցիալ-քաղաքական, պետաիրավական և այլ միջավայրերի բոլորության և համալիրության շարունակական ավելացումը, փորձագիտական մտքի նշանակության և կարևորության աճը, երկարաժամկետ ռազմավարությունների անհրաժեշտության ընդգծումը ավելի շատ են պահանջելու մասնագիտացված քաղաքական կազմակերպությունների՝ կուսակցությունների ներգրավվածությունը այս ամենի մեջ: Միգուցե, ինչ-որ պահի դրանք իրենց և՛ անվանումը փոխեն, դադարեն կոչվել կուսակցություն, և՛ իրենց վերաբերյալ նախկինում ընդունված պատկերացումները, սակայն դրանց գործառույթի՝ հանրության քաղաքական կամքի որոշակիացման, հստակեցման, ձևակերպման և արտահայտման կենսագործումը շարունակելու է մնալ որպես քաղաքական համակարգի առանցքային գործառույթ, որը պիտի իրականացվի՝ անկախ մարդկանց խմբերի համախմբման կազմակերպարարական ձևերից:

Հիբրիդային մոդելները, թվային մասնակցության նոր ձևերը և ժողովրդավարական գործընթացների վերաիմաստավորումը փաստում են, որ կուսակցությունները կարող են և պետք է հարմարվեն և վերափոխվեն՝ արձագանքելով ժամանակակից մարտահրավերներին:

Այդուամենայնիվ, ժողովրդավարական արժեքների պահպանումը փոփոխվող աշխարհում պահանջում է ոչ միայն տեխնոլոգիական նորարարությունների հնարավորության գիտակցում և դրանց լայն օգտագործում, այլև քաղաքական մշակույթի և քաղաքացիական գիտակցության բարելավում:

Եթե բարձրանա տեխնոլոգիական նորարարությունների ներդրման մակարդակը կուսակցաշինությունում կամ քաղաքական պայքարում, և դրան հավասար չգարգանա քաղաքական մշակույթը, քաղաքացիական գիտակցությունը և իրավագիտակցությունը, ապա այդ նույն տեխնոլոգիաները կկործանեն և՛ քաղաքական կուսակցություններին, և՛ամբողջ քաղաքական համակարգը իրենց իսկ՝ կուսակցությունների և քաղաքական գործիչների ձեռքով: Ուստի կարևոր է և նույնիսկ առանցքային է դառնում, որ դրանք զարգանան զուգահեռ և մեկը մյուսով պայմանավորված: Միայն այդպես կուսակցական համակարգը կկարողանա ցուցադրել հանրության քաղաքական կամքի որոշակիացման, ձևակերպման և արտահայտման իր առաջնային գործառնություն ու առաքելությունը: Այս ամենը կախված է լինելու նաև հանրային ծառայության բնագավառում ժողովրդավարական լեգիտիմությունը պահպանելու և սոցիալական կարիքները վերհանելու գործառնությունների հետ թվային, տեխնոլոգիական ժամանակակից առավելությունները համադրելու ունակությունից: Այս համատեքստում կուսակցությունները պետք է խաղան որպես քաղաքական կամուրջ անցյալի ժառանգության և ապագայի հնարավորությունների միջև:

ԵՇՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Զաղաքական կուսակցությունների տեսական հիմունքները և քաղաքական կամքի ձևավորման մեխանիզմները.

Զաղաքական կուսակցությունները, որպես ինստիտուցիոնալ կառույցներ, ունեն երկարատև պատմական զարգացման ուղի: Կուսակցական կազմավորումների նախադրյալները առկա են եղել արդեն հնագույն աշխարհի քաղաքական համակարգերում՝ հին Հունաստանում և Հռոմեական հանրապետությունում: Սակայն ժամանակակից իմաստով քաղաքական կուսակցությունների ձևավորումը սկսվել է XVIII դարի վերջից և XIX դարից՝ համընդհանուր ընտրական իրավունքի տարածման և բանվոր դասակարգի քաղաքական կազմակերպվածության զարգացման արդյունքում:

Կուսակցության հասկացության սահմանման հարցում քաղաքագիտական գրականության մեջ առկա է մոտեցումների բազմազանություն: Ուսումնասիրությունը բացահայտել է երեք հիմնական մոտեցում՝ (ա) կուսակցությունը՝ որպես իշխանության համար պայքարող ցանկացած խմբավորում, (բ) կուսակցությունը՝ որպես օրինական (ընտրական) ճանապարհով իշխանության եկած խումբ, (գ) կուսակցությունը՝ որպես կայուն կազմակերպություն՝ ունենալով համապատասխան կազմակերպչական կառուցվածք, գաղափարախոսական հիմունքներ և ծրագրային տեսլական:

Յուրաքանչյուր մոտեցում արտացոլում է կուսակցությունների զարգացման տարբեր փուլերի առանձնահատկությունները:

Զաղաքական կուսակցությունները ժամանակակից ժողովրդավարական համակարգերում իրականացնում են բազմաբնույթ գործառնություններ: Հետազոտության շրջանակներում բացահայտվել են հետևյալ հիմնական գործառնությունները՝ (ա) շահերի արտահայտման գործառնությո՝ հասարակության տարբեր սոցիալական խմբերի շահերի կուտակումը և ամբողջացումը, (բ) քաղաքական սոցիալականացման գործառնությո՝ քաղաքական գիտելիքների, արժեքների և նորմերի փոխանցումը, (գ) քաղաքական նորմերի ձևավորման գործառնությո, (դ) քաղաքական Էլիտայի հավաքագրման գործառնությո, (ե) մասնակցության գործառնությո՝ քաղաքացիների ներգրավումը ընտրական և

այլ քաղաքական գործընթացներին, (գ) լեգիտիմացման գործառույթ՝ քաղաքացիների և քաղաքական համակարգի միջև կապի հաստատումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը սահմանադրական մակարդակում ամրագրել է կուսակցությունների առանցքային դերը: ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կուսակցությունները նպաստում են ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը, ինչը վկայում է կուսակցությունների սահմանադրական-իրավական կարգավիճակի բարձր նշանակության մասին:

Քաղաքական կամքի ձևավորման գործընթացը ներառում է բարդ և բազմաշերտ փուլեր: Ուսումնասիրությունը բացահայտել է քաղաքական կամքի ձևավորման երեք փուլանոց գործընթաց՝

(ա) ընդհանուր (խմբային) կամքի կուտակման փուլ,

(բ) քաղաքական կարիքների ձևակերպման և նպատակների սահմանման փուլ,

(գ) այդ նպատակների գործնական իրականացման փուլ պետական մարմինների գործունեության միջոցով: Քաղաքական կամքը դրսևորվում է որպես նպատակասլաց և դժվարությունների հաղթահարում պահանջող գործողություններ կատարելու ընդունակություն:

Քաղաքական սոցիալականացումը հանդիսանում է քաղաքական կամքի ձևավորման կարևորագույն մեխանիզմ: Հետազոտությունը ցույց է տալիս, որ քաղաքական սոցիալականացումը որոշակի քաղաքական գիտելիքների, արժեքների և նորմերի յուրացման, քաղաքական փորձի ձեռքբերման և փոխանցման գործընթաց է: Սոցիալականացման վրա ազդող գործոնների համակարգը ներառում է ինչպես քաղաքական (պետական կարգի բնույթը, քաղաքական ինստիտուտները, կուսակցությունները), այնպես էլ ոչ քաղաքական (ընտանիքը, կրթական հաստատությունները, զանգվածային լրատվամիջոցները) գործոններ:

Կուսակցություններն, իհարկե, դիտարկվում են որպես ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման և արտահայտման հիմնական գործիքներ: Սակայն, օրինակ, հայկական քաղաքական միջավայրի օրինակով, բացահայտում են մի շարք էական խնդիրներ.

- Խորհրդարանական խմբակցություններից պատգամավորների դուրս գալիսը և անկուսակցական պատգամավորների աճը խախտում է ընտրություններում արտահայտված ժողովրդի կամքը: Զաղաքացին քվեարկում է որոշակի կուսակցության/դաշինքի օգտին, սակայն պատգամավորի անհատական որոշումը փոխում է խորհրդարանական հարաբերակցությունը:
- Զաղաքական սոցիալականացման տեսությունը ենթադրում է, որ կուսակցությունները ձևավորում են քաղաքացիների քաղաքական գիտակցությունը: Սակայն գործնականում կուսակցությունների նկատմամբ անվստահության աճը վկայում է, որ կուսակցությունները ներկայումս չեն իրականացնում սոցիալականացման լիարժեք գործառույթ:
- Սահմանադրությունը վերագրում է կուսակցություններին ժողովրդի կամքի արտահայտման գործառույթ, սակայն լուբիստական գործունեության իրավական կարգավորման բացակայությունը թույլ է տալիս, որ որոշումների կայացման գործընթացներում ներգրավված լինեն ոչ թափանցիկ ազդեցության կառուցակարգեր:

Կուսակցական կազմակերպության ձևերի տիպաբանությունը ներառում է երեք հիմնական մոդել: Ուսումնասիրությունը հնարավորություն է տվել առանձնացնելու կուսակցական կազմակերպության հետևյալ մոդելները՝ (ա) կադրային մոդել՝ կենտրոնացած էլիտայի շուրջ և ծառայող հիմնականում ընտրական նպատակներին, (բ) զանգվածային մոդել՝ հիմնված լայն անդամակցության վրա և ներգրավող բնակչության մեծ զանգվածներին, (գ) ժամանակակից մոդել՝ համատեղող երկու նախորդ մոդելների առավելությունները:

Հայաստանի իրականությունը ցույց է տալիս հիբրիդային, անցումային մոդել, որը չի համապատասխանում դասական մոդելներից ոչ մեկին: Հայաստանյան կուսակցությունները ձևականորեն հայտարարում են զանգվածային անդամակցության մասին, սակայն գործնականում կենտրոնացած են նեղ ղեկավար խմբի շուրջ (կադրային մոդելի հատկանիշ), ակտիվանում են հիմնականում ընտրական շրջանում և պասիվ մնում են ընտրությունների միջև (կադրային

բնութագիր), անդամների մասնակցությունը սահմանափակվում է ընտրական օգնությամբ, իսկ քաղաքականության մշակումը մնում է էլիտայի ձեռքում:

2. Կուսակցական համակարգերը և ընտրական գործընթացները Հայաստանի Հանրապետությունում.

Կուսակցական համակարգերի և ընտրական գործընթացների ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետության օրինակով բացահայտում է համալիր և հակասական իրավիճակ, որը բնորոշ է հետխորհրդային անցումային պետություններին:

Տեսական մակարդակում կուսակցական համակարգերի ժամանակակից տիպաբանությունները հստակորեն ցույց են տալիս, որ չկա համընդհանուր «լավագույն» կուսակցական և ընտրական համակարգի մոդել: Յուրաքանչյուր համակարգ՝ լինի դա միակուսակցական, երկկուսակցական թե՛ բազմակուսակցական, ունի իր առավելություններն ու թերությունները, որոնք պայմանավորված են կոնկրետ երկրի պատմական, մշակութային և սոցիալ-տնտեսական համատեքստով:

Հայաստանի Հանրապետության և շատ հետխորհրդային պետությունների դեպքում գործնականում ակնհայտ է դառնում իրավաբանորեն երաշխավորված բազմակուսակցական համակարգի և փաստացի միակուսակցական իրականության միջև խորը անդունդը:

Ընտրական համակարգերի զարգացման ուղին Հայաստանում ևս արտացոլում է այս հակասությունները: Մեծամասնական համակարգից աստիճանաբար անցումը մաքուր համամասնական համակարգին, այնուհետև՝ վարկանիշային համակարգի վերացումը, տեսականորեն նպատակ ունեն խթանել կուսակցական մշակույթի զարգացումը: Սակայն այս փոփոխությունները գործնականում հանգեցրին հակառակ արդյունքի՝ ընտրողը զրկվեց մարդ-թեկնածու ընտրելու իրավունքից և կարող է միայն կուսակցություն ընտրել: Սա ոչ միայն չնպաստեց կուսակցական մշակույթի զարգացմանը, այլև խորացրեց քաղաքացիների և քաղաքական ինստիտուտների միջև անվստահությունը:

Կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորման մեխանիզմի ներդրումը, որը նպատակ ուներ ապահովել քաղաքական կայունություն, գործնականում հանգեցրեց ճիշտ հակառակի: 2017 թվականից ի վեր Հայաստանը ապրել է շարունակական քաղաքական անկայունության շրջան՝ երկու արտահերթ խորհրդարանական ընտրություններ, իշխանափոխություն, կառավարությունների հրաժարականներ և անդադար հասարակական հուզումներ: Սա համապատասխանում է Չարլզ Գուդարթի օրենքին՝ «երբ միջոցը դառնում է նպատակ, այն դադարում է լավ միջոց լինելուց»:

Հայկական քաղաքական համակարգի առանձնահատկությունները պայմանավորված են նաև ավելի խորը պատմական, սոցիալ-հոգեբանական և աշխարհաքաղաքական գործոններով: Դարերով օտար տիրապետության ներքո գտնվելը, ցեղասպանությունների և պատերազմների ողբերգական փորձը, անկախ պետականության փորձի պակասը՝ բոլորը հանգեցրել են այն իրավիճակին, երբ քաղաքական, իրավական և պետական մշակույթը դեռևս ձևավորման փուլում է: Հետխորհրդային անցումային շրջանի բարդությունները, գլոբալացման մարտահրավերները և կուսակցությունների համընդհանուր ճգնաժամը միջազգային մակարդակով լրացուցիչ դժվարություններ են ստեղծում հայկական քաղաքական համակարգի զարգացման համար:

Ընտրական գործընթացների չափազանց մանրամասն օրենսդրական կարգավորումը, մի կողմից, ցույց է տալիս ընտրակեղծիքների դեմ պայքարի ջանքերը, մյուս կողմից՝ վկայում է քաղաքական մշակույթի անբավարար զարգացման մասին: Պետական ֆինանսավորման, սեռային քվոտայի, ազգային փոքրամասնությունների ներկայացվածության և այլ մեխանիզմների ներդրումը դրական քայլեր են, սակայն դրանք միայն չեն կարող ապահովել կուսակցությունների իսկական դերափոխումը՝ կոնկրետ անձանց իշխանության բերելու «խողովակներից» վերածվելով իրական քաղաքական գաղափարներ ձևավորող և քաղաքական կամք արտահայտող ինստիտուտների:

Առաջընթացի համար անհրաժեշտ է համակարգային մոտեցում, որը կներառի ոչ միայն ինստիտուցիոնալ բարեփոխումներ,

այլև քաղաքական մշակույթի խորը վերափոխում: Սա երկարաժամկետ գործընթաց է, որը պահանջում է կայուն սոցիալ-քաղաքական և սոցիալ-պետական միջավայրերի ստեղծում, քաղաքական դաստիարակության համակարգի զարգացում և կուսակցությունների իսկական դերափոխում՝ դրանց վերածելով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման և արտահայտման իրական սուբյեկտների: Միայն այս պայմաններում է հնարավոր անցնել «կուսակցապետությունից» իսկական հանրապետությանը՝ որտեղ բազմակուսակցական համակարգը կլինի ոչ թե միայն իրավական հռչակագիր, այլ կենդանի իրականություն:

3. Կուսակցությունները իշխանության մեջ և քաղաքացիական հասարակության հետ փոխառնչությունները.

Խորհրդարանական համակարգում կառավարությունը ձևավորվում է մեծամասնության սկզբունքով: Սակայն այս մեխանիզմը, առնվազն Հայաստանի Հանրապետության օրինակում, պարունակում է ներքին հակասություն՝

- Մեծամասնությունը կարող է օրինական, բայց ոչ լեգիտիմ լինել, եթե ընտրությունների մասնակցությունը ցածր է կամ ընտրական համակարգը խեղաթյուրում է ձայների բաշխումը,
- ՀՀ օրենսդրությամբ խորհրդարանում ընդդիմության 30 տոկոսի առկայության պահանջը, թեև դրական է, սակայն այն բավարար չէ ազդեցիկ ընդդիմություն ապահովելու համար, եթե մեծամասնությունն անտեսում է ընդդիմության առաջարկները,
- Որպես օրինակ, ընդդիմության ձևական իրավունքների՝ կարելի է նշաել նաև խորհրդարանում քննիչ հանձնաժողովների ստեղծման իրավունքը առկա է, սակայն դրանց եզրակացությունների իրավական հետևանքների բացակայությունը վերածում է դրանք ձևական ինստիտուտի:

Ուսումնասիրությունը բացահայտում է նաև, որ ինստիտուցիոնալ

խնդիրներից զատ առկա են նաև քաղաքական մշակույթի համակարգային խնդիրներ՝

- Անձնավորումը. կուսակցությունները ընկալվում են որպես առաջնորդների շուրջ կազմավորումներ, այլ ոչ թե գաղափարախոսական ինստիտուտներ,
- Հակադրման քաղաքական մշակույթ. քաղաքական հակառակորդը դիտվում է որպես թշնամի, այլ ոչ թե որպես հավասարազոր քաղաքական գործընկեր
- Կարճաժամկետ մտածողություն. կուսակցությունները կենտրոնանում են ընտրական հաղթանակի վրա, այլ ոչ թե երկարաժամկետ քաղաքականության մշակման վրա
- Փոխադարձ անվստահության մթնոլորտ. ինչպես կուսակցությունների, այնպես էլ քաղաքացիական հասարակության և քաղաքացիների միջև:

Կուսակցությունների տեսական հիմունքների և գործնական գործունեության համադրական վերլուծությունը բացահայտում է էական անկողմնակալություն իդեալի և իրականության միջև: Տեսական մակարդակով կուսակցությունները սահմանվում են որպես ժողովրդավարության անբաժանելի բաղադրիչ՝ ապահովելով ժողովրդի կամքի արտահայտումը, քաղաքական սոցիալականացումը և մասնակցության մեխանիզմները: Սակայն գործնական մակարդակով բացահայտվում են համակարգային խնդիրներ՝ ինստիտուցիոնալ թուլություններ, իրավական բացեր և քաղաքական մշակույթի անբարենպաստ առանձնահատկություններ:

Այս հակասությունները ցույց են տալիս, որ պարզապես ինստիտուցիոնալ առկայությունը բավարար չէ ժողովրդավարական գործառույթների արդյունավետ իրականացման համար: Անհրաժեշտ է համակարգային մոտեցում, որը կներառի՝

- **Իրավական հիմքի կատարելագործում**՝ լոբբինգի կարգավորում, ընդդիմության իրավունքների ամրապնդում, կուսակցական կարգապետության մեխանիզմների զարգացում.
- **Ինստիտուցիոնալ զարգացում**՝ ներկուսակցական ժողովրդավարության ապահովում, քաղաքացիական հասա-

րակության հետ համագործակցության ինստիտուցիոնալացում, հետազոտական կենտրոնների ստեղծում.

- **Քաղաքական մշակույթի փոխակերպում**՝ անցում անձնավորված քաղաքականությունից դեպի գաղափարախոսական պլատֆորմներ, կոնսենսուսային մշակույթի զարգացում, քաղաքացիական կրթության ընդլայնում.
- **Թվային հաղորդակցության օպտիմալացում**՝ սոցմեդիայի պատասխանատու օգտագործում, մասնակցային հարթակների զարգացում, մեդիագրագիտության բարձրացում

Կուսակցությունների արդիականացումը պարտադիր նախապայման է Հայաստանի ժողովրդավարական համակարգի կայուն զարգացման համար: Սա պահանջում է համակարգված և երկարաժամկետ ջանքեր ինչպես կուսակցություններից, այնպես էլ պետական մարմիններից, քաղաքացիական հասարակությունից և միջազգային գործընկերներից: Միայն այս բարդ համակարգի տարրերի համակարգված զարգացման դեպքում հնարավոր կլինի հաղթահարել տեսության և գործնականության միջև առկա անկողմնակալությունը և ապահովել կուսակցությունների իրական արդյունավետությունը ժողովրդավարական համակարգում:

4. Ժամանակակից մարտահրավերները և կուսակցական համակարգի ապագան.

Գլոբալիզացիայի և տեխնոլոգիական փոփոխությունների ազդեցությունը կուսակցական համակարգերի վրա երկակի բնույթ ունի: Մի կողմից, այն բացում է նոր հնարավորություններ քաղաքական մասնակցության և ժողովրդավարական գործընթացների համար: Մյուս կողմից, այն ստեղծում է նոր մարտահրավերներ և ռիսկեր, որոնք պահանջում են արդի ժողովրդավարական ինստիտուտների հարմարվողականություն և նորարարական մոտեցումներ:

Եթե փորձենք առանձնացնել դրական և բացասական հետևանքներն, ապա կստացվի հետևյալը՝

Դրական հետևանքները՝

- Տնտեսական զարգացում և կենսամակարդակի բարելավում միջազգային համագործակցության միջոցով.

- Թվային տեխնոլոգիաների միջոցով ժողովրդավարական գործընթացների բարելավում.
- Զաղաքական մասնակցության և ներգրավվածության նոր հնարավորություններ.
- Գլոբալ գիտելիքների և լավագույն պրակտիկաների փոխանակում:

Բացասական հետևանքները և ռիսկերը՝

- Զաղաքական ինքնավարության կորուստ և գլոբալ շուկաներից կախվածություն.
- Օգուտների անհավասար բաշխում և ազգային ինքնության մասնակի կորուստ.
- Կեղծ տեղեկատվության տարածում և քաղաքական բևեռացում.
- Կիբեռանվտանգության սպառնալիքներ և գաղտնիության խախտումներ:

Վերջապես, գլոբալիզացիան և տեխնոլոգիական այս փոփոխությունները պահանջում են ժամանակակից ժողովրդավարական ինստիտուտների հարմարվողականություն և նորարարական մոտեցումներ: Կուսակցությունները, որպես ժողովրդավարական համակարգի հիմնական սյուներ, միգուցե՝ քաղաքական կամքի արտահայտման խողովակներ, պետք է ի վիճակի լինեն արձագանքել այս մարտահրավերներին՝ միաժամանակ պահպանելով իրենց հիմնական գործառնությունը՝ քաղաքական կամքի ձևավորում, ներկայացուցչություն և ժողովրդավարական նույնականության պահպանում փոփոխվող աշխարհում:

Պոպուլիզմի և ավանդական կուսակցությունների ճգնաժամը ներկայացնում է ժամանակակից ժողովրդավարության հիմնական մարտահրավերներից մեկը: Այս ճգնաժամը միաժամանակ և՛ ախտանիշ է, և՛ պատճառ՝ ստեղծելով կրկնվող ցիկլ, որտեղ վստահության անկումը հանգեցնում է պոպուլիստական կուսակցությունների ազդեցության աճին, որոնք, ի վերջո, ավելի են խորացնում վստահության ճգնաժամը:

Կարելի է նկատել, որ այս ամենի արդյունքում՝

- ընտրողները դիմում են պոպուլիստական, օպորտունիստական կուսակցություններին և՛ ականջահաջող գաղափարների, և՛ գործող կառավարությունների ձախողումների պատճառով: Թե դրանցից որն է ավելի շատ գերակայում, կախված է կոնկրետ ժամանակից, միջավայրից, հանրույթի առանձնահատկություններից և այլն.
- ընդգծվում են քաղաքական բաժանումների խորացումը, այդ թվում՝ մշակույթի և նույնիսկ՝ ինքնության հարցերի շուրջ: Զաղաքական բևեռացումների աստիճանն այնքան է մեծանում, որ շատ դեպքերում միմյանց նկատմամբ ատելությունն ու անհանդուրժողականությունը տարածվում է նաև ինքնության հարցերի շուրջ բանավեճը անգամ շատ մեծ ու խորից ազգային ինքնություն ունեցող հանրույթների մոտ.
- բևեռացման չափազանց հակադիր մակարդակները վտանգում են ժողովրդավարական կայունությունը: Այս բևեռացումն ուղղակիորեն ազդում է նաև ժողովրդավարական ինստիտուտների աշխատանքին, որոնք շատ դեպքերում «զոհաբերվում են»՝ հանուն ամեն գնով հակադիր բևեռին իշխանություն չթողնելու կամ ցանկացած տեսակի որոշումների կայացմանը մասնակից չդարձնելու նպատակին.
- ավանդական կուսակցությունները դժվարանում են նոր իրականությանը հարմարվելու գործում, ինչն էլ ավելացնում է նրանց ձախողումները թե՛ որպես իշխանություն, թե՛ որպես ընդդիմություն: Սա ազդում է նաև նրանց կուսակցական հեղինակության և ընդհանրապես՝ գոյության նպատակահարմարության վրա,
- և ցիկլը կրկնվում է:

Այս իրավիճակը պահանջում է համալիր մոտեցում, որը ներառում է ինչպես ինստիտուցիոնալ բարեփոխումներ, այնպես էլ քաղաքացիական կրթության և քաղաքական մշակույթի նորացում, իսկ առանձին հասարակություններում՝ նաև գաղափարախոսական համապարփակ աշխատանք՝ կենցաղային մակարդակում անհատա-

կան ու կոլեկտիվ կյանքի իմաստից մինչև պետական ու քաղաքակրթական նպատակ, միգուցե՝ առաքելություն:

Կուսակցական համակարգի ապագան կախված է նրանից, թե արդյոք ավանդական կուսակցությունները կկարողանան վերակազմավորվել և մշակել նոր, ավելի արդյունավետ ձևեր քաղաքացիների հետ հաղորդակցվելու համար, նոր՝ շատ ավելի արագ կերպափոխվող աշխարհում, կկարողանան արդյոք շրջակա միջավայրի արագ և կտրուկ փոփոխությունների պայմաններում զարգացնել իրենց արձագանքների ճկունությունը և սոցիալական էներգիան կոլեկտիվ քաղաքական կամքի ձևավերելու կարողությունը, թե՞ իրենց տեղը շարունակելու են զիջել իրավիճակային, անձերից մեծ կախում ունեցող և պոպուլիստական կուսակցություններին, կամ իրենք դառնան այդպիսին:

Կուսակցական համակարգի ապագան գտնվում է որակական և կառուցվածքային դինամիկ փոփոխությունների մեջ, որոնք և՛ արտաքին՝ միջավայրային գործոնների, և՛ ներքին ադապտիվ կառուցվածքների արագ գործընթացներով են պայմանավորված: Ժամանակակից սոցիալ-քաղաքական և տեխնոլոգիական փոփոխություններն, իհարկե, ամբողջությամբ վերափոխելու են և արդեն վերափոխում են այն քաղաքական համակարգը, որին մենք սովոր ենք: Շատ հավանական է, որ կուսակցությունների կողմից քաղաքականության իրականացման կառուցակարգային վերափոխումներն այնքան արմատական փոփոխությունների ենթարկվեն, որ նախկին կուսակցությունների մեր պատկերացումներից շատ հատկանիշներ չմնան, սակայն դժվար կարելի է հանգել այն եզրակացությանը, որ դրանք ընդհանրապես կվերանան: Կվերանան այն կառուցակարգերը, որոնք արդիական էին նախորդ երկու կամ երեք դարերի ընթացքում և ի հայտ կգան արդեն XXI դարի հասարակությունների քաղաքական պահանջմունքներին բավարարող նոր կառուցակարգեր:

Տեխնոլոգիական հնարավորությունների ընդարձակումը կընդարձակեն նաև ուղղակի ժողովրդավարության կառուցակարգերը՝ հնարավորություն տալով յուրաքանչյուր քաղաքացուն հեռահար կարգով մասնակցություն ունենալ յուրքանչյուր առանձին քաղաքական նշանակության հարցի քննարկմանը կամ որոշմանը: Սակայն

միևնույն ժամանակ ժամանակակից պետությունների սոցիալ-քաղաքական, պետաիրավական և այլ միջավայրերի բոլորության և համալիրության շարունակական ավելացումը, փորձագիտական մտքի նշանակության և կարևորության աճը, երկարաժամկետ ռազմավարությունների անհրաժեշտության ընդգծումը ավելի շատ են պահանջելու մասնագիտացված քաղաքական կազմակերպությունների՝ կուսակցությունների ներգրավվածությունը այս ամենի մեջ: Միգուցե, ինչ-որ պահի դրանք իրենց և՛ անվանումը փոխեն, դադարեն կոչվել կուսակցություն, և՛ իրենց վերաբերյալ նախկինում ընդունված պատկերացումները, սակայն դրանց գործառույթի՝ հանրության քաղաքական կամքի որոշակիացման, հստակեցման, ձևակերպման և արտահայտման կենսագործումը շարունակելու է մնալ որպես քաղաքական համակարգի առանցքային գործառույթ, որը պիտի իրականացվի՝ անկախ մարդկանց խմբերի համախմբման կազմակերպարավական ձևերից:

Հիբրիդային մոդելները, թվային մասնակցության նոր ձևերը և ժողովրդավարական գործընթացների վերաիմաստավորումը փաստում են, որ կուսակցությունները կարող են և պետք է հարմարվեն և վերափոխվեն՝ արձագանքելով ժամանակակից մարտահրավերներին:

Այդուամենայնիվ, ժողովրդավարական արժեքների պահպանումը փոփոխվող աշխարհում պահանջում է ոչ միայն տեխնոլոգիական նորարարությունների հնարավորության գիտակցում և դրանց լայն օգտագործում, այլև քաղաքական մշակույթի և քաղաքացիական գիտակցության բարելավում:

Եթե բարձրանա տեխնոլոգիական նորարարությունների ներդրման մակարդակը կուսակցաշինությունում կամ քաղաքական պայքարում, և դրան հավասար չգարգանա քաղաքական մշակույթը, քաղաքացիական գիտակցությունը և իրավագիտակցությունը, ապա այդ նույն տեխնոլոգիաները կկործանեն և՛ քաղաքական կուսակցություններին, և՛ ամբողջ քաղաքական համակարգը իրենց իսկ՝ կուսակցությունների և քաղաքական գործիչների ձեռքով: Ուստի կարևոր է և նույնիսկ առանցքային է դառնում, որ դրանք զարգանան

զուգահեռ և մեկը մյուսով պայմանավորված: Միայն այդպեղայ կուսակցական համակարգը կկարողանա ցուցադրել հանրության քաղաքական կամքի որոշակիացման, ձևակերպման և արտահայտման իր առաջնային գործառույթն ու առաքելությունը: Այս ամենը կախված է լինելու նաև հանրային ծառայության բնագավառում ժողովրդավարական լեգիտիմությունը պահպանելու և սոցիալական կարիքները վերհանելու գործառույթների հետ թվային, տեխնոլոգիական ժամանակակից առավելությունները համադրելու ունակությունից: Այս համատեքստում կուսակցությունները պետք է խաղան որպես քաղաքական կամուրջ անցյալի ժառանգության և ապագայի հնարավորությունների միջև:

Չափսը՝ 60x84 ¹/₁₆:
Ծավալը՝ 14 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 100 օրինակ